*Մանուկ Կակոսյան Կյուրինցի*

# ԵՐԿՆՔԻ ՃԱՆԱՊԱՐՀԸ

Արդի արևելահայերենի վերածեցին

*Հակոբ Քյոսեյանը*

*Տ. Շահե քահանա Հայրապետյանը*

Ս. Էջմիածին - 1999

# Ե ր կ ու  խ ո ս ք

Այս գրքի չորրորդ հրատարակությանը կցված «Ազդ» - ում ծանուցվում է, որ այն արդեն երկու անգամ տպված է եղել Կ.Պոլսում, առաջին անգամ` 1865 թ. հեղինակի ձեռքով, երկրորդ անգամ` 1889 թ. Պ. Հակոբյանի հրատարակությամբ, որն առաջինի պարզ վերարտադրությունն է: Կրոնական ջերմ զգացումներով շարադրված այս գրքի նկատմամբ եղած հարաճուն հետաքրքրությունը տարիներ անց ստիպում է այն վերստին հրատարակել: Ժամանակի ընթերցողին հասկանալի դարձնելու նպատակով արևմտահայ ժողովրդախոսակցական ռամկաբանություններով շարադրված այս գործը, երրորդ անգամը լինելով, 1897 թ. հրատարակվում է Երուսաղեմում, լեզվական զգալի վերանայումներով` համապատասխան օրվա լեզվաճաշակի պահանջին: 1907 թ. դարձյալ Երուսաղեմում այն վերստին հրատարակվում է աննշան փոփոխություններով:

Այս չորրորդ հրատարակությունից էլ կատարված է ներկա արևելահայերեն թարգմանությունը: Լիահույս ենք, որ այն լավագույնս կծառայի իր բարձր նպատակին:

*Հակոբ Քյոսեյան*
*Տ. Շահե քահանա Հայրապետյան*

# ԵՐԿՆՔԻ ՃԱՆԱՊԱՐՀԸ

## Ա ռ ա ջ ա բ ա ն

*Այս փոքր գրքի խորագիրը թերևս շատերի մեջ տարակույս առաջացնի, և ինձ նման մի տգետ կարող է հարցնել. «Ո՛վ անմիտ, երկրի վրա կարողանո՞ւմ ես չիտակ քայլել, որ երկինք էլ ես բարձրանում, և կամ երկնքում ի՞նչ ունես, մի՞թե երկինքը ճանապարհ ունի»:*

*Այո՛, ունի: Երբ մարդ մի տեղ է գնում, անշուշտ այդ տեղը տանող ճանապարհով է ընթանում, որպեսզի իր նպատակին հասնի: Երկինքը ևս, որ Աստծու արքայության տեղավայրն է, իր ճանապարհն ունի: Արդ, անհրաժեշտ է, որ փնտրենք ու գտնենք այդ ճանապարհը:*

*Ուրեմն ո՛վ մաքրամիտ ու ջերմեռանդ քրիստոնյա եղբայր, եթե մտադրվել ես երկնքի արքայություն ուղևորվել, այս փոքր գիրքը ձեռքդ վերցրու և ճամփա ընկիր: Ճանապարհի երկու կողմերում դու կանգնած կտեսնես քսաներեք զորավոր և իմաստուն մարդկանց. Մովսեսին, Դավթին, Սողոմոնին, Հոբին, Սիրաքին, Եսայուն, Երեմիային, Բարուքին, Եզեկիելին, Դանիելին, Ամովսին, Միքիային, Հովելին, Զաքարիային, Մաղաքիային, Մատթեոսին, Մարկոսին, Ղուկասին, Հովհաննեսին, Պողոսին, Հակոբոսին, Պետրոսին և Հուդային[1]: Սրանք միշտ կանգնած են այդ ճանապարհի վրա և առաջնորդում են այդ ճանապարհով ընթացողներին: Ճանապարհի վերջում նստած է* **Ինքը Քրիստոս***, որ կանչում է. «Ինձ մոտ եկեք բոլոր հոգնածներ, և Ես պիտի հանգստացնեմ ձեզ» (Մատթեոս ԺԱ 28): Թեպետ դու լսում ես այս ձայնը, բայց չես իմանում, թե ում ձայնն է: Ուստի քեզ անհրաժեշտ է, որ ճանապարհի վրա կանգնածներից հարցնես, թե ո՞ւմ ձայնն է, և կամ ինչպե՞ս կարելի է Նրա մոտ գնալ: Այնժամ նրանք մատով ցույց կտան ու կասեն. «Այն ձայնը Քրիստոսի ձայնն է, և Նրա մոտ գնալու չիտակ ճանապարհն էլ այս է: Եթե Նրա մոտ ես գնալու, այս ճանապարհն ամուր բռնիր ու գնա, որ Նրա մոտ հասնես»: Բայց նրանց ցույց տված ճանապարհը մի լայն ճանապարհ չէ, այլ քարքարոտ, փշոտ ու նեղ մի ճանապարհ է, ուստի չլինի թե ճանապարհի դժվարություններից երկնչելով՝ վախենաս առաջ գնալ և աջ ու ձախ շեղվես դյուրին ու լայն ճանապարհ գտնելու նպատակով: Այնժամ ճանապարհի վրա կանգնած մարդիկ իրենց ձեռքի գավազաններով կգանակոծեն քեզ: Այդ պատճառով դու միայն ունկնդիր եղիր քեզ կանչող ձայնին և ճիգ ու ջանք թափիր առաջ ընթանալու՝ Նրան ապավինելով, որպեսզի գնաս և քո նպատակին հասնես, այսինքն՝ Նրա մոտ, Ով նստած է երկնքի արքայության մեջ:*

*Արդարև, փիլիսոփայական գրքեր կարդացողների համար այս գրքույկը չի կարող իրենից արժեք ներկայացնել, որովհետև նրա նպատակը սոսկ խոնարհ ու նեղ ճանապարհ ցույց տալն է, բայց մասնավորաբար արևմտահայերի մեջ շատ ավելի հարգի պիտի լինի սա, որովհետև գրված է նրանց լեզվով:*

*Թեպետ մտադիր չէինք այսքան երկար գրել, այլ մեր նպատակն էր շարադրել մի փոքրիկ քրիստոնեական տետրակ արևմտահայոց խոսակցական լեզվով, որպեսզի դպրոցականները լավ հասկանան Քրիստոսի մարդեղությունը և Աստծու կամքը: Բայց ինչպես երևում է, Սուրբ Հոգով տոգորված՝ այսքան երկարեց ու ընդարձակվեց: Նախ սկսեցինք Սուրբ Հոգու՝ Կույս Մարիամի արգանդը իջնելուց՝ շարադրանքը հասցնելով մինչև Սուրբ Հոգու՝ Սիոնի Վերնատան մեջ՝ առաքյալների վրա իջնելը, հավաքեցինք և մի առ մի իրար հյուսեցինք այդ մասին եղած բոլոր մարգարեությունները: Նյութը հասկանալի դարձնելու նպատակով այն շարադրել ենք հարց ու պատասխանի ձևով: Առաջին հարցումը վերաբերում է Սուրբ Երրորդությանը, երկրորդ*

հարցումով հարցնողը ցանկանում է իմանալ Քրիստոսի Ով լինելը, և թե ինչ է նշանակում քրիստոնյա անվանումը: Ու երբ բավական բացատրեցինք, հարկ եղավ Քրիստոսի կամքն էլ հասկացնել, այդ պատճառով էլ մեր ճանապարհը երկարեց՝ աշխարհի վախճանին Քրիստոսի մյուս անգամ գալստյան և արդարների հավիտենական կյանքի նկարագրությամբ հասնելով այդ ճանապարհի վերին սահմանը: Եվ ապավինելով Սուրբ Հոգու շնորհներին, որքան բավեց մեր տկար միտքը, մեղքերից զգուշանալու նպատակով բազում խրատներ և օրինակներ բերեցինք՝ դրանք հաստատելով սուրբգրային վկայություններով: Արձանագրել ենք այդ վկայությունների գլխահամարներն ու թվահամարները, գրաբար վկայությունների հետ միասին բերել ենք դրանց աշխարհաբար թարգմանությունը[2]: Չեք գտնի մի բացատրություն, որ հաստատված չլինի Սուրբ Գրքի վկայությամբ, այնպես որ ոչ մի քրիստոնյա ազգ չի կարող դեմ կանգնել այս գրքին, չնայած համերկրացիներից ոմանք հակառակվեցին, բայց չգիտեմ, թե ինչ պատճառով՝ չհասկանալո՞ւ, թե՞ նախանձելու: Դրա քննությունը թողնում ենք արդար Դատավորին և անաչառ դատաստանին: Այժմ նույն այդ հակառակվողներին մեր երախտավորն ու բարերարն ենք համարում, որովհետև եթե նրանք չհակառակվեին, մենք հոգ չէինք տանի սրա տպագրությանը, և այնպես անտիպ կմնար ու գուցե և կորչեր մեր բազմօրյա աշխատանքի այս պտուղը:

Եվ եթե մարմնասեր և աշխարհասեր մարդկանցից շատերը աստվածային պատվիրանների խստության պատճառով բամբասեն մեզ, ապա նրանք այդ անելու իրավունքը չունեն, որովհետև դրանք մեր հորինած խոսքերը չեն, այլ այս ճանապարհի վրա կանգնած մարդկանց կերտած գոհարներն են, որոնք մենք ծաղկաքաղ անելով մեկմեկու ենք ագուցել, և սրա համար, իհարկե, պարծենալու իսկ իրավունք չունենք, որովհետև մեզ համարում ենք աշխարհում եղած բոլոր մարդկանցից ավելի անարգ և մեղավոր: Ու թերևս հիշյալ սրբերի բարեխոսությամբ մեր աշխատանքը ապաշխարանք համարվի, և ամենակալ Աստված ների մեր բազմաթիվ հանցանքները:

Եվ եթե մի մարդ, որ չի փնտրում աշխարհիկ իմաստություն, այլ բացառապես հետամուտ է իր հոգու փրկությանն ու արքայության ճանապարհին, ենթադրում ենք, որ եթե այս գրքից զատ ուրիշ գիրք չկարդա էլ, նրան բավական է, որովհետև այս գիրքն ունեցողը ուրիշ գրքի կարիք չի ունենա: Քանզի արքայություն կարելի է գնալ միայն քրիստոնեությամբ: Սրան հավատում են բոլոր քրիստոնյաները, և նրանց անհրաժեշտ բոլոր խնդիրները մեկտեղված են այս գրքում:

Բայց եթե մեկն այս աշխարհում (ունայն) իմաստության, հարստության, ուրախության և հանգստության ճանապարհ փնտրի, դրանք չկան այստեղ, այլ այդ բոլորը թող հարսանքատանը գտնի: Այս ճանապարհի սկզբի դռնից մինչև վերջնասահմանի դուռը լեցուն է ողբով և տրտմությամբ:

Այս ճանապարհով քայլող մարդը մինչև նրա վերջնասահմանի դուռը պիտի գնա լալով և սգալով, ու երբ այն դռնից ներս մտնի, այնտեղ կգտնի հավիտենական, հարազվարճ ուրախություն, որովհետև թագավորների Թագավորը նրան պիտի դիմավորի և սրբի աչքերի արցունքները, պիտի վայր իջեցնի նրա մեջքի բեռը ու ասի. «Հավիտյան հանգստացիր, այս տեղերի արքան դու ես»: Ու նա հավիտյանս հավիտենից պիտի ուրախանա:

Թվում է՝ այս աշխարհում ուրախություն փնտրող մարդը նման է ինձ պես տգետ աղքատի, որ հարուստ հարևանից շորեր է վերցնում, հագնվում, զարդարվում է և հարսանիք գնում, մեկ կամ երկու օր ուտում, խմում, ուրախանում է հարսանքատանը, մոռանում իր աղքատությունը և շատ գիշերներ քաղցած անկողին մտնելը: Ու երբ վերջանում է հարսանիքը, տրտմությունը ծանրանում է իր վրա, որովհետև տեսնում է, որ այն երգերը և տեսակ-տեսակ կերակուրներն ու խմիչքները այլևս չկան: Եվ ինքը տխրությամբ տուն է վերադառնում, շորերը հանում, տիրոջն

*է վերադարձնում ու կրկին հագնում է իր հին շորերը, նստում և մտածում, թե երեկոյան ուտելիքը որտեղից պիտի հայթայթի, քաղցում է ու տեսնում, որ առավոտվա անուշ կերակուրներն այլևս չկան: Տան մեջ լոկ մի քանի գարեհաց է մնացել, որովհետև երկու օր է՝ աշխատանքի չի գնացել՝ հարսանիքում ուրախանալու պատճառով, նաև մի քանի օր էլ չի կարող աշխատանքի գնալ՝ հոգնած լինելու հետևանքով: Ահա այսպես տունը սովի է մատնվում, և սարսափելի անախորժությունններն ու կռիվները հաճախակի են դառնում: Եվ այն աղքատի վերջին նեղությունը շատ ավելի վատ է լինում սկզբի նեղությունից, որովհետև քանի դեռ հարսանիք չէր գնացել, այդքան նեղություն չուներ. ահա այս պատճառով է Սողոմոնն ասում. «Սգո տուն գնալը հարսանիքի տուն գնալուց լավ է» (Ժող.Է.3):*

*Արդ, ո՛վ բարեմիտ քրիստոնյա եղբայրներ, չլինի թե մեր լեզվի կոպտության պատճառով չընդունեք ձեր հոգու փրկությանը առիթ դառնալիք այս գիրքը:*

*Պատմում են, որ մի լեռնաբնակ կոշտալեզու գյուղացի մի լուսատու քար է գտնում և այն նվիրում մի ազնվականի: Հակառակ գյուղացու տգեղ, կոշտ լեզվի՝ ազնվականն ընդունում է այդ պատվական ընծան: Նմանապես մենք մեր կոշտ լեզվով ու կոպիտ մատներով իրար փոխադրեցինք զանազան հոգեշահ խրատներից կազմված այս մեծագին մարգարիտները և այժմ այն ընծայում ենք ձեր ազնվականությանը: Ուստի խնդրում ենք ձեզանից, որ անտեսեք այս գրքի լեզվի կոշտությունն ու վրիպակները, այլ խոսքերի իմաստին հետամուտ լինելով՝ ուշադրությամբ կարդաք և այս ճանապարհին հետևելով զգուշանաք մեղքերից, որպեսզի ամենակալ Աստծու շնորհով արժանի լինեք հավիտենական փառքի, հարազվարճ ուրախության և ցնծության:*

*Մանուկ վարժապետ*
*Կակոսյան Կյուրինցի*

# ԵՐԿՆՔԻ ՃԱՆԱՊԱՐՀԸ

## Գլուխ Ա

**Հարց**. Սիրելի եղբա՛յր, դու ի՞նչ հավատքի ես պատկանում:

**Պատասխան**. Աստծու շնորհով քրիստոնյա եմ:

**Հարց**. Ինչպե՞ս ես դարձել քրիստոնյա:

**Պատասխան**. Սուրբ Երրորդության անունով մկրտվելով ու սուրբ Ավազանից ծնվելով:

**Հարց**. Սուրբ Երրորդությունն ի՞նչ է, կարո՞ղ ես ինձ բացատրել:

**Պատասխան**. Սուրբ Երրորդությունը մարդկորեն անհասկանալի, անճառելի է, ես չեմ կարող բացատրել, բայց այսքանը կարող եմ քեզ ասել, որ Երրորդության մեջ երեք անձ կա. Հայր Աստված, Որդի Աստված և Սուրբ Հոգի Աստված. երեք անձ, որ մեկ բնություն, մեկ զորություն և մեկ աստվածություն ունեն:

**Հարց**. Լավ չհասկացա. մի օրինակ ցույց տուր, որ խելքս հասնի:

**Պատասխան**. Ահա՛ քեզ օրինակ արևը. նախ՝ արևի գունդը, երկրորդ՝ լույսը և երրորդ՝ ջերմությունը. թեպետ երեք անուն կա, բայց երեքն էլ արև անունով ենք հիշում, այսինքն՝ արևի գունդը, արևի լույսը և արևի ջերմությունը, որոնք ամբողջը մեկ արև են և ո՛չ՝ երեք, որովհետև մեկը մյուսից բաժանված չեն: Նույնպես Երրորդության մեջ երեք անուն ենք հիշում՝ Հայր, Որդի, Հոգի. բայց երեքն էլ մեկ Աստծու անունով ենք հիշում, այսինքն՝ Հայր Աստված, Որդի Աստված և Սուրբ Հոգի Աստված: Սրանք երեքն էլ մեկ են և ոչ՝ երեք Աստված, որովհետև մեկը մյուսից բաժանված չեն, և երեքը մեկ բնություն, մեկ կարողություն ունեն:

**Հարց**. Հիմա փոքր-ինչ հասկացա. բայց առաջին հարցիս պատասխանը տվեցիր, թե քրիստոնյա ես, ես էլ ուզում եմ հասկանալ, թե ինչ է նշանակում քրիստոնյա:

**Պատասխան**. Քրիստոսին հավատացող և Քրիստոսին աշակերտող:

**Հարց**. Աղաչում եմ քեզ, եղբա՛յր, Քրիստոսի ով լինելը ինձ բացատրիր, որ ես էլ Քրիստոսին աշակերտ լինեմ:

**Պատասխան**. Արդեն ասացինք, թե Երրորդության մեջ երեք անձ կա. Հայր, Որդի, Հոգի. այս երեք անձերից մեկը՝ Որդին, հավիտենությունից առաջ Հորից ծնված լինելով, սահմանված ժամանակին երկնքից խոնարհվեց ու սուրբ Կույս Մարիամի արգանդն իջավ:

**Հարց**. Դրա մասին կանխապես գրվա՞ծ էր:

**Պատասխան**. Այո՛, Դավիթը գրում է. «Նա թող իջնի որպես անձրև գեղմի վրա և որպես ցող՝ երկրի վրա» (Սաղմոս ՀԱ 6):

**Հարց**. Հետո ի՞նչ արեց Կույս Մարիամի արգանդի մեջ:

**Պատասխան**. Նրանից մարմին առնելով՝ միավորեց Իր Աստվածությանը և ինն ամսից հետո ծնվեց Կույս Մարիամից ու մեզ նման մարդ եղավ:

Հարց. Ասացիր, որ ստացած մարմինը միավորեց իր Աստվածությանը, ապա ինչո՞ւ ոմանք ասում են, թե լոկ մարդ ծնվեց:

Պատասխան. Այդ բանն ասում են նեստորականները: Այս պատճառով քրիստոնեական եկեղեցին նզովում է նեստորական աղանդը:

Հարց. Ապա մենք ինչպե՞ս պիտի հավատանք:

Պատասխան. Կատարյալ Աստված և կատարյալ Մարդ, հղացավ և ծնվեց Կույս մորից, և Կույս Մարիամին էլ Աստվածածին ենք դավանում և ոչ՝ մարդածին:

Հարց. Աստված և մարդ ծնելու մասին կանխապես գրվա՞ծ էր:

Պատասխան. Եսայի մարգարեն գրում է. «Ահա կույսը պիտի հղիանա ու որդի ծնի, և Նրա անունը պիտի լինի Էմմանուել» (Եսայի Է 14):

Հարց. Որտե՞ղ ծնվեց:

Պատասխան. Բեթղեհեմի քարանձավում՝ մսուրի մեջ:

Հարց. Այդտեղ ծնվելը նախապես գրվա՞ծ էր:

Պատասխան. Ա՛յո, Միքիա մարգարեն գրում է. «Եվ դու, Բեթղեհե՛մ, Եփրաթայի սակավամարդ տուն, կլինես Հուդայի երկրի հազարավորների մեջ, քեզանից պիտի ելնի ինձ համար Իսրայելի մի իշխան, և Նրա ծագումը աշխարհի սկզբի օրերից է» (Միքիա Ե 2):

Հարց. Անունն ի՞նչ դրեցին:

Պատասխան. Անունը Հիսուս դրեցին:

Հարց. Քանի որ քարանձավի մեջ ծնվեց, այդ մասին մարդ իմացա՞վ:

Պատասխան. Տիրոջ հրեշտակը երևաց հովիվներին և ավետեց. «Մի՛ վախեցեք, որովհետև ահա ձեզ մեծ ուրախություն եմ ավետում...: Որովհետև այսօր Դավթի քաղաքում ձեզ համար ծնվեց մի Փրկիչ, որ Օծյալ Տերն է» (Ղուկաս Բ 10-11), այսինքն՝ Քրիստոս:

Հարց. Արդյոք ուրիշ մարդ ևս իմացա՞վ:

Պատասխան. Արևելքից մոգեր եկան, Հիսուսին ընծա բերին ու երկրպագեցին:

Հարց. Որտեղի՞ց իմացան մոգերը:

Պատասխան. Երկնքում մեծ աստղ տեսան, որը նրանց առաջնորդելով մինչև Երուսաղեմ բերեց:

Հարց. Մոգերի գալու մասին նախապես գրված կա՞ր:

Պատասխան. Դավիթ մարգարեն գրում է. «Թարսիսի և կղզիների թագավորները նվերներ թող մատուցեն նրան: Արաբիայի և Սաբայի արքաներն ընծաներ թող բերեն նրան» (Սաղմոս ՀԱ 10):

Հարց. Մոգերը կարողացա՞ն անմիջապես գտնել Հիսուսին:

Պատասխան. Ո՛չ, որովհետև երբ եկան Երուսաղեմ, աստղը ծածկվեց, ուստի Հերովդես թագավորին հարցրին. «Հրեից թագավորը որտե՞ղ ծընվեց. մենք նրա աստղը տեսանք արևելքում ու նրան երկրպագելու եկանք»: Եվ երբ Հերովդեսն այդ մասին լսեց, զայրացավ, տակնուվրա եղավ ու քահանայապետներին կանչելով հարցրեց. «Քրիստոսը որտե՞ղ պետք է ծնվի», նրանք էլ պատասխանեցին. «Բեթղեհեմում պետք է ծնվի» (Մատթեոս Բ 2):

Հարց. Ապա ի՞նչ արեց Հերովդեսը:

Պատասխան. Մոգերին Բեթղեհեմ ուղարկեց ու պատվիրեց, որ երբ Հիսուսին գտնեն, իրեն հայտնեն, որպեսզի ինքն էլ գնա երկրպագի Նրան:

Հարց. Դրա վրա կասկածում եմ. չլինի՞ թե Հերովդեսի նպատակը Հիսուսին սպանելն է:

Պատասխան. Այո՛, ինչպես որ հետո նշանը ցույց տվեց:

Հարց. Ի՞նչ նշան ցույց տվեց:

Պատասխան. Երբ մոգերը Բեթղեհեմ գնացին, նորածին Հիսուսին տեսան մսուրի մեջ դրված, երկրպագեցին ու իրենց ընծաները տվեցին, բայց Հրեշտակը չթողեց, որ նորից Երուսաղեմ վերադառնան ու Հերովդեսին իմաց տան Հիսուսի տեղը. ապա մի ուրիշ ճանապարհ ցույց տվեց, որով գնացին իրենց երկիրը, իսկ երբ Հերովդեսը իմացավ, որ մոգերն իրեն խաբել

*են, սաստիկ բարկանալով մարդ ուղարկեց, Բեթղեհեմի և նրա սահմանների մեջ եղած բոլոր երկու տարեկանից փոքր տղա երեխաներին կոտորել տվեց, որպեսզի Հիսուսն էլ նրանց մեջ մեռնի (տե՛ս Մատթեոս Բ 16):*

**Հարց**. *Մատթեոս Ավետարանչի խոսքին նայելով՝ Հիսուս այն ժամանակ հինգ, վեց օրական պետք է լիներ, ապա ինչո՞ւ է Հերովդեսը երկու տարեկան երեխաներին սպանել տալիս:*

**Պատասխան**. *Թեպետ Մատթեոսի խոսքից թվում է, թե մանուկների կոտորածը շատ մոտ է Հիսուսի ծնունդին, բայց երկու տարեկանից փոքրերին կոտորելուց իմացվում է, որ բավական ժամանակ անցած պիտի լիներ Հիսուսի ծնունդից մինչև մանուկների կոտորածը, ինչպես որ Մատթեոսի մեկնությունն է ասում*[3]*:*

**Հարց**. *Ո՛հ, ինչ քարսիրտ, վատ մարդ է եղել Հերովդեսը: Արդարև, այդ անմեղ տղաների սպանդը իմ սիրտը շատ ցավեցրեց: Բայց նախապես գրված կա՞ր այս մասին:*

**Պատասխան**. *Երեմիա մարգարեն գրում է. «Մի ձայն է լսվում Ռամայում, ողբ, լաց ու կույժ. Ռաքելը ողբում է իր որդիներին, որդիների պատճառով չէր ուզում մխիթարվել, քանի որ նրանք չկային» (Երեմիա ԼԱ 15):*

**Հարց**. *Ռամա ասվածը որտե՞ղ է, և կամ Ռաքելը ո՞վ է:*

**Պատասխան**. *Ռամա ասվածը մի գյուղ է Բեթղեհեմի ճանապարհի վրա՝ սուրբ Եղիայի վանքի մոտ, որ նաև Արեմաթեա են ասում: Ռաքելն էլ Հակոբ նահապետի կինն է, որ Խառանից գալու ժամանակ այնտեղ մեռավ, և նրա գերեզմանը Ռամայի ներքևում է:*

**Հարց**. *Արդյոք ինչո՞ւ էր լալիս:*

**Պատասխան**. *Ռաքելը՝ որպես Բենիամինի մայր, Հիսուսի պատճառով սպանվող մանուկներին իր զավակներն էր համարում:*

# Ր ա վ ի ղ Բ

*Հարց.* Հետո ի՞նչ եղավ Հիսուսի հետ:

*Պատասխան.* Երբ քառասունքը լրացավ, հայրը և մայրը Հիսուսին տաճար բերեցին:

*Հարց.* Եղբա՛յր, չփոթեցրիր միտքս. Հիսուսը հայր ունի՞:

*Պատասխան.* Թող չշփոթվի միտքդ, Հիսուս երկրի վրա մարմնավոր հայր չունի, Հիսուսի Հայրը երկնքում է:

*Հարց.* Ապա այդ ասածդ ո՞վ է, որ Հիսուսին տաճար բերեց:

*Պատասխան.* Հովսեփ անունով մի արդար մարդ կար, նրա հետ նշանվեց Կույս Մարիամը, որ իրեն պահապան լիներ և ոչ թե՝ ամուսին:

*Հարց.* Արդեն լավ հասկացանք. Կույս Մարիամի Սուրբ Հոգով հղիանալը. արդ նշանածը իր ինչի՞ն էր պետք:

*Պատասխան.* Երկու պատճառով շատ անհրաժեշտ էր Կույս Մարիամին իր կողքին մի պահապան տեր ունենալ. նախ՝ եթե Կույս Մարիամը իր կողքին տեր չունենար, ու ժողովուրդը նրա հղիության մասին իմանար, նրան պիղծ համարելով՝ իսկույն կքարկոծեր, որովհետև օրենքն այդպես էր հրամայում: Երկրորդ՝ եթե Սուրբ Հոգով հղիանալը հասկանային, Հիսուսին չէին խաչի, ու մարդկային բնությունը սատանայի գերությունից չէր ազատվի. դրա համար Աստված այնպես տնօրինեց, որ Հովսեփին Հիսուսի հայրը համարելով՝ Մարիամին չէին կասկածի: Բայց Հիսուսին չէին հավատում ու ասում էին. «Սա հյուսնի տղան չէ՞» (Մարկոս Զ 3):

*Հարց.* Որտեղի՞ց գիտես, որ այս բանը Աստված է տնօրինել:

*Պատասխան.* Ահա՛, Հովհաննես ավետարանիչը, Եսայի մարգարեից վերցնելով, գրում է. «Նրանց աչքերը կուրացրեց և նրանց սրտերը կարծրացրեց, որպեսզի աչքերով չտեսնեն ու սրտերով չիմանան և դարձի չգան, ու Ես նրանց չբժշկեմ» (Հովհաննես ԺԲ 40):

*Հարց.* Երբ Հիսուսին տաճար բերեցին, հրաշք երևա՞ց:

*Պատասխան.* Այո՛, երբ Հիսուս տաճար եկավ, Սրբություն Սրբոց ասված տեղը արևելյան կողմում մի դուռ ուներ, որ շատ տարիներ առաջ փակված էր. այդ դուռն ինքնիրեն բացվեց:

*Հարց.* Այդ դռան մասին կանխապես գրված կա՞ր:

*Պատասխան.* Եզեկիել մարգարեն գրում է. «Նա ինձ ետ դարձրեց սրբարանի արտաքին դռնով, որ նայում էր դեպի արևելք: Այն փակված էր:

Տերն ինձ ասաց. «Այդ դուռը փակ է մնալու ու չի բացվելու, նրանով ոչ ոք չի անցնելու, որպեսզի Իսրայելի Տեր Աստվածը մտնի այդտեղով» (Եզեկիել ԽԴ 1-3):

*Հարց.* Այդ դռան բացվելու մասին մարդ իմացա՞վ:

*Պատասխան.* Ժողովուրդը գիտեր Եզեկիելի գրածը, նաև դրա փակ լինելը գիտեր: Երբ Իսրայելի Տերը գար, պիտի բացվեր, և երբ Հիսուսին տաճարի բակ մտցրին, այն դուռը մեծ ձայնով բացվեց. ժողովուրդն այդ ձայնը լսելուն պես բացականչեց. «Իսրայելի Տերը եկավ, առաջ գնանք», և վազեցին, եկան տաճար: Այս պատճառով քառասնօրյա Քրիստոսի՝ տաճար գալու տոնը մեր եկեղեցին անվանում է Տեառնընդառաջ:

# Ր ա վ ի ղ Գ

*Հարց.* Հետո Հիսուսին ո՞ւր տարան և ի՞նչ արեցին:

*Պատասխան.* Հրեշտակը երևաց Հովսեփին տեսիլքի մեջ և ասաց. «Վերցրո՛ւ տղային ու Նրա մորը, փախի՛ր Եգիպտոս ու այնտեղ մնա՛, մինչև որ ես քեզ կասեմ. որովհետև Հերովդեսը տղային է փնտրում սպանելու համար»: Հովսեփը գիշերը վեր կացավ և տղային ու Նրա մորը

*գաղտնի տարավ Եգիպտոս. այնտեղ որոշ ժամանակ մնաց, մինչև որ Հերովդեսը մահացավ (Մատթեոս Բ 15)։*

**Հարց.** *Հիսուսի՝ Եգիպտոս գնալը կանխապես գրվա՞ծ էր։*

**Պատասխան.** *Այո՛, Եսայի մարգարեն գրում է. «Ահավասիկ Տերը, բազմած թեթևասահ ամպերի վրա, գալու է Եգիպտոս. եգիպտացիների կուռքերը Նրաահից պիտի դողան» (Եսայի ԺԹ 1)։*

**Հարց.** *«Թեթև ամպ» ո՞ւմ համար է ասում։*

**Պատասխան.** *Աստվածածնի համար է ասում որովհետև Աստվածածինը, Հիսուսին գրկելով տարավ Եգիպտոս։*

**Հարց.** *Ինչո՞ւ է Աստվածածնին «թեթև ամպի» նմանեցնում։*

**Պատասխան.** *Թեթև ամպն իր մեջ անձրև ու մեգ չունեցող ճերմակ ու փայլուն մի ամպ է, որ Աստվածածնի անարատ լինելն է նշանակում, ինչպես որ Շարականն էլ է ասում. «Թացություն չունեցող թեթև ամպ»։*

**Հարց.** *Հետո Եգիպտոսից եկա՞ն։*

**Պատասխան.** *Այո՛, Հերովդեսի մահից հետո Տիրոջ հրեշտակը դարձյալ Հովսեփին տեսիլքի մեջ երևաց ու ասաց. «Վե՛ր կաց, վերցրո՛ւ տղային ու Նրա մորը և Իսրայել երկիրը գնա՛, որովհետև մահացան տղային փնտրողները» (Մատթեոս Բ 20)։ Եվ Հովսեփը Հիսուսին և Աստվածածնին վերցրեց, եկավ Գալիլիայի երկիր ու բնակվեց Նազարեթ կոչված քաղաքում։ Հիսուս օրըստօրե մեծանում էր և մինչև երեսուն տարեկան լինելը Իր Ով լինելը մարդկանց չէր հայտնում և ապրում էր իբրև հասարակ մարդ (Մատթեոս Բ 23)։*

# Շ ա վ ի ղ   Դ

**Հարց.** *Հիսուս երեսուն տարեկանից հետո ի՞նչ արեց։*

**Պատասխան.** *Երբ Հիսուս երեսուն տարեկան եղավ, Իր հրեշտակը եկավ։*

**Հարց.** *Այդ հրեշտակ ասածդ ո՞վ է։*

**Պատասխան.** *Հովհաննես Մկրտիչն է, ում մենք սուրբ Կարապետ ենք ասում։*

**Հարց.** *Սուրբ Կարապետը որտե՞ղ էր և որտեղի՞ց եկավ։*

**Պատասխան.** *Անապատներում էր, ինչպես Ղուկաս ավետարանիչն է գրում. «Եվ մանուկը աճում ու զորանում էր հոգով ու մնում էր ամայի տեղերում, մինչև Իսրայելում Նրա երևալու օրը» (Ղուկաս Ա 80)։*

**Հարց.** *Ինչի՞ համար սուրբ Կարապետը եկավ։*

**Պատասխան.** *Հիսուսի անցնելիք ճանապարհները հարթելու համար։*

**Հարց.** *Այս մասին նախապես գրված կա՞ր։*

**Պատասխան.** *Այո՛, Եսայի մարգարեն գրում է. «Անապատում կանչողի ձայնն է. պատրաստեցե՛ք Տիրոջ ճանապարհը և հարթեցե՛ք մեր Աստծու շավիղները» (Եսայի Խ 3)։ Նաև Մաղաքիան է գրում. «Ահա՛ Ես Իմ հրեշտակն եմ ուղարկում, որ Իմ ճանապարհները հարթի» (Մաղաքիա Գ 1)։*

**Հարց.** *Մարգարեների խոսքից երևում է, որ սուրբ Կարապետին ուղարկող է եղել. արդյոք ո՞վ է ուղարկել նրան։*

**Պատասխան.** *Սուրբ Կարապետին ուղարկողը Աստված էր, ինչպես որ ինքն է ասում. «Եվ ես չէի ճանաչում Նրան. սակայն Նա, Ով ինձ ուղարկեց ջրով մկրտելու, ինձ ասաց. «Ում վրա տեսնես, որ իջնում է Հոգին և մնում, Նա է, որ մկրտում է Սուրբ Հոգով» (Հովհաննես Ա 33)։*

**Հարց.** *Ինչպիսի՞ վայր և ինչպիսի՞ ճանապարհ է արդյոք սուրբ Կարապետի պատրաստելիքը և մաքրելիքը։*

Պատասխան. Ջկարծես, թե սուրբ Կարապետի պատրաստելիք վայրը և մաքրելիք ճանապարհը նման է այս աշխարհի տանը կամ ճանապարհին, որ հողն ու քարը մաքրի: Այս բանը վայել է մարմնավոր թագավորներին տրվելիք պատվին: Երբ նրանք մի տեղ են գնում, մեկը գնում է առջևից, որպեսզի ճանապարհները մաքրի և թագավորի համար բազմելու գահ պատրաստի, որովհետև այս աշխարհի թագավորները, հողեղեն լինելով, նրանց անցնելիք ճանապարհն էլ է հողից, և բազմելիք գահն էլ է հողից, քարից կամ փայտից: Մինչդեռ այս գալիք Թագավորը Աստված Ինքն է, բոլոր թագավորների Թագավորը, որի Աթոռը երկինքն է, և Նա չի բնակվում ձեռակերտ տների մեջ:

Հարց. Ի՞նչ գիտես, որ չի բնակվում:

Պատասխան. Աստված Ինքն ասաց. «Երկինքն Իմ աթոռն է, և երկիրն՝ Իմ ոտքերի պատվանդանը: Ի՞նչ տուն պիտի շինեք Ինձ համար,- ասում է Տերը» (Եսայի ԿԶ 1):

Հարց. Ապա ինչպիսի՞ տան մեջ է բնակվում:

Պատասխան. Աստված Ինքը, միշտ կենդանի լինելով, կենդանի տան մեջ է բնակվում:

Հարց. Տունը կենդանի կլինի՞:

Պատասխան. Այո՛, կլինի. մենք ենք կենդանի տունը, և մեր սրտի մեջ է բնակվում, ինչպես որ Պողոսն է ասում. «Իրապես դուք կենդանի Աստծու տաճար եք» (Ա Կորնթ. Գ 16):

Հարց. Պողոսն այդ խոսքը որտեղի՞ց է ասում:

Պատասխան. Ղևտացիների այս գրածը կարդալով. «Նրանց մեջ պիտի գնամ ու նրանց մեջ պիտի բնակվեմ. Ես նրանց Աստված պետք է լինեմ, և նրանք էլ Իմ ժողովուրդը պետք է լինեն» (Ղևտական ԻԶ 12):

Հարց. Հասկացանք, որ Աստծու բնակվելու տունը մեր սիրտն է, իսկ անցնելու ճանապարհը ո՞րն է:

Պատասխան. Սրտի ճանապարհը բերանն ու ականջն են. այնտեղից մտնում ու մեր սրտի մեջ է բնակվում:

Հարց. Վա՜յ ինձ, եղբա՛յր, ինչպիսի՞ մաքուր բերան և սուրբ սիրտ է պետք, որ ամբողջ աշխարհը ոչնչից գոյացնող ամենամաքուր Աստված, Ում երկյուղից հրեշտակներն անգամ իրենց դեմքերն են ծածկում, այն Աստվածը մեր բերանից մտնի ու մեր սրտի մեջ բնակվի:

Պատասխան. Հիրավի, մեծ բան է, որովհետև եթե մի սիրելի բարեկամ ունենաս, և նա քո տուն հյուր գալու լինի, ինչքա՜ն ճիգ ու ջանք կգործադրես՝ դռներդ կամ ճանապարհներդ մաքրելու և մանավանդ տունդ առավել մաքրելու, որ չլինի թե բարեկամդ հանկարծ չհավանի, ու սիրտը նեղվի կամ բարկանա: Եթե այդ բարեկամդ բարկանա էլ, հնարավոր է, որ շուտով նրա նման մեկ ուրիշ բարեկամ էլ գտնես: Եվ եթե մահկանացու բարեկամի համար այդքան ճիգ ու ջանք ես թափում, ապա որքա՜ն անհրաժեշտ է հոգ տանել մեր կենդանի ու հավիտենական բարեկամի ու բարերար Աստծու բնակության վայրն ու անցնելիք ճանապարհը մաքուր և սուրբ պահելու համար: Որովհետև եթե Նա բարկանա, ի՞նչ կլինի վիճակդ. Նրա նման մի այլ բարեկամ չես կարող գտնել, քանի որ Նրա նման այլ Աստված չկա, որ նրան քեզ բարեկամ դարձնես:

Հարց. Ապա մենք ի՞նչ պիտի անենք. եթե քո խոսքին նայենք, մեկն իսկ չի կարող Աստծու բնակարան լինել:

Պատասխան. Այս բաների համար շատ խրատներ կան քեզ տալու, բայց հիմա ժամանակը չէ, քանի որ դեռ Քրիստոսի Ով լինելը չիմացար: Դու մեզ սկզբից Քրիստոսի մասին հարցրիր, որ Ով լինելն իմանաս ու Նրան աշակերտ լինես: Դրա համար ճանապարհից մի՛ շեղվիր, որ ետ չմնանք, այլ, ճիշտ գնալով, մի անգամ Քրիստոսի Ով լինելը իմացիր, և այնուհետև Նրան

ծառայելու խրատները քեզ կբացատրեմ Աստծով: Դու հիմա սուրբ Կարապետի համար ինչ որ պիտի հարցնես, հարցրո՛ւ:

Հարց. Հասկացանք, որ սուրբ Կարապետի մաքրելիք տունը և ճանապարհը մարդկանց սիրտն ու բերանն է. արդյո՞ք նա կարողացավ մաքրել:

Պատասխան. Մարդկանց սիրտն ու բերանը իր ձեռքով չպետք է լվանար և մաքրեր. այլ սկսեց քարոզել ժողովրդին. «Ապաշխարեցե՛ք, որովհետև երկնքի արքայությունը մոտեցել է» (Մատթեոս Գ 2):

Հարց. Ժողովուրդն ընդունե՞ց քարոզչությունը:

Պատասխան. Այո՛, ինչպես որ Մատթեոս ավետարանիչը գրում է. «Այն ժամանակ նրա մոտ էին գնում բոլոր երուսաղեմցիները, ամբողջ Հրեաստանը ու Հորդանանի շրջակայքի ժողովուրդը, մկրտվում էին նրանից Հորդանան գետում և խոստովանում էին իրենց մեղքերը» (Մատթեոս Գ 5-7):

# Շավիղ Ե

Հարց. Այդ միջոցին ի՞նչ եղավ Հիսուս:

Պատասխան. Հիսուսն Ինքն էլ մկրտվեց սուրբ Կարապետի կողմից, ինչպես որ գրում է Մատթեոս ավետարանիչը. «Եվ երբ Հիսուս մկրտվեց, իսկույն ջրից դուրս ելավ» (Մատթեոս Գ 16):

Հարց. Ինչո՞ւ է Հիսուսի համար ասում, թե ջրից շուտ դուրս եկավ:

Պատասխան. Հիսուս մեղք չուներ, որ խոստովանելով ջրի մեջ երկար մնար, դրա համար էլ շուտ դուրս եկավ:

Հարց. Հիսուսի մկրտվելուց հետո հրաշք երևա՞ց:

Պատասխան. Այո՛, երբ Հիսուս ջրից դուրս ելավ, երկինքը բացվեց ու Սուրբ Հոգին աղավնու պես իջավ Նրա վրա, և Հայր Աստված ամպի միջից կանչեց. «Դա է իմ սիրելի Որդին, որն ունի Իմ ամբողջ բարեհաճությունը» (Մատթեոս Գ 17):

Հարց. Ո՞ւր գնաց Հիսուս մկրտվելուց հետո:

Պատասխան. Գնաց անապատ՝ սատանայից փորձվելու: Քառասուն ցերեկ ու քառասուն գիշեր ծոմ պահելուց հետո, երբ քաղցեց, սատանան մոտեցավ Նրան փորձելու համար. որովհետև Հիսուսին էլ Ադամի պես կարծելով ասաց՝ «Սրան էլ կարող եմ խաբել», բայց ինքը պարտվեց ու ամոթահար գնաց (Մատթեոս Դ 1):

Հարց. Հետո ո՞ւր գնաց Հիսուս:

Պատասխան. Անապատից իջնելով՝ գնաց Զաբուղոնի և Նեփթաղիմի երկիրը՝ Տիբերիա ծովի ափին գտնվող Կափառնաում կոչվող քաղաք, և այնտեղ էր բնակվում (Մատթեոս Դ 14):

Հարց. Հետո ի՞նչ արեց Հիսուս:

Պատասխան. Ինքն էլ սուրբ Կարապետի պես քարոզել սկսեց. «Ապաշխարե՛ք, երկնքի արքայությունը մոտ է» ասելով:

Հարց. Հիսուս հրա՞շք էլ կատարեց:

Պատասխան. Այո՛, բազում հրաշքներ կատարեց. նախ՝ ջուրը գինի դարձրեց, ապա՝ կաղերին քայլեցրեց, դիվահարներին բժշկեց, բացեց կույրերի աչքերը, խուլերի ականջները, համրերի լեզուները, բորոտներ մաքրեց, մեռյալներին կյանք պարգևեց, Տիբերիա ծովի վրա քայլեց, հինգ հացով և երկու ձկով հինգ հազարից ավելի մարդ կերակրեց, և դեռ տասներկու զամբյուղ էլ հաց ու ձուկ ավելացավ:

Հարց. Այդ ի՞նչ մեծ բարերարություն և ի՞նչ շնորհ է, որ կատարել է Հիսուս մարդկային բնության համար. այդ հրաշքների մասին նախապես գրվա՞ծ էր:

Պատասխան. Այո՛, Եսայի մարգարեն գրում է. «Այն ժամանակ կույրերի աչքերը պետք է բացվեն, և խուլերի ականջները լսեն. այն ժամանակ կաղը եղջերուի պես պիտի վազի, և ծանրախոսների լեզուն պարզ պիտի դառնա» (Եսայի ԼԵ 5):

Հարց. Հիսուս մենա՞կ էր շրջում, թե՞ աշակերտներ ուներ:

Պատասխան. Տասներկու աշակերտներ ուներ, որոնցից ոմանք ձկնորսներ էին, ոմանք էլ՝ մաքսավոր: Հիսուս կանչեց նրանց ու ասաց. «Իմ հետևի՛ց եկեք, և Ես ձեզ մարդկանց որսորդներ պիտի դարձնեմ» (Մատթեոս Դ 19): Նրանք էլ եկան, և միշտ Իր հետ էին շրջում:

Հարց. Աշակերտների մասին նախապես գրված կա՞ր:

Պատասխան. Այո՛, Երեմիա մարգարեն գրում է. «Ահավասիկ Ես կուղարկեմ բազում ձկնորսների և որսորդների, ու նրանք կորսան նրանց» (Երեմիա ԺԶ 16):

Հարց. Ի՞նչ էին աշակերտների անունները:

Պատասխան. Պետրոս, Անդրեաս, Հակոբոս, Հովհաննես, Փիլիպոս, Բարդուղիմեոս, Թովմաս, Մատթեոս մաքսավոր, Թադեոս, Ալփեայի որդի Հակոբոս, Սիմոն Կանանացի, Հուդա Իսկարիովտացի, որն էլ Հիսուսին մատնեց:

Հարց. Աշակերտներն իրար ազգականնե՞ր էին:

Պատասխան. Պետրոսն ու Անդրեասը եղբայրներ են, եղբայր են նաև Հակոբոսն ու Հովհաննեսը: Թադեոսին Հուդա էլ են անվանում, իսկ Հակոբոս Ալփեային էլ՝ Տեառնեղբայր:

Հարց. Դարձյալ միտքս չփոթեցրիր, եղբա՛յր, Հիսուս եղբայր ունի՞:

Պատասխան. Ինչո՞ւ նորից միտքդ չփոթվեց, գեթ մի անգամ լսիր ինձ, տես՝ ինչ պետք է ասեմ քեզ վերջում: Հիսուս եղբայր չունի, և հիմա քեզ չեմ կարող բացատրել. երբ ժամանակը գա, հերթով կասեմ, իսկ հիմա այլ հարցեր տուր:

# Ռ ա վ ի ղ   Զ

Հարց. Հիսուս ի՞նչ սովորեցրեց աշակերտներին:

Պատասխան. Տերունական աղոթքը:

Հարց. Եթե գիտես Տերունական աղոթքը, ասա՛, որ լսեմ:

Պատասխան. «Հայր մեր, որ երկնքում ես. թող սո՛ւրբ լինի անունը Քո: Քո թագավորությունը թող գա: Քո կա՛մքը թող լինի երկրի վրա, ինչպես որ երկնքում է: Մեր հանապազօրյա հացը տո՛ւր մեզ այսօր և ներիՙր մեզ մեր հանցանքները, ինչպես որ մենք ենք ներում նրանց, որ հանցանք ենք գործում մեր դեմ. և մի՛ տար մեզ փորձության, այլ փրկիր մեզ չարից: Որովհետև Քո՛նն է թագավորությունը և զորությունը և փառքը հավիտյանս. ամեն» (Մատթեոս Զ 9-14):

Հարց. Այդ աղոթքը շատ է ցանկանում իմ հոգին, եթե կարող ես, ինձ էլ սովորեցրո՛ւ:

Պատասխան. Կսովորեցնեմ. բայց հիմա ժամանակը չէ, երբ Քրիստոսին ճանաչես, այն ժամանակ է պետք քեզ այդ աղոթքը. հիմա այլ հարցեր տուր:

Հարց. Հետո ի՞նչ արեց Հիսուս:

Պատասխան. Մկրտվելուց հետո երեք տարի քարոզեց և շատ հրաշքներ գործեց:

Հարց. Հրեաները հավատացի՞ն Հիսուսի հրաշքներին:

Պատասխան. Հասարակ ժողովրդից հավատացող եղավ. բայց քահանայապետները չէին հավատում Հիսուսին: Հիսուս ինչքան հրաշք որ կատարում էր, իրենց նախանձը օրըստօրե ավելանում էր. «Սա հյուսնի տղան չէ՞» (Մարկոս Զ 3) ասելով՝ նախատում էին, մինչև անգամ մտադրվեցին Հիսուսին սպանել:

Հարց. Ապա Հիսուս ի՞նչ արեց:

Պատասխան. Երեք տարի հետո՝ Ծաղկազարդի կիրակիին, Բեթանիայից դուրս եկավ և ավանակ հեծնելով՝ Երուսաղեմ եկավ:

Հարց. Այդ մասին նախապես գրված կա՞ր:

Պատասխան. Այո՛, Զաքարիա մարգարեն գրում է. «Ուրախացի՛ր խնդությամբ, դո՛ւստրդ Սիոնի, կանչի՛ր ցնծությամբ, դո՛ւստրդ Երուսաղեմի, ահա գալիս է քո թագավորը քեզ մոտ, քո արդար, փրկագործ ու խոնարհ թագավորը՝ հեծած էշի, էշի քուռակի վրա» (Զաքարիա Թ 9):

Հարց. Երբ Հիսուսին տեսան, ի՞նչ ասացին հավաքվածները:

Պատասխան. Մեծահասակները և ծծկեր երեխաներն անգամ «Օվսաննա» ասացին, այսինքն՝ «Ո՛վ Տեր, ազատի՛ր մեզ» կանչեցին:

Հարց. Այդ երեխաների «Օվսաննա» կանչելը նախապես գրվա՞ծ էր:

Պատասխան. Այո՛, Դավիթը գրում է. «Մանկահասակ և ծծկեր երեխաների բերանից թող օրհնություն ելնի...» (Սաղմոս Ը 3):

Հարց. Հետո ո՞ւր գնաց Հիսուս:

Պատասխան. Մինչև չորեքշաբթի ցերեկը տաճարի մեջ քարոզում էր ու գիշերը Բեթանիա կոչվող գյուղում հանգստանում: Ավագ չորեքշաբթի Հիսուս իր տասներկու աշակերտներով Սիմոն բորոտի տանը նստած էր, Մարիամ անունով մի կին մեկ շիշ պատվական և թանկագին նարդոսի յուղ բերեց և բոլորի ներկայությամբ Հիսուսի գլխին լցրեց, և տունը լցվեց յուղի անուշահոտությունով (Մարկոս ԺԴ 3):

Հարց. Հիսուս չզայրացա՞վ:

Պատասխան. Հիսուս չզայրացավ, բայց աշակերտները զայրացան:

Հարց. Աշակերտները ինչո՞ւ զայրացան:

Պատասխան. Ասում էին, թե այդ յուղը իզուր տեղը կորավ, եթե վաճառվեր, երեք հարյուր դահեկանից ավելի կարժենար և աղքատներին կտրվեր:

Հարց. Հիսուս ի՞նչ ասաց:

Պատասխան. «Աղքատներն ամեն ժամ ձեզ մոտ են. երբ նրանց օգնել ցանկանաք, կարող եք օգնել, բայց Ինձ ամեն ժամ չեք կարող տեսնել, դրա համար այս կնոջը բան մի՛ ասեք և մի՛ նեղացրեք, այլ ընդհակառակը, ամեն տեղ քարոզեցեք դրա արածը, որովհետև այդ կինը մեծ բարեգործություն արեց՝ Իմ վրա յուղ թափելով, խորհրդանշեց Իմ թաղումը» (հմմտ. Մարկոս ԺԴ 7):

Հարց. Աշակերտների բարկությունն անցա՞վ:

Պատասխան. Բոլորի բարկությունն անցավ, բայց Հուդայի բարկությունը չանցավ, որովհետև աղքատների գանձանակը Հուդայի մոտ էր, այն յուղն էլ որ վաճառվեր, դրամը այն գանձանակը պետք է դրվեր, և Հուդան դրա միջից ուզածի չափ կարող էր գողանալ. դրա համար Հուդայի բարկությունը չմարեց:

Հարց. Այդպիսի գող մարդուն ինչո՞ւ գանձապետ դարձրեց Հիսուս:

Պատասխան. Հիսուս գիտեր Հուդայի արծաթասեր և գող լինելը. դրա համար գանձապետ դարձրեց, որ աչքը կշտանա և գողություն չանի, բայց բնավ օգուտ չեղավ:

Հարց. Շատ եմ վախենում, եղբա՛յր, չլինի որ Հիսուսին վնաս պատճառի, որովհետև արծաթասեր և գող եղողը, մարդ սպանելուց էլ չի վախենա:

Պատասխան. Այո՛, ասածիդ պես է, որովհետև Հուդան գիտեր, որ հրեաների միտքը Հիսուսին սպանելն է, բայց նրանք կարիք ունեին մեկի, որ իրենց առաջնորդեր և մատնացույց աներ Հիսուսին, հատկապես այն ժամանակ, երբ Նա մենակ էր: Դրա համար էլ Հուդան մտածեց գնալ հրեաների մոտ, նրանցից արծաթ ստանալ և մատնել Հիսուսին:

Հարց. Մտքի դրածը կարողացա՞վ կատարել:

Պատասխան. Այո՛, ինչպես Մատթեոս ավետարանիչն է գրում. «Այն ժամանակ տասներկուսից մեկը՝ Հուդա Իսկարիովտացի կոչվածը, գնաց քահանայապետների մոտ ու ասաց. «Ի՞նչ

*կկամենաք ինձ տալ, որ ես Նրան ձեզ մատնեմ»: Եվ նրանք երեսուն արծաթ դրամ խոստացան նրան» (Մատթեոս ԻԶ 14-15):*

Հարց. *Այդ մասին նախապես գրված կա՞ր:*

Պատասխան. *Այո՛, Զաքարիա մարգարեն է գրում. «Ես վերցրի երեսուն արծաթը և Տիրոջ Տանը գցեցի բովի մեջ» (Զաքարիա ԺԱ 13):*

Հարց. *Հետո ի՞նչ արեց չար Հուդան:*

Պատասխան. *Գնաց հրեաներին խոսք տվեց ու կրկին գնաց Հիսուսի մոտ, որ երբ առանձին տեսնի Նրան, գնա հրեաներին հայտնի, որ բռնեն Հիսուսին:*

Հարց. *Ապա Հիսուս ո՞ւր գնաց:*

Պատասխան. *Ավագ հինգշաբթի երեկոյան Հիսուս տասներկու աշակերտների հետ գնաց Վերնատուն և զատկական գառ ուտելով հին օրենքը կատարեց, որովհետև զատիկ էր: Հետո հացը վերցրեց, օրհնեց ու կիսեց և աշակերտներին տալով՝ ասաց. «Առե՛ք և կերեք, այս է Իմ Մարմինը» (Մատթեոս ԻԶ 26): Հետո գինու գավաթը ձեռքն առնելով՝ օրհնեց ու աշակերտներին տալով՝ ասաց. «Խմե՛ք դրանից բոլորդ, որովհետև այդ է Նոր Ուխտի Իմ Արյունը, որ թափվում է շատերի համար՝ իրենց մեղքերի թողության համար» (Մատթեոս ԻԶ 28):*

Հարց. *Ի՞նչ է Ուխտը, եղբայր:*

Պատասխան. *Ուխտը խոստում է նշանակում: Սուրբ Գրքից գիտենք, որ իսրայելացիները Եգիպտոսի մեջ գերի էին մոտ չորս հարյուր տարի, որովհետև այդ ժողովրդի հայրը՝ Հակոբ նահապետը, սկզբից Երուսաղեմից Եգիպտոս էր եկել: Իր և իր որդու՝ Հովսեփի մահվանից հետո նրա ողջ սերունդը գերի ընկավ Փարավոնի ձեռքը: Եվ երբ Աստված ցանկացավ Մովսեսի միջոցով նրանց ազատել և նորից Երուսաղեմ տանել, գառի արյունով խոստացավ տանել և տարավ. դրան Հին Ուխտ են անվանում (Ելք. ԺԲ 3):*

Հարց. *Իսկ ի՞նչն է Հիսուսի ասած Նոր Ուխտը:*

Պատասխան. *Նոր Ուխտը շատ մեծ է Հին Ուխտից, որովհետև Հին Ուխտը գառի արյունով էր, իսկ Նոր Ուխտը Աստծու Գառի արյունով է, ինչպես որ Հովհաննես Մկրտիչը Հիսուսի համար ասում է. «Ահա՛ Գառն Աստծու, որ վերցնում է աշխարհի մեղքը» (Հովհաննես Ա 29): Գեթ մի անգամ մտածի՛ր, թե որքան տարբերություն կա կենդանիների և մարդկանց միջև, և երկրորդ՝ Աստծու և մարդկանց միջև: Դրանից հասկացի՛ր Նոր Ուխտի մեծությունը:*

Հարց. *Հասկացա, որ գառի արյունով իսրայելացիները չորս հարյուր տարվա գերությունից ազատվեցին, ապա ի՞նչ հրաշք եղավ Աստծու Գառի արյունով:*

Պատասխան. *Լսի՛ր, որ պատմեմ. որովհետև դրախտից աքսորված մեր նախահայր Ադամը իր բոլոր զավակներով, այսինքն՝ բոլոր նահապետներով և մարգարեներով այս աշխարհի կամ դժոխքի մեջ գերի էր ընկած սատանայի ձեռքը: Մինչև անգամ իսրայելացիներին Եգիպտոսի գերությունից ազատող Մովսեսն էլ գերի էր սատանային հազարավոր տարիներ: Եվ մարդկային տկար բնությամբ այդ գերությունից ազատվելու ոչ մի հնար չգտնվեց: Ուստի Աստծու Որդին խոստացավ Իր արյամբ մարդկային բնությունը սատանայի գերությունից ազատել և Վերին Երուսաղեմ տանել, այսինքն՝ արքայություն: Ահա այս է Նոր Ուխտը, որի համար Երեմիա մարգարեն ասում է. «Ահավասիկ օրեր են գալու,- ասում է Տերը,- երբ Նոր Ուխտ եմ կապելու Իսրայելի տան հետ» (Երեմիա ԼԱ 31): Զաքարիան ասում է. «Իսկ դու արյամբ կնքված ուխտի համար պիտի արձակես քո գերիներին իրենց անջուր գբից» (Զաքարիա Թ 11):*

*Տեսնո՞ւմ ես, եղբա՛յր, Հին Ուխտի և Նոր Ուխտի տարբերությունը: Հին Ուխտն ազատեց Եգիպտոսից, իսկ Նոր Ուխտը՝ դժոխքից: Հին Ուխտը մի ազգ ազատեց, իսկ Նոր Ուխտը՝ բոլոր հավատացյալներին: Հին Ուխտը Կարմիր ծովը պատռեց, իսկ Նոր Ուխտը՝ այս աշխարհի մեղքի ծովը: Հին Ուխտը ազատված ժողովրդին այս աշխարհի քանանացիների*

*երկիրը՝ Երուսաղեմ քաղաք տարավ, իսկ Նոր Ուխտը Վերին Երուսաղեմ պետք է տանի: Հին Ուխտը ուտողները մահացան, իսկ Նոր Ուխտը ուտողները չպետք է մահանան, ինչպես որ Հիսուս է վկայել. «Ձեր հայրերը անապատում մանանան կերան, սակայն մեռան...: Թե մեկն այս հացից ուտի, հավիտենապես կապրի» (Հովհաննես Զ 49-52):*

**Հարց.** *Շատ վախեցա: Իրապես մեծ տարբերություն կա Հին և Նոր Ուխտի միջև:*

**Պատասխան.** *Վախը և ահը դեռ վերջում է լինելու: Քրիստոսին ճանաչելուց հետո Նոր Ուխտի վրա պետք է զարհուրես: Որովհետև Նոր Ուխտի զորությունը ամբողջապես չպատմեցի: Երբ Քրիստոսին ճանաչես, դրանից հետո կբացատրեմ: Հիմա այլ հարցեր տուր:*

**Հարց.** *Երբ Հիսուս ձեռքը վերցրեց հացը և ասաց, որ դա Իր Մարմինն է, աշակերտներն ի՞նչ ասացին:*

**Պատասխան.** *Ամենևին բան չասացին, այլ շատ ուրախացան: Որովհետև Հիսուս սկզբից ասել էր. «Եթե Մարդու Որդու մարմինը չուտեք և արյունը չխմեք, հավիտենական կյանք չեք ունենա» (Հովհաննես Զ 54-55): Սրա համար աշակերտները կասկածի մեջ էին, թե «ինչպե՞ս պետք է մարմինը ուտենք և արյունը խմենք»: Երբ Հիսուս իր Մարմնի և Արյան փոխարեն հացը և գինին ցույց տվեց, շատ ուրախացան:*

**Հարց.** *Հացը մարմին կլինի՞:*

**Պատասխան.** *Չկարծես, թե Հիսուս այս ասաց սոսկ իբրև առակ կամ օրինակ, ինչպես որ մի քանի օրինակներով էր ասել. «Ես եմ խաղողի որթը» և «Ես եմ դուռը» և այլն (Հովհաննես ԺԵ 1): Թեպետ ասաց, թե Ես խաղողի որթ եմ կամ դուռ, բայց ձեռքով չբռնեց և չասաց, թե այս որթը կամ այս դուռը Ես եմ: Սակայն «Ես եմ կենաց հացը» ասելու ժամանակ հացը վերցրեց ձեռքը, օրհնեց, կիսեց և աշակերտներին տվեց՝ ասելով. «Սա է Իմ Մարմինը»: Սա սոսկ օրինակ չէ, այլ իրողություն և ճշմարիտ է: Օրինակը միայն խոսքով է լինում, և իրողություն չի լինում: Խոսքով մի որևէ օրինակ ես ցույց տալիսմինչդեռ ձեռքով կատարված բանն է ճշմարիտը:*

**Հարց.** *Ամեն հացն ու գինին էլ Հիսուսի Մարմինն ու Արյո՞ւնն են :*

**Պատասխան.** *Ո՛չ, եղբա՛յր, հասարակ հացն ու գինին լոկ նյութ են: Հիսուս հացն ու գինին օրհնելուց հետո ասաց, որ Իր Մարմինն ու Արյունն*[4] *է:*

**Հարց.** *Ուրեմն ո՞ր հացը և ո՞ր գինին է:*

**Պատասխան.** *Ազնվացեղ ցորենի ալյուր պետք է լինի և անապակ ու չթթված գինի, նաև սրբակենցաղ և անարատ քահանա: Եվ քահանային անհրաժեշտ է մի քանի օր առաջ պատրաստվել՝ հեռանալով իր ընտանիքից, առանձնանալով եկեղեցու խցի մեջ: Եվ այն օրը նա մեծ զգուշությամբ ու ջերմեռանդ աղոթքներով այն ալյուրը նշխարք է դարձնում: Հետո նշխարքով և անապակ գինով պատարագ է մատուցում, երկյուղով և ջերմեռանդ աղոթքներով Հիսուսի տնօրինության խորհուրդներն է կատարում: Այդ ժամանակ պետք է հավատանք, որ հացը և գինին դառնում են Հիսուսի Մարմինն ու Արյունը:*

**Հարց.** *Ինչպե՞ս կարող ենք ճաշակել Հիսուսի Մարմինն ու Արյունը:*

**Պատասխան.** *Այդ հարցի ժամանակը չէ: Դու հիմա միայն Հիսուսի մասին հարցրո՛ւ և հետո այդ բաների մասին կհարցնես:*

**Հարց.** *Վախենում եմ Հիսուսի մասին բան հարցնել: Չլինի թե Հիսուսին ձերբակալելու մասին լսեմ, որովհետև հրեաները չար Հուդային օգտագործեցին: Անշուշտ կկատարեն իրենց չար կամքը: Բայց այս հարցնեմ. Հիսուսը Վերնատնից երբ դուրս եկավ, ո՞ւր գնաց:*

**Պատասխան.** *Աշակերտների հետ գնաց Ձիթենյաց լեռան ստորոտում գտնվող Գեթսեմանի ձորը: Իսկ Հուդան, նրանցից առանձնանալով գնաց հրեաներին իմաց տալու, թե Հիսուսի բռնելու ժամանակը հասել է:*

**Հարց.** *Ես հասկացա, որ չար Հուդան իր չարությունը պետք է աներ: Բայց նախապես գրվա՞ծ էր Հուդայի մասին:*

Պատասխան. Այո՛, Դավիթ մարգարեն է գրում. «Իմ հացն ուտողը Ինձ մատնեց» (հմմտ. Սաղմոս Խ 10):

Հարց. Հետո ի՞նչ արեց չար Հուդան:

Պատասխան. Հրեաներին առաջնորդելով բերեց, որ Հիսուսին ձերբակալեն:

Հարց. Հիսուսից չամաչե՞ց, որ ձերբակալել տվեց:

Պատասխան. Բացահայտ չասաց, որ «Սա է Հիսուսը, ձերբակալե՛ք», բայց նրանց հասկացրել էր. թե՝ «Ես ում համբուրեմ, իմացե՛ք, որ Նա է Հիսուսը: Ձերբակալե՛ք և զգուշությամբ տարե՛ք»: Երբ մեծ ամբոխով դիմացից եկան, Հուդան գնաց, Հիսուսին համբուրեց՝ «Ո՛ղջ եղիր, վարդապետ» ասելով: Հրեաները Հիսուսին ձերբակալեցին, իսկ աշակերտները թողեցին և փախան:

Հարց. Այդ մասին նախապես կա՞ր գրված:

Պատասխան. Զաքարիա մարգարեն է գրում. «Ես պիտի հարվածեմ իմ հովվին, և իմ հոտերը պիտի ցրվեն» (Զաքարիա ԺԳ 7):

Հարց. Երբ Հիսուսին բռնեցին, ո՞ւր տարան:

Պատասխան. Քահանայապետի մոտ տարան: Որտեղ Հիսուսի կրած չարչարանքները եթե հողին ու քարին տային, չէին դիմանա: Բայց Հիսուս մեր փրկության համար այնքան չարչարանքների դիմացավ, որ մինչև անգամ մահը հանձն առավ մեզ՝ սատանայի գերությունից ազատելու համար:

Հարց. Ինչպիսի՞ չարչարանքներ տվեցին:

Պատասխան. Նախ Հիսուսի շուրջը հավաքվեցին և Հիսուսին իրենց մեջ առան, ինչպես Դավիթ մարգարեն է գրում. «Զորս կողմս բազում շներ հավաքվեցին, և չարագործների ամբոխն Ինձ պաշարեց» (Սաղմոս ԻԱ 17):

Հարց. Այդ չար ամբոխն ի՞նչ արեց Հիսուսին:

Պատասխան. Ոմանք երեսին էին թքում, ոմանք ապտակում էին, ոմանք մեջքին և գլխին էին հարվածում, իսկ մոտ գալ չկարողացողներն էլ հեռվից հայհոյում էին:

Հարց. Ի՞նչ դաժանություն է հրեաների արածը: Այդ մասին նախապես գրվա՞ծ էր:

Պատասխան. Այո՛, Եսայի մարգարեն է գրում. «Թիկունքս հարվածների տվեցի, ծնոտներս՝ ապտակի և երեսս չուռ չտվի նախատինքից ու թքից» (Եսայի Ծ 6):

Հարց. Հետո Հիսուսին ի՞նչ արեցին:

Պատասխան. Երեկոյից մինչև առավոտ զանազան չարչարանքների ենթարկելով՝ ոտքից մինչև գլուխ առողջ տեղ չթողեցին: Առավոտյան տարան Պիղատոսի մոտ, վրան շատ ծանր հանցանքներ բարդեցին՝ ասելով, թե ինքն իրեն հրեից թագավոր է հռչակել: Վերջապես Պիղատոսին համոզելով՝ Հիսուսին խաչելու հրամանագիրը վերցրեցին:

Հարց. Ի՞նչ ասացիր, եղբա՛յր, Հիսուսին պետք է սպանե՞ն:

Պատասխան. Այո՛, երբ հրամանագիրը գրվեց, Պիղատոսի զինվորները փշե թագ հյուսեցին և Հիսուսի գլխին դրեցին: Վրան կարմիր քղամիդ և ձեռքը մի եղեգ տվեցին գավազանի փոխարեն: Եվ նրա առջև ծունկի գալով՝ ծաղրելով ասում էին. «Ո՛ղջ լինի հրեից թագավորը»: Ձեռքի գավազանը վերցնելով՝ գլխին էին հարվածում. հետո խաչափայտը ուսին դնելով՝ տարան դեպի Գողգոթա (Մատթեոս ԻԷ 29):

Հարց. Այդ մասին նախապես կա՞ր գրված:

Պատասխան. Այո՛, Եսայի մարգարեն է գրում. «Իր իշխանությունն Իր ուսերի վրա պիտի լինի» (Եսայի Թ 6):

Հարց. Հիսուս կարողացա՞վ հեշտությամբ գնալ Գողգոթա:

Պատասխան. Ո՛չ, որովհետև երեկոյից մինչև առավոտ զանազան չարչարանքներով ամբողջ մարմինը անխնա խոշտանգեցին: Խաչափայտի ծանրության պատճառով Հիսուս շատ վատ վիճակի մեջ էր: Դրա համար Երեմիա մարգարեն իր Ողբի մեջ գրում է. «Ձե՞զ եմ ասում,

*ձե՛զ եմ ասում, ո՛վ անցորդներ, ե՛տ դարձեք, նայեցե՛ք, տեսեք՝ Ինձ հասած ցավերի նման ցավեր եղե՞լ են արդյոք» (Ողբ Ա 12):*

**Հարց.** *Ուրիշ ի՞նչ ասաց Հիսուս: Երանի չհարցնեի ու այս ցավալի բաները չլսեի:*

**Պատասխան.** *Հիսուսին նախատինքներով Գողգոթա էին տանում: Ճանապարհին կանայք լալիս էին՝ Հիսուսի ցավատանջ վիճակը տեսնելով: Հիսուս ետ դարձավ և ասաց. «Երուսաղեմի դուստրե՛ր, Ինձ վրա լաց մի՛ եղեք, այլ լա՛ց եղեք ձեր և ձեր որդիների վրա, որովհետև օրեր պիտի գան, երբ մարդիկ պիտի ասեն. «Երանի չբեր կանանց և նրանց, որոնք բնավ չծնեցին և չդիեցրին»: Այն ժամանակ մարդիկ պիտի սկսեն ասել լեռներին, թե ընկե՛ք մեզ վրա, և բլուրներին, թե՝ ծածկեցե՛ք մեզ» (Ղուկաս ԻԳ 28-31):*

**Հարց.** *Հետո ի՞նչ արեցին Հիսուսին:*

**Պատասխան.** *Տարան Գողգոթա և խաչի վրա գամեցին: Հետո խաչը բարձրացրին, որ բոլորը տեսնեն:*

**Հարց.** *Այդ մասին նախապես կա՞ր գրված:*

**Պատասխան.** *Այո՛, նախ Մովսես մարգարեն է գրում. «Քո աչքերի առաջ քո Կյանքը կախված կլինի» (Բ Օրինաց ԻԸ 66): Դավիթ մարգարեն գրում է. «Ծակեցին ձեռքերն ու ոտքերն Իմ» (Սաղմոս ԻԱ 18): Նմանապես Զաքարիա մարգարեն է գրում. «Եվ երբ ես Նրան ասեմ՝ այդ ի՞նչ վերքեր են Քո ձեռքերի մեջ, Նա կասի. «Դրանք այն վերքերն են, որ Ես ստացել եմ Իմ սիրելի ազգի տանը» (Զաքարիա ԺԳ 6):*

**Հարց.** *Ի՞նչ արեցին Հիսուսի շորերը:*

**Պատասխան.** *Խաչող զինվորները բաժանեցին. կապան, որ կար չուներ, այլ վերից վար հյուսածո էր, չուզեցին պատռել, այլ վիճակ գցելով իրար մեջ բաժանեցին, և այդպես կատարվեց Դավթի խոսքը. «Հագուստներս բաժանեցին իրար մեջ և պատմուճանիս վրա վիճակ գցեցին» (Սաղմոս ԻԱ 19):*

**Հարց.** *Այդքան չարչարանքներ կրելուց հետո Հիսուսն ի՞նչ ասաց:*

**Պատասխան.** *Բնավ բերանը չբացեց ու ոչ մի բան չխոսեց, ինչպես Եսայի մարգարեն է գրում. «Ու Նա վշտից Իր բերանն անգամ չի բացում: Ինչպես ոչխար, Նա մորթվելու տարվեց, և ինչպես գառ, անմռունչ կանգնած է խուզողի առաջ և նրա նման Իր բերանը չի բացում» (Եսայի ԾԳ 7): Եվ Երեմիան ասում է. «Ես մորթվելու տարվող անմեղ գառնուկի նմանվեցի» (հմմտ. Երեմիա ԺԱ 19):*

**Հարց.** *Ուրիշ ի՞նչ արեցին հրեաները:*

**Պատասխան.** *Երկու գող բերեցին Հիսուսի մոտ և խաչեցին, որ Հիսուսի խաչվելը տեսնողները և լսողները կարծեն, որ Նա էլ նրանց պես մի ավազակ է: Սրանով կատարվեց Եսայու մարգարեությունը, որ ասում է. «Անօրենների շարքը դասվեց» (Եսայի ԾԳ 12):*

**Հարց.** *Հիսուսի մայրն ո՞ւր մնաց, չիմացա՞վ կատարվածի մասին:*

**Պատասխան.** *Սկզբից չիմացավ, այլ խաչելու համար տանելիս իմացավ և վազեց Գողգոթա և իր աչքով տեսավ իր միակ սիրելի զավակին՝ այդքան նախատինքներից հետո խաչված:*

**Հարց.** *Ի՞նչ արեց խեղճ մայրը:*

**Պատասխան.** *Ամենևին բան չկարողացավ անել, այրվում ու տոչորվում էր սիրելի զավակի համար, բայց չէր կարող օգնել, այլ միայն արյունախառն արցունք էր թափում:*

**Հարց.** *Հիսուս չխոսե՞ց Իր մոր հետ:*

**Պատասխան.** *Խաչից նայում էր Իր մորը, որը ցավագին լալիս ու ողբում էր, և նրա կողքին Հովհաննես ավետարանիչն էր: Հիսուս Իր մորը Հովհաննեսին հանձնեց և ասաց. «Ահա՛ քո մայրը» և մորն էլ ասաց. «Ահա՛ քո որդին» (Հովհաննես ԺԹ 16):*

**Հարց.** *Խաչի մոտ ուրիշ ո՞վ կար:*

*Պատասխան.* Հովհաննես ավետարանիչն այսպես է գրում. «Իսկ Հիսուսի խաչի մոտ կանգնած էին Նրա մայրը և Նրա մորաքույրը՝ Կղեոպասի կին Մարիամը, և Մարիամ Մագդաղենացին» (Հովհաննես ԺԹ 25):

# Ռ ա վ ի ղ Է

*Հարց.* Եղբա՛յր, մի կասկած ունեմ: Ավետարանից գիտենք, որ հրեաները Հիսուսի համար ասում էին. «Սա հյուսնի և Մարիամի զավակը չէ՞, Հակոբոսի, Հովսեի, Հուդայի և Սիմոնի եղբայրը չէ՞» (Մարկոս Զ 3): Սա ինձ բացատրի՛ր, որ ասելիքս ասեմ:

*Պատասխան.* Ասում էին. «Սա հյուսնի և Մարիամի զավակը չէ՞, Հակոբոսի, Հովսեի, Հուդայի և Սիմոնի եղբայրը չէ՞»:

*Հարց.* Ուրեմն Հիսուս չորս եղբայր է ունեցել: Ապա ինչո՞ւ ասացիր, թե Հիսուս Իր մորը Զեբեդիոսի տղային՝ Հովհաննեսին հանձնեց: Չորս զավակ ունեցող մայրը ուրիշի զավակին կհանձնվի՞:

*Պատասխան.* Ինչ կասկածամիտ մարդ ես: Սկզբում քեզ ասացինք, որ Հիսուս եղբայր չունի: Դու դեռ չես հավատում և կասկածում ես:

*Հարց.* Հովսեփը Մարիամի ի՞նչն էր:

*Պատասխան.* Մարիամի նշանածն էր իբրև պահապան: Այս պատճառով, երբ հրեշտակը Մարիամին ասաց. «Զավակ պիտի ծնես», նա պատասխանեց. «Ես ամուսին չունեմ, այդ ինչպե՞ս պիտի լինի» (Ղուկաս Ա 34): Հրեշտակը չի ասում. «Սուտ ես խոսում», որովհետև Հովսեփն է նրա ամուսինը, այլ ասում է. «Սուրբ Հոգին կհանգչի քո վրա»: Ինչպես Մատթեոսն էլ է ասում. «Նախքան նրանց՝ իրար մոտենալը Սուրբ Հոգուց հղիացած գտնվեց» (Մատթեոս Ա 18):

Այս ամենն ապացույց են Մարիամի կուսության: Իսկ բողոքականները Մատթեոսի այս խոսքը՝ «Չգիտեր նրան, մինչև որ անդրանիկ զավակը ծնվեց», փաստ համարելով՝ պարզամիտ մարդկանց միտքը չփոթեցնում են՝ պնդելով՝ իբր Հիսուսին ծնելուց հետո ուրիշ զավակներ էլ ունեցավ:

*Հարց.* Անդրանիկ ասելու պատճառն ի՞նչ է:

*Պատասխան.* Դրա՞ն ես կասկածում: Այն է, որ Կույս Մարիամը Հիսուսին ծնելուց առաջ ուրիշ զավակ չի ծնել և կուսությամբ ծնելու համար է Հիսուսին անդրանիկ ասում, և ոչ թե հետո ծնված զավակների համար:

*Հարց.* Ապա այդ «մինչև» բառն ի՞նչ է:

*Պատասխան.* «Մինչև»-ը երկու իմաստ ունի, ժամանակական և հավիտենական: Ժամանակականը վերջ ունի: Օրինակ՝ «Մինչև ես գամ»: Իսկ եթե ասենք՝ «Սրանից հետո մինչև հավիտյան», սա վերջ չունի:

*Հարց.* Աստվածածնի մասին կասկածս փարատվեց, բայց ինձ ասա վերը նշածդ չորս եղբայրների մասին:

*Պատասխան.* Դա հարցնել պետք չէ, ահա Հովհաննեսը պարզիպարզո ասում է. «Խաչի մոտ կանգնածները Տիրոջ մորաքրոջ՝ Կղեոպասի կին Մարիամի որդիներն էին» (Հովհաննես ԺԹ 25):

*Հարց.* Որտեղի՞ց է հայտնի:

*Պատասխան.* Մատթեոսը գրում է, թե խաչի մոտ կանգնած էին. «Մարիամ Մագդաղենացին, Հակոբոսի և Հովսեի մայր Մարիամը և Զեբեդիոսի որդիների մայրը» (Մատթեոս ԻԷ 56): Մարկոսն էլ է ասում. «Կրտսեր Հակոբոսի և Հովսեի մայրը՝ Մարիամը» (Մարկոս ԺԵ 40): Սրանք են (Հակոբոսը և Հովսեն) Հիսուսի եղբայր կոչվածները: Կրտսեր Հակոբոսը Տիրոջ եղբայրն է, իսկ մեծ Հակոբոսը Զեբեդիոսի տղան է և Հովհաննեսի եղբայրը[5]:

Հարց. Այս երկուսին Հիսուսին եղբայր լինելուց զրկեցիր, որովհետև նրանց մայրերի մասին պատմեցիր: Հիմա տեսնենք՝ Հուդային և Սիմոնին էլ կարո՞ղ ես սրանց եղբայր դարձնել:

Պատասխան. Հուդա ասվածը Թադեոսն է, ինչպես որ սկզբում ասացինք, թե «Թադեոսին Հուդա էլ են անվանում», ու Հակոբոս Ալփեայի եղբայրն է: Հուդան ևս իր գրքում վկայում է Հակոբոսի եղբայր լինելը. «Հուդան՝ ծառան Հիսուս Քրիստոսի և եղբայրը Հակոբոսի» (Հուդա Ա 1): Սիմոնն էլ Կանանացի Սիմոն կոչվածն է, որի հարսանիքին Հիսուս գնաց և ջուրը գինի դարձրեց: Սիմոնը այդ հարսանիքի փեսան էր, ինչպես որ Մատթեոսի ավետարանի մեկնության մեջ է ասվում[6]:

Հարց. Սիմոնի՝ Աստվածածնի ազգական լինելը որտեղի՞ց է հայտնի:

Պատասխան. Այնտեղից է հայտնի, որ Աստվածածինը սկզբից հարսանիքում էր, ու հետո Հիսուսն էլ հրավիրվեց: Նաև գինի հայթայթելու հոգսն Աստվածածնի վրա ընկավ, որովհետև հարսանիքի պակասության հոգսը ազգականը պիտի կրեր, ոչ թե՝ օտարը: Եթե Աստվածածինը ազգական չլիներ, գինի չունենալու հոգսը իր ինչի՞ն էր պետք, որ Հիսուսին աղաչեր, թե գինի չունեն: Դրա համար մի՛ կասկածիր, այդ չորս եղբայրը Տիրոջ մորաքրոջ՝ Մարիամի զավակներն են:

# Ճ ա վ ի ղ Ը

Հարց. Լա՛վ, հասկացա, որ Հիսուսը եղբայր չունի: Բայց այդ միջոցին ու՞ր գնացին Հիսուսի աշակերտները:

Պատասխան. Բոլորն էլ թողեցին և փախան:

Հարց. Իսկ ի՞նչ եղավ չարագործ Հուդան:

Պատասխան. Հուդան իր չարությունը կատարելուց հետո, երբ իմացավ, որ Հիսուսի խաչելու հրամանագիրը գրվել է, այդժամ շատ զղջաց և ստացված արծաթը տարավ քահանայապետներին տվեց և ասաց. «Ես մեղավոր եմ, Նրան իզուր տեղը մատնեցի»: Նրանք արծաթը ետ չվերցրեցին, ուստի արծաթը տաճարի մեջ գցեց, հուսահատությունից գնաց ու կախվեց (Մատթեոս ԻԷ 5):

Հարց. Ի՞նչ արեցին արծաթը հրեաները:

Պատասխան. Արյան գին լինելու պատճառով գանձանակի մեջ չընդունեցին և դրանով գնեցին բրուտի ագարակը՝ որպես գերեզման օտարների համար:

Հարց. Նախապես գրված կա՞ր այդ մասին:

Պատասխան. Այո՛, Երեմիա մարգարեն է գրում. «Արյան գինը երեսուն արծաթ առան և բրուտի այգու համար տվեցին, ինչպես որ Տերը հրամայեց ինձ» (հմմտ. Երեմիա ԼԲ 9):

Հարց. Հիսուս ի՞նչ եղավ: Ի՞նչ լուր պետք է տաս մեզ:

Պատասխան. Հիսուսի գլխին եկած բաների պատճառով երկինքն ու երկիրը չհամբերելով իրենց սրտի ցավն ու տառապանքը հայտնեցին:

Հարց. Ինչպե՞ս հայտնեցին:

Պատասխան. Նախ՝ արեգակը խավարեց, երկիրը շարժվեց, ժայռերը պատռվեցին, գերեզմանները բացվեցին, տաճարի վարագույրը վերից վար երկու կես եղավ:

Հարց. Ե՞րբ խաչեցին Հիսուսին:

Պատասխան. Ուրբաթ օրը՝ վեցերորդ ժամին: Այդ ժամանակ արեգակը խավարեց մինչև իններորդ ժամը և հետո բացվեց:

Հարց. Նախապես կա՞ր գրված այդ մասին:

Պատասխան. Այո՛, Ամովս մարգարեն է գրում. «Այդ օրը,- ասում է Տեր Աստված,- այնպես պիտի լինի, որ արեգակը մայր պիտի մտնի միջօրեին, և երկրում լույսը պիտի խավարի

*ցերեկով» (Ամովս Ը 9): Զաքարիան էլ է գրում. «Դա պիտի լինի միայն Տիրոջը հայտնի օր. ո՛չ ցերեկ պիտի լինի և ոչ էլ գիշեր, այլ լույս պիտի լինի միայն երեկոյան» (Զաքարիա ԺԴ 7), որովհետև վեցերորդ ժամում արեգակը խավարեց և իններին բացվեց:*

**Հարց.** *Այլևս Հիսուս պետք է չխոսի՞:*

**Պատասխան.** *Երբ Հոգին ավանդելու ժամանակը մոտեցավ, Հիսուս ասաց, որ ծարավ է, և զինվորներից մեկը սպունգը քացախով թրջեց ու եղեգի ծայրին անցկացնելով՝ Հիսուսի բերանին մոտեցրեց: Հիսուս, քացախի համը առնելով, ասաց. «Ամեն ինչ կատարված է» (Հովհաննես ԺԹ 30):*

**Հարց.** *Ինչի՞ համար է ասում, թե ամեն ինչ կատարված է:*

**Պատասխան.** *Որովհետև Դավիթն է գրում. «Կերակրի տեղ ինձ լեղի տվին և ծարավելիս քացախ խմեցրին» (Սաղմոս ԿԸ 22):*

**Հարց.** *Ի՞նչ ասացին հրեաները Հիսուսին:*

**Պատասխան.** *Քահանայապետները և իշխանները, խաչի դիմաց կանգնած, գլուխները շարժելով ասում էին. «Վա՛հ, Դու որ քանդում էիր տաճարը, երեք օրից այն շինում, փրկի՛ր Քեզ, եթե Աստծու Որդի ես, իջի՛ր այդ խաչից» (Մատթեոս ԻԷ 40):*

**Հարց.** *Նախապես գրված կա՞ր այդ մասին:*

**Պատասխան.** *Այ՛ո, Դավիթ մարգարեն է գրում. «Բոլոր Ինձ տեսնողներն արհամարհում էին Ինձ, խոսում շրթունքներով և շարժում գլուխներն իրենց» (Սաղմոս ԻԱ 8): Նաև քահանայապետները և իշխանները ասում էին իրար. «Ուրիշներին փրկեց, Ինքն Իրեն չի կարողանում փրկել: Եթե Իսրայելի թագավոր է, հիմա թող այդ խաչից իջնի, և Դրան կհավատանք: Եթե Դա հույսը դրել է Աստծու վրա, թող Նա այժմ Դրան փրկի, եթե ուզում է Դրան, քանի որ ասաց, թե՝ Աստծու Որդի եմ» (Մատթեոս ԻԷ 42-43):*

**Հարց.** *Այդ խոսքերի վերաբերյալ նախապես գրվա՞ծ էր:*

**Պատասխան.** *Այո՛, Սողոմոնը գրում է. «Տեսնենք արդյո՞ք ճշմարիտ են Նրա խոսքերը և փորձենք իմանալ, թե ինչ է լինելու Նրա վախճանը: Եթե, արդարև, Աստծու Որդի է, ապա թող Աստված պաշտպանի և ազատի Նրան հակառակորդների ձեռքերից» (Իմաստ. Բ 17-18):*

**Հարց.** *Հիսուս ի՞նչ եղավ:*

**Պատասխան.** *Մինչև հիմա քո հարցերի պատասխանը շատ շուտ էի տալիս, բայց այս հարցիդ չեմ համարձակվում պատասխանել:*

**Հարց.** *Ի՞նչ է, չլինի թե Հիսուս մահացավ:*

**Պատասխան.** *Այո՛, բարձր ձայնով կանչեց. «Հա՛յր, Քո ձեռքերի մեջ եմ ավանդում Իմ հոգին», և ամենամաքուր Հոգին ավանդեց Հայր Աստծու ձեռքը (Ղուկաս ԻԳ 46):*

**Հարց.** *Ո՛հ, այդ ի՞նչ կսկիծ էր, որ պատճառեցիր: Ա՞յդ էլ էր գրված:*

**Պատասխան.** *Այո՛, Եսայի մարգարեն է գրում. «Երկրի վրա վերջ տվին Նրա կյանքին. իմ ժողովրդի անօրենությունների պատճառով Նա մահվան մատնվեց» (Եսայի ԾԳ 8):*

**Հարց.** *Խեղճ մայրը Որդու մահը տեսնելով ի՞նչ արեց:*

**Պատասխան.** *Մոր լացն ու ողբը ո՞ր լեզուն կարող է պատմել:*

**Հարց.** *Հետո ի՞նչ արեցին Հիսուսի մարմինը:*

**Պատասխան.** *Արեմաթիա քաղաքում Հովսեփ անունով մի արդար մարդ կար: Նա գնաց, Պիղատոսին աղաչեց, որ Հիսուսի մարմինը իրեն տան, որ թաղի: Եվ երբ նա թույլ տվեց, Հովսեփը Նիկոդեմոսի հետ միասին Հիսուսին խաչից ցած իջեցրին և մաքուր կտավով պատեցին: Ժայռում փորված մի նոր գերեզման կար, այնտեղ թաղեցին ուրբաթ երեկո և գերեզմանի դռան բերանը մի մեծ քարով փակեցին, իսկ հրեաներն էլ կնքեցին:*

**Հարց.** *Ի՞նչի համար կնքեցին գերեզմանը:*

**Պատասխան.** *Հիսուս սկզբից քանի անգամ ասել էր. «Երեք օրից հարություն պետք է առնեմ» (Մատթեոս ԻԷ 63): Դրա համար գերեզմանը կնքելուց բացի, շատ զինվորներով պահպանում*

էին, որ չլինի թե Հիսուսի աշակերտները գիշերը գան, մարմինը տանեն, ուրիշ տեղ պահեն՝ ասելով, թե հարություն առավ:

Հարց. Նախապես գրվա՞ծ էր Հիսուսին թաղելու մասին:

Պատասխան. Այո՛, Հոբ երանելին է գրում. «Եվ Ինքը դեպի գերեզման ուղղվեց, անքուն անցկացրեց» (Հոբ ԻԱ 32):

Հարց. Հետո ի՞նչ եղավ Հիսուս:

Պատասխան. Լույս կիրակի գիշերը մեծ ցնցումով հարություն առավ:

Հարց. Գերեզմանի մեջ քանի՞ ժամ մնաց:

Պատասխան. Մոտ երեսուներեք ժամ մնաց, որ ուրբաթ, շաբաթ և կիրակի օրերն էր ընդգրկում:

Հարց. Եթե մարմինը գերզմանում էր, ապա Հոգի՞ն որտեղ էր:

Պատասխան. Հոգին դժոխք իջավ և այնտեղ գտնվող հոգիներին քարոզեց երեսուներեք ժամ:

Հարց. Դա որտեղի՞ց է հայտնի:

Պատասխան. Պետրոս առաքյալն է վկայում. «Նա թեպետև մարմնով մեռավ, բայց կենդանի է Հոգով, որով և գնաց քարոզեց բանտում եղած այն հոգիներին» (Ա Պետրոս Գ 18-19):

Հարց. Քարոզելուց հետո ի՞նչ արեց:

Պատասխան. Ադամի սկզբնական մեղքի պատճառով դժոխքի մեջ արգելափակված նահապետներին, մարգարեներին ու բոլոր արդարների հոգիները ազատեց:

Հարց. Որտեղի՞ց է հայտնի նրանց ազատվելը:

Պատասխան. Ահա՛, նախ Զաքարիան է գրում, ինչպես որ սկզբից ասացինք. «Դու Քո Արյան խոստումով բանտում կապվածներին արձակեցիր»: Եվ Մատթեոսն է գրում. «Գերեզմանները բացվեցին, և ննջեցյալ սրբերի բազում մարմիններ հարություն առան» (Մատթեոս ԻԷ 52):

Հարց. Նախապես գրվա՞ծ էր Հիսուսի հարություն առնելը:

Պատասխան. Այո՛, Դավիթ մարգարեն է գրում. «Աստված հարություն պետք է առնի, ու Նրա թշնամիները պետք է ցրվեն» (հմմտ. Սաղմոս ԿԷ 1):

Հարց. Որտեղի՞ց հայտնի դարձավ Հիսուսի հարություն առնելը:

Պատասխան. Մարիամ Մագդաղենացին այն կիրակի օրը՝ վաղ առավոտյան, գերեզման գնաց և տեսավ, որ գերեզմանի վրայի քարը մի կողմ են շրջել, և Հիսուսի մարմինն այնտեղ չէ: Նա սկսեց անմխիթար սգով լալ: Այդ միջոցին հանկարծակի ճերմակ շորերով երկու հրեշտակ երևացին և ասացին նրան. «Ո՛վ կին, դու ինչո՞ւ ես լալիս և ո՞ւմ ես փնտրում»: Այնտեղ ուրիշ կանայք էլ կային, նրանց էլ ասացին. «Ինչո՞ւ ողջին մեռելների մեջ եք փնտրում: Այստեղ չէ, այլ հարյավ» (Ղուկաս ԻԴ 5):

Հարց. Հարություն առնելուց հետո աշակերտներին երևա՞ց:

Պատասխան. Այո՛, այդ կիրակի առավոտյան աշակերտները գնացին Գալիլիա: Հիսուս այնտեղ էր: Երբ տեսան Նրան, ոտքերի մոտ խոնարհվեցին, երկրպագեցին և շատ ուրախացան: Ոմանք էլ կասկածի մեջ էին, թե արդյոք Նա է: Այսպես երբեմն աշակերտներին երևում, մխիթարում և խրատում էր մինչև քառասուն օր:

Հարց. Ի՞նչ արեց քառասուն օր հետո:

Պատասխան. Երբ լրացավ քառասուն օրը, աշակերտներին տարավ Ձիթենյաց լեռ: Այնտեղ շատ պատվերներ տալուց հետո ասաց. «Ինձ է տրված ամեն իշխանություն երկնքում և երկրի վրա. ինչպես Հայրը Ինձ ուղարկեց, Ես էլ ձեզ եմ ուղարկում: Գնացե՛ք ուրեմն աշակերտ դարձրե՛ք բոլոր ազգերին, նրանց մկրտեցե՛ք Հոր, և Որդու և Սուրբ Հոգու անունով: Ուսուցանեցե՛ք նրանց պահել այն բոլորը, ինչ որ ձեզ պատվիրեցի: Եվ ահա Ես ձեզ հետ եմ բոլոր օրերում մինչև աշխարհի վախճանը» (Մատթեոս ԻԸ 18-20): Եվ այս ամենից բացի պատվիրեց, որ մինչև Սուրբ Հոգին իրենց վրա չիջնի, Երուսաղեմից դուրս չգան և ուրիշ տեղ չգնան:

Հարց. Սուրբ Հոգին ինչո՞ւ պիտի գար:

Պատասխան. Հիսուս սկզբից խոստացել էր, թե ձեզ տված Իմ բոլոր պատվերները բոլորը չեք հիշի: Երբ Ես գնամ, Սուրբ Հոգին կուղարկեմ, որ գա ձեզ հիշեցնի Իմ սովորեցրածները: Նաև կմխիթարի ձեզ, կփարատի ձեր տրտմությունը և մանավանդ ձեր վախը կվերացնի ու սրտներդ կամրացնի: Դրա համար պատվիրեց Երուսաղեմից չհեռանալ մինչև Սուրբ Հոգու գալը:

Հարց. Հետո ո՞ւր գնաց Հիսուս:

Պատասխան. Այս պատվերներն աշակերտներին տալուց հետո նրանց օրհնեց, երկինք համբարձվեց և Հայր Աստծու աջ կողմը նստեց (Մարկոս ԺԶ 19):

Հարց. Հիսուսի համբարձման մասին նախապես գրված կա՞ր:

Պատասխան. Այո՛, Դավիթ մարգարեն գրում է. «Աստված բարձրացավ օրհնությամբ, և մեր Տերը՝ շեփորի ձայնով» (Սաղմոս ԽԶ 6):

Հարց. Աշակերտներն այդ միջոցին ի՞նչ արեցին:

Պատասխան. Գլուխները բարձրացրել, դեպի երկինք էին նայում, մինչև որ Հիսուս ամպի մեջ մտավ: Հետո մարդու կերպարանքով երկու հրեշտակ երևացին ճերմակ զգեստներով և ասացին. «Ո՛վ գալիլիացիներ, ինչո՞ւ կանգնած նայում եք երկնքին. այս Հիսուսը, որ ձեր միջից երկինք վերացավ, պիտի գա նույն ձևով, ինչպես տեսաք Նրա երկինք գնալը» (Գործք Ա 11):

Հարց. Աշակերտները հետո ո՞ւր գնացին:

Պատասխան. Ձիթենյաց լեռից իջան, եկան, մտան Վերնատուն և տաս օր այնտեղից դուրս չեկան:

Հարց. Հիսուս կատարե՞ց իր խոստումը:

Պատասխան. Այո՛, տասներորդ օրը՝ կիրակի առավոտյան երրորդ ժամին, երբ աշակերտները միասին նստած էին Վերնատանը. «Հանկարծակի երկնքից հնչեց մի ձայն, սաստիկ հողմից եկած ձայնի նման և լցրեց ամբողջ այն տունը, ուր նստած էին: Եվ նրանց երևացին բաժանված լեզուներ՝ նման բոցեղեն լեզուների, որոնք և նստեցին նրանցից յուրաքանչյուրի վրա: Եվ բոլորը լցվեցին Սուրբ Հոգով ու սկսեցին խոսել ուրիշ լեզուներով, ինչպես որ Սուրբ Հոգին էր նրանց խոսել տալիս» (Գործք Բ 2-4):

Հարց. Հետո ի՞նչ արեցին աշակերտները:

Պատասխան. Իսկույն վախը հեռացավ նրանցից և այդ ժամանակվանից Հիսուսի ով լինելը հաստատապես հասկացան: Բայց ի՞նչ օգուտ, որ Նա արդեն համբարձվել էր: Ուստի այնքան սրտները վառվեց Հիսուսի հանդեպ եղած սիրուց, որ կարծես բացականչում էին. «Հիսուսի համար պատրաստ ենք մեռնելու. եթե սպանող կա, թող գա»:

Հարց. Եթե դրանից առաջ չէին հասկանում Հիսուսի Ով լինելը, ապա ինչո՞ւ Նրան աշակերտեցին:

Պատասխան. Թեպետ հասկացել էին, բայց դեռ հավատը թերի էր: Այս պատճառով չէին ուզում Հիսուսի համար մեռնել, ինչպես որ մատնության գիշերը ցույց տվեցին՝ Հիսուսին թողնելով և փախչելով: Սակայն Սուրբ Հոգին ընդունելուց հետո ամենևին չվախեցան նահատակվել ի սեր Քրիստոսի: Ուրեմն Հիսուսի Ով լինելը նրանք լավ հասկացան Սուրբ Հոգու իջնելուց հետո միայն:

Հարց. Նախապես գրվա՞ծ էր Սուրբ Հոգու իջնելու մասին:

Պատասխան. Այո՛, Հովել մարգարեն է գրում. «Սրանից հետո Իմ Հոգուց կհեղեմ ամեն մարմնի վրա, և կմարգարեանան ձեր տղաներն ու աղջիկները» (Հովել Բ 27):

Հարց. Հետո ի՞նչ արեցին աշակերտները:

Պատասխան. Իրարից բաժանվեցին և գնացին, ամբողջ աշխարհում քարոզեցին Աստծու Ավետարանը և Երկնքի Արքայությունը: Հիսուսի կամքը և պատվիրանները բոլոր ժողովուրդներին հասկացրեցին: Իրենց քարոզչություններն ընդունող և Հիսուսին հա-

*վատացողներին առաջին անգամ անվանեցին քրիստոնյա Անտիոք քաղաքում: Սա լրացումն է քրիստոնյա անվան վերաբերյալ տրված առաջին հարցիդ: Ահա այս է քրիստոնյա անվան սկիզբը:*

**Հարց.** *Աշակերտնե՞րն էլ հրաշք գործեցին:*

**Պատասխան.** *Այո՛, Հիսուսի անվամբ: Կաղերի քայլեցրին, դիվահարների բժշկեցին, մեռելներ ողջացրին, բորոտների մաքրեցին, և այս ամենից զատ՝ մինչև անգամ Պետրոսի ստվերը և Պողոսի երեսի քրտինքը սրբած թաշկինակը հրաշք էին գործում (տե՛ս Գործք Ե 13 և ԺԹ 12):*

**Հարց.** *Հետո ի՞նչ եղան աշակերտները:*

**Պատասխան.** *Բոլորն էլ, Հիսուսի սիրո համար բազմաթիվ չարչարանքներ կրելով, մեռան հրեաների և հեթանոսների ձեռքով:*

**Հարց.** *Հիսուսի համար ինչո՞ւ են մեռնում աշակերտները:*

**Պատասխան.** *Հիսուսի մոտ գնալու համար, ինչպես սկզբից Հիսուս էր ասել. «Եթե մեկն Ինձ ծառայի, Իմ հետևից կգա: Եվ ուր Ես եմ, այնտեղ կլինի և Իմ ծառան» (Հովհաննես ԺԲ 26):*

*Հիմա հասկացա՞ր Քրիստոսի Ով լինելը, Նրա մասին էր, որ սկզբից պատմեցինք: Քանզի Ինքն Աստված է, և մեզ սատանայի գերությունից ազատելու համար աշխարհ եկավ ու մարմին առավ:*

**Հարց.** *Եթե մարմին չառներ, չէ՞ր կարող մեզ ազատել:*

**Պատասխան.** *Կարող էր: Բայց Եսայի մարգարեն գրում է. «Ո՞վ իմացավ Տիրոջ մտքերը, ո՞վ խորհրդատու դարձավ Նրան» (Եսայի Խ 13): Աստծու խորհուրդը մեր մտքից վեր է, մենք չենք կարող քննել այն: Բայց այնքան ենք հասկանում, որ աշխարհ եկավ մարդկանց հետ խոսելու և երկնքի թագավորությունը քարոզելու համար: Եթե մարմնով չգար, մահկանացու մարդկանցից ո՞վ կարող էր Նրան տեսնել կամ հետը խոսել: Ինչպես երեք աշակերտներին՝ Պետրոսին, Հակոբոսին և Հովհաննեսին վերցրեց ու բարձրացավ Թաբոր լեռը և այնտեղ պայծառակերպվեց և Իր Աստվածային փառքը ցույց տվեց նրանց: Մովսեսը և Եղիան էլ երևացին և խոսում էին Հիսուսի հետ: Իսկ Պետրոսը և մյուսները Հիսուսի Աստվածային փառքը որ տեսան, զարհուրեցին ու երեսի վրա գետին ընկան և չկարողացան Հիսուսի հետ մի բան իսկ խոսել: Եվ երբ որ այն Աստվածային փառքը մարմնով ծածկեց, այդ ժամանակ միայն Պետրոսը կարողացավ Նրա հետ խոսել ու ասել. «Տե՛ր, լավ է, որ մենք այստեղ ենք. եթե կամենաս, երեք տաղավարներ շինենք, մեկը՝ Քեզ համար, մեկը՝ Մովսեսի և մեկն էլ՝ Եղիայի» (Մատթեոս ԺԷ 4):*

*Եղբա՛յր, եթե այսքան խոսքերով չկարողացար հասկանալ, վախենամ՝ մեր աշխատանքը իզուր անցնի:*

## Ճ ա վ ի ղ  Թ

**Հարց.** *Մի՛ վախեցիր, եղբա՛յր, քո աշխատանքը իզուր չանցավ: Ես լավ հասկացա քրիստոնյա անունը, Քրիստոսին հավատացի և Նրա անունով մկրտվեցի, բայց լավ չգիտեմ քրիստոնեության խորհուրդը: Ուստի աղաչում եմ, հասկացրո՛ւ ինձ, որ նույն ճանապարհին հետևելով երբ մահանամ, Քրիստոսի մոտ կգնա՞մ, ինչպես որ Ինքն է խոստացել:*

**Պատասխան.** *Մի՛ շտապիր Նրա մոտ գնալու, դեռ շատ ժամանակ կա, դեռ որքա՛ն բարձր լեռներ և քարաժայռ ճանապարհներ կան անցնելու և որքա՛ն նեղ դռներ կան մտնելու, որ Նրա մոտ գնաս: Բավական չէ միայն քրիստոնյա անուն ստանալը:*

**Հարց.** *Ինչո՞ւ ես նորից ինձ վախեցնում՝ քրիստոնեությունը դժվարին կրոն համարելով: Չե՞ս տեսնում, որ աշխարհում այնքան քրիստոնյաներ կան: Եթե քրիստոնեությունը դժվարին լիներ, այդքան մարդիկ քրիստոնյա կլինեի՞ն: Բազմաթիվ մարդկանց քրիստոնյա լինելուց հետո ես ինչո՞ւ պետք է չկարողանամ այդպիսին լինել:*

**Պատասխան.** Իրավացի ես, եղբա՛յր, անունով քրիստոնյաներ շատ կան, բայց լոկ անունով քրիստոնեությունը նշանակություն չունի, այլ գործով պետք է լինել: Ինչպես, օրինակ, ամեն արհեստավոր իր ձեռքի գործերով է ճանաչվում, նույնպես էլ քրիստոնյան իր բարեգործություններով պետք է ճանաչվի:

**Հարց.** Ինչպիսի՞ գործ է պետք:

**Պատասխան.** Գործի ինչպիսի լինելը օրինակով ցույց կտամ քեզ: Մտածի՛ր և ջանա՛ դրա համեմատ քրիստոնեության արժանի գործ կատարել:

**Հարց.** Ասա՛ տեսնեմ՝ ի՞նչ օրինակ է:

**Պատասխան.** Ահա քեզ օրինակ եմ բերում ըմբիշներին, որոնք իրենց հագած ծանր զգեստները հանում են և մի թեթև շոր հագնում: Յուղով օծվում և դուրս են գալիս հրապարակ ու կանգնում, որպեսզի տեսնողները իմանան, որ իրենք ըմբիշ են: Բայց այն ըմբիշը, որ ելավ ու հրապարակում կանգնեց, պետք է իր դիմացինի հետ ըմբշամարտի և հաղթի, որ մարդկանցից պսակ և գովաբանություն ստանա: Եթե այն ըմբիշի վրա ըմբիշության բոլոր նշանները երևան, բայց իր մրցակցի հետ կռվելու կերպը չիմանա կամ թույլ լինելու պատճառով պարտվի, նրա ըմբիշ լինելուց ի՞նչ օգուտ կլինի, եթե իր մրցակցին չպետք է կարողանա հաղթել, նա կարո՞ղ է ըմբիշ կոչվել, պսակ կամ գովաբանություն կարո՞ղ է ստանալ:

**Հարց.** Քրիստոնեությունը ըմբիշության օրինա՞կն է:

**Պատասխան.** Այո՛, դու հիմա մեղքերիդ ծանր շորերը հանեցիր և մերկացար ավազանում լվացվելով: Սուրբ Մեռոնով օծվեցիր և թեթև շորերի փոխարեն Քրիստոսին հագար, ինչպես Պողոս առաքյալն է ասում. «Դուք, բոլորդ, որ ի Քրիստոս մկրտվեցիք, Քրիստոսով զգեստավորվեցիք» (Գաղատ. Գ 27): Ուրեմն դրանից հետո պետք է, որ թշնամուդ հետ կռվես և հաղթես, որպեսզի Քրիստոսից պսակ ստանաս:

**Հարց.** Իմ թշնամին ո՞վ է, որ հետը կռվեմ:

**Պատասխան.** Քո թշնամին սատանան է, ինչպես Պետրոս առաքյալն է գրում. «Արթո՛ւն եղեք, հսկեցե՛ք, քանի որ ձեր ոսոխը՝ սատանան, մռնչում է առյուծի պես, շրջում և փնտրում է, թե ում կուլ տա» (Ա Պետրոս Ե 8): Ահա, օրինակ, հիմա դու քրիստոնյա անունը ստացար, բայց քո թշնամուդ՝ սատանայի դեմ չկռվելուց ու չհաղթելուց հետո էլ ապրում ես անտարբեր ծուլությամբ: Սրանից հետո քրիստոնյա անունդ ի՞նչ օգուտ կտա քեզ: Քո (մեղքերից) մերկանալը, ավազանում մկրտվելդ և սուրբ Մեռոնով օծվելդ, Քրիստոսով զգեստավորվելդ ի՞նչ օգուտ կունենան:

**Հարց.** Քրիստոնեության նշանը սովորեցրո՛ւ ինձ, որպեսզի կարողանամ սատանային հաղթել:

**Պատասխան.** Հիմա քրիստոնեության նշանը չեմ համարձակվում սովորեցնել, մինչև քո միտքը լավ չքննեմ. չլինի թե Քրիստոսի ասած առակը քո գործին հարմար լինի:

**Հարց.** Ի՞նչ է Քրիստոսի ասած առակը:

**Պատասխան.** Ղուկաս ավետարանիչը գրում է. «Ձեզնից ո՞վ, եթե կամենա աշտարակ շինել, նախ նստելով չի հաշվի իր ծախսերը, եթե ավարտելու համար բավական դրամ ունի, որպեսզի գուցե երբ հիմքը դնի և չկարողանա ավարտել, բոլոր նրանք, որ տեսնեն, չսկսեն նրան ծաղրել և ասել. «Այս մարդը սկսեց կառուցել և չկարողացավ ավարտել» (Ղուկաս ԺԴ 28-30):

**Հարց.** Քրիստոնեությունը տուն կառուցելու օրինա՞կ է:

**Պատասխան.** Այո՛, Սուրբ Երրորդություն ճանաչելը և հավատալը քրիստոնեության հիմքն է: Ինչպես Պետրոսը երբ Քրիստոսին ճանաչեց և Աստծու Որդի դավանեց, Քրիստոս ասաց. «Դու վեմ ես, և այդ վեմի վրա պետք է շինեմ Իմ եկեղեցին» (Մատթեոս ԺԶ 18):

**Հարց.** Մի ուրիշ վկայությունով կարո՞ղ ես հաստատել քրիստոնեության հիմքի կամ Քրիստոսի ասած վեմի ու մեր հավատի նույնությունը:

**Պատասխան**. *Ահա Պողոս առաքյալը գրում է. «Որպես իմաստուն ճարտարապետ, հիմքը դրեցի... բայց ուրիշն է, որ կառուցում է, սակայն յուրաքանչյուր ոք թող զգույշ լինի, թե ինչպես է կառուցում, որովհետև ոչ ոք չի կարող դնել ուրիշ հիմք, քան դրված է այն հիմքը, որ Հիսուս Քրիստոսն է» (Ա Կորնթ. Գ 10-11)։*

**Հարց**. *Դա հասկացա, բայց Պողոս առաքյալը ինչո՞ւ ասաց, որ «ամենքն էլ թող զգուշանան տուն կառուցելուց, թե ինչպես պետք է կառուցել»։ Դրա միտքը ինձ բացատրիր։*

**Պատասխան**. *Խնդրեմ, Պողոս առաքյալը շարունակելով գրում է. «Եթե մեկն այս հիմքի վրա կառուցի ոսկով, արծաթով, թանկարժեք քարերով, փայտով, խոտով, եղեգով, յուրաքանչյուրի գործը հայտնի կլինի, որովհետև դատաստանի օրը այդ պիտի երևա, քանի որ կրակով հայտնի պիտի լինի և յուրաքանչյուրի գործը, ինչպես որ է, կրակը պիտի փորձի. եթե մեկի կառուցած գործը մնա, նա վարձ պիտի ստանա, և եթե մեկի գործը այրվի, նա պիտի տուժի, թեև ինքը պիտի փրկվի, բայց նման մեկին, որ կարծես կրակի միջով անցած լիներ» (Ա Կորնթ. Գ 12-15)։*

*Ասում է, որ հիմքը գցել է։ Հիմա մենք այս հիմքը ինչպե՞ս պետք է հասկանանք։ Արդյոք Պողոսը ժողովրդին տո՞ւն էր կառուցում։ Ո՛չ, այլ իր քարոզներին հավատացողների սրտի մեջ հավատի հիմքն էր գցում, ինչպես որ ասում է, թե «այս հիմքը Հիսուս Քրիստոս է»։ Բայց այս հավատի հիման վրա տուն պետք է կառուցենք մեզ արդեն հայտնի նյութերով։ Ոսկին, արծաթը և պատվական քարերը բարեգործության տան շինանյութերն են։ Փայտը, խոտը, եղեգը մեղքերի տան շինանյութերն են։ Ոմանք բարեգործության տուն են կառուցում, իսկ ոմանք էլ՝ մեղքերի տուն։ Բայց աշխարհի վախճանին յուրաքանչյուրի կառուցած տունը կրակով պետք է փորձվի։ Բարեգործության տան նյութերը, կրակի մեջ անփորձ մնալով, ավելի ևս կպայծառանան, իսկ մեղքերի տան նյութերը կրակին չդիմանալով կայրվեն, և այդ նյութերի տերն էլ պետք է կրակի մեջ այրվի հավիտյան։ Ահա հասկացա՞ր, եղբա՛յր, հիմքը և տունը։ Եթե հասկացար, բարեգործություն կատարիր, որ քրիստոնյա լինելդ հայտնի լինի։*

**Հարց**. *Եթե բարեգործ չլինեմ, քրիստոնյա լինելս հայտնի չի՞ լինի։*

**Պատասխան**. *Հայտնի չի լինի, որովհետև Հակոբոս առաքյալն ասում է. «Եղբայրնե՛ր իմ, օգուտն ի՞նչ է, եթե մեկն ասի, թե հավատ ունի, սակայն հավատն արտահայտող գործեր չունենա։ Մի՞թե հավատը նրան կկարողանա փրկել։ ...Ո՛վ փուչ մարդ, ուզո՞ւմ ես իմանալ. հավատը դատարկ բան է առանց գործերի» (Հակոբոս Բ 14-20)։*

**Հարց**. *Այս մասին կա՞ ուրիշ գրող ևս։*

**Պատասխան**. *Ուրիշ մարդկանց գրածը ինչի՞դ է պետք, Ինքը՝ Քրիստոս է վկայում. «Այն օրը շատերն Ինձ պետք է ասեն. «Տե՛ր, Տե՛ր, չէ՞ որ Քո անունով մարգարեացանք և Քո անունով դևեր հանեցինք և Քո անունով բազում զորավոր գործեր արեցինք»։ Եվ այն ժամանակ Ես նրանց պիտի ասեմ. «Ես ձեզ երբեք չեմ ճանաչել, հեռու կացեք ինձանից դուք ամենքդ, որ անօրենություն եք գործում» (Մատթեոս Է 22-23)։*

*Տեսնո՞ւմ ես, որ Քրիստոս էլ չի ճանաչում բարի գործ չկատարող մարդուն։ Ոչ թե միայն հավատով, այլև նույնիսկ եթե այդ հավատովդ հրաշք էլ կատարես, քրիստոնյա լինելդ հայտնի չի լինի առանց բարեգործության։ Նմանապես, եթե Քրիստոսին հավատալով քրիստոնյա կոչվես և քրիստոնեության հավատի հիման վրա բարեգործության տուն չկառուցես, այն ժամանակ վերը պատմած տան առակի նման քո թշնամին՝ սատանան, կսկսի քեզ ծաղրել և ասել. «Այս մարդը, Քրիստոսին հավատալով և Նրա անունով մկրտվելով, քրիստոնեության հիմքը գցեց, բայց հավատի հիմքի վրա բարեգործության տուն չկարողացավ կառուցել»։ Հիմա հասկացա՞ր, որ առանց գործի հավատդ ոչինչ է։*

# Ըավիղ Ժ

Հարց. Եղբա՛յր, ինչքան դժվար բաներ կան, մեզ ես առաջարկում: Տարբեր օրինակներով ցույց ես տալիս քրիստոնեության բարդ ու դժվարին լինելը: Բայց իմ հոգին շատ է փափագում դրան: Քրիստոսի ծառայության լուծը որքան էլ որ ծանր լինի, հոժարությամբ պատրաստ եմ վերցնելու և հանձնառու եմ Նրա պատվերներն անթերի կատարելու: Դու միայն քրիստոնեության նշանը բացատրիր, աղաչում եմ քեզ:

Պատասխան. Ես հիմա քրիստոնեության նշանը քեզ չէի բացատրի, քանի դեռ չէիր ըմբռնել բոլոր զգուշացնող խրատները, բայց հոժարությանդ և սրտիդ բաղձանքին նայելով՝ ավելորդ համարեցի այդ բոլորը միանգամից ասել: Դրանք վերջում էլ կկարողանաս հասկանալ: Հիմա քեզ բացատրեմ քրիստոնեության արտաքին նշանը: Դա Քրիստոսի սուրբ և պատվական Խաչն է, ինչպես որ ամեն անգամ խաչակնքում ենք և Խաչին պատիվ և պաշտոն մատուցում:

Հարց. Ինչո՞ւ են քրիստոնյաները այդքան պատվում Քրիստոսի Խաչը:

Պատասխան. Սովորական մի բան չկարծես Քրիստոսի սուրբ Խաչը, որովհետև Խաչը մեր փրկության գործիքն է, ինչպես որ սկզբում Բ Շավիղի մեջ ասացինք, եթե Քրիստոս չխաչվեր, մարդկային բնությունը սատանայի գերությունից չէր ազատվի: Դրա համար Քրիստոսի Խաչին պատիվ և պաշտոն ենք մատուցում և Նրանով Հոր Խոսքը՝ Հիսուս Քրիստոսին ենք երկրպագում:

Հարց. Հիմա խաչակնքելով քրիստոնյա կլինե՞մ: Դա բավակա՞ն է քրիստոնյա լինելու համար:

Պատասխան. Երբ երեսդ խաչակնքես, տեսնողները կհասկանան, որ դու քրիստոնյա ես, բայց գիտե՞ս արդյոք, թե ինչի համար ես խաչակնքում երեսդ:

Հարց. Տեսնելով, որ ուրիշները խաչակնքում են, ես էլ նրանց նայելով խաչակնքում եմ: Բայց ինչո՞ւ, չգիտեմ:

Պատասխան. Երբ խաչակնքում կամ Խաչի նշանն ենք տեսնում, Քրիստոսի՝ մեզ համար Խաչի վրա մեռնելը և մեզ սատանայի գերությունից ազատելու երախտիքն ենք հիշում: Սրանից հետո Քրիստոսի սիրով զորացած պետք է ասենք. «Քրիստոս մեզ համար խաչվեց և մեզ սատանայի գերությունից ազատեց»:

# Ըավիղ ԺԱ

Հարց. Հասկացա, որ քրիստոնեության նշանը երեսը խաչակնքելն[7] է: Եթե միայն այդ է, ուրեմն շատ դյուրին է քրիստոնեությունը: Թեպետ դու սկզբից մեզ վախեցրիր քրիստոնեությունը դժվարին մի բան ներկայացնելով: Երես խաչակնքելուց հեշտ բան չկա: Մեկ օրում հազար անգամ կարող եմ խաչակնքել:

Պատասխան. Քրիստոնեությունը մի մեծ և կարևոր նշան ևս ունի: Եթե այն քո մեջ չլինի, որքան էլ խաչակնքես, ճշմարիտ քրիստոնյա չես լինի:

Հարց. Այդ նշանը ո՞րն է, բացատրիր ինձ:

Պատասխան. Քրիստոնեության մեծ և անհրաժեշտ նշանը եղբայրասիրությունն է, այսինքն՝ ընկերոջդ պետք է այնպես սիրես, ինչպես ինքդ՝ քեզ: Աստված Մովսեսին ասաց. «Պետք է սիրես քո ընկերոջը, ինչպես ինքդ՝ քեզ» (Ղևտ ԺԹ 18): Նաև Քրիստոս իր աշակերտներին ասաց. «Եթե դուք միմյանց սիրեք, դրանով բոլորը պիտի իմանան, որ դուք Իմ աշակերտներն եք» (Հովհաննես ԺԳ 35):

Հարց. Իմ սիրելի ընկերն ո՞վ է:

Պատասխան. Յուրաքանչյուր մարդ քո ընկերն է: Պետք է սիրես, որովհետև քեզ նման մարդ է:

Հարց. Օտարներն ինձ ինչպե՞ս ընկեր կլինեն, որ ես սիրեմ նրանց:

Պատասխան. Հիմա քեզ մի հարց տամ: Մի քանի հոգով ճանապարհորդում եք մի քանի քաղաք, օրինակ Պոլիս, Դամասկոս, Երուսաղեմ և այլն: Այդ մարդիկ քեզ անծանոթ են, բայց միասին եք ճանապարհորդում: Սակայն նրանցից մեկը քո ազգականն է: Եթե մեկը քեզ հարցներ, թե այն քաղաքը, որ գնացիր, մենա՞կ էիր, թե՞ ընկերներ ունեիր, ի՞նչ կպատասխանեիր նրան: Կասեիր՝ շատ ընկերներ ունեի, թե՞ անծանոթների մասին ոչինչ չէիր ասի, այլ միայն այն ազգականիդ մասին ակնարկելով՝ կասեիր, թե մի ընկեր ունեի: Տուր այս հարցի պատասխանը:

Հարց. Ի՞նչ կարիք կա հարցնելու: Պարզ է, որ միասին ճանապարհ գնացող մարդիկ՝ թե՛ օտար, թե՛ ազգական, իրար ընկեր են լինում:

Պատասխան. Եթե գիտես, որ միասին ճանապարհորդող մարդիկ իրար ընկեր են լինում, ինչո՞ւ ես հարցնում, թե սիրելի ընկերս ո՞վ է: Չգիտե՞ս, որ բոլոր քրիստոնյաները ծնվել են սուրբ Ավազանից և Աստծուն որդեգիր են դարձել: Բոլորը մի Սեղանից են ճաշակում և բոլորը դավանում են մեկ Սուրբ Երրորդություն: Ամենքն էլ միասին ճանապարհորդ են դարձել՝ երկնքի արքայություն գնալու համար: Եվ պետք է գնան, եթե մեղքից զգուշանան: Ուստի բոլոր քրիստոնյաներին ընկերոջ նման պետք է սիրես, թե՛ օտար լինի, թե՛ ազգական:

Հարց. Եթե ընկերս ինձ չսիրի, ես նրան պետք է սիրե՞մ:

Պատասխան. Այո՛, քեզ չսիրողներին պետք է սիրես, որ հայտնի լինի Քրիստոսին աշակերտ լինելդ: Եթե քեզ սիրողներին սիրես, ինչո՞վ կտարբերվես անհավատներից, ինչպես և Քրիստոս ասաց. «Եթե սիրեք միայն նրանց, որոնք ձեզ սիրում են, ձեր վարձն ի՞նչ է. չէ՞ որ մաքսավորներն էլ նույնն են անում» (Մատթեոս Ե 46):

Հարց. Ապա ինչո՞ւ է հին օրենքը գրում. «Ընկերոջդ սիրի՛ր և թշնամուդ ատի՛ր»:

Պատասխան. Այո՛, հին օրենքում այդպես է ասվել, բայց Քրիստոս հրամայեց. «Եթե ձեր արդարությունը ավելի չլինի, քան օրենսգետներինը և փարիսեցիներինը, երկնքի արքայություն չեք մտնի» (Մատթեոս Ե 20):

Հարց. Քրիստոս ինչո՞ւ է պատվիրում, որ մեր արդարությունը ավելին լինի, քան հրեաներինը:

Պատասխան. Զ Շավիղի մեջ Հին և Նոր Ուխտերի տարբերությունը պատմեցինք: Զհասկացա՞ր, թե որքան տարբերություն կա: Աստված հրեաներին Եգիպտոսից ազատեց, իսկ մեզ՝ դժոխքից: Նրանց քանանացիների երկիրը՝ Երուսաղեմ խոստացավ տանել, իսկ մեզ՝ Վերին Երուսաղեմ և անվախճան փառք խոստացավ: Դրա համար մեր արդարությունը նրանցից ավել պետք է լինի, որովհետև մեզ ավելին է խոստացած:

Հարց. Ի՞նչ պետք է անենք, որ նրանցից ավել լինի մեր արդարությունը:

Պատասխան. Եթե ընկերներին սիրենք և թշնամիներին ատենք, հավասար կլինենք հրեաներին: Բայց եթե մեր թշնամուն սիրենք, նրանցից ավելին կլինենք, ինչպես Քրիստոս հրամայեց. «Սիրեցե՛ք ձեր թշնամուն», և այս ասելուց բացի Իր երկնավոր Հոր բնությունն է մեզ բացատրում, որ Նրան նմանվենք. «Որպեսզի որդիները լինեք ձեր Հոր, որ երկնքում է, քանի որ Նա Իր արեգակը ծագեցնում է չարերի և բարիների վրա և անձրև է թափում արդարների և մեղավորների վրա» (Մատթեոս Ե 45): Ուստի մենք, որ Իր ստեղծած ծառաներն ենք, խտրություն պետք է չդնենք մարդկանց միջև: Թե՛ լավին և թե՛ վատին պետք է սիրենք, որովհետև մեզ նման մարդ են: Լավն ու վատը որոշելը Աստծու գործն է:

Հարց. Միայն սա՞ է ավելին:

Պատասխան. Ո՛չ, այլ պատվիրաններ էլ կան, որովհետև հին օրենքն ասում է, թե մարդ մի՛ սպանիր. «Ով մարդ սպանի, պարտական է դատաստանի», մինչդեռ Քրիստոս ասում է. «Ով զուր տեղը բարկանում է իր եղբոր վրա, ենթակա կլինի դատաստանի» (Մատթեոս Ե 22): Ուստի եթե մենք միայն մարդ չսպանենք, հրեաներին կնմանվենք, մինչդեռ մենք նույնիսկ

չպետք է բարկանանք մարդու վրա, որպեսզի նրանցից ավելին լինենք: Տե՛ս, որ մեր բարկությունը ավելի մեծ հանցանք է, քան մարդասպանությունը:

**Հարց.** Կա՞ ուրիշ պատվեր ավելի:

**Պատասխան.** Թեպետ շատ պատվերներ կան ավել, բայց բոլորն էլ մի առ մի ասելը ավելորդ համարեցինք՝ ձանձրություն չպատճառելու համար: Սակայն այս մի պատվերը, որ շատ կարևոր է, կցանկանայի բացատրել: Որովհետև հին օրենքը հրամայում է աչք հանողի աչքը հանել և ատամ հանողի՝ ատամը: Բայց Քրիստոս ասում է. «Չարին հակառակ չկանգնել, այլ եթե մեկը քո աջ ծնոտին ապտակ տա, նրան մյուսն էլ դարձրու» (Մատթեոս Ե 39): Ուստի եթե մեզ հարվածողներին մենք էլ հարվածենք, հրեաներին կնմանվենք, բայց երբ մենք մեր մյուս երեսը դարձնենք, մեր արդարությունը նրանցից ավելին կլինի:

# Ղ ա վ ի ղ   Ժ Բ

**Հարց.** Քանի՞սն են Աստծու օրենքներն ու պատվիրանները:

**Պատասխան.** Տասն են, որոնք Սինա լեռան վրա Մովսես մարգարեին տրվեցին քարեղեն տախտակներին գրված:

**Հարց.** Որո՞նք են այդ պատվիրանները:

**Պատասխան.**

I. Ես եմ քո Տեր Աստվածը, Ինձնից բացի ուրիշ Աստված չունենա՛ս:
II. Կուռք չպատրաստե՛ս և չպաշտե՛ս:
III. Իմ անունը զուր տեղը չհիշե՛ս և սուտ վկայություն չբերե՛ս:
IV. Շաբաթ օրը սուրբ պահի՛ր:
V. Հորդ և մորդ հարգի՛ր:
VI. Շնություն մի՛ արա:
VII. Մի՛ գողացիր:
VIII. Մարդ մի՛ սպանիր:
IX. Սուտ մի՛ խոսիր:
X. Քո ընկերոջ ունեցածի վրա աչք մի՛ ունեցիր: Ո՛չ տանը, ո՛չ արտին, ո՛չ այգուն, ո՛չ ապրանքին, ո՛չ եզին, ո՛չ էշին, ո՛չ ողային, ո՛չ աղջկան, ո՛չ կնոջը, ո՛չ ծառային, ո՛չ աղախնին: Այս ամենը, ինչը որ քո մերձավորինն է, մի՛ ցանկացիր (հմմտ. Ելից Ի 1):

**Հարց.** Հին օրենքի բոլոր պատվիրանները հնարավո՞ր է կատարել:

**Պատասխան.** Կան կատարվելիք պատվիրաններ և չկատարվելիք:

**Հարց.** Դրանք որո՞նք են:

**Պատասխան.** Անշուշտ պետք է կատարենք այն տասը պատվիրանները, որոնք թվեցինք, որովհետև Քրիստոս ասում է. «Մի՛ կարծեք, թե օրենքը կամ մարգարեներին ջնջելու եկա. չեկա ջնջելու, այլ լրացնելու» (Մատթեոս Ե 17):

**Հարց.** Որո՞նք են այն պատվիրանները, որոնք կատարելի չեն:

**Պատասխան.** Հրեաների մեջ երեք մեծ օրենք կար. նախ՝ շաբաթը, որի փոխարեն մենք կիրակին ենք պահում ի պատիվ Քրիստոսի հարության, որովհետև կիրակի լուսանալիք գիշերը հարություն առավ: Երկրորդ՝ թլփատությունը, և երրորդ՝ զոհը: Վերջին երկու պատվիրանները պահել հարկավոր չէ, ինչպես և այլ ծիսական օրենքները:

**Հարց.** Շատ մեծ օրենք են այս երկու պատվիրանները հրեաների մոտ: Մենք ինչո՞ւ չենք կատարում:

**Պատասխան.** Թլփատությունը հոգու փրկության օրենք չէր, այլ հրեից ազգը մյուս ազգերից զատորոշելու համար էր օրինադրված: Աստված սահմանել էր, որ Փրկիչն իրենց ազգից լիներ, ուստի պետք էր, որ այն ազգն ունենար այնպիսի մի օրենք, որ տարբերվեր ուրիշ ազ-

*գերից: Իսկ Քրիստոսի՝ աշխարհ գալուց հետո այդ ազգը մյուսներից զատորոշելու կարիք չմնաց, ուստի այս օրենքն էլ խափանվեց, ինչպես Պողոս առաքյալն է գրում. «Եթե թլփատվեք, Քրիստոս ձեզ ոչնչով չի օգնի» (Գաղատ. Ե 2): Մեկ այլ տեղ էլ գրում է. «Եթե թլփատված մեկը հավատի կանչվեց, թող չփորձի ծածկել թլփատության նշանները: Եթե անթլփատության վիճակի մեջ գտնվող մեկը կանչվեց, թող չթլփատվի» (Ա Կորնթ. Է 18):*

**Հարց.** *Ինչո՞ւ զոհ չենք մատուցում:*

**Պատասխան.** *Հին օրենքում զոհի փոխարեն Քրիստոս Ինքը մորթվեց, ինչպես Պողոս առաքյալն է ասում. «Քրիստոս՝ մեր զատիկը, մորթվեց» (Ա Կորնթ. Ե 7): Դրանից բացի հին օրենքի մեջ ամեն մարդ իր մեղքերի համար զոհ, այսինքն՝ «Պատարագ» էր մատուցում (Թվեր ԺԵ 17): Այդ պատարագների փոխարեն էլ Քրիստոս որպես զոհ մատուցվեց, ըստ Պողոսի. «Քրիստոս մեկ անգամ պատարագ մատուցվեց՝ շատերի մեղքերը վերացնելու համար» (Եբր. Թ 28):*

*Իսկ այդ պատարագների փոխարեն մեր անձը պատարագ պետք է մատուցենք:*

**Հարց.** *Մեր անձը ինչպե՞ս զոհ պետք է մատուցենք: Արդյոք պետք է մորթվե՞նք:*

**Պատասխան.** *Ո՛չ, մենք բանական էակներ ենք, ուստի բանական, կենդանի զոհ պետք է մատուցվենք:*

**Հարց.** *Բանական զոհ կլինի՞:*

**Պատասխան.** *Այո՛, Պողոս առաքյալն է սովորեցնում. «Աղաչում եմ ձեզ, եղբայրնե՛ր, Աստծու ողորմությամբ, որ պատրաստեք ձեր մարմինները, որպես զոհ կենդանի՝ սուրբ, աստվածահաճո. այդ է ձեր բանական պաշտամունքը՝ ձեր աղոթքը» (հմմտ. Հռոմ. ԺԲ 1):*

**Հարց.** *Ուրեմն կենդանի զոհը մեր աղոթքն է: Ապա ինչո՞ւ է Պողոսը մեզ աղաչում, որ մեր մարմինները պատրաստենք:*

**Պատասխան.** *Դ Շավիղում չասացի՞նք, որ «Մենք կենդանի տաճար ենք» (Ա Կորնթ. Գ 16), և Աստված մեր սրտում է բնակվում: Այն ժամանակ մի քանի խրատներ ասացինք, բայց թերի մնաց և խոստացանք հարմար ժամանակ պակասը լրացնել: Ահա հիմա ժամանակն է, որ մի քանի օրինակներ և պատվերներ քեզ բացատրեմ:*

**Հարց.** *Որո՞նք են դրանք:*

**Պատասխան.** *Սկզբում մեկ հարց տամ: Եթե մի բորոտ ու վիրավոր մարդ քեզ ուտելու կերակուր տա իր բերանից կամ ձեռքով, այդ կերակուրը կվերցնե՞ս, թե՞ կզզվես: Կամ եթե ժանգոտ և կեղտոտ ամանում համեղ կերակուր լցնեն և դնեն դիմացդ, կարո՞ղ ես ուտել:*

**Հարց.** *Ինչքան էլ համեղ կերակուր լինի, եթե տվողը բորոտ, կամ ամանը ժանգոտ լինի, ամենևին սիրտս չի ցանկանա, թեկուզ սովամահ լինեմ, մի կտոր իսկ չեմ կարող ուտել: Ոչ թե կերակուրի տհաճ լինելու, այլ տվող մարդու կամ ամանի աղտոտ լինելու պատճառով կզզվեմ:*

**Պատասխան.** *Եղբա՛յր, դու մարդ ես և բորոտ մարդու ձեռքից կամ ժանգոտ ամանի միջից կերակուր ուտել չես ցանկանում, զզվում ես, բայց իմացիր, որ նույնպես այն բորոտ մարդկանց նման մարդ կամ ժանգոտ ամանի նման աման ես: Ապա ամենամաքուր և ամենասուրբ Աստված մեր այս մեղքով վիրավորված ձեռքերից ողորմությունը և ժանգոտած գարշահոտ սրտներից ու բերաններից դուրս եկած աղոթքն ինչպե՞ս ընդունի:*

*Հարց. Մեղքը վերքի օրինա՞կ է:*

**Պատասխան.** *Այո՛, ինչպես Եսայի մարգարեն է գրում. «Վա՜յ մեղավոր ազգին. մեղքերով լի ժողովուրդ... Ոտքերից մինչև գլուխ նրա վրա առողջ տեղ չկա, վերքերի, այտուցների և շարավոտ խոցերի վրա դնելու ո՛չ սպեղանի կա, ո՛չ էլ՝ վիրակապ» (Եսայի Ա 4-6):*

**Հարց.** *Որտեղի՞ց է հայտնի մեղավորների աղոթքներն ու ողորմությունները Աստծու կողմից չընդունելը:*

Պատասխան. Աստված Ինքն է ասել. «Երբ աղոթքի համար դեպի վեր բարձրացնեք ձեր ձեռքերը, երես եմ դարձնելու ձեզանից. և եթե բազմապատկեք ձեր աղոթքները, չեմ լսելու ձեզ, որովհետև ձեր ձեռքերը լի են արյունով» (Եսայի Ա 15):

Հարց. Այդտեղի՞ց հասկացվեց, որ մեղավորների աղոթքը Աստված չի ընդունում: Ողորմություն չընդունելը որտեղի՞ց է հայտնի:

Պատասխան. Եսայի մարգարեն գրում է. «Անօրենը, որ Ինձ եզ է զոհաբերում, նույնն է, թե մարդու գանգ է ջախջախում. իսկ նա, որ ոչխար է զոհաբերում, նույնն է, թե շուն է մորթում» (Եսայի ԿԶ 3):

Հարց. Այլ տեղ ևս գրված կա՞:

Պատասխան. Շատ կա, բայց բոլորն էլ պատմելը ձանձրույթ կպատճառի: Ահա Եսայի մարգարեի այս խոսքը բավական է, որ ամեն ինչ հասկանաս. «Մի՞թե Տիրոջ ձեռքն անկարող է փրկել, կամ Նա ծանրացրել է Իր ականջը, որ չլսի. ո՛չ, ձեր մեղքերն են պատնեշ դարձել ձեր և Աստծու միջև, ձեր անօրենությունների պատճառով է Նա Իր երեսը շրջել ձեզնից, որ չգթա: Արդարև ձեր ձեռքերը պղծված են արյամբ, և ձեր մատները՝ մեղքով. ձեր շուրթերն անօրենություն խոսեցին, և ձեր լեզուները խորհում են անիրավություն» (Եսայի ԾԹ 1-3):

Տեսնո՞ւմ ես, եղբա՛յր, որ մեղքերով վիրավորված սրտից և բերանից դուրս եկած աղոթքն ու ձեռքերի ողորմությունը, որ Աստված չընդունեց, Պողոս առաքյալը լավ հասկանալով է, որ աղաչում է՝ մեր մարմինները զոհաբերության պատրաստել:

Հարց. Ինչպե՞ս պետք է պատրաստենք մեր մարմինները:

Պատասխան. Ահա Պետրոս առաքյալը սովորեցնում է մարմինը պատրաստելու կերպը. «Եվ դուք, իբրև կենդանի վեմեր, կառուցվում եք որպես հոգևոր տաճար, որպես անարատ քահանայություն, որպեսզի Հիսուս Քրիստոսի միջոցով մատուցեք հոգևոր պատարագներ, որոնք հաճելի լինեն Աստծուն» (Ա Պետրոս Բ 5):

Տեսնո՞ւմ ես՝ ինչ պատվական բան ենք եղել: Ինչքան ենք զգուշանում քարաշեն և փայտաշեն նյութական եկեղեցին սուրբ ու մաքուր պահել, որովհետև Աստծու տունն է, և այնտեղ աղոթք է մատուցվում Աստծուն: Բայց որքա՞ն պետք է զգուշանալ մեր անձը մաքուր պահելու համար, քանի որ մենք կենդանի տաճար ենք, Աստված մեր սրտում է բնակվում, ինչպես և սկզբում ասացինք: Պետրոս առաքյալը դարձյալ պատվիրում է. «Իբրև հնազանդ որդիներ, մի՛ կերպարանվեք նախկին ձեր անգիտության ժամանակվա ցանկություններով, այլ նմանվեք այն սրբին, որ ձեզ կանչեց, դուք էլ ձեր ամբողջ կյանքով սուրբ եղեք, քանի որ գրված է. «Սո՛ւրբ եղեք, քանի որ սուրբ եմ Ես» (Ա Պետրոս Ա 14-16): Եվ մեզ զինվորյալ Եկեղեցի են կոչում, որ բերանով Աստծու հետ պետք է խոսենք և Աստծու ամենամաքուր անունը պետք է հիշենք: Ինչքա՞ն մաքուր սիրտ և մաքուր բերան է պետք, որ ամենազոր Աստծու ամենասուրբ անունը հիշենք: Մի՞թե չգիտես, որ երբ մի հասարակ մարդու անուն ենք տալիս, կամապաշտ և ծաղրասեր մարդիկ ասում են, թե սկզբից բերանդ լվա և ապա այն մարդու անունը տուր:

Հարց. Իսկապես որ այդպես է. շատ անգամ է ինձ հետ պատահել: Ասա ինձ, ինչպե՞ս պետք է մաքուր բերան և սուրբ սիրտ ունենալ:

Պատասխան. Այս օրինակից բան չհասկացա՞ր: Մի հասարակ և մեղավոր մարդու անուն եթե հիշելու լինես, սկզբից բերանդ պետք է լվանաս, իսկ հետո այդ մարդու անունը տաս: Ուրեմն մտածիր, տես, թե այս բոլոր արարածներին ոչնչից գոյացնող ամենազոր Աստծու անունը, որից դողում են երկինքն ու երկիրը, հրեշտակներն ու մարդիկ, և նույնիսկ դևերը, ինչպես Հակոբոս առաքյալն է ասում. «Դու հավատում ես, որ մեկ է Աստված, լավ ես անում: Դևերն էլ են հավատում և դողում» (Հակոբոս Բ 19), պետք է երկյուղածությամբ արտաբերել: Մտածի՛ր և հասկացի՛ր, որ Աստծու անունը հիշելիս ինչքա՜ն պետք է լվանաս բերանդ և հետո հիշես:

**Հարց.** *Ինչո՞վ պետք է լվանամ. եթե ջրով, ապա շատ հեշտ է: Օրը մի քանի անգամ կլվանամ ջրով և օճառով:*

**Պատասխան.** *Արդարացի ես, բերանը ջրով լվացվում է, բայց քո ասածն աղբյուրի ջուր է: Այդ ջուրը մարմնիդ աղտերն է լվանում, հոգու աղտերը մաքրելու համար ուրիշ ջուր է հարկավոր:*

**Հարց.** *Որո՞նք են հոգու աղտերը:*

**Պատասխան.** *Ահա նախ Պետրոս առաքյալն է գրում. «Ուրեմն դեն գցելով ամեն չարություն, ամեն նենգություն, կեղծավորություններ, նախանձ և ամեն չարախոսություն» (Ա Պետրոս Բ 1): Եվ Պողոս առաքյալն է գրում. «Դեն գցեցեք ստախոսությունը. յուրաքանչյուրը թող իր ընկերոջն ասի ճշմարտությունը» (Եփես. Դ 25): Եվ հավելում է. «Հեռու ձեզանից պոռնկություն և ամեն տեսակ պղծություն կամ ագահություն. դրանց անունն իսկ թող չհիշվի ձեր մեջ, ինչպես որ վայել է սրբերին. և հեռու ձեզանից չարախոսություն կամ հիմար խոսք, կամ խեղկատակություն, որ վայել չեն. այլ մանավանդ գոհություն թող մատուցվի Աստծուն» (Եփես. Ե 3-4): Տեսա՞ր հոգու աղտերը: Այս մեղքի համար պետք է զղջաս, խոստովանես և բերանիդ մոտ գտնվող աղբյուրի ջրով լվանաս ու մաքրես:*

**Հարց.** *Այդ աղբյուրը ո՞րն է:*

**Պատասխան.** *Բերանիդ մոտ գտնվող աղբյուրը քո աչքերն են: Այդ աղբյուրի ջրով են լվացվում հոգու աղտերը: Եվ այդ ժամանակ ամբողջ մարմինդ կմաքրվի: Դրանից հետո Աստծու անունը հիշելու իրավունք կունենաս:*

**Հարց.** *Եթե մաքուր չլինեմ, Աստծու անունը չե՞մ կարող հիշել:*

**Պատասխան.** *Եթե Դավիթ մարգարեի խոսքով առաջնորդվենք, չպետք է կարողանանք հիշել կամ ուրիշներին պատմել Աստծու սքանչելիքները. թե՝ «Աստված կարող է, Աստված զորավոր է, Աստված ողորմած է», բայց դու խոսք չես լսում, որովհետև սովորություն ունես ամեն խոսքի մեջ Աստծու անունը հիշել: Նրա անունը պետք է հիշել միայն աղոթքի մեջ կամ ինչ-որ մեկին հոգևոր խրատ տալու ժամանակ: Բայց դու դրա հակառակն ես անում, որովհետև դեռ կարոտ ես հոգևոր խրատի և աղոթքն էլ կամա թե ակամա, մի քանի խոսքով ես ասում, որոնց մեջ էլ Աստծու անունը կամ կա, կամ չկա: Որովհետև դու, Սուրբ Գրքին հմուտ չլինելով, Աստծուն ընդունելի աղոթքին ծանոթ չես, այլ մանկությանդ տարիներին մեծահասակներից մի քանի սխալ բաներ ես սովորել, որոնք էլ աղոթքի տեղ ես ասում: Բնականաբար, Աստված չի լսի, ինչքան էլ որ կրկնես: Բայց դու Աստծու անունը շատ ես կրկնում, երբ սուտ խոսքերով խաբում ես մի պարզամիտ մարդու: Այդ ժամանակ Աստծու անունով սուտ-սուտ երդվում ես և Աստծուն վկա ես բերում քո խարդախ գործի համար: Բայց մի անգամ լսիր Դավիթ մարգարեին. «Մեղավորներին Աստված ասում է. «Իսկ դու ինչո՞ւ ես պատմում Իմ արդարությունը կամ բերանդ չես առնում Իմ Ուխտը: Չէ՞ որ դու ատեցիր Իմ խրատը, մերժեցիր ու անտեսեցիր բերանիս բոլոր խոսքերը» (Սաղմոս ԽԹ 16-17):*

**Հարց.** *Ինչո՞ւ մենք չենք վախենում հզոր Աստծուց:*

**Պատասխան.** *Աստված, երկայնամիտ ու բազմողորմ լինելով, այս աշխարհում երբ մեղք ենք գործում, մեզ չի պատժում, այդ պատճառով էլ մենք չենք վախենում: Բայց դատաստանի օրը Աստված պետք է ասի. «Այս բոլորն արեցիր, ու Ես լուռ մնացի. դո՛ւ անօրենդ, կարծեցիր քո մտքում, թե Ես էլ կնմանվեմ քեզ: Արդ, պիտի հանդիմանեմ քեզ և այս ամենը առջևդ դնեմ» (Սաղմոս ԽԹ 21):*

# Ճ ա վ ի ղ   Ժ Գ

*Հարց.* Հասկացանք, որ հին օրենքի պատարագի փոխարեն մեր անձը պիտի զոհաբերենք: Ապա քահանաներն ինչո՞ւ են պատարագ կատարում:

*Պատասխան.* Մեր քահանաների կատարածը Հին Ուխտ չէ, այլ Նոր Ուխտ: Զ Շավիղում այս մասին պատմեցինք: «Օրեր կգան, որ Իսրայելի տան հետ Նոր Ուխտ պետք է կատարեմ»,- ասում է Աստված, ահա այն Նոր Ուխտը մեր պատարագն է Քրիստոսի արյունով, որ Ինքը պատվիրեց. «Սա կատարեք Ինձ հիշելու համար»: Դրա համար քրիստոնեական Եկեղեցին պատարագ է մատուցում:

*Հարց.* Ինչո՞ւ ենք ապա մատաղ անում:

*Պատասխան.* Դա հին օրենքի զոհը չէ, այլ լոկ աղքատների կերակուր է ի հիշատակ ննջեցյալների, որ հրամայեց Ս. Գրիգոր Լուսավորիչը:

*Հարց.* Դա գրված կա՞:

*Պատասխան.* Ահա Քրիստոսն է հրամայում. «Երբ ճաշ կամ ընթրիք ես տալիս, մի՛ կանչիր ո՛չ քո բարեկամներին, ո՛չ քո եղբայրներին, ո՛չ քո ազգականներին և ո՛չ էլ քո հարուստ հարևաններին, որպեսզի նրանք էլ փոխարենը քեզ չհրավիրեն, և քեզ հատուցում լինի» (Ղուկաս ԺԴ 12):

*Հարց.* Ապա ո՞ւմ պետք է կանչենք:

*Պատասխան.* Ահա ասվում է, թե ում կանչես. «Կանչի՛ր աղքատներին, խեղանդամներին, կաղերին ու կույրերին և երանելի կլինես, որովհետև փոխարենը քեզ հատուցելու ոչինչ չունեն: Եվ դրա փոխարեն քեզ կհատուցվի արդարների հարության օրը» (Ղուկաս ԺԴ 13-14):

# Շավիղ ԺԴ

*Հարց.* Հասկացա, որ Աստծու պատվիրանները տասն են, բայց սրանց մեջ մեծ և փոքր կա՞, թե՞ բոլորն էլ հավասար են:

*Պատասխան.* Թեպետ բոլորն էլ մեծ են, որովհետև Աստծու պատվիրաններն են, բայց սրանց մեջ երկու մեծ պատվիրան կա, որ առաջնային է համարում Քրիստոս:

*Հարց.* Ո՞ր պատվիրանն է մեծ:

*Պատասխան.* Նախ՝ «Դու պիտի սիրես քո Տեր Աստծուն քո ամբողջ սրտով, քո ամբողջ հոգով, քո ամբողջ մտքով և քո ամբողջ զորությամբ»: Սա է առաջին պատվիրանը: Եվ երկրորդը նման է սրան. «Դու պիտի սիրես քո ընկերոջը քո անձի պես», չկա ուրիշ պատվիրան ավելի մեծ, քան սրանք» (Մարկոս ԺԲ 30-31):

*Հարց.* Ես ճիշտ եմ ասում, այդ երկու պատվիրաններից առաջինը հաստատ պահել եմ, որովհետև ես իմ Աստծուն սիրում եմ ամբողջ սրտով և ամբողջ մտքով: Բայց երկրորդ պատվիրանը, այսինքն՝ իմ ընկերոջը իմ անձի պես չեմ սիրում, դա մեծ վնաս ունի՞:

*Պատասխան.* Եթե ընկերոջդ քո անձի նման չսիրես, «Աստծուն սիրում եմ» ասելդ սուտ կլինի, ահա այդ է վնասը:

*Հարց.* Ինչի՞ց գիտես սուտ ասելս:

*Պատասխան.* Ահա, Հովհաննես առաքյալն է գրում. «Եթե մեկն ասի, թե սիրում է Աստծուն և ատի իր եղբորը, սուտ է խոսում» (Ա Հովհաննես Դ 20):

*Հարց.* Եղբա՛յր, այդ ի՞նչ վախենալու խոսք է, որ ասացիր:

*Պատասխան.* Այդ ի՞նչ էր, որ ասացի, վախենալու խոսքը դեռ հետո է: Հովհաննես առաքյալը նորից գրում է. «Ամեն ոք, ով ատում է եղբորը, մարդասպան է» (Ա Հովհաննես Գ 15):

*Հարց.* Առավել ևս վախեցրիր ինձ՝ ընկերոջս չսիրելու պատճառով ստախոս և մարդասպան անվանեցիր:

Պատասխան. Այս խոսքերը ես ինձնից չեմ հնարել, այլ Քրիստոսի և Նրա աշակերտի խոսքերն են: Տակավին շատ պատվիրաններ կան, բայց ես դանց կառնեմ: Միայն Քրիստոսի մի երկյուղալի խոսք պիտի ասեմ:

Հարց. Ասա տեսնեմ՝ ի՞նչ պատվեր և ի՞նչ խոսք է, որովհետև ասում են, թե Աստծու պատվիրաններն արհամարհող մարդուն Դավիթ մարգարեն օձի է նմանեցնում: Բայց պատճառը չգիտեմ:

Պատասխան. Իժ և քարբ ասված օձերը, երբ տեսնում են թովիչ որսկանին, մի ականջը հպում են հողին և մյուս ականջն էլ ծածկում պոչով, որպեսզի չլինի թե թովիչ որսկանի ձայնը լսելով թմրեն և չկարողանան մեկին խայթել: Ինչպես Դավիթ մարգարեն է գրում. «Իժ և քարբ օձերի նման իր ականջը փակում է, որպեսզի թովչի ձայնը չլսի» (հմմտ. Սաղմոս ԾԷ 6): Նույնպես էլ աշխարհասեր ու կամապաշտ մարդը, որտեղ որ Աստծու պատվերը քարոզվի, այնտեղից կփախչի կամ ականջ չի դնի, որ չլինի թե լսելով խիղճն արթնանա և չարություն, վնաս չկարողանա անել ու իր չար կամքը կատարել և կամ իր աշխարհային ուրախությանը և փափկությանը արգելք հանդիսանալ:

Հարց. Ահա ես այդ պատճառով վախենում եմ Աստծու պատվիրանները չլսել, որ չլինի թե օձի նմանվեմ: Ուստի ինչքան պատվերներ կան, ասա՛, որ լսեմ:

Պատասխան. Ասելիքս այս է, որ դու բարկացար, երբ ես քեզ ստախոս անվանեցի, բայց Քրիստոս ստախոսին սատանայի որդի է անվանում: Սրան ի՞նչ պետք է ասես:

Հարց. Ես Աստծուն ամբողջ սրտով եմ սիրում, այստեղ սուտ չկա, որ սատանայի որդի լինեմ:

Պատասխան. Հիմա քեզ մի բան հարցնեմ: Եթե քո տունը մի հարգարժան մարդ գա, և քեզ համար արժանավոր մեկը լինի, պետք է որ նրան ավելի պատվես, որովհետև նա իր մտքում արժանիքների փոխարեն հարգանք է խնդրում քեզանից: Եվ եթե դու նրա արժանիքները չհարգես և միայն խոսքով ասես, թե «Ես քեզ շատ եմ սիրում, գալուդ համար շատ ուրախացա, իմ սիրտը քեզանից չպետք է կտրեմ, աշխարհում քեզանից ավելի սիրելի մարդ չունեմ» և այլն: Այդ մարդն արդյոք կհավատա՞ խոսքերիդ: Ո՛չ: Որովհետև խնայեցիր նրան ծախսով պատիվ անել, որ կարող էր աչքով տեսնվել և ձեռքով շոշափվել: Այլ բերանիցդ դուրս եկած քամուն ինչպե՞ս հավատա, որ օդի մեջ ցրվում է, ո՛չ տեսնվում և ո՛չ բռնվում:

Հարց. Այդ օրինակը հարմար է երևում: Ցանկանում եմ, որ դրա միտքը բացատրես ինձ:

Պատասխան. Մարդը մարդկանց երեսին նայելով միայն կարող է հասկանալ նրանց գեղեցիկ կամ տգեղ լինելը, իսկ սիրտը ամենևին չի կարող քննել: Բայց եթե շրջապատում իրեն տրվելիք հարգանք չտեսնի, «սիրում եմ» ասելուն չի հավատա: Սակայն մեր ամենաբարի և ամենագետ Աստված, որ մեր վրա անչափ երախտիք ունի և մեր սրտի խորհուրդներն է քննում ու Իր՝ մեզ պարգևած արժանիքների փոխարեն մեզնից հարգանք է պահանջում, և մենք երբեք չենք հարգում, չենք պահում Իր պատվիրանները: Եթե միայն լեզվով ասենք «Աստծուն սիրում եմ, չեմ մոռանա Նրա երախտիքը», մի՞թե Աստված կհավատա բերանիցդ դուրս եկած և օդում ցրված խոսքիդ, ինչպես որ Մաղաքիա մարգարեն է ասում. «Որդին փառավորում է Հորը, և ծառան երկնչում է իր Տիրոջից: Իսկ արդ, եթե Ես Հայր եմ, ո՞ւր է Իմ փառքը, իսկ եթե Տեր եմ, ո՞ւր է Իմ պատիվը,- ասում է Ամենակալ Տերը» (Մաղաքիա Ա 6): Սրանից բացի մեր Տեր Քրիստոսն էլ է հրամայում. «Ինչո՞ւ Ինձ Տե՛ր, Տե՛ր եք կոչում, իսկ ինչ ասում եմ, չեք անում» (Ղուկաս Զ 46): Լոկ խոսքերը նշանակություն չունեն, եթե գործով չսիրես:

Հարց. Ինչքան գիտեմ, այդ հանդիմանությունը Աստծուն չսիրողների համար է գրված: Դա ինձ չի վերաբերում, որովհետև Աստծուն ամբողջ սրտով ու հոգով եմ սիրում:

Պատասխան. Դու շատ ես պարծենում: Քեզ մի հարց տամ. «Դու Աստծուն տեսե՞լ ես»:

Հարց. Ո՛չ, եղբա՛յր, Աստծուն ո՞վ կարող է տեսնել:

**Պատասխան**. Աստծուն չես տեսել և չես կարող տեսնել, ինչպես որ դու վկայեցիր: Իսկ եղբորդ, որին միշտ տեսնում ես, և Աստված էլ քեզ պատվիրել է, որ Նրան քո անձի նման սիրես, եթե չես սիրում, բոլորովին չտեսած Աստծուդ ինչպե՞ս պետք է սիրես: Հովհաննես առաքյալն է գրում. «Ով չի սիրում իր եղբորը, որին տեսնում է, ինչպե՞ս կարող է սիրել Աստծուն, որին չի տեսել» (Ա Հովհաննես Դ 20): Հիմա հասկացա՞ր, որ Աստծուն սիրելու նշանը եղբայրասիրության մեջ է երևում:

# Ճ ա վ ի ղ   Ժ Ե

**Հարց**. Ինչո՞ւ Քրիստոս տասը պատվիրաններից այս երկուսը մեծ համարեց, այսինքն՝ Աստծուն և ընկերոջը սիրելը:

**Պատասխան**. Եթե այս երկուսը հաստատ պահես, տասը պատվիրաններն էլ կատարած կլինես:

**Հարց**. Ինչպե՞ս երկու պատվիրան պահելով՝ տասը պատվիրան կատարած կլինեմ:

**Պատասխան**. Եթե Աստծուն ամբողջ սրտով սիրես, Նրա անունն առանց առիթի չես տա և սուտ բանի համար Աստծուն վկա չես բերի: Երկրորդ՝ կուռք չես պատրաստի, երրորդ՝ շաբաթ, այսինքն՝ կիրակին սուրբ կպահես: Մարմնավոր գործերից հրաժարվելով՝ հոգևոր գործով կզբաղվես: Չորրորդ՝ հորդ ու մորդ կհարգես: Տեսնո՞ւմ ես, որ այսպիսով հինգ պատվեր կատարեցիր:

**Հարց**. Փա՛ռք Աստծու, ես կռապաշտ չեմ, որ կուռք պատրաստեմ:

**Պատասխան**. Շատ ես պարծենում, թե կռապաշտ չես, բայց Պողոս առաքյալի խոսքերով, եթե ագահություն ունենաս, դա արդեն կռապաշտություն է. «Այս բանն իմացեք, թե ամեն պոռնիկ կամ պիղծ կամ ագահ մարդ, որ կռապաշտ է, Աստծու և Քրիստոսի թագավորության մեջ ժառանգություն չունի» (Եփես. Ե 5):

**Հարց**. Ապա ի՞նչ անենք, եղբա՛յր, քաղցած և մերկ զբոսնե՞նք, չվաստակե՞նք:

**Պատասխան**. Ինչո՞ւ պետք է քաղցած և ծարավ ման գաս: Ունեցվածք ունենալու և առևտուր անելու արգելք չկա Սուրբ Գրքի մեջ, ինչպես Պողոս առաքյալն է ասում. «Աստվածապաշտությունը շահի մեծ աղբյուր է նրանց համար, ովքեր գոհ են իրենց վիճակից» (Ա Տիմոթեոս Զ 6):

**Հարց**. Շատ լավ է Պողոս առաքյալի ասածը, բայց իմ ծախսը շատ կլինի, ինչպե՞ս բավականանամ քիչ վաստակով:

**Պատասխան**. Պողոս առաքյալը քո շռայլ լինելը և այդպես ասելը կանխապես գիտեր, որի պատճառով և ավելացնում է. «Ոչինչ չբերեցինք աշխարհ, ոչ էլ պիտի կարողանանք տանել: Այլ ունենք կերակուր և հանդերձներ ու դրանցով էլ բավականանանք: Իսկ ովքեր հարստանալ են ուզում, ընկնում են փորձության որոգայթի և բազում անմիտ ու վնասակար ցանկությունների մեջ» (Ա Տիմոթեոս Զ 7-9):

Պողոս առաքյալի խոսքից պարզ հասկացվում է, որ եթե քաղցդ հագեցնելու և մերկությունդ ծածկելու չափ բավարարվես, շատ ծախս չես ունենա և քիչ վաստակով գոհ կլինես: Ուրեմն պետք չէ լինել ագահ և ընչասեր: Բայց, ինչպես տեսնում եմ, ծախսդ չափավոր սնունդի և հագուստի համար չէ միայն:

**Հարց**. Ապա ինչի՞ համար է:

**Պատասխան**. Լսի՛ր, քեզ ասեմ, թե ինչի համար է:

Ա. Չափից ավելի համեղ և յուղալի կերակուրների, գինետներ հաճախելու և անպարկեշտ խաղերով ժամանակ անցկացնելու:

Բ. Չափից ավելի թանկարժեք հագուստներ հագնելու, ադամանդե մատանի, թանկարժեք ժամացույց և մուշտակ ունենալու:

Գ. Գեղեցիկ տների և սենյակների, փառավոր պարտեզներ կառուցելու:

Դ. Աշխարհում մեծ անուն ու սին փառք վայելելու:

Ե. Աղքատների վրա բարկանալու, դատարաններում կաշառք տալու, խոսքդ առաջ տանելու և չար կամքդ կատարելու:

Զ. Կնոջդ, աղջկադ կամ հարսիդ ոսկով, արծաթով, ադամանդե ծաղիկներով, մատանիներով և մետաքսե հագուստներով կուռքի նման զարդարելու:

Ահա սրանց համար է քո ծախսը, ուստի հասկանալի է, որ այդ նպատակի համար մեծ գումար է պետք: Սա փոքր գումարով գլուխ գալիք գործ չէ: Եթե աշխարհի ամբողջ արծաթն ու ոսկին էլ տան, չես գոհանա, որովհետև քո ծախսի համար դա շատ քիչ կգա: Այս պատճառով էլ փոքրիկ վաստակով չես բավարարվում: Հիմա հասկացա՞ր կռապաշտ լինելդ, որի համար էլ Հովհաննես առաքյալը զգուշացնում է. «Որդյակնե՛ր, հեռո՛ւ պահեցեք դուք ձեզ կռապաշտությունից» (Ա Հովհաննես Ե 21): Չկարծես, թե այս խոսքը կռապաշտներին է ուղղել, այլ քրիստոնյաներին՝ նրանց մեջ նկատվող ընչասիրության և չուայլ ծախսումներից զգուշացնելու համար: Նաև Պողոս առաքյալն է ասում. «Ամեն տեսակ չարության արմատը արծաթասիրությունն է»: Իմանալով մարդկային բնության մեջ նկատվող արատավոր հատկությունները՝ նյութապաշտություն, փառասիրություն և այլն, առաքյալը Տիմոթեոսին գրում է. «Այս աշխարհի հարուստներին պատվիրիր, որ չհպարտանան և չապավինեն անոտի հարստությանը, այլ Աստծուն, որ մեզ առատապես ամեն ինչ տալիս է վայելելու համար. պատվիրիր բարիք գործել, բարի գործերով հարստանալ, լինել առատաձեռն, բարեսեր, իրենց ունեցածից ուրիշին էլ բաժին հանել՝ իրենց համար բարի հիմք դնելով հանդերձյալում, որպեսզի ձեռք բերեն ճշմարիտ կյանքը» (Ա Տիմոթեոս Զ 17-20):

# Գ ա վ ի ղ  Ժ Զ

**Հարց**. Հասկացա, որ տասը պատվիրաններից հինգը կատարվում է Աստծուն սիրելով, իսկ մնացած հինգը ինչո՞վ է կատարվում:

**Պատասխան**. Մնացած հինգ պատվերն էլ կատարվում է ընկերոջը սիրելով.

ա) եթե ընկերոջդ սիրես քո անձի պես, նրա կնոջը չես ցանկանա,

բ) նրա ապրանքը չես գողանա, գ) նրան չես սպանի, դ) նրա մասին սուտ վկայություն չես տա, ե) նրա ունեցվածքին աչք չես տնկի:

**Հարց**. Մի մարդ կարո՞ղ է այդ տասը պատվերները ամբողջը կատարել. ինձ թվում է, որքան էլ որ ջանա, մեկ-երկու պատվեր պակաս կմնա. դա վնա՞ս է:

**Պատասխան**. Այդ բանը ոչ թե ինձ, այլ Հակոբոս առաքյալին հարցրու, և նա քեզ կպատասխանի. «Նա, ով պահում է ամբողջ օրենքը և միայն մեկ բանով սայթաքում, պարտապան կլինի ամբողջ օրենքին» (Հակոբոս Բ 10):

**Հարց**. Եթե այդպես է, ապա իմ վիճակը շատ դժվար է, որովհետև թեպետ շնություն, գողություն և սպանություն չեմ գործում, սուտ չեմ վկայում, բայց փափագում եմ ոսկի, արծաթ ունենալ, աշխարհային հաճույքներ վայելել, հետևաբար պարտական եմ ամբողջ օրենքին:

**Պատասխան**. Աշխարհասիրությանդ վերաբերյալ պատասխանը հետո կտրվի, բայց դու պարծեցար չորս պատգամ չխախտելու մեջ: Ինձ թվում է, դու դրանք էլ չես կատարում:

**Հարց**. Ես սուտ չեմ ասում, հիրավի որ, այդ չորս մեղքերն ամենևին չեմ գործել:

**Պատասխան**. Դու գողություն, սպանություն ասելով ի՞նչ ես հասկանում. ապրանք գողանալ, մարդ սպանել, թալանել: Միայն այս չէ գողությունը, այլ մեկ դրամի չափ իսկ չորթումն էլ

*գողություն է, գողություն է նաև թերակշռելը, պակաս տալը, վատորակն իբրև լավորակ հրամցնելը և այլն:*

**Հարց.** *Մի՞թե այդպիսի փոքր բաները հավասար են մեծ գողության:*

**Պատասխան.** *Այո՛, Քրիստոս՝ մեր Տերը, ահա հրամայում է. «Քչի մեջ անիրավը շատի մեջ էլ անիրավ է» (Ղուկաս ԺԶ 10): Դու լավ գիտես, որ մարդ սպանելը, տուն թալանելը շատ դժվար է և մանավանդ վտանգավոր, որովհետև եթե բռնվես, մահվան կդատապարտվես կամ երկար տարիներ բանտ կնետվես: Ուստի սրանից զգուշանում ես ոչ թե Աստծուց վախենալով, այլ վերահաս պատժից: Բայց, մյուս կողմից, չես վախենում ծածուկ գողություն կատարելուց, որովհետև դիմացինդ չգիտե գողությանդ, դրամաշորթությանդ մասին, հետևաբար այդ հանցանքը գործելիս չես վախենում, որ կարող է դատի ենթարկվես և հրապարակավ խայտառակվելով՝ անպատիվ լինես: Սրանք հավասար են մեծ գողության, ինչպես որ Սողոմոնն էլ է ասում. «Թե՛ մեծ, թե՛ փոքր ծուռ կշեռքը և թե՛ երկակի չափը, երկուսն էլ պիղծ են Տիրոջ առջև» (Առակ. Ի 10):*

**Հարց.** *Եթե նայենք Սուրբ Գրքին և քո ասած խոսքին, մեկն անգամ այդպիսի գողությունից զերծ չէ, քանի որ առևտրի մեջ դյուրությամբ կարելի է սայթաքել: Եվ հիմա նոր հասկացա, որ գողություն եմ անում: Վախենամ՝ մյուս ասածներս էլ մի առ մի հաստատես: Բայց մեկ բան հստակ գիտեմ՝ ամենևին մարդ չեմ սպանել:*

**Պատասխան.** *Իմ վկաները հասարակ մարդիկ չեն, որ չընդունես ասածս. ահա լսիր Հովհաննեսին, որ ասում է. «Ով իր եղբորը ատում է, մարդասպան է» (Ա Հովհաննես Գ 15): Կարծում ես՝ մարդուն սպանում են միայն սրով, դանակով, հրացանով կամ խեղդելով: Հիրավի, օրենքից վախենալով այդ բոլորը չես անում, բայց չես վախենում եղբորդ չսիրել կամ ատել, որովհետև այս աշխարհի օրենքը դրանց համար բան չի ասում, այլ միայն Աստված է բարկանում, բայց դու ի սկզբանե Աստծուց վախ չունես: Հիմա տեսար, որ առանց գիտության, առանց այդ մասին իմանալու, կարող ես մարդասպան լինել: Սրանից բացի մարդասպանություն է նաև զրկելը:*

**Հարց.** *Բայց խնդրում եմ ինձ բացատրիր, թե ի՞նչ է զրկելը:*

**Պատասխան.** *Մարդկանց անհիմն մեղադրելը, զրպարտելը, վատաբանելը, աշխատողի վարձը կտրելը, խեղճ ու միամիտ մարդկանց տունը, ապրանքը, արտն ու այգին անիրավությամբ խլելը կամ աղքատներին տևապես ահաբեկության մեջ պահելով կեղեքելը, նեղություն, ցավ պատճառելը սպանություն է, ինչպես Հակոբոս առաքյալն է ասում. «Ուրեմն այժմ, հարուստնե՛ր, լացե՛ք ու ողբացե՛ք այն թշվառությունների համար, որ գալու են ձեր գլխին: Որովհետև ձեր հարստությունը փտած է, ձեր զգեստները՝ ցեցի կեր, և ձեր արծաթն ու ոսկին՝ ժանգոտած, և նրանց ժանգը... պիտի ուտի ձեր մարմինը...: Զրկեցիք, սպանեցիք արդարին, որը ձեզ չէր հակառակում» (Հակոբոս Ե 1-6):*

# Շավիղ ԺԵ

**Հարց.** *Ինչի՞ համար է զրկելը մարդասպանություն համարվում:*

**Պատասխան.** *Եթե մարդ սպանես, մի անգամից կազատվի այս աշխարհից, բայց եթե մեկին անվանարկես, որ պատվազուրկ լինելով չկարողանա առևտուր անել, կամ նրա ապրանքը անիրավությամբ ձեռքից խլես, այնպես որ նա ծայրահեղ աղքատության մեջ հայտնվի, ապա այդ մարդը քանի անգամ կորցրած ապրանքը և պատիվը մտաբերի, այնքան անգամ կմեռնի սրտի կսկիծից: Այս պատճառով դա սպանություն է համարվում:*

**Հարց.** *Ինչպես արդեն ասացինք, մարդկանցից և ոչ մեկը նման փոքր գողություններից զերծ չէ, նմանապես չկա մեկը, որ զերծ լինի այս տեսակ մարդասպանությունից: Իսկ իմ աշխարհասիրության մասին ի՞նչ կասես:*

**Պատասխան.** *Ես ի՞նչ կարող եմ ասել, գուցե իմասածին չհավատաս էլ: Գնա Հակոբոս և Հովհաննես առաքյալների մոտ, նրանք այդ մասին մանրամասն գրել են, նրանցից սովորիր:*

**Հարց.** *Ես նրանց որտե՞ղ գտնեմ ու հարցնեմ, քո ասածիդ էլ կհավատամ. չտեսա՞ր՝ մինչև հիմա ինչ որ ասացիր, հավատացի առանց հակաճառելու, սրան էլ կհավատամ, միայն թե դու բացատրի՛ր:*

**Պատասխան.** *Հակոբոս առաքյալը գրում է. «Շնացողնե՛ր, չգիտե՞ք, որ սերը այս աշխարհի հանդեպ թշնամություն է Աստծու դեմ, քանի որ, ով ուզում է աշխարհը սիրել, Աստծուն իրեն թշնամի կանի» (Հակոբոս Դ 4): Գնա մտածի՛ր, տե՛ս, թե որքան սոսկալի բան է, եթե մարդ թշնամի լինի Աստծուն, և որքան ավելի սոսկալի կլինի նրա վիճակը մահից հետո: Որովհետև ի՞նչ օգուտ, եթե տասը պատվիրաններից ինը կատարած լինես և միայն մեկի խափանման՝ աշխարհասիրության պատճառով թշնամանաս Աստծուն և կորստյան մատնվես:*

**Հարց.** *Հովհաննես առաքյալն ի՞նչ է ասում:*

**Պատասխան.** *«Մի՛ սիրեք աշխարհը, ոչ էլ՝ ինչ որ աշխարհի մեջ կա: Եթե մեկը սիրում է աշխարհը, Հոր սերը նրա մեջ չէ» (Ա Հովհաննես Բ 15): Տեսա՞ր, որ Հովհաննեսն էլ Հակոբոսի պես է ասում, և այստեղ է կատարվում Հակոբոսի խոսքը. «Եթե բոլոր պատվերները պահես ու մեկը զանց առնես, պարտական կլինես ամբողջ օրենքին» (Հակոբոս Բ 10):*

# Շ ա վ ի ղ  Ժ Ը

**Հարց.** *Եղբա՛յր, ինչի՞ համար է Հակոբոս առաքյալը աշխարհասեր մարդկանց շնացող անվանում:*

**Պատասխան.** *Ես նախ քեզ մի բան հարցնեմ. առհասարակ ո՞ւմ են շնացող անվանում:*

**Հարց.** *Ով իր ամուսնուն դավաճանում և մեկ ուրիշին է սիրում, նրան են շնացող անվանում:*

**Պատասխան.** *Լավ պատասխանեցիր. արդ մենք ևս պարտավոր ենք բովանդակ սրտով սիրել Աստծուն, բայց եթե դավաճանելով Աստծուն այդ սերն ուղղենք աշխարհի փուչ, վաղանցիկ բաների վրա, մենք ևս շնացող կլինենք: Մինչդեռ ինչպես պատվիրում է Պողոս առաքյալը, մարդը պարտավոր է սիրել իր կնոջը. «Ո՛վ մարդիկ, սիրեցեք ձեր կանանց» (Եփես. Ե 25): Եթե այդ պարտականության դեմ մեղանչելով շնացող ենք անվանվում, ապա որքան ավելի մեծ շնություն է Աստծու հանդեպ դավաճան ու պարտազանց լինելը:*

**Հարց.** *Աստծու հանդեպ սերը տղամարդու և կնոջ սիրո՞ւն ես նմանեցնում:*

**Պատասխան.** *Այո՛, ինչպես Եսային է գրում. «Ինչպես որ, օրինակ, փեսան է ուրախանում հարսի համար, այնպես էլ Տերն է ուրախ լինելու քեզ համար» (Եսայի ԿԲ 5): Հովհաննես Մկրտիչը Քրիստոսի մասին իր աշակերտներին ասում է. «Ով հարս ունի, Նա է փեսան» (Հովհաննես Գ 29): Եվ Պողոս առաքյալը գրում է. «Ձեզ նշանեցի մի մարդու՝ որպես մի անբիծ կույս, Քրիստոսին ներկայացնելու համար: Բայց երկյուղ եմ կրում, թե միգուցե, ինչպես օձն իր խորամանկությամբ խաբեց Եվային, ձեր միտքը ապականվի ու շեղվի Քրիստոսի հանդեպ ձեր ունեցած պարզամտությունից» (Բ Կորնթ. ԺԱ 2-3):*

**Հարց.** *Այդ ասածդ հարսն ու փեսան ովքե՞ր են:*

**Պատասխան.** *Այդ խոսքերը մարմնավոր չեն, այլ հոգևոր: «Հարս»-ը մեր հոգին է, և «փեսան»՝ Քրիստոս: Դատաստանի օրը երբ Քրիստոս՝ արդար Դատավորը, գա դատաստան անելու, արդարների հոգին նոր հարսի նման պիտի զարդարի լուսեղեն զգեստներով, ինչպես Եսայի*

մարգարեն է ասում. «Ես պիտի հրճվեմ Տիրոջով, որովհետև Նա ինձ փրկության զգեստ և ուրախության պատմուճան հագցրեց, որպես փեսայի՝ պսակ դրեց իմ գլխին և որպես հարսի՝ զուգեց ինձ զարդով» (Եսայի ԿԱ 10):

Հարսի պես զարդարված հոգիների Փեսան Քրիստոս է, որ նրանց Իր հետ վերցնելով՝ տանում է խոստացած արքայությունը և միշտ ուրախանում նրանց համար: Ահա այս խոսքն է, որ ասում է Եսային. «Ինչպես որ, օրինակ, փեսան է ուրախանում հարսի համար, այնպես էլ Տերն է ուրախ լինելու քեզ համար» (Եսայի ԿԲ 5):

**Հարց.** Դա կարո՞ղ ես հաստատել ևս մի վկայությամբ:

**Պատասխան.** Վկայությո՞ւն ես ուզում. խնդրեմ, ահա Մատթեոս ավետարանիչը գրում է. «Կեսգիշերին ձայն լսվեց՝ ահա Փեսան գալիս է. Նրան դիմավորելու ելեք: ...Փեսան եկավ, և ովքեր պատրաստ էին, Նրա հետ հարսանիքի սրահը մտան, ու դուռը փակվեց» (Մատթեոս ԻԵ 6-10):

**Հարց.** Դա հասկացա, բայց մի ուրիշ հարց ունեմ. ինչո՞ւ է Հակոբոս առաքյալը աշխարհասեր մարդկանց Աստծու թշնամի անվանում:

**Պատասխան.** Վերն արդեն ասացինք, որ ամուսինների փոխադարձ դավաճանությունը ծնում է փոխադարձ ատելություն և թշնամություն: Մարդն ի բնե հակված է աչքի և քիմքի համար հաճելի բաների, ինչպես օրինակ Եվան, որի մասին ասված է. «Կինը տեսավ, որ ծառի պտուղը լավ է ուտելու համար, ակնահաճո է և գրավիչ՝ ըմբռնելու համար: Նա առավ նրա պտղից, կերավ...» (Ծննդ. Գ 6): Մինչդեռ Դավիթ մարգարեն հորդորում է և ասում, որ եթե մի բարի բան ենք փնտրում, պետք է սիրենք բացառապես Աստծուն և հետևենք Նրա անուշ և գեղեցիկ պատգամներին, որովհետև «Ոսկուց ու շատ թանկագին քարերից ցանկալի են դրանք. նույնպես և քաղցր՝ մեղրից ու խորիսխից ավելի» (Սաղմոս ԺԸ 11): Դպիրներից մեկը Հիսուսին հարցրեց. «Բարի վարդապետ, ի՞նչ անեմ, որ հավիտենական կյանք ժառանգեմ». Քրիստոս տեսնելով, որ նա բարի բան է փնտրում, անհրաժեշտ համարեց բացատրել նրան բարու ով լինելը. «Բարի չէ ոչ ոք, այլ միայն Աստված» (Մարկոս Ժ 17): Եվ քանի որ բարի բան էր փնտրում, նրան պատվիրեց. «Քո Տեր Աստծուն պիտի սիրես քո բովանդակ սրտով, բովանդակ անձով, բովանդակ մտքով» (Մատթեոս ԻԲ 37) և այլն:

Տեսա՞ր, թե ինչպես է խստորեն պատվիրում Աստծուն սիրել. ուրեմն եթե այդ սիրուց երես թեքենք և այս աշխարհի փուչ և սին բաները միայն սիրենք, մի՞թե Աստծուն թշնամի և չնացող չենք լինի: Ահա այս պատճառով Հակոբոս առաքյալը աշխարհասեր մարդկանց անվանում է չնացող և Աստծու թշնամի:

**Հարց.** Թեպետ ես Աստծուն բովանդակ սրտով եմ սիրում, բայց մի քիչ էլ այս աշխարհի փառքն եմ սիրում. մի՞թե սրանից վնաս կա:

**Պատասխան.** Վերևում հիշեցինք Քրիստոսի խոսքը, թե անհրաժեշտ է բոլոր զգայարաններով Աստծուն սիրել: Նա չի թողնում և ոչ մի զգայարան, որպեսզի նրանով էլ աշխարհը սիրես, իսկ եթե թեկուզ այդ մի զգայարանով աշխարհին կապվես, նշանակում է բովանդակ սրտով չես կարող Աստծուն սիրել: Մի՞թե չես լսել Քրիստոսի խոսքը. «Ոչ ոք չի կարող երկու տիրոջ ծառայել. կամ մեկին կատի և մյուսին կսիրի..., չեք կարող ծառայել Աստծուն և մամոնային» (Մատթեոս Զ 24):

**Հարց.** Քրիստոս երկու «տեր» է հիշատակում. մեկն Աստված է, ապա մյուսը ո՞րն է:

**Պատասխան.** Մարդ ում որ ծառայի, նա նրա տերը կլինի, եթե դու Աստծուց բացի նաև ուրիշ մեկին ծառայես, այսինքն՝ սատանային, ուրեմն՝ քո մյուս տերը սատանան կլինի: Գեթ մի անգամ մտածիր՝ այդ երկու տերերին ինչպե՞ս պիտի ծառայես, որովհետև գիտենք, որ այդ երկուսը հակառակ են մեկմեկու, ինչպես Պողոս առաքյալն է ասում. «Ի՞նչ միաբանություն Քրիստոսի և Բելիարի միջև» (Բ Կորնթ. Զ 15): Եվ նրանք մեկմեկու հակառակվելով հրաման են տալիս իրենց հնազանդ մարդկանց:

**Հարց**. *Ինչպե՞ս են հակառակ հրամայում:*

**Պատասխան**. *Քրիստոս հրամայում է, որ քո թշնամուն սիրես, սրան հակառակ սատանան ասում է, որ քո սիրելի ընկերոջը ատես: Քրիստոս հրամայում է, որ ունեցվածքդ աղքատներին բաշխես, սատանան ասում է, թե աղքատների ձեռքում եղածը խլես նրանցից: Քրիստոս հրամայում է՝ երբ մի ծնոտիդ հարվածում են, մյուսը ևս շրջիր, մինչդեռ սատանան ասում է. եթե ձեռքիդ ճար լինի, քեզ ապտակողին սպանի՛ր: Քրիստոս հրամայում է, թե նեղ դռնով մտիր, որպեսզի լայն և ընդարձակ արքայություն գնաս, իսկ սատանան ասում է. լայն դռնով մտիր, որպեսզի նեղ և անձուկ, մութ և խավար դժոխք իջնես: Հիմա տեսա՞ր, թե որքան հակառակ են իրար այս երկու տերերը: Դու նրանցից որի՞ ասածին պիտի հնազանդվես, որի՞ կամքը պիտի կատարես: Անհնար է, որ այս երկուսի կամքը միաժամանակ կատարես և երկուսին էլ հաճելի լինես: Անշուշտ նրանցից մեկին պիտի բարկացնես:*

**Հարց**. *Քավ լիցի. ես իմ Աստծուն չեմ բարկացնում, այլ սատանային, իսկ Աստծուն հնազանդ եմ:*

**Պատասխան**. *Եղբա՛յր, դու սատանային չես բարկացնում, այլ առանց հասկանալու Աստծուն ես բարկացնում, որովհետև քո կատարած գործերը հաճելի են սատանային: Աստծուն միայն խոսքով ես սիրում, մինչդեռ գործով սատանային ես պատվում: Այս պատճառով Եսայու խոսքը շատ հարմար է քո գործերին. «Այս ժողովուրդը... իր շրթունքներով է մեծարում Ինձ, բայց սրտով հեռացել ու մեկուսացել է Ինձնից» (Եսայի ԻԹ 13): Տեսա՞ր, եղբա՛յր, Աստված ինչպես է գանգատվում Իրեն սոսկ լեզվով պաշտող, բայց գործով սատանայի կամքը կատարողներից:*

# Շ ա վ ի ղ   Ժ Թ

**Հարց**. *Եղբա՛յր, ապա ես ի՞նչ պետք է անեմ, ինձ թվում էր, թե ես զերծ եմ այդ մեղքերից, որովհետև չգիտեի, թե գրկելը կամ եղբայր ատելը մարդասպանություն է, իսկ աշխարհասիրությունը շնություն է և թշնամություն Աստծու հանդեպ, քանզի ինձ խրատ տվողները այդպիսի զգուշացում չէին արել:*

**Պատասխան**. *Այդպիսի խրատ տվողներին ի՞նչ ասեմ. այդ ցավը ինձ էլ է տանջում, եղբա՛յր: Վախենամ, թե սուտ մարգարեների ես հանդիպել:*

**Հարց**. *Ո՛չ, եղբա՛յր, ինձ խրատողները սուտ մարգարեներ չէին, այլ իմ ծնողները: Նրանք գոնե մի օր ինձ չասացին, թե սա մեղք է, մի՛ արա, այլ հակառակը՝ խստորեն պատվիրում էին, թե ամեն ինչ արա, որ դրամ վաստակես:*

**Պատասխան**. *Երանի քեզ, որ ծնողներդ սոսկ մեղքից չեն զգուշացրել, այլ ծնողներ կան, որ իրենց զավակներին չզգուշացնելուց բացի մեղք գործել են սովորեցնում: Կան ծնողներ, եղբայրներ, քույրեր կամ ազգականներ ովքեր, լեզուն դեռ նոր բացված մանկանը Աստծու անունը սովորեցնելու փոխարեն սովորեցնում են հայհոյանք ու անարգ վարմունք կամ էլ նրան քաղցրավենիք խոստանալով՝ ջանում են (համոզել) այս կամ այն մարդուն նախատել կամ ծաղրել: Ու երբ մեծերն իրենց նպատակին հասնում են, ծիծաղելով երեխային համբուրում են ու կատարում խոստացածը: Թեպետ իրենց զվարճանքի համար են սա անում, բայց այս վարմունքը սև ներկի նման ծածկում է երեխայի մատաղ սիրտը, որը, ինչպես հներն են ասում, տակավին «մաքուր տախտակ» է, և որի վրայից դժվարությամբ է մաքրվում մանավանդ ծնողների քսած ներկը: Ասում են, թե «Մարդու կիրքը հոգու մեջ է». ահա հոգու մեջ եղած կիրքը ծնողներից սովորած խոսքերն են, որոնցից հոգին չի ձերբազատվում մինչև մարմնից զատվելը: Ու երբ տղան մեծանում է, հայրը նրան դպրոց է տանում և ուսուցչին պատվիրում, որ հոգ տանի այնքան, ինչքան անհրաժեշտ է կարդալ*

սովորելու և մի քիչ թվաբանություն իմանալու համար: Եվ դպրոցը դեռ չավարտած՝ հանում է այնտեղից և տանում խանութ առևտուր անելու՝ նրան սովորեցնելով խաբեության և նենգության ճանապարհները. սուտ խոսել և սուտ երդումներով լավը վատի տեղ անցկացնել, թերակշռել և այլն: Այս բոլորի նպատակը մեկն է. դրամ վաստակել՝ ոչ մի բանի առջև կանգ չառնելով: Այսպիսի ծնողի հոգսը չէ, թե տղան այդ ճանապարհով ուր կգնա. դժո՞խք, թե՞ դրախտ: Եվ իրապես, ծնողների գերակշիռ մասի գլխավոր հոգսը զավակների՝ դրամ և ոչ թե արքայություն շահելն է:

Հարց. Հասկացա, բայց վերն ասացիր, թե սուտ մարգարեի ես հանդիպել, մի՞թե լինում է սուտ մարգարե, և ի՞նչ նշանով է ճանաչվում:

Պատասխան. Սուտ մարգարեն նա է, ով արքայություն գնալու լայն ճանապարհ է ցույց տալիս:

Հարց. Մի՞թե արքայությունը լայն ճամփա ունի:

Պատասխան. Քրիստոսի խոսքից իմացվում է, որ շատ նեղ է արքայության ճամփան. «Մտեք նեղ դռնով. ինչքան լայն է դուռը, և ընդարձակ՝ ճանապարհը, որ դեպի կորուստ է տանում, և բազմաթիվ են նրանք, որ մտնում են դրանով: Ինչքան անձուկ է դուռը, և նեղ՝ ճանապարհը, որ տանում է դեպի կյանք, և սակավաթիվ են նրանք, որ գտնում են այն» (Մատթեոս Է 13-14): Տե՛ս, թե որքան նեղ է այդ դուռը, որ քչերն են փնտրելով գտնում այն:

Հարց. Իմ կարծիքով արքայությունը շատ մեծ ու լայն, ընդարձակ վայր է, մի՞թե այդքան լայն վայրը նեղ դուռ կունենա:

Պատասխան. Քեզ հետ օրինակով խոսեմ, որ հասկանաս: Աշխարհում մեծ ու փառավոր քաղաքներ կան, բայց այդ քաղաքներ հասնելու համար անհրաժեշտ է շատ դժվարություններ հաղթահարել, լեռներ ու ծովեր անցնել: Բայց երբ այս բոլոր դժվարությունները հաղթահարելով քաղաք հասնենք ու վայելենք քաղաքի բարիքը, կուրախանանք և կմոռանանք ճանապարհի նեղությունները:

Հարց. Մի՞թե արքայության ճանպարհի վրա ծով կա:

Պատասխան. Այո՛, արքայության ճանապարհի վրա էլ ծով կա: Բայց շատ տարբեր է այս աշխարհի ծովերից: Այս աշխարհի ծովը միայն մարդկանց մարմինն է խեղդում, իսկ այն ծովը ոչ միայն մարմինն է խեղդում, այլև հոգին: Այս աշխարհի նյութեղեն ծովում համեղ ձկներ են լողում, մինչդեռ այդ ծովում օձ, կարիճ և թունավոր սողուններ կան, որոնք խայթում են մարդկանց հոգիները: Այն ծովն աներևույթ է:

Հարց. Եթե աներևույթ է, ապա դու որտեղի՞ց գիտես այդ մասին, անշուշտ մեկը պատմել է քեզ, լավ կլինի, եթե ինձ էլ բեցատրեիր:

Պատասխան. Նկարագրածս ծովը այս աշխարհի մեղքի ծովն է, որի մեջ տարուբերվելով մարդկային հոգու նավը ենթարկվում է ալիքների քմահաճ ծփանքին կամ կատաղի հարվածներին: Ուստի անհրաժեշտ է, որ հոգու նավը զգույշ ընթանա, զերծ մնա ալիքների դավադիր հարձակումից և չընկղմվի ծովի խորքը, այլ հույսով սպառազեն՝ անցնի այս աշխարհի ալեկոծությունների միջով և հասնի փափագելի նավահանգստին՝ վայելելու արքայության անվախճան փառքը:

Հարց. Հասկացա, որ «ծով» ասած բանը մեղքի ծովն է, բայց նեղ դուռն ու նեղ ճամփան ո՞րն է :

Պատասխան. Այս աշխարհի մեջ հոգևոր նեղության դռներն են, որոնցից ներս մտնողը պետք է հնազանդորեն գլուխը խոնարհի, ինչպես Քրիստոս է ասում. «Այստեղ՝ աշխարհում, նեղություն պիտի ունենաք» (Հովհաննես ԺԶ 33):

Հարց. Քրիստոսի ասած նեղությունը մի՞թե կենցաղային դժվարություններից է առաջ գալիս. անհաջողություններ առևտրում, նյութական կամ դրամական զանազան հոգսեր և այլն:

Պատասխան. Ո՛չ, եղբա՛յր, այդ ամենը մարմնի հանգստության, դրամ շահելու համար եղած նեղություններ են, որոնք ոչ միայն անօգուտ են, այլև մեղսալի: Քրիստոսի ասած նեղությունները սրանք են.

Ա. սիրի՛ր թշնամուդ,
Բ. եթե մի ծնոտիդ հարվածեն, մյուսն էլ դարձրու,
Գ. քեզ վատություն անողներին լավությո՛ւն արա,
Դ. քեզ անիծողներին օրհնի՛ր,
Ե. քեզ բամբասողների համար աղոթի՛ր,
Զ. եթե զրպարտեն և անվանարկեն քեզ, տոկալով համբերի՛ր, ծոմ պահի՛ր, աղոթի՛ր,
Է. ունեցվածքդ կարոտյալներին բաշխի՛ր:

Ահա սրանք են Քրիստոսի ասած նեղությունները, որոնք նման են տան նեղ և ցածր դռան, որով ներս մտնելու համար պետք է մեր գլուխը խոնարհենք: Այդպես էլ նեղության մեջ հայտնվելիս հարկավոր է խոնարհաբար տանել բոլոր դժվարությունները, որպեսզի արժանի դառնանք երկնքի արքայությանը:

**Հարց.** Այդ բոլոր դռներից անցնելը շատ դժվար է երևում:

**Պատասխան.** Ուրեմն քո նպատակը արքայություն գնալը չէ, այլ զուր տեղն ինձ հոգնեցնելը: Եթե իսկապես ցանկանում ես արքայություն գնալ, պետք է սիրով և հոժար կամքով տանես բոլոր դժվարությունները և նեղ դռնով կամ նեղ ճանապարհով անցնելիս թիկունքիդ ծանր բեռ չպետք է կրես, որպեսզի դյուրությամբ ներս մտնես:

**Հարց.** Բեռն ո՞ւր են տանելու, մի՞թե կարելի է բեռ տեղափոխել անդենական աշխարհ:

**Պատասխան.** Այդ բեռը քո տեսած բեռներից չէ, այն աներևույթ է և մարդու թիկունքից երբեք չի իջնում: Նյութական բեռ տանող բեռնակիրը մի որոշ տեղ տանելուց հետո բեռն իջեցնում է թիկունքից և հանգստանում, մինչդեռ աներևույթ բեռը ո՛չ ցերեկն է թիկունքից իջնում, ո՛չ գիշերը: Այս բեռը մարդու թիկունքին է ոչ միայն նրա կենդանության, այլև մեռած ժամանակ:

**Հարց.** Թիկունքի բեռը ի՞նչ է:

**Պատասխան.** Չկա թե՛ արդար և թե՛ մեղավոր մարդ, որ թիկունքին բեռ չունենա, արդարների բեռը թեթև է, մեղավորներինը՝ ծանր:

**Հարց.** Որտեղի՞ց է հայտնի, թե արդարները բեռ ունեն:

**Պատասխան.** Այդ մասին վկայում է Ինքը Քրիստոս. «Եկեք Ինձ մոտ, բոլոր հոգնածներդ և բեռնավորվածներդ, և Ես ձեզ կհանգստացնեմ» (Մատթեոս ԺԱ 28):

**Հարց.** Քրիստոսի ասած բեռն ի՞նչ է:

**Պատասխան.** Քրիստոսի ասած բեռը շատ թեթև է և շատ անուշ է, ինչպես ասում է. «Որովհետև Իմ լուծը քաղցր է, և Իմ բեռը՝ թեթև» (Մատթեոս ԺԱ 30): Եվ այդ բեռը Աստծու պատվիրաններն են, ինչպես Դավիթն է գրում. «Որքան քաղցր են Քո խոսքերն իմ քիմքին, ավելի քաղցր, քան մեղրն իմ բերանին» (Սաղմոս ՃԺԲ 103): Հիմա տեսա՞ր, որ մեր բեռը Աստծու պատվիրանները պետք է լինեն, որոնք թեթև և անուշ են: Եթե Աստծու պատվիրանների բեռը վերցնես, շատ հեշտությամբ կանցնես նեղ դռներով և քարքարոտ ճամփաներով ու կմտնես արքայություն, որովհետև նրանք լույս են սփռելու քո ճանապարհին, որպեսզի չգլորվես, չմոլորվես և չսուզվես մեղքի ծովի մեջ:

**Հարց.** Աստծու խոսքերն ինչպե՞ս կարող են լուսավորել ճանապարհներս:

**Պատասխան.** Ահա Դավիթ մարգարեն է վկայում. «Քո խոսքը ճրագ է իմ ոտքերի համար և լուսավորում է իմ շավիղները» (Սաղմոս ՃԺԲ 105), իսկ Սողոմոն իմաստունը գրում է. «Օրենքի պատվիրանը ճրագ է, հանդիմանությունը և խրատը լույս են և կյանքի ճանապարհ» (Առակ. Զ 23): Տեսա՞ր, եղբա՛յր, արքայության ճանապարհով քայլող մարդը Աստծու պատվիրանները պահելով և ամեն տեսակ նեղություններին տոկալով պետք է առաջ ընթանա, ինչպես Պողոս առաքյալն է ասում. «Բազում նեղություններ կրելով է, որ մենք պետք է մտնենք Աստծու արքայություն» (Գործք. ԺԴ 21): Առանց նեղության արքայության

*չես հասնի. ում որ հարցնես, այդ կասի քեզ, թե՛ Քրիստոս և թե՛ առաքյալներն այդ են ասել և այդ ճանապարհով անցել:*

# Հ ա վ ի ղ   Ի

**Հարց.** *Հասկացա, որ նեղ դուռն այս աշխարհի հոգևոր նեղությունններն են, բայց որո՞նք են լայն դուռը և լայն ճանապարհը, որոնք դժոխք են տանում:*

**Պատասխան.** *Դեռ չհասկացա՞ր. դժոխք տանող դուռն ու ճանապարհն են լայն:*

**Հարց.** *Բայց դժոխքի դուռն ինչո՞ւ է լայն:*

**Պատասխան.** *Դժոխքի դուռն իհարկե լայն պետք է լինի: Այդ դռնով ո՞վ պետք է անցնի, գիտե՞ս:*

**Հարց.** *Չգիտեմ:*

**Պատասխան.** *Չկարծես, թե այդ դռնով մտնողները այս աշխարհում բարեգործություն անող, ամեն տեսակ նեղության համբերող, իրենց չար կամքը զսպող, ծոմով, պահքով և աղոթքով իրենց անձը չարչարողները պետք է լինեն:*

**Հարց.** *Ապա ովքե՞ր պետք է մտնեն այդ լայն դռնով:*

**Պատասխան.** *Այնտեղ մտնելու են մեղքի փչալից բեռներ կրող մարդիկ, որովհետև փչալից բեռ կրող մարդը չի կարող նեղ դռնով ու նեղ ճանապարհներով անցնել, այլ այդպիսիների համար լայն դուռ է պետք, որպեսզի անարգել մտնեն:*

**Հարց.** *Որո՞նք են մեղքի փչերը:*

**Պատասխան.** *Ահավասիկ Պողոսը թվարկում է դրանք. «Մարմնի գործերը հայտնի են. շնություն, պոռնկություն, պղծություն, վավաշոտություն, կռապաշտություն, կախարդություն, թշնամություն, կռիվ, նախանձ, բարկություն, հակառակություն, երկպառակություններ, բաժանումներ, չար նախանձ, սպանություններ, հարբեցողություններ, անառակություններ և սրանց նման ուրիշ բաներ: Այժմ ասում եմ ձեզ, ինչպես որ առաջուց էլ ասում էի, թե նրանք, որ այսպիսի բաներ են գործում, Աստծու արքայությունը չեն ժառանգելու» (Գաղատ. Ե 19-22):*

**Հարց.** *Մեղքի՝ մարդկանց համար բեռ լինելը որտեղի՞ց է հայտնի:*

**Պատասխան.** *Լսի՛ր, թե ինչ է ասում Դավիթը. «Անօրենություններս գլխիցս վեր բարձրացան, սաստիկ բեռան պես ծանրացան վրաս» (Սաղմոս ԼԷ 5):*

**Հարց.** *Հասկացա, որ մեղքը ծանր բեռ է, բայց չհասկացա, թե ինչպե՞ս է, որ փչալից բեռան պատճառով անկարելի է անցնել նեղ դռնով:*

**Պատասխան.** *Որովհետև ամենևին ծոմ ու պահք չպահած, այլ յուղոտ կերակուրներով գիրացած, պարարտ մարմնով և մեղքերի փչալից բեռան տակ կքած ինչպե՞ս կարող ես մտնել արքայության նեղ դռնով: Այդպես կարող ես անցնել միայն լայն դռնով, որ տանում է դեպի դժոխք:*

**Հարց.** *Փուշը մեղքի խորհրդանի՞շն է:*

**Պատասխան.** *Այո՛, ահա Եսայի մարգարեն է գրում. «Մի անկյունում՝ արգավանդ մի տեղում, այգի ուներ իմ սիրելին: Ցանկապատեցի, բարձր ձողեր կանգնեցրի և ընտիր որթատունկ տնկեցի: Աշտարակ շինեցի նրա մեջ, նաև հնձան փորեցի այնտեղ և սպասեցի, որ խաղող բերի, բայց փուշ բերեց» (Եսայի Ե 1-2):*

**Հարց.** *«Այգի» կոչվածը ի՞նչ է:*

**Պատասխան.** *Մարդկային բնությունն է, որ աշխարհում տնկված է ծառի նման. «խաղողը» բարեգործության պտուղն է, իսկ «փուշը»՝ մեղքի:*

**Հարց.** *Որտեղի՞ց գիտես, թե «այգի» կոչվածը մարդու համար է ասված:*

**Պատասխան.** *Եսային կրկին գրում է. «Զորությունների Տիրոջ այգին Իսրայելի տունն է, Հուդայի երկրի մարդը՝ նրա սիրած դալար որթատունկը. սպասեցի, որ նա իրավունք պահի, առաջ տանի, բայց նա անիրավություն արեց» (Եսայի Ե 7):*

**Հարց**. *Ինչո՞ւ է փուշը մեղքի խորհրդանիշ համարվում:*

**Պատասխան**. *Փուշը խոցում և վիրավորում է մարմինը, նույնպես և մեղքն է խոցում ու վիրավորում մեր հոգին: Մանավանդ փուշը դյուրավառ է և շուտ է բռնկվում, այդ պատճառով էլ փուշը մեղքի խորհրդանիշ է համարվում: Դժոխք գնացողները պետք է այրվեն ու բռնկվեն իրենց գործած մեղքերի կրակով: Հիմա հասկացա՞ր նեղ և լայն դռան խորհուրդը: Եթե քո հոգին արքայության է փափագում, պետք է մտնես նեղ դռներով, համբերությամբ տանես դժվարությունները, իսկ եթե ապրելու ես անհոգ կյանքով՝ չփերթ, վայրիվերո կենցաղավարությամբ, անվայել, անզուսպ զվարճանքներով, ապա անկասկած է, որ դժոխքում անմար կրակի և անքուն որդերի բաժին կդառնաս, որովհետև այս աշխարհում ուրախացողներն ու զվարճացողներն այն աշխարհում պիտի լան և սգան, իսկ այստեղ լացողներն ու սգացողները այնտեղ պիտի խնդան և ուրախանան:*

**Հարց**. *Ի՞նչ գիտես, որ այդպես է լինելու:*

**Պատասխան**. *Ահավասիկ Քրիստոս է ասում. «Վա՛յ ձեզ, որ այժմ ծիծաղում եք, որովհետև պիտի սգաք ու պիտի լաք» (Ղուկաս Զ 25): Կամ «Երանի նրանց, որ այժմ լալիս են, որովհետև պիտի ծիծաղեն» (Ղուկաս Զ 21): Այսպես, Քրիստոս վայ է տալիս այս աշխարհում ծիծաղողներին և երանի տալիս լացողներին:*

**Հարց**. *Եղբա՛յր, եթե այդպես է, ուրեմն ամեն ինչ տեղին է, որովհետև իմ աչքից արցունքներն անպակաս են, երբ հարազատներիցս մեկը մեռնում է, դարձյալ արտասվում եմ, երբ այրվում է տունս և ապրանքս, երբ կորչում է անասուններիցս մեկը, երբ վրեժ չեմ լուծում, երբ մեկի վրա սաստիկ զայրանում եմ, նույնիսկ սրանց ծիծաղելիս էլ արցունք է հոսում աչքերիցս, ուստի հույս ունեմ, որ այն աշխարհում պիտի ծիծաղեմ ու խնդամ:*

**Պատասխան**. *Ցավալի է, որ այդ բոլորը բարեգործություն ես համարում: Մինչդեռ Քրիստոս ճիշտ հակառակն է պատվիրում: Տերը կարգադրում է, որ ունեցվածքդ աղքատներին բաշխես, իսկ դու սրան հակառակ աղքատներին չտալուց բացի ողբում ես կորած ապրանքիդ համար: Քրիստոս հրամայում է, որ զուր տեղը չբարկանաս և դժոխքի բաժին չդառնաս, մինչդեռ զայրույթի առաջ բերած լացը առաքինություն ես համարել: Դարձյալ ցավալի է, որ ողբում ու լացում ես մեռելների վրա, որոնց մահը Աստծու կողմից նախասահմանված է աշխարհի սկզբից ի վեր, հետևաբար քո լացուկոծը անարգանք է Աստծու հանդեպ: Անհրաժեշտ է, որ դու մտահոգվես ոչ թե ուրիշի, այլ քո մեռելի մասին:*

**Հարց**. *Իմ մեռելը ո՞վ է:*

**Պատասխան**. *Քո հոգին:*

**Հարց**. *Հոգիս որ մեռած լինի, ինչպե՞ս կարող եմ ողջ լինել:*

**Պատասխան**. *Դու քեզ ո՞ղջ ես համարում, երբ մեղավոր ես:*

**Հարց**. *Ինչպե՞ս կարող եմ ինձ ողջ չհամարել, չե՞ս տեսնում, որ խոսում եմ քեզ հետ, մի՞թե մեռած մարդը կարող է խոսել:*

**Պատասխան**. *Աշխարհում ամեն տեսակ կենդանիներ կան. գազան, թռչուն և այլն, որոնք բոլորն էլ ձայն են հանում, բայց կենդանի, ողջ չեն համարվում, որովհետև հոգի չունեն, այլ միայն՝ շունչ, այս պատճառով նրանք լոկ շնչավոր կենդանիներ են համարվում: Այդպես էլ մեղքի մեջ թաթախված հոգին մեռած է: Այդպիսի հոգի ունեցող մարդը լոկ շնչավոր է և ոչ՝ հոգևոր:*

**Հարց**. *Այդ բանը որտեղի՞ց է հայտնի:*

**Պատասխան**. *Ահավասիկ Թադեոս առաքյալը, որ Հուդա է անվանվում, ասում է. «Ձեզ ասում էին, թե վերջին ժամանակներում պիտի լինեն ծաղրող մարդիկ, որոնք պիտի տարվեն իրենց ամբարիշտ ցանկություններով: Սրանք նշավակելի, մարմնասեր մարդիկ են, որ չունեն հոգի» (Հուդա Ա 18-19): Նաև Պողոս առաքյալն է գրում. «Ոչ հոգևոր մարդը Աստծու Հոգուց*

եկած ճշմարտությունները չի ընդունում» (Ա Կորնթ. Բ 14): Ահա այս չնչավոր ասածը մեռած հոգի ունեցող մարդն է:

Հարց. Ես կարծում էի, թե հոգին անմահ է, իսկ դու ասում ես, թե մեռնում է: Սա ի՞նչ է նշանակում:

Պատասխան. Թեպետ հոգին մեռնում է, բայց մարմնի մեռնելու նման չէ, որովհետև մեռած հոգին, երբ կամենաս, կկենդանացնես, մինչդեռ մեռած մարմինը, որքան էլ ջանաս, չես կարող կենդանացնել: Պողոսը հոգով մեռածի մասին ասում է. «Մինչ մեռած էինք մեր մեղքերի մեջ, մեզ կենդանացրեց Քրիստոսով» (Եփես. Բ 5):

Հարց. Հասկացա, թե ինչ է հոգու՝ մեղքերի մեջ մեռած լինելը, բայց ես ի՞նչ պետք է անեմ, ի՞նչ խրատ կտաս:

Պատասխան. Ի՞նչ խրատ կարող եմ տալ. քեզնից հեռու եղած մեռելների վրա ողբալու փոխարեն լաց եղիր քեզ մոտ, քեզնից անբաժան մեռելի համար:

Հարց. Բայց ես լաց եմ լինում միայն ինձ ազգական մեռնողի վրա:

Պատասխան. Բայց ո՞վ է քո հոգուն ավելի մոտիկ ազգական. հա՞յրդ, մա՞յրդ, եղբայրնե՞րդ, զավակնե՞րդ, հարևաննե՞րդ, թե՞ բարեկամներդ կամ կի՞նդ, որի համար Աստվածաշունչն ասում է, թե քեզնից անբաժան պետք է լինի, բայց նույնիսկ նա օտար է քեզ, որովհետև մահը բաժանելու է ձեզ իրարից և այն աշխարհում իրար չեք կարող օգնել: Մահը ժամանակավորապես հոգիդ էլ է բաժանելու մարմնիցդ, բայց երբ Աստծու վճռած ժամանակը լրանա, նրանք կրկին պետք է միավորվեն ու անբաժան պետք է մնան հավիտյանս հավիտենից, թե՛ արքայություն գնալիս և թե՛ դժոխք: Ուրեմն պարզ է, որ հոգուցդ զատ մերձավոր չունես, և չնայած դրան, հոգիդ սպանելով հոգ չես անում ու մի կաթիլ իսկ արցունք չես թափում: Քո լացած մեռելներից և ոչ մեկին չես կարող կենդանություն պարգևել, եթե նույնիսկ աղեկտուր գոռաս, մազերդ փետես, շորերդ պատառոտես, երեսդ ճանկռոտես կամ երկար ժամանակ սուգ պահես, բայց կարող ես քո մեռած հոգին կրկին կյանքի կոչել մի քանի կաթիլ արցունքով:

Հարց. Այստեղ ինձ մի հույս տվեցիր, որովհետև եթե մեղքերի մեջ մեռած հոգիս կարող է կենդանանալ մի քանի կաթիլ արցունքով, ապա Աստծու շնորհիվ դժոխք չեմ գնա, այլ լալով և սգալով մեռած հոգիս կկենդանացնեմ և արքայություն կգնամ:

Պատասխան. Այո՛, լալով կարող ես մեռած հոգիդ կենդանացնել, բայց ե՞րբ պիտի լաս. երեկվա օրն անցավ, գնաց, և այլևս ետ չես բերի, վաղն էլ դեռ չի եկել, թեպետ հաջորդ շաբաթ այս օրը նույն անունն է կրում, բայց չկարծես, որ նույն օրն է, այլ յոթ օրերի տարբերություն կա, հետևաբար այդքան սպասելով քո կյանքից յոթ օր պակասած կլինի, և յոթ օրով ավելի մոտեցած կլինես մահվան դռանը:

Հարց. Երբ մահվան անունը տվեցիր, վրաս նորից սարսուռ եկավ, ուրեմն ի՞նչ պետք է անեմ:

Պատասխան. Ի՞նչ պիտի անես, մի՞թե չես լսել խոսքը. «Այսօրվա գործը վաղվան մի՛ թողնիր»: Ահա մի խրատ տամ քեզ, մի՛ հետաձգիր, հոգիդ կենդանացնելու պահը հիմա է, ինչպես Սիրաքն է ասում. «Որդյա՛կ, մի՛ հապաղիր քո մեղքերից դառնալ դեպի Տերը, որպեսզի մեղքերի մեջ չմեռնես» (Սիրաք Ե 8):

Տեսա՞ր, որ հոգիդ կենդանացնելու ժամը, պահը այս է, «հիմա» ասելիս, իսկ րոպեն անցնում, անհետ կորչում է, որովհետև մեր կյանքի անիվը չի կանգնում, այլ միշտ պտտվում է ժամացույցի անիվի պես, մինչև որ շղթան կտրվում, և ժամացույցը կանգ է առնում: Եթե ժամացույցի շղթան կտրվի, վարպետ ժամագործը կարող է այն նորոգել՝ նոր շղթա դնելով և անիվները վերստին պտտեցնելով: Բայց մեր կյանքի շղթան մի անգամ որ կտրվի, այլևս մարդ չի կարող նրան նոր շղթա անցկացնել և անիվը պտտեցնել, այլ այնպես խորտակված կմնա այնքան ժամանակ, մինչև որ մեր կյանքի անիվները կամ շղթաները ոչնչից գոյացնող ամենաարվեստ և ամենախնամ Աստծու վճռած ժամանակը լրանա,

*այնժամ մեր խորտակված անիվները կվերանորոգի և հավերժորեն չկոտրվող նոր շղթա անցկացնելով՝ կտանի հավիտենությունից հավիտենություն: Հիմա հասկացար մեր կյանքի արագընթաց լինելը, եթե հասկացար, այս օրվանից լալով ու սգալով սկսիր ճիգ ու ջանք թափել՝ մեռած հոգիդ նորից կենդանացնելու համար, որպեսզի դժոխք չգնաս:*

# Հավիդ ԻԱ

**Հարց.** *Եղբա՛յր, սկզբում ասացիր, թե սուտ մարգարեները արքայություն գնալու լայն ճանապարհ են ցույց տալիս: Սուտ մարգարեն ինչպե՞ս կարող է լայն ճանապարհ ցույց տալ:*

**Պատասխան.** *Սուտ մարգարեն նա է, ով ասում է, թե եկեղեցի գնալը, խոստովանելը, պահք պահելը մեղք է, ապաշխարելն անօգուտ է, անիմաստ, սրբերը բարեխոս չեն կարող լինել, նրանք մեռած են, իզուր տեղը ծախս մի՛ արա ուխտի գնալու համար և այլն: Տեսա՞ր լայն ճանապարհը որն է: Քեզ հարցնում եմ, մի՞թե կռապաշտ և անձնասեր մարդկանց հաճելի չեն այս խոսքերը:*

**Հարց.** *Մի բան էի մտածում, լավ միտքս գցեցիր. այս «պահք» ասվածը ծո՞մ է, թե՞ ուրիշ մի բան:*

**Պատասխան.** *Սուրբ Գրքում պահք ծոմին են ասում: Առաքյալների ժամանակ էլ ծոմ էին պահում, բայց հայրապետները կանոն դրեցին, որ տարվա որոշակի օրերի մարդիկ հրաժարվեն մսից, յուղից, գինուց և մարմինը պարարտեցնող բոլոր կերակուրներից և ուտեն բացառապես բուսական կերակուրներ: Հիմա դրան մենք պահք ենք անվանում:*

**Հարց.** *Ծոմի համար այլևս ասելու բան չկա, որովհետև նրա մասին գիտենք Սուրբ Գրքից, բայց կերակուրների մեջ խտրություն դնելը հին օրենքում կա՞ր, որ հայրապետները համարձակվեցին այդպիսի կանոն դնել:*

**Պատասխան.** *Ահա՛, նախ Աստված Ադամին ասաց, որ «բոլոր ծառերի պտուղից ուտի, բացի մի ծառի պտուղից»: Սա կերակուրների մեջ դրված առաջին խտրությունն էր, որ ակնարկում է պահքը և ոչ թե ծոմը: Եթե ծոմ լիներ, ապա առհասարակ առանց խտրության կարգելվեր բոլոր ծառերի պտուղը ուտել: Դանիել մարգարեն ասում է. «Ես՝ Դանիելս, երեք շաբաթ սուգի մեջ էի: Լավ հաց չկերա, միս և գինի չմտավ իմ բերանը» (Դանիել Ժ 2): Ահա այս է կերակուրների մեջ խտրություն ու զանազանություն դնելը, եթե ծոմ լիներ, կասեր, թե բերանս ոչինչ չի մտել:*

# Հավիդ ԻԲ

**Հարց.** *Ինչո՞ւ է լայն ճանապարհ ցույց տվողը սուտ մարգարե կոչվում:*

**Պատասխան.** *Որովհետև սուտ է խոսում, անուշ խոսքերով խաբում է պարզամիտ մարդկանց:*

**Հարց.** *Ինչպե՞ս կարող է խաբել անուշ խոսքերով:*

**Պատասխան.** *Քեզ կասի, թե «ուտել-խմելը մեղք չէ, եթե մեղք լիներ, Աստված չէր ստեղծի և չէր ասի՝ կերե՛ք»: Պողոս առաքյալն էլ ասում է. «Ուտելիքը՝ որովայնի, և որովայնը ուտելիքի համար է» (Ա Կորնթ. Զ 13): Այսպես է ասում նաև Քրիստոս. «Կերակուրը չի պղծում մարդուն»: Վկայակոչելով այս խոսքերը՝ սուտ մարգարեն չփոթեցնում է միտքդ, և դու էլ այլևս չես վախենում կերակուրներից, ավերում ես պահքդ և այնուհետև ո՛չ պահք ես պահում և ո՛չ ծոմ: Միշտ կերուխումին հետամուտ լինելով՝ դառնում ես մեծ կռապաշտ: Հիմա տեսա՞ր, թե ինչպես են նրանք քաղցր խոսքերով խաբում:*

**Հարց.** *Ի՞նչ ես ասում, եղբա՛յր, ուտել-խմելն է՞լ կռապաշտություն է:*

**Պատասխան.** *Անշուշտ չափավոր ուտել-խմելը կռապաշտություն չէ, բայց երբ բոլորովին ծոմ, պահք չես պահում և միշտ ուտել-խմելու մասին մտածում, այդ է կռապաշտությունը:*

**Հարց.** *Ուտող-խմողների կռապաշտ լինելը որտեղի՞ց գիտես:*

**Պատասխան**. *Պողոս առաքյալն ասում է. «Շատերը, որոնց մասին շատ անգամ ասել եմ ձեզ և այժմ էլ լալով եմ ասում, ընթանում են որպես թշնամիներ Քրիստոսի խաչի. նրանց վախճանը կորուստ է. նրանց աստվածը իրենց որովայնն է» (Փիլիպ. Գ 18-19)։ Դարձյալ Պողոսն ասում է. «Աղաչում եմ ձեզ, եղբայրնե՛ր, ո՛ւշ դրեք այնպիսիներին, որ հերձվածներ և գայթակղություններ են առաջ բերում այն վարդապետությունից դուրս, որ դուք սովորել եք և խորշեցե՛ք նրանցից, որովհետև այնպիսիները մեր Տիրոջ՝ Քրիստոսին չեն ծառայում, այլ իրենց որովայնին, և քաղցրախոսությամբ ու կեղծ գովասանքներով հրապուրում են անմեղների սրտերը» (Հռոմ. ԺԶ 17-18)։ Դարձյալ Պողոս առաքյալը գրում է. «Ինչ որ անում եմ ես, ինչ որ անելու եմ, նրա համար է, որ վերացնեմ պատճառաբանությունները նրանց, որ պատճառ են փնտրում, որպեսզի պարծենան, թե իրենք էլ իբր մեզ նման աշխատում են, որովհետև այդպիսիները սուտ առաքյալներ, նենգավոր մշակներ, կերպարանավորվում են Քրիստոսի առաքյալների կերպարանքով, և դա զարմանալի բան չէ, քանզի ինքը՝ սատանան էլ է կերպարանավորվում որպես լուսո հրեշտակ։ Եվ տարօրինակ չէ, որ նրա պաշտոնյաներն էլ կերպարանավորվեն որպես արդարության պաշտոնյաներ, որոնց վախճանը կլինի ըստ իրենց գործերի» (Բ Կորնթ. ԺԱ 12-15)։ Պետրոս առաքյալը գրում է. «Սրանց ազատություն են խոստանում, մինչ իրենք ծառա են ապականությանը» (Բ Պետրոս Բ 18)։ Պետրոսը կրկին գրում է. «Եղան նաև սուտ մարգարեներ ժողովրդի մեջ, ինչպես որ այժմ էլ ձեր մեջ կարող են լինել սուտ ուսուցիչներ, որոնք սպրդեցնելով կորստաբեր հերձվածներ են ներմուծելու և ուրանալով Տիրոջը, որ իրենց գնեց, իրենց վրա արագահաս կորուստ են բերելու։ Եվ շատերը պիտի գնան նրանց անառակությունների հետևից, և այդ պատճառով ճշմարտության ճանապարհը պիտի անարգվի։ Եվ ընչաքաղցությամբ, մտացածին խոսքերով ձեզ պիտի շահագործեն, բայց նրանց դատապարտությունը սկզբից հայտնի է, և նրանց կործանումը չպիտի ուշանա» (Բ Պետրոս Բ 1-3)։ Իսկ սրանցից առաջ Քրիստոս՝ մեր Տերը, ասել է. «Զգո՛ւյշ եղեք սուտ մարգարեներից, որոնք մոտենում են ձեզ ոչխարների զգեստներով, բայց ներսից հափշտակող գայլեր են։ Իրենց գործերից կճանաչեք նրանց» (Մատթեոս Է 15-16)։ Հիմա տեսա՞ր սուտ մարգարեների նշաններն ու խաբեությունները։*

# Շավիղ ԻԳ

**Հարց**. *Այս ի՞նչ բան է, եղբայր, ես կարծում էի, թե Տասը պատվիրաններից գոնե կեսը կատարում եմ, բայց ինչ պատվիրանի կատարումով որ պարծեցա, անիրավ և սուտ հանեցիր ինձ։ Հիմա հասկացա, որ եթե Տասը պատվիրաններից ինը չեմ կատարել, ապա գոնե մեկը պահել եմ։*

**Պատասխան**. *Ո՞ր պատվիրանն ես պահել։*

**Հարց**. *Ես ամենևին դատարան չեմ գնացել՝ սուտ վկայություն տալու համար։ Այս պատճառով ուրախ եմ, որ գոնե այդ մի պատվիրանը կատարել եմ։*

**Պատասխան**. *Այդքան մի՛ պարծենա, գուցե կրկին ձեռնունայն մնաս։*

**Հարց**. *Ինչո՞ւ պիտի ձեռնունայն մնամ. իրապես ես սուտ վկայություն չեմ տվել դատարանում։*

**Պատասխան**. *Մի՞թե սուտ վկայությունը միայն դատարանում են տալիս. մի հարուստ մարդու հաճոյանալու նպատակով մի՞թե նրա սուտ խոսքը չես հաստատել «իրավացի ես», «այդպես է» բառերով։*

**Հարց**. *Այդ էլ խո՞սք է. հազար անգամ եմ այդ բանը ասել առանց անդրադառնալու, թե դա սուտ վկայություն է։ Բայց իսկապես, մի՞թե դա սուտ վկայություն է։*

**Պատասխան.** *Այո՛, սուտ վկայություն է, և սա դատարան գնալուց շատ ավելի վատ է, որովհետև դատարանում սուտ վկայություն տվողները այդպես անում են դրամի կարիքից դրդված և հանուն դրամի իրենց հոգին դժոխքի հավիտենական կրակի բաժին են դարձնում, մինչդեռ հարուստ մարդկանց աչքին հաճելի երևալու նպատակով հաստատական խոսքեր ասողներին Քրիստոս Ինքը վայ է տալիս, իսկ Պողոս առաքյալն իր հերթին չեշտելով, թե կեղծավոր մարդը արքայության մեջ բաժին չունի, ավելացնում է. «Եթե ջանայի մարդկանց հաճելի լինել, ապա Քրիստոսին ծառա չէի լինի» (Գաղատ. Ա 10): Տեսա՞ր, որ մարդկանց հաճոյացող մարդը զրկվում է Քրիստոսին ծառայելու պատվից:*

**Հարց.** *Եղբա՛յր, ես միայն այդ պատվիրանի վրա էի իմ հույսը դրել, կարծում էի, թե կատարում եմ, բայց ահա այդ էլ ձեռքիցս առար և ինձ լիովին հուսաբեկ արեցիր: Հիմա եմ հասկանում, որ Տասը պատվիրաններից և ոչ մեկը չեմ պահել և միշտ Աստծու կամքին հակառակ եմ գործել: Այս պատճառով աղաչում եմ քեզ, եղբա՛յր, այդ մեղքերից ձերբազատվելու մի ճանապարհ ցույց տուր ինձ, եթե կա, որպեսզի մեղքերից ազատվելով ես էլ Քրիստոսի աշակերտ լինեմ, որովհետև շատ եմ վախենում:*

**Պատասխան.** *Եթե մինչև այժմ անգիտորեն մեղանչել ես, մի՛ վախեցիր և հույսդ մի՛ կորիր:*

**Հարց.** *Բայց ինչպե՞ս չվախենամ, չէ՞ որ մեղավոր եմ:*

**Պատասխան.** *Եթե մարգարեների խրատը պահես, շուտ կազատվես քո մեղքերից և կարդարանաս:*

**Հարց.** *Ի՞նչ խրատ են տալիս մարգարեները:*

**Պատասխան.** *Ահա նախ Եսային է գրում. «Փնտրեցե՛ք Տիրոջը և երբ գտնեք, կանչեցե՛ք Նրան. երբ Նա ձեզ մոտենա, ամբարիշտը թող հրաժարվի իր ընթացքից, անօրեն մարդը՝ իր խորհուրդներից, թող նա վերադառնա Տիրոջ մոտ և ողորմություն կգտնի մեր Աստծու մոտ, որը բազմապատիկ թողություն պիտի շնորհի ձեր անօրենություններին» (Եսայի ԾԵ 6-8): Եվ Օսեեն գրում է. «Դարձի՛ր, Իսրայե՛լ, դեպի քո Տեր Աստվածը, քանի որ տկարացար քո անօրենությունների մեջ: Առե՛ք այս խոսքերը ձեզ հետ, դարձե՛ք ձեր Տեր Աստծուն և ասացե՛ք Նրան. «Դու կարող ես ներել մեր մեղքերը» (Օսեե ԺԴ 2-3): Եսային կրկին գրում է. «Լվացվեցե՛ք, մաքրվեցե՛ք, Իմ աչքի առաջ ձեր չար արարքները թոթափեցե՛ք ձեզնից, վե՛րջ տվեք ձեր չարագործություններին» (Եսայի Ա 16): Տեսա՞ր մեղքից ձերբազատվելու ճանապարհը:*

**Հարց.** *Եթե մարգարեների խրատը պահեմ, Աստված ինձ կընդունի՞:*

**Պատասխան.** *Այո՛, անշուշտ կընդունի, ինչպես որ Աստված խոստացել էր Եսայու բերանով. «Եթե ձեր մեղքերը արյան պես կարմիր են, ապա Ես ձյան պես ճերմակ կդարձնեմ» (Եսայի Ա 18): Եզեկիել մարգարեն գրում է. «Անօրենը եթե ետ կանգնի իր գործած անօրենություններից ու պահի Իմ բոլոր պատվիրանները, արդարություն գործի և ողորմածություն անի, ապրելով ապրելու է ու չի մեռնելու: Նրա գործած բոլոր մեղքերը, կատարած բոլոր անիրավությունները չեն հիշվելու, այլ իր գործած արդարության համար նա ապրելու է» (Եզեկիել ԺԸ 21-22): Եսայի մարգարեն կրկին գրում է. «Ահավասիկ ջնջեցի քո անօրենությունները ինչպես ամպ և քո մեղքերն՝ ինչպես մեգ, Ինձ մոտ դարձի՛ր, որպեսզի փրկեմ քեզ» (Եսայի ԽԴ 22):*

**Հարց.** *Այդ ասվածներն ինձ նման մեղավորին մեծ հույս են տալիս, բայց սրանից առաջ գործած մեղքերից ինչպե՞ս ազատվեմ, մի ճանապարհ ցո՛ւյց տուր:*

**Պատասխան.** *Սկզբից կմտաբերես բոլոր մեղքերդ և ի սրտե կզղջաս դրանց համար: Կգնաս, կխոստովանես կատարյալ զղջմամբ և կորոշես այլևս չվերադառնալ ու մասնակից չլինել այդ մեղքերին: Քահանան սուրբգրային վկայություններով քեզ կխրատի և խորշանք կներարկի այդ մեղքերի նկատմամբ, որպեսզի այլևս չվերադառնաս դրանց, և մեղքերիդ պատշաճող ապաշխարանք կսահմանի: Երբ ապաշխարանքդ ավարտես լացով և ողբով, իրական զղջումով, այնժամ մեղքիցդ կազատվես: Այս է մեղքից ձերբազատվելու ուղին:*

*Հարց.* *Արդ, գտնվեց դյուրին ճանապարհը. ասածդ ախորժելի եղավ ականջիս. միշտ կարող եմ մեղք գործել և գնալ խոստովանությամբ թողություն ստանալ: Դրանից դյուրին բան չկա: Ես շատ էի վախենում մեղք գործել, որովհետև ասացիր, թե նախ Հովհաննես Մկրտիչը և հետո Հիսուս, երկուսն էլ իրենց քարոզչությունը սկսեցին «Ապաշխարեցեք, քանզի երկնքի թագավորությունը մոտեցել է» խոսքով: Ես դրանից վախենում էի, որովհետև այդ խոսքը այսպես էի հասկանում. դուք մինչև հիմա ծառայում էիք այս աշխարհի թագավորին՝ սատանային, արդ ապաշխարե՛ք, քանզի երկնքի թագավորությունը մոտեցել է, նրան պիտի ծառայեք, նրա զորքը պիտի լինեք: Ես էլ հենց դրանից էի վախենում. եթե երկնքի թագավորի զորքը լինենք, մեր բանը բուրդ է, որովհետև Նա արդար է, և Նրա զորքերն էլ արդար պետք է լինեն: Բայց հիմա հասկացա, որ քրիստոնեության մեջ էլ մեղք գործելու սովորություն կա. սրանից հետո մեղքից չեմ վախենա, որովհետև դյուրին ճանապարհ գտա դրանից փրկվելու համար:*

*Պատասխան.* *Շատ մի՛ ուրախացիր, եղբա՛յր, որովհետև մեր ասած մեղքերի թողությունը վերաբերում է ոչ թե վաղվա գործելիք մեղքերին, այլ երեկվա գործած մեղքերին: Եթե խոստովանանքին ապավինելով մեղանչես, շատ ողորմելի վիճակի մեջ կհայտնվես, որովհետև ամենևին չես ստանա մեղքերի թողություն: Թողություն ստանալու հեռանկարով գիտակցաբար գործված մեղքին թողություն չկա, ինչպես Սիրաքն է ասում. «Տերը համբերատար է քո դարձի և քավության համար. քեզ անվախ մի՛ համարիր՝ մեղքերի վրա մեղքեր ավելացնելով: «Մի՛ ասա. «Տիրոջ գթությունը շատ է, Նա իմ բազում մեղքերը կքավի», քանզի ողորմությունն ու բարկությունը Նրանից է, և մեղավորների վրա է իջնում Նրա զայրույթը» (Սիրաք Ե 5-7):*

*Հարց.* *Եթե ասածիդ նման կատարյալ զղջմամբ, լացով խոստովանեմ և ապաշխարեմ, հետո ի՞նչ պետք է անեմ:*

*Պատասխան.* *Եթե այդպես մաքրվես, այնժամ արժանի կլինես մասնակցելու Սուրբ Հաղորդությանը:*

*Հարց.* *Մեղքերիցս չմաքրված չե՞մ կարող մասնակցել Սուրբ Հաղորդությանը:*

*Պատասխան.* *Արգելք չկա, կարող ես մասնակցել, բայց լսի՛ր, թե ի՞նչ է ասում Պողոս առաքյալը. «Ով որ ուտի այս հացը կամ խմի Տիրոջ այս բաժակն անարժանորեն, պարտական պիտի լինի Տիրոջ Մարմնին և Արյանը: Թող մարդ նախ ինքն իրեն փորձի և ապա ուտի այդ հացից ու խմի այդ բաժակից, որովհետև ով ուտում է և խմում անարժանորեն, իր իսկ դատապարտությունն է ուտում և խմում, քանի որ չի զատորոշում Տիրոջ Մարմինը» (Ա Կորնթ. ԺԱ 27-29):*

# Շ ա վ ի ղ   Ի Դ

*Հարց.* *«Իր իսկ դատապարտությունն է ուտում և խմում» ասելով ի՞նչ պետք է հասկանանք:*

*Պատասխան.* *Այս բանն առանց օրինակի անկարելի է բացատրել: Դիցուք, թշնամուդ պատժելու կամ դատապարտելու նպատակով հայց ես ներկայացնում: Եվ այդ հայցին ապավինելով հանձնապաստան ինքնավստահությամբ դատի մեջ մտնում նրա հետ: Բայց երբ կարդացվում է այն, անսպասելիորեն տեսնում ես, որ թշնամուդ դատապարտության համար ներկայացված հայցը քո դեմ է ուղղված: Այնժամ դատավորը բարկանալով կասի. «Ի՞նչ իրավունքով այդ հայցին ապավինելով թշնամուդ հետ դատի մեջ մտար, ո՛վ անօրեն»: Այդ պահին լեզուդ կպապանձվի, ոտքդ ու ձեռքդ կսկսեն դողալ և ամոթահար կլինես: Եվ դատավորը կհրամայի շղթայակապ քեզ աքսոր ուղարկել մի անծանոթ երկիր հավիտյանս հավիտենից:*

**Հարց**. *Այդ օրինակի իմաստն ինձ բացատրի՛ր:*

**Պատասխան**. *Ասացիք, որ մեղքերից ձերբազատվելուց և մաքրվելուց հետո միայն պետք է մասնակցես Սուրբ Հաղորդությանը, բայց սրան հակառակ, մեղքից դեռ չմաքրված, մեղքերի աղտով գնում, հաղորդվում ես ու հրճվում՝ ասելով. «Փա՜ռք Աստծու, հաղորդություն առա»՝ վստահ լինելով, թե դրանով հաղթելու ես թշնամուդ՝ սատանային: Բայց դատաստանի օրը, հակառակ քո հանձնապաստան ակնկալությունների, քո իսկ դատն է արվում, միայն այդ պահին տեսնում ես, որ անարժանությամբ Ս. Հաղորդությանը մոտենալդ՝ քեզ համար հանցանք և դատապարտություն է եղել և ոչ թե՝ սատանայի: Եվ դու, որ ապավինելով Ս. Հաղորդությանը՝ պիտի հաղթեիր սատանային և արքայություն գնայիր, հիմա անլուր տագնապի ես մատնված. եթե արքայությունից զրկվեցիր, գոնե դժոխքի հավիտենական աքսորում չհայտնվեիր:*

**Հարց**. *Այդ ի՞նչ սոսկալի բան ասացիր:*

**Պատասխան**. *Սոսկալի բանի մասին դեռ հետո պետք է լսես, երբ ամեն կողմից հանցավոր գտնվես: Քրիստոս՝ արդար Դատավորը, այնժամ սաստիկ բարկությամբ կասի. «Ընկե՛ր, որ հարսանիքի զգեստ չունեիր, ինչպե՞ս այստեղ մտար» (Մատթեոս ԻԲ 12): Այսինքն՝ ինչո՞ւ մեղքից տակավին չմաքրված և հոգուդ զգեստները չնորոգած այս սեղանին մոտեցար: Այն պահին լեզուդ կպապանձվի, ոտքերդ և ձեռքերդ կսկսեն դողալ, և ամոթահար կլինես: Դարձյալ պիտի լսես Քրիստոսի ձայնը. «Կապեցե՛ք դրա ոտքերը և ձեռքերը և դուրս հանեցեք դրան արտաքին խավարը, այնտեղ կլինի լաց և ատամների կրճտում»: Եվ Նրա սպասավորներն այդ իսկ պահին կկատարեն հրամանը և քեզ հավիտենական դժոխք կուղարկեն: Տեսա՞ր, եղբա՛յր, անարժանությամբ Ս. Հաղորդություն առնելու հետևանքը:*

# Ղ ա վ ի ղ   Ի Ե

**Հարց**. *Այդ ասածներիցդ շատ վախեցա, սրանից հետո մեղքերիցս չմաքրված Ս. Հաղորդություն չեմ առնի, բայց եթե կրկին մեղանչեմ, ի՞նչ պիտի լինի:*

**Պատասխան**. *Այլևս այդ բանն ինձ մի՛ հարցրու, այլ Պետրոս առաքյալին և Սողոմոն իմաստունին: Պետրոսն ասում է. «Շունը վերստին է դառնում իր փսխածին», և «Լվացված խոզը վերստին է թավալվում տիղմի մեջ» (Բ Պետրոս Բ 22): Եվ Սողոմոնը պատասխանում է. «Ինչպես շունը դառնում է ատելի, երբ վերադառնում է իր փսխածին, այնպես էլ անզգամն է իր չարությամբ, երբ վերադառնում է դեպի իր մեղքերը» (Առակ. ԻԶ 11): Տե՛ս՝ մեղքը խոստովանողին, բայց հետո կրկին մեղանչողին ինչ գարշելի գազանների են նմանեցրել:*

**Հարց**. *Բայց ինչո՞ւ են կրկին մեղանչողներին հատկապես այդ գազաններին նմանեցրել, ո՞րն է նրանց բնությունը:*

**Պատասխան**. *Պատճառն այս է. երբ շունը կերակուր է գտնում, անհագաբար, շուտ - շուտ լափում է այն՝ ագահաբար փորը լցնելով, որի հետևանքով ստամոքսը խանգարվում է, և հարկադրվում է կերածը փսխել: Դրանից հետո մի քիչ հանգստանում է, բայց երբ տեսնում է, որ փորը դատարկ է, իսկույն գնում ու փսխածն ուտում է և փորն այդպես լցնում: Այդպես է նմանապես մեղսասեր մարդը, որ մինչև տոների գալը (Ծնունդ, Զատիկ) թավալվում է մեղքերի մեջ: Բայց այդ ժամանակ իր խղճմտանքն արթնանում է, սիրտը նեղվում, որովհետև տեսնում է, որ ուրիշները խոստովանում են, ապաշխարում, և ինքն էլ, նրանց նայելով, գնում, խոստովանում է իր մեղքերը, դրանից հետո փոքր-ինչ հանգստանում, բայց տեսնելով, որ մեղքի ամանները դատարկ են, մեղքի գործիքները պարապության են մատնված, իսկույն սկսում է խոստովանած մեղքերը կրկին գործել, մինչև որ մի տոն գա,*

*կարճի մեղքի անհագուրդ տենչը: Տեսա՞ր՝ կրկին մեղանչողի բնությունը ինչպես է համարվում չանը:*

**Հարց**. *Այդ բանը լավ հասկացա, որովհետև միշտ իմ արածն այդ է. Ծննդյան տոնին մեղքերս խոստովանում եմ, բայց մի քանի օր անց նորից սկսում եմ մեղք գործել մինչև Զատիկ, այնժամ նորից խոստովանում եմ ու տեսնում, որ դրանք Ծննդյան տոնին խոստովանած մեղքերս են, որոնք նորից եմ գործել, որի հետևանքով մեղքերս ամենևին չեն պակասում:*

**Պատասխան**. *Երանի թե մեղքդ միաչափ մնար և չավելանար, որովհետև կրկին մեղանչողի մեղքը միաչափ չի մնում, այլ ավելանում է: Երբ Քրիստոս բժշկեց երեսունութ տարվա անդամալուծին, պատվիրեց. «Ահավասիկ առողջացար, այլևս մի՛ մեղանչիր, որպեսզի մի ավելի չար բան չպատահի քեզ» (Հովհաննես Ե 14): Տե՛ս, որ կրկին մեղանչող մարդու վիճակը վատ կլինի, ինչ Քրիստոս ցույց է տալիս մի այլ օրինակով. «Երբ պիղծ դևը ելնում է մարդուց, շրջում է անջրդի տեղերում, հանգիստ է փնտրում և երբ չի գտնում, ասում է. «Վերադառնամ իմ տունը, որտեղից ելա»: Եվ գալիս է ու գտնում այն՝ մաքրված և կարգի բերված: Այն ժամանակ գնում և վերցնում է իրենից ավելի չար յոթը այլ դևեր և մտնում, բնակվում է այնտեղ, և այն մարդու վերջին վիճակը լինում է ավելի վատ, քան նախկինը» (Ղուկաս ԺԱ 24-26): Հիմա տեսա՞ր, որ մեղքը նախկին չափով չի մնում, այլ կրկնվելիս մեծանում է, ինչպես հիվանդությունն է կրկնվելիս ավելի վատ լինում, քան նոր սկսված ժամանակ:*

**Հարց**. *Տեսանք, որ շան բնությունը պատշաճում է մեղսասեր մարդու բնությանը: Եթե կարող ես, այժմ էլ բացատրի՛ր խոզի բնությունը:*

**Պատասխան**. *Խոզն ի բնե աղմասեր է, միշտ թավալվում է տիղմի և ցեխի մեջ, գարշելի բաներ ուտում և գարշահոտություն է սիրում, բայց երբեմն էլ գնում, մտնում է գետի մեջ, լվացվում ու մաքրվում: Սակայն նրա ուզածն այդ մաքրությունը չէ, ուստի երբ նայում է գարշահոտ տիղմ ու ցեխին, իր հանգստությունը խափանվում է, և ունկնդիր իր աղմասեր բնազդին՝ կրկին գնում, մտնում է գարշելի ցեխերի մեջ, որպեսզի ուրախանա ու զվարճանա ցեխերի գարշահոտությամբ: Այդպես է և մեղսասեր մարդը, որ միշտ սիրում է մեղքը և ատում արդարությունը: Նա տևապես թաթախված է մեղքերի մեջ ու թեև երբեմն խղճմտանքը նրան ստիպում է գնալ ու կամա թե ակամա խոստովանել մեղքերը, ապաշխարել ու արդարանալ, բայց այդուհանդերձ արդարությունն իր սիրած բանը չէ, ուստի երբ մեղքի գարշահոտությունը պակասում է, իր հանգստությունը խափանվում է, և իր վատ հակումների ձայնին ունկնդիր՝ գնում և այն գազանների նման կրկին ուտում է իր փսխածը, կրկին թավալվում է մեղքերի տիղմի մեջ: Ահա այս պատճառով խոստովանած մեղքը կրկին գործող մարդը նմանեցված է այդ գազաններին:*

# Հ ա վ ե լ ի ր Ջ

**Հարց**. *Եղբա՛յր, ասացիր, թե նրանք, ովքեր ասում են, թե սրբերը չեն կարող բարեխոս լինել, սուտ մարգարեներ են: Բայց ինչ մեղքս թաքցնեմ, ես էլ եմ կասկածում, որ մեռած մարդը կարողանա բարեխոսել:*

**Պատասխան**. *Դու այդ սրբերին մեռա՞ծ ես համարում:*

**Հարց**. *Ինչո՞ւ նրանց մեռած չհամարեմ, մի՞թե նրանք էլ հողեղեն չէին, և Աստծու վճիռը, որ կարդացվեց Ադամին, մի՞թե նաև նրանց համար չէր:*

**Պատասխան**. *Իրավացի ես, նրանք էլ էին հողեղեն ու Աստծու վճռով մեռան, բայց նրանց մահը միայն մարմնով է և ոչ թե հոգով, որովհետև մեղավորները, նաև հոգով մեռնելով, իրապես մեռած են, բայց արդարները, հոգով կենդանի լինելով, մեռած չեն:*

**Հարց.** Ի՞նչ գիտես, անդենական աշխարհից եկող եղա՞վ, որ այդ սրբերի ողջ լինելու վերաբերյալ քեզ լուր բերեր:

**Պատասխան.** Ի՞նչ պարտադիր է, որ անդենական աշխարհից եկող լինի. ահավասիկ երկինքն ու երկիրը ոչնչից գոյության կանչող Աստված Ինքը Մովսեսին վկայեց մորենու միջից. «Ես քո հոր Աստվածն եմ, Աբրահամի Աստվածը, Իսահակի Աստվածը և Հակոբի Աստվածը. Աստված ոչ թե մեռելների, այլ ողջերի Աստվածն է» (հմմտ. Ելք Գ 6): Սրանից պարզ է դառնում սրբերի ողջ լինելը, որովհետև նրանց մեռնելուց անցել էր ավելի քան չորս հարյուր տարի, բայց ասում է, թե «դեռ ողջ են», ասում է. «Ես ողջերի Աստվածն եմ, մեռելների Աստվածը չեմ»:

**Հարց.** Հիմա հասկացա, որ սրբերը հոգով կենդանի են, բայց մի՞թե նրանք կարող են բարեխոսել:

**Պատասխան.** Քեզ մի բան հարցնեմ. մի մարդ եթե կարողանա գանգատվել, մի՞թե չի կարող բարեխոս լինել:

**Հարց.** Հարկավ, կարող է: Բայց Սուրբ Գրքից կարո՞ղ ես վկայություններ բերել սրբերի գանգատ անելու վերաբերյալ:

**Պատասխան.** Ահավասիկ, Քրիստոս ինքը վկայում է. «Մի՛ կարծեք, որ Ես Հոր մոտ ձեզ պիտի ամբաստանեմ. կա մեկը, որ իբրև ամբաստանող կկանգնի ձեր դեմ՝ Մովսեսը, որի վրա դուք հույս եք դրել, որովհետև եթե դուք հավատայիք Մովսեսին, կհավատայիք այդ դեպքում նաև Ինձ, քանի որ նա հենց Իմ մասին է գրել» (Հովհաննես Ե 45-46): Հովհաննես առաքյալը գրում է. «Եվ երբ բացեց հինգերորդ կնիքը, խորանի տակ տեսա հոգիներին այն բոլոր մարդկանց, որոնք սպանվել էին Աստծու խոսքի և այն վկայության համար, որ պահում էին: Նրանք ասում էին բարձր ձայնով. «Սո՛ւրբ և ճշմարի՛տ Տեր, մինչև երբ պիտի չդատես և մեր արյան վրեժը չլուծես երկրի բնակիչներից» (Հայտն. Զ 9-10): Բարուքն ասում է. «Երանի է մեզ, Իսրայել, որովհետև գիտենք, թե ինչն է հաճելի Աստծուն» (Բարուք Դ 4): Արդ, երանի տալը ոչ այլ ինչ է, եթե ոչ՝ բարեխոս լինել:

**Հարց.** Լավ է, որ ինձ համոզեցիր, սրանից հետո կառչելու եմ սրբերի քղանցքից ու խնդրելու, որ նրանք բարեխոս լինեն և մեղքերիս համար միշտ աղերսեն Աստծուն:

**Պատասխան.** Շատ լավ, սրբերին խնդրիր, որ նրանք բարեխոս լինեն, բայց մեղքից հեռու պիտի լինես. եթե շարունակ մեղք գործես և անհոգ լինելով ասես, թե «սրբերն ինձ համար կաղաչեն Աստծուն», նրանք, քեզ և քո անբարո ընթացքը չսիրելով, չեն աղաչի Աստծուն, որովհետև նրանք սուրբ են դարձել Աստծու պատվիրանները պահելով և քեզ գրել, որ դու նույնպես պահես Աստծու պատվիրանները: Իսկ դու նրանց գրածը չես ընդունում, Աստծու պատվերը չես պահում, քո չար կամքը չես զսպում և դեռ հույս ունես, որ սրբերի քղանցքից կառչելով՝ վայելելու ես նրանց պաշտպանությունը: Սա հասկանալի դարձնենք հետևյալ օրինակով. մի պաշտոնյա իր հովանավորության տակ է վերցնում մի գողի, վերջինս, վախ չունենալով պատժից, շարունակում է իր գողությունն ու ավազակությունը ու գողոնի մի մասը տալիս պաշտոնյային և մյուս մասն իրեն պահում: Բայց ի վերջո երկրի ղեկավարն այս մասին իմանալով պատժում է թե՛ պաշտոնյային, թե՛ գողին: Ճիշտ այսպես դու սրբերին պաշտոնյա ես համարում ու կարծում, թե գողություն, անօրենություն անելով և դրանից բաժին հանելով սրբերին (ուխտի գնալով կամ եկեղեցում մոմ վառելով)՝ կկարողանաս նրանց բարեհաճ վերաբերմունքը շահել՝ ասելով. «Ահա ընդունեցեք այս ընծան ու Աստծուն աղաչեցեք, որ ինձ հաջողություն տա, հիմա ես նորից գողության եմ գնում, ձեզ էլ բաժին պիտի հանեմ, միայն թե դուք ինձ օգնեք»: Մինչդեռ Աստված չի ուզում, որ այն սրբերը քեզ պես վատաբարո մարդու համար աղաչեն Իրեն, ինչպես Երեմիա մարգարեն է ասում. «Իսկ դու մի՛ աղոթիր այդ ժողովրդի համար, դրանց համար ողորմություն մի՛ խնդրիր և մի՛ աղաչիր, Իմ առաջ մի՛ խոնարհվիր դրանց համար, որովհետև քեզ չեմ լսելու» (Երեմիա Է 16):

**Հարց.** Ապա ինչպե՞ս պետք է վարվեմ, որ սրբերը բարեխոս լինեն, և Աստված ընդունի:

*Պատասխան.* *Պիտի զղջաս սրանից առաջ գործած մեղքերիդ համար, խոստովանես և ապաշխարես և հետո միայն սրբերին խնդրես բարեխոսելու քեզ համար, և Աստված կընդունի այդ բարեխոսությունը, որովհետև եթե մի զորապետ, իր պաշտպանության տակ վերցնելով մի մահապարտ վատ մարդու ու գնալով թագավորի մոտ, ասի, թե «այդ մարդը հրաժարվել է իր չարությունից և այլևս մասնակից չի լինելու չար գործերի, խնդրում եմ շնորհ անես ու ներես նրա արած չարությունները», մի՞թե կարող է ասել թագավորին, թե այս մարդը չարունակ այս չարությունն է անելու, և դու էլ միշտ պետք է ներես նրան: Այսպե՛ս հասկացիր նաև սրբերի բարեխոսության պարագայում:*

# Ըավիղ ԻԷ

*Հարց.* *Եղբա՛յր, իմ կարծիքով, Աստծու բոլոր պատվիրանները սովորեցի: Արդյոք մնա՞ց պատվեր, որ չեմ սովորել, որպեսզի, եթե կարելի լիներ, այն էլ սովորեցնեիր: Գիտեմ, որ շատ գլխացավանք եմ պատճառում քեզ տեսակ-տեսակ հարցումներով, բայց ինչ անեմ, ցանկանում եմ քրիստոնյային անհրաժեշտ բոլոր գիտելիքները սովորել:*

*Պատասխան.* *Արդեն Քրիստոս Իր աշակերտներին պատվիրեց, որ Իր սովորեցրած բաները հաղորդեն հավատացյալներին: Հետևելով Տիրոջ այս պատգամին՝ ես իմ պարտքն եմ համարում Քրիստոսի կամքը քեզ բացատրել: Երեմիա մարգարեն Աստծու կամքին անտեղյակ մարդկանց ասում է. «Կանգնեցեք ճանապարհներին և դիտեցեք, հարցրեք Տիրոջ հավիտենական ճանապարհների մասին, տեսեք, թե որն է բարի ճանապարհը գնացեք դրանով և քավություն կգտնեք ձեր հոգիների համար» (Երեմիա Զ 16): Տեսնո՞ւմ ես՝ ասում է. «Կանգնեցե՛ք ճանապարհներին և դիտեցե՛ք, հարցրե՛ք Տիրոջ հավիտենական ճանապարհների մասին», ուստի քո խնդրանքը միանգամայն արդար և իրավացի է, քանի որ դեռ շատ բաներ կան, որ պետք է սովորես և կատարյալ քրիստոնյա լինես: Քրիստոս Ինքը հորդորում և կարգադրում է. «Կատարյալ եղեք դուք, ինչպես որ ձեր երկնավոր Հայրն է կատարյալ» (Մատթեոս Ե 49):*

*Հարց.* *Որո՞նք են պակաս մնացած պատվիրանները:*

*Պատասխան.* *Ըստ Քրիստոսի խոսքի քրիստոնյան պետք է խոնարհ լինի՝ չունենալով հպարտության և ոչ մի ախտանիշ. «Սովորեցեք Ինձնից, որ հեզ եմ և խոնարհ սրտով» (Մատթեոս ԺԱ 29), ուրեմն խոնարհությունը պիտի սովորենք Քրիստոսից: Իսկ Հակոբոս առաքյալն ասում է. «Խոնարհ եղեք Տիրոջ առաջ, և Նա ձեզ կբարձրացնի» (Հակոբոս Դ 10): Իր հերթին Պետրոս առաքյալը մի խոսք է ասում, որն իմ կարծիքով, բավական է, որպեսզի ամեն ինչ հասկանաս:*

*Հարց.* *Ո՞րն է այդ խոսքը:*

*Պատասխան.* *«Բոլորդ միմյանց հանդեպ խոնարհություն ունեցեք, քանի որ Աստված հակառակ է ամբարիշտներին, իսկ խոնարհներին տալիս է շնորհ» (Ա Պետրոս Ե 5): Տեսնո՞ւմ ես, թե Պետրոսն ինչ զգաստացնող և երկյուղալի խոսք է ուղղում մեզ:*

*Հարց.* *Ո՞րն է այդտեղ երկյուղ ներշնչող խոսքը:*

*Պատասխան.* *«Աստված հակառակ է հպարտներին», սա է երկյուղ ներշնչում մեզ, որովհետև եթե որևէ մարդու թշնամին Աստված է, ապա պատկերացնո՞ւմ ես, թե ի՞նչ խեղճ ու անտանելի է այդ մարդու վիճակը: Ո՞վ կարող է բարեկամ դառնալ Աստծու թշնամուն, երբ Սողոմոնն էլ է ասում. «Ամեն մեծամիտ պիղծ է Տիրոջ առջև» (Առակ. ԺԶ 5):*

*Հարց.* *Բայց ինչո՞ւ են Պետրոսն ու Սողոմոնը այդքան վատ բնութագրում հպարտ մարդուն:*

*Պատասխան.* *Հպարտությունը սատանայի հնարքն ու արվեստն է, որով էլ դարձավ սատանա, չէ՞ որ նա սկզբում սատանա չէր, այլ ստեղծված էր որպես լուսեղեն հրեշտակ, որ սպասավորեր*

Աստծուն, բայց Սաղայելը, լինելով ամենաբարձր հրեշտակը, իր փառքի վրա հպարտացավ՝ ասելով. «Եթե իմ աթոռը մի քիչ վեր դնեմ, ես էլ հավասար կլինեմ Աստծուն»: Այս է պատճառը, որ Աստված սաստիկ բարկանալով, Սաղայելին և նրան հնազանդ հրեշտակներին երկնքից վայր թափելով՝ ուղարկեց դժոխք: Աստված միշտ հակառակ է սատանային: Եվ երբ Պետրոս առաքյալը նշում է, որ «Աստված հակառակ է հպարտներին», պատճառն այն է, որ հպարտ մարդը նման է սատանային: Օրինակ, եթե մի երեխա արհեստ սովորի, ասենք թե ոսկերչություն, և սկսի գործածել իր արհեստն ու աշխատի, նրան կկոչեն ոսկերիչ: Այսպես էլ, եթե մեկը սատանայի արհեստը սովորի և գործածի, տրամաբանորեն նրան էլ սատանա պետք է կոչենք:

**Հարց.** Սուրբ Գրքում կա՞ն վկայություններ սատանայի հպարտանալու և երկնքից վայր ընկնելու վերաբերյալ:

**Պատասխան.** Այո՛, Եսայի մարգարեն գրում է. «Մտքիդ մեջ ասում էիր. «Երկինք կբարձրանամ, իմ գահը կդնեմ երկնային աստղերից ավելի վեր, կնստեմ բարձր լեռան վրա, հյուսիսի բարձր լեռների վրա, կբարձրանամ ամպերից էլ վեր, կնմանվեմ Բարձրյալին»: Բայց ահավասիկ դժոխք ես իջնելու և երկրի խորքերը: Ովքեր տեսնեն քեզ, պիտի զարմանան քեզ վրա և ասեն. «Սա այն մարդն է, որ ահաբեկում էր երկիրը, ցնցում թագավորներին, ավերակ դարձնում աշխարհներ» (Եսայի ԺԴ 13-17):

Երկրորդ՝ Պետրոսը գրում է. «Քանզի Աստված չխնայեց մեղանչած հրեշտակներին, այլ խավարի կապանքներով գցեց տարտարոսը, որպեսզի նրանք պահվեն դատաստանի օրվա համար» (Բ Պետրոս Բ 4):

Երրորդ՝ Հուդա առաքյալը գրում է. «Եվ այն հրեշտակներին, որ չպահեցին իրենց իշխանությունը, այլ լքեցին իրենց բնակության տեղը, հավիտենական կապանքներով խավարի մեջ պահեց դատաստանի օրվա համար» (Հուդա Ա 6):

**Հարց.** Հասկացա, որ հպարտությունը սատանայի հնարքն է, բայց ասացիր, թե հպարտը նման է սատանային, չըմբռնեցի, որովհետև ես էլ փոքր ի շատե հպարտություն ունեմ, բայց այն շատ տարբեր է սատանայի հպարտությունից:

**Պատասխան.** Իսկ ինչպիսի՞ն է քո հպարտությունը, որ տարբեր ես անվանում:

**Հարց.** Չէ՞ որ սատանան ուզեց նմանվել Աստծուն, քավ լիցի, որ իմ մտքով նման բան անցնի, բայց ինձ նման մարդկանց նկատմամբ ունեմ հպարտության զգացմունք:

**Պատասխան.** Կարծում եմ, որ դու այդ մեղք չես համարել:

**Հարց.** Չեմ կարող ասել, որ մեղք չէ, թեպետ մեղքերի կարգն եմ դասել, բայց կարծում եմ, որ սատանայի հպարտությանը հավասար չէ:

**Պատասխան.** Դու ի՞նչ իրավունքով ես հպարտանում մարդկանց վրա, ի՞նչն է քո առավելությունը, մի՞թե հպարտանում ես աղքատների վրա, քանի որ հարուստ ես:

**Հարց.** Այո՛, հպարտանում եմ:

**Պատասխան.** Բայց այդ ունեցվածքը քոնը չէ, որպեսզի հպարտանաս, որովհետև եթե այն քոնը լիներ, մահանալիս հետդ կտանեիր, բայց չէ՞ որ այն թողնելու ես այս աշխարհում: Գուցե՞ կտրիճ ես և այս պատճառով է, որ հպարտ ես:

**Հարց.** Այո՛, դրա համար հաճախ հպարտանում եմ տկար և անուժ մարդկանց վրա:

**Պատասխան.** Բայց նայի՛ր ու տե՛ս, որ առյուծը քեզանից զորեղ և ուժեղ է: Կամ գուցե անուշ ձայն ունես և դրա՞ վրա ես հպարտանում:

**Հարց.** Այո՛, հպարտանում եմ խռպոտ ու նվազ ձայն ունեցողների վրա:

**Պատասխան.** Բայց սոխակը քեզանից առավել ձայնավոր է: Կամ գուցե գեղեցիկ զգեստիդ վրա ես հպարտանում՝ արհամարհելով մաշված զգեստ ունեցողներին:

**Հարց.** Այո՛, դրանով էլ եմ հպարտ:

*Պատասխան. Բայց տե՛ս, որ սիրամարգը քեզանից առավել գեղեցիկ ու չողչողուն փետուրներով է զարդարված: Ինչպես Հակոբոս առաքյալն է վկայում, «զգեստը ցեցի բաժին է»: Իսկ գուցե լավ արհեստավոր ես և դրանով է, որ հպարտանում ես անգետների վրա:*

*Հարց. Այո՛, դրանով հպարտ եմ:*

*Պատասխան. Նայի՛ր և տե՛ս, չէ՞ որ մեղուն ու մետաքսի որդը քեզանից առավել են իրենց արհեստով, և չես էլ կարող նրանց արհեստի գաղտնիքն իմանալ: Կամ էլ հավանական է, որ արագընթաց ես և երկար ճանապարհը կարճ ժամանակում ես անցնում:*

*Հարց. Այո՛, դրանով նույնպես հպարտ եմ:*

*Պատասխան. Ահա այծյամն ու նապաստակը քեզանից շատ ավելի արագընթաց են: Կամ գուցե գործունյա ես և դրանով ես հպարտանում ծույլերի վրա:*

*Հարց. Այո՛, հպարտ եմ այդ հատկությամբ:*

*Պատասխան. Բայց չէ՞ որ մրջյունն ու մեղուն քեզանից առավել գործունյա են, ինչպես որ Սողոմոն իմաստունն է գրում. «Մրջյունի մոտ գնա, ո՛վ ծույլ, նախանձի՛ր նրա գործերին և իմաստուն եղիր նրանից ավելի, քանզի նա ո՛չ հողագործ է, ո՛չ վերակացու և ո՛չ էլ գլխին տեր ունի, բայց ամռանը նա պատրաստում է իր ուտելիքը...: Կամ մեղվի մոտ գնա, տե՛ս, թե ինչպե՛ս գործունյա է նա» (Առակ. Զ 6-8): Կամ էլ աչքերդ լավ են տեսնում, դրա համար հպարտանում ես աչքացավ ունեցողների վրա:*

*Հարց. Այո՛, դրանով էլ եմ հպարտ:*

*Պատասխան. Բայց չէ՞ որ գայլն ու արծիվը քեզանից առավել սրատես են: Կամ սուր լսողություն ունենալուդ համար ե՞ս հպարտ:*

*Հարց. Այո՛, հպարտ եմ և դրանով:*

*Պատասխան. Էշի ականջը քեզանից շատ ավելի լավ է լսում: Կամ գուցե շատ գիտուն ես և հպարտանում ես տգետների վրա:*

*Հարց. Այո՛, այդ պատճառով էլ եմ հպարտ:*

*Պատասխան. Ահա, օձը քեզանից առավել խորագետ է, ինչպես Մովսես մարգարեն է վկայում. «Օձը իմաստնագույնն էր» (Ծննդ. Գ 1): Հիսուս Քրիստոս նույնպես աշակերտներին պատվիրեց. «Խորագետ եղեք օձերի պես» (Մատթեոս Ժ 16):*

*Տեսնո՞ւմ ես, եղբայր, դու, որ չէիր հավանում մարդկանց, միշտ ստորին կարգին նրանց դասելով հպարտանում էիր՝ մտածելով, թե երբեք չեն կարող քեզ հասնել: Հիմա գոնե հասկացա՞ր, որ ոչ միայն մարդկանցից, այլև լեռների գազաններից, երկնքի թռչուններից, սողուններից ու միջատներից անգամ ներքև մնացիր և չես կարող նրանց հասնել: Ինչի վրա պարծեցար, նրանք հաղթեցին քեզ թե՛ ուժով, թե՛ ձայնով, թե՛ արվեստով, թե՛ գեղեցկությամբ, ինչպես նաև գիտությամբ գերազանց գտնվեցին քեզանից: Այսուհետև այլևս իրավունք ունե՞ս հպարտանալու մարդկանց վրա:*

*Հարց. Ո՛հ, ի՞նչ գարշելի բան է հպարտությունը, քանի որ մարդուն սատանային նմանեցնելուց զատ, անգամ ստորադասում է թռչուններին, սողուններին: Զղջում եմ, որ այդքան հպարտ եմ եղել, այլևս պիտի ձգտեմ, որ հպարտ չլինեմ, բայց ի՞նչ պիտի անեմ դրա համար:*

*Պատասխան. Երբ հպարտությունը այցելի քեզ, անմիջապես նայիր հողին և մտածիր, որ այդ ոտքիդ տակի հողից ես ստեղծված, որ վերստին հող պիտի դառնաս և ոտքի կոխան լինես:*

*Երկրորդ՝ մտորիր ծնունդիդ և մահվանդ մասին և կտեսնես, որ ոչ մեկից տարբեր չես: Այսպես՝ թե՛ աղքատ և թե՛ հարուստ, թե՛ խելոք և թե՛ հիմար, թե՛ գեղեցիկ և թե՛ տգեղ, թե՛ զորեղ և թե՛ տկար. բոլորի ծնունդն ու մահը հավասար են: Բոլորն էլ ոչ միայն լացով ու տրտմությամբ, այլև մերկ են աշխարհ գալիս, մերկ էլ պիտի հեռանան՝ ոչ մի բան չտանելով իրենց հետ: Ո՛չ հարուստը կարող է իր ունեցվածքը տանել, ո՛չ գեղեցիկը իր գեղեցկությունը, ո՛չ զորեղն իր զորությունը, բոլորն էլ իրենց ունեցածը պիտի այստեղ թողնեն բացի մեղքից, ինչպես ասում է Պողոս առաքյալը. «Ոչինչ չբերեցինք աշխարհ, ոչ էլ*

*պիտի կարողանանք տանել» (Ա Տիմոթեոս Զ 7)։ Հիմա տեսա՞ր, որ մարդիկ բնավ չեն տարբերվում իրարից, նրանց թե՛ ծննդյան և թե՛ մահվան օրերը նույն կերպ են, ինչպես Սողոմոնն է ասում. «Աշխարհը մեկ մուտք ունի բոլորի համար և մեկ ընդհանուր ելք» (Իմաստ. Է 6)։ Թեպետ ոմանց ձեռքը որոշ ունեցվածք է անցնում, բայց ինչպես երեխաներն են խաղում խաղալիքի հետ, այնպես էլ սատանան խաղացնում է այդ մարդուն՝ ասելով. «Այս ունեցվածքն ու այս աշխարհը քոնն են։ Ուրախության ու զբոսանքի մեջ անցկացրու կյանքդ, ձեռքդ ինչ որ գա, բաց մի՛ թող, և եթե դու Աստծուն հաճելի չլինեիր, այսքան հարստություն քեզ չէր տա։ Եղի՛ր անվախ, ոչ մի մարդ չի կարող քո դեմ մի բան ասել, ես կանգնած եմ քո թիկունքին՝ քեզ պաշտպանելու»։*

*Իսկ այս խեղճն էլ, հավատալով սատանայի թելադրանքին, խաբվում է և ունեցվածք կուտակելով շատ մեղքեր է գործում։ Բայց երբ նրան այս աշխարհ ուղարկողը կանչի, այդ ժամանակ կցնորվի, չի իմանա անելիքը, իսկ սատանան այդ պահին կասի. «Ես նման բաների չեմ խառնվում» և ետ կքաշվի։ Իսկ այս խեղճն էլ, ինչպես իր ծննդյան օրը, այնպես էլ հիմա թիկունքին ընկած լաց կլինի, բայց ի՞նչ օգուտ։ Ընտանիքի անդամներն ու բարեկամները երես կթեքեն նրանից, երբ նոր էր ծնվել, խնդալից էին, իսկ այսօր լալիս են, նորածնին աշխատում էին զգեստավորել, իսկ այսօր մերկացնում են զգեստից, քանզի ուրիշ ոչինչ չեն կարող անել։ Եվ մարդը տեսնելով, որ ոչ մեկից օգնություն չկա, ինքը ևս հուսահատության է մատնվում, թողնում է իր ունեցվածքը և գնում հանդերձյալ աշխարհ։ Իր ողջ ունեցվածքից ոչինչ չի կարող տանել, իր թափած այդքան աշխատանքից միայն մի պատանք է հասնում իրեն, որն էլ առնելով մտնում է հողի տակ։ Սակայն պատահում է, որ ոմանք այդ պատանքին էլ արժանի չեն լինում, և որքա՜ն հարուստ մարդիկ թաղվել են առանց պատանքի։ Քանզի ոմանք լեռներում ու դաշտերում են մահանում, և նրանց մարմինը գազաններն ու թռչուններն են ուտում, ոմանք խեղդվում են ծովի ու գետի մեջ՝ դառնալով ձկների կերակուր, և այս դեպքերում սովորական մահվամբ մեռնող ու պատանքով թաղվողը երանելի է համարվում։ Բացի այդ մեկ պատանքից մարդ ոչինչ չի կարող տանել իր հետ։ Բայց ունեցվածքի կուտակման պատճառով գործած մեղքերը պահվում են դատաստանի օրվա համար։*

**Հարց**. *Ուրեմն ի՞նչ անեմ, որ ունեցվածքս տանեմ ինձ հետ։*

**Պատասխան**. *Հետդ ոչինչ չես կարող տանել, այլ քեզանից առաջ պիտի ուղարկես, որտեղ որ պիտի գնաս, և երբ գնաս, ունեցվածքդ այնտեղ պատրաստ կգտնես։*

**Հարց**. *Այդ ինչպե՞ս կարող եմ ունեցվածքս ինձանից առաջ ուղարկել։*

**Պատասխան**. *Քեզ պատասխանելու համար մի շատ հարմար պատմություն կա, որը թեպետ մի քիչ երկար է, բայց եթե հոժարությամբ կարողանաս լսել, շատ բան կսովորես։*

**Հարց**. *Ինչքան էլ երկար լինի, սիրով կլսեմ։*

**Պատասխան**. *Մի ազգի մեջ սովորություն կար, համաձայն որի իրենց արքան մեկ տարի միայն կարող էր թագավորել։ Երբ տարին լրանում էր, մերկացնում էին արքային և աքսորում մի կղզի, որտեղ սովից ու ծարավից մահանում էր և նրա փոխարեն մեկ ուրիշին էին թագավոր կարգում, և այսպես շարունակ։ Հետո մի խելոք մարդ նստեց գահին և մտածեց. «Իմ թագավորելու մեկ տարին երբ լրանա, անշուշտ ես էլ պիտի կրեմ նույն պատուհասը, ինչ որ իմ նախորդները։ Նրանց պես ինձ էլ պիտի մերկ աքսորեն, բոլոր ունեցվածքս այստեղ պիտի մնա, իսկ ես այնտեղ քաղցած ու ծարավ պիտի մեռնեմ։ Դրա համար էլ քանի դեռ իշխանությունն իմ ձեռքում է, գանձարանիս հարստությունն ու փողերը լավ է նախօրոք ուղարկեմ աքսորի այդ կղզին, որ երբ թեկուզ մերկ էլ գնամ այնտեղ, որևէ հոգս չունենամ»։ Այսպես մտմտալով սկսեց հետզհետե գանձարանի փողերն առաքել աքսորի կղզին իրեն հավատարիմ մարդկանց ձեռքով։ Շատ ուրախ էր, քանի որ հոգս չուներ, թե իրեն մերկ պիտի աքսորեն և մտատանջվեր, թե ունեցվածքը մնաց այստեղ, ինչպես մյուս*

*թագավորներինը: Եվ մտածում էր, թե այնտեղ այստեղից ավելի հանգիստ կյանք կվարի, և այդ մտքից ուրախանում էր: Վերջապես, երբ տարին լրացավ, նախորդ թագավորների պես մերկացրին այս խելոք մարդուն և աքսորեցին այն կղզին: Բայց ի տարբերություն մյուս թագավորների, այս մարդը տրտմած չէր և ուրախությամբ էր գնում, քանզի հույսը նրա հետ էր՝ չէ՞ որ նախօրոք պատրաստություն էր տեսել, տուն էր կառուցել: Գնաց, նայեց և տեսավ, որ գեղեցիկ և ապահով տեղ է: Զանազան մարդիկ բերել տվեց ու բազմամարդ մի երկիր ստեղծեց, իսկ ինքը կրկին թագավոր եղավ, այս անգամ՝ հավիտյան:*

**Հարց.** *Շատ հաճելի պատմություն էր, թեպետ մի քիչ տրտմեցի զուր տեղը կորչող առաջին թագավորների համար, բայց այս մի թագավորը շատ իմաստուն վարվեց: Բայց խնդրում եմ, որ բացատրես, թե ի՞նչ մտքով պատմեցիր:*

**Պատասխան.** *Ամեն մարդ իր անձի թագավորն ու իշխանն է, որովհետև Աստված մարդուն անձնիշխան արարեց, ինչպես Սիրաքն է ասում. «Նա ի սկզբանե մարդուն ստեղծեց և նրան թողեց իր իսկ կամքի ձեռքին… Քո առջև Տերը կրակ ու ջուր է դրել, որին կամենաս, կմեկնես քո ձեռքը» (Սիրաք ԺԵ 14-17): Բայց մահից հետո մարդն անձնիշխան չէ, և կամքն այլևս իր ձեռքում չէ, այլ ապրողների ձեռքում է, դրա համար, երբ մեռնես, հիշյալ թագավորների պես չուտով կմերկացնեն քեզ ու կուղարկեն կամ արքայություն և կամ դժոխք՝ ըստ քո գործերի: Սիրաքի ասածի պես կրակն ու ջուրը առջևդ դրված է. կարող ես ուզածիդ ձեռք մեկնել: Ջուրն՝ արքայության, իսկ կրակը դժոխքի խորհրդանիշն է: Բայց պետք է, որ այդ պատուհասը դեռ չեկած՝ այն խելոք թագավորի պես մտածես. «Երբ ես մեռնեմ, այսքան ունեցվածքից ինձ կզրկեն ու մերկ դժոխք կաքսորեն, իսկ ողջ ունեցվածքս կմնա այստեղ: Երբ դժոխք գնամ, մեկ կաթիլ ջրի կարոտ կմնամ, ինչպես վկայեց Քրիստոս»:*

**Հարց.** *Իսկ ի՞նչ վկայեց Քրիստոս:*

**Պատասխան.** *«Մի մեծահարուստ մարդ կար, որ բեհեզ ու ծիրանի էր հագնում և ամեն օր առատապես ուրախություն էր անում: Եվ Ղազարոս անունով մի աղքատ մարդ ընկած էր նրա դռան առաջ՝ վերքերով ծածկված: Եվ ցանկանում էր լցնել իր որովայնը այն փշրանքներով, որոնք թափվում էին մեծահարուստի սեղանից: Եվ դեռ շներն էլ գալիս էին ու լիզում նրա վերքերը: Երբ աղքատը մեռավ, հրեշտակները նրան տարան Աբրահամի գոգը. մեծահարուստն էլ մեռավ ու թաղվեց: Եվ դժոխքում, մինչ տանջանքների մեջ էր, բարձրացրեց իր աչքերը, հեռվից տեսավ Աբրահամին և Ղազարոսին էլ՝ նրա գրկում հանգստացած: Եվ նա աղաղակեց ու ասաց. «Հա՛յր Աբրահամ, ողորմի՛ր ինձ և ուղարկի՛ր Ղազարոսին, որ իր մատի ծայրը թրջի ջրով և զովացնի լեզուս, որովհետև այս տապից պապակում եմ»: Եվ Աբրահամը նրան ասաց. «Որդյա՛կ, հիշի՛ր, որ դու ստացար քո բարիքներն այնտեղ, քո կյանքի ընթացքում, իսկ Ղազարոսն էլ՝ չարչարանքները, այժմ սա այստեղ մխիթարվում է, իսկ դու այդտեղ պապակում ես» (Ղուկաս ԺԶ 19-25):*

*Տեսա՞ր, եղբա՛յր, թե ինչ գեղեցիկ կերպով Քրիստոս զգուշացրեց և հայտնեց մեզ, որ իր ունեցվածքին ապավինող և դրանով հպարտացող, աղքատին չողորմող, ուտել-խմելով իր մարմինը գիրացնող, իր կյանքը միշտ ուրախությամբ ու փափկությամբ անցկացնող, բայց ի վերջո իր ունեցվածքն այստեղ թողնող ու հանդերձյալ կյանք գնացող մարդկանց վախճանը որքան խղճուկ է, որ նա մնում է մի կաթիլ ջրի կարոտ: Ինչպես վերը ասացինք. «Այստեղ խնդացողը այն աշխարհում պիտի լա, իսկ այստեղ իր մեղքերի վրա լացողը այն աշխարհում պիտի խնդա»:*

**Հարց.** *Այդ դեպքում ի՞նչ պիտի անեմ, ի՞նչ խրատ ես տալիս:*

**Պատասխան.** *Խրատն արդեն Քրիստոս տվել է, որ եթե պահես, շատ ուրախ պիտի լինես թե՛ այս և թե՛ այն աշխարհում:*

**Հարց.** *Ի՞նչ խրատ է տվել Քրիստոս:*

Պատասխան. «Գանձեր մի՛ դիզեք ձեզ համար երկրի վրա, ուր ցեց և ժանգ ոչնչացնում են, և ուր գողերը պատերն են ծակում ու գողանում, այլ գանձեր դիզեցե՛ք ձեզ համար երկնքում, որտեղ ո՛չ ցեց և ո՛չ ժանգ չեն ոչնչացնում, և ո՛չ էլ գողերը պատերն են ծակում ու գողանում. քանի որ ուր ձեր գանձերն են, այնտեղ և ձեր սրտերը կլինեն» (Մատթեոս Զ 19-21):

Հարց. Այդ դեպքում ունեցվածքս ինչպե՞ս երկինք ուղարկեմ, մի՞թե երկինք գնացող քարավան կա:

Պատասխան. Այո՛, երկինք գնացող քարավանը երկրում ճամփորդող քարավանից շատ է. որովհետև պատահում է, որ մի քաղաքից մյուսը գնացող փոխադրամիջոց չի լինում, որի հետևանքով վաճառականի բեռները մնում են տեղում, բայց երկինք գնացող ճամփորդը երբեք պակաս չէ, թե ժամանակ գտնես, կարող ես միշտ էլ ունեցվածքդ ուղարկել:

Հարց. Ովքե՞ր են երկնքի ճամփորդները:

Պատասխան. Աղքատները, խեղճերը, կույրերը, մերկերն ու կաղերը. եթե ունեցվածքդ նրանց հանձնես, նրանք անվնաս կերպով կտանեն և կհանձնեն Քրիստոսին: Այնտեղ կպահվի ունեցվածքդ և ահեղ դատաստանի օրը ետ կվերցնես:

Հարց. Բայց, եղբա՛յր, քո նշած մարդիկ հողի վրա վստահ չեն կարող քայլել, այդ ինչպե՞ս պիտի կարողանան իմ ունեցվածքը երկինք տանել:

Պատասխան. Այդ խեղճերը քո ունեցվածքը ոչ թե պիտի չալակեն ու երկինք բարձրանան, այլ այստեղ կուտեն և կհագնեն, բայց Քրիստոս, այդ ամենն Իրենը համարելով, դատաստանի օրը կհատուցի քեզ:

Հարց. Ուրեմն աղքատներին տվածս Քրիստոս պիտի ընդունի՞:

Պատասխան. Անկասկած, կընդունի, եթե հեռու մնաս մեղքերից: Դիցուք, եթե դու մեկին փոխանակագիր տաս, և այդ մարդը քո կարգադրած տեղը քո փոխարեն վճարի, դու մի՞թե չես ընդունի փոխանակագիրը: Աստծուն փոխ տվածիդ մասին Սողոմոն իմաստունը գրում է. «Աղքատին ողորմություն տվողը փոխ է տալիս Աստծուն, և ըստ նրա տվածի էլ Աստված պիտի հատուցի նրան...: Բայց եթե ասես. «Ես նրան չեմ ճանաչում, ոչ էլ նա՝ ինձ»,- ապա իմացի՛ր, որ Տերը ճանաչում է բոլորի սրտերը. և Նա, որ ստեղծեց բոլորի շունչը, ճանաչում է բոլորին և յուրաքանչյուրին հատուցելու է ըստ նրա գործերի» (Առակ. ԺԹ 17, ԻԴ 12):

Հարց. Աղքատներին տվածս, որ ընդունում է Քրիստոս, դու ինձ բացատրեցիր փոխանակագրի օրինակով, ուրեմն երկնային գործերն է՞լ են աշխարհիկ գործերին նմանեցնում:

Պատասխան. Բացատրածս քո հարցին պատասխանելու համար ընտրված մի օրինակ էր, բայց երևում է, որ դու միտքը չես ըմբռնել, ուստի ավելի պարզ ասեմ Քրիստոսի խոսքով. «Գնա՛, վաճառի՛ր քո ունեցվածքը ու տո՛ւր աղքատներին և երկնքում գանձեր կունենաս» (Մատթեոս ԺԹ 21): Եթե Իր հրամայածի պես վարվենք, մի՞թե չի ընդունի և չի տա խոստացվածը:

Հարց. Իսկ ի՞նչ է խոստացել Քրիստոս:

Պատասխան. Դատաստանի օրը Քրիստոս արդարներին պիտի ասի. «Քաղցած էի, և Ինձ ուտելիք տվիք, ծարավ էի, և Ինձ ջուր տվիք... մերկ էի, և Ինձ հագցրիք» (Մատթեոս ԻԵ 35-36), իսկ նրանք պիտի հարցնեն. «Տե՛ր, ե՞րբ տեսանք Քեզ քաղցած ու կերակրեցինք կամ ծարավ և ջուր տվեցինք... կամ մերկ և հագցրինք» (Մատթեոս ԻԵ 37-38):

Այդ ժամանակ Քրիստոս պիտի պատասխանի. «Քանի որ Իմ այս փոքր եղբայրներից մեկին արեցիք, այդ Ի՛նձ համար արեցիք» (Մատթեոս ԻԵ 40):

Համոզվեցի՞ր, որ երկինք գնացող քարավանը աղքատներն են:

Հարց. Այդ ամենը հասկացա, բայց խոսքիդ մեջ նշեցիր, թե եթե ունեցվածքդ աղքատների ձեռքով երկինք ուղարկես, շատ ուրախ պիտի լինես: Այսքան աշխատանքով ձեռք բերած ունեցվածքս ինչպե՞ս աղքատներին տամ և ուրախ լինեմ, երբ իմ հույսն այդ ունեցվածքի վրա է, իսկ խելքս ու միտքս գիշեր-ցերեկ սևեռված է դրա վրա: Այդ ինչպե՞ս կարող եմ այն աչքիս առջևից հեռացնել և ուրախ լինել:

Պատասխան. *Իմանալով հանդերձ, որ քո սիրտն ու միտքը ունեցվածքովդ է զբաղված, Քրիստոս քեզ հրամայում է, որ այդքան սիրելի ինչքդ երկինք ուղարկես, որ սիրտդ ու միտքդ նրա հետ երկինք բարձրանան, որ միշտ խորհես երկնքի արքայության մասին և նրա մասին խոսես, ինչպես Պողոս առաքյալն է ասում. «Վերին բաների մասին խորհեցեք և ո՛չ թե այն, որ այստեղ՝ երկրի վրա է» (Կողոս. Գ 2): Տեսա՞ր, որ մեր միտքը միշտ երկնքում պիտի լինի:*

Հարց. *Իմ խելքը դրանից բան չի կտրում, քանի որ չտեսած տեղս ինչպե՞ս պիտի մտաբերեմ և խորհեմ:*

Պատասխան. *Շիտակ ասացիր, որ չտեսած տեղի մասին չես կարող խորհել, քանզի դու երկինքը չես տեսել և ոչ էլ ունեցվածք ես ուղարկել այնտեղ, որպեսզի այդ առիթով երկինքը մտաբերեիր, թե ի՛նչ եղավ ունեցվածքս: Բայց ես քեզ մի աշխարհիկ օրինակ բերեմ:*

*Այս աշխարհում շատ մեծ և փառավոր քաղաքներ կան թե՛ Եվրոպայում և թե՛ Ասիայում, ինչպես Լոնդոնը, Փարիզը, Կոստանդնուպոլիսը, Դամասկոսը և այլն: Եթե այս փառավոր քաղաքներում առևտուր չունենաս, այլ մի փոքրիկ գյուղում շատ ապրանք ունենաս և առևտուր անես, ի՞նչ ես կարծում, քո միտքը հիշյալ փառավոր քաղաքները պիտի հիշի, թե այն փոքրիկ գյուղը:*

Հարց. *Հարցն ավելորդ է: Պարզ է, թե որտեղ որ ապրանքս է, այնտեղ էլ պիտի միտքս լինի, իսկ այն քաղաքները, որտեղ ապրանք չունեմ, ինչո՞ւ պիտի մտաբերեմ:*

Պատասխան. *Ճիշտ էր պատասխանդ: Ուստի, երբ քո ունեցվածքը աղքատների միջոցով երկինք առաքես ու այնտեղ պահ տաս, նախ և առաջ երկյուղդ կվերանա, չես վախենա ո՛չ գողից և ո՛չ էլ ցեցից, ո՛չ ջրից և ո՛չ էլ կրակից, ո՛չ բռնավորից և ո՛չ էլ զրպարտողներից, որովհետև Քրիստոս վկայեց. «Ո՛չ ցեցը կարող է ուտել, և ոչ էլ գողերը կարող են գողանալ» (Մատթեոս Զ 20): Եվ երբ երկնքի արքայությունը մտաբերես, խիստ կուրախանաս այնտեղի ունեցվածքիդ համար: Մահից նույնպես երկյուղ չես ունենա, քանզի ա՛յն մարդն է վախենում մեռնելուց, ով ունեցվածք և հույս չունի երկնքում, և մահանալուց տխրում է, որ պիտի բաժանվի այս աշխարհի իր սիրելի ունեցվածքից, որի վրա էր դրել իր հույսը: Գիտե, որ մերկ պիտի գնա այստեղից, դրա համար էլ, երբ մահվան մասին լսում է, կարծես աշխարհը փուլ է գալիս իր գլխին: Բայց եթե դու այն խելացի թագավորի պես ունեցվածքդ քեզանից առաջ երկինք առաքես, ապա այս աշխարհում ինչ փորձությունների էլ հանդիպես, ինչպես, օրինակ՝ հիվանդություն, աղքատություն, ձախորդություն և այլն, դու ամենևին չես տրտմի, որովհետև այս աշխարհի թե՛ հարստությունը, թե՛ աղքատությունը, թե՛ ցավը, տրտմությունն ու ուրախությունը, բոլորն էլ անցավոր են և վերջ պիտի ունենան, մահն է, որ խափանում է այդ ամենը, իսկ այն աշխարհը հավիտենական է և վերջ չունի: Տեսնելով, որ հավիտենականության մեջ ունեցվածք ունես, ուրախանում ես մտքով և ցանկություն ունես, որ առաջ գնաս վարձքդ ստանալու, փառքդ ժառանգելու և վայելելու: Ինչպես Պողոս առաքյալն է գրում. «Հաճելի է մեզ դուրս գալ այս մարմնից և մտնել Աստծու մոտ» (Բ Կորնթ. Ե 8): Տե՛ս, թե ինչպես է Պողոս առաքյալը բաղձում դուրս գալ մարմնից, որովհետև հույս ունի երկնքում:*

Հարց. *Եղբա՛յրս, ինչքան գիտեմ, Պողոսը մի աղքատ մարդ էր, ունեցվածք էլ չուներ, որ երկինք առաքեր, դրա համար էլ հույսով ուզում էր մեռնել:*

Պատասխան. *Պողոս առաքյալի ունեցվածքն ամենից շատն էր, որովհետև մի կարծիր, որ երկինք առաքվելիք ապրանքը միայն ոսկին է, արծաթը կամ երևելի զգեստները, որ աղքատները չունեն: Եթե այդպես լիներ, ուրեմն բոլոր հարուստ մարդիկ արքայություն պիտի գնային, իսկ աղքատներից ոչ մեկը ոտք չպիտի դներ այնտեղ: Բայց իրականում այդպես չէ, որովհետև օրվա հացի կարոտ աղքատն անգամ երկինք առաքվելիք ունեցվածք ունի:*

Հարց. *Ո՞րն է աղքատի երկինք առաքվելիք ունեցվածքը:*

**Պատասխան.** Նախ՝ որ իրենց աղքատությունը հոժարությամբ և սիրով հանձն առնելով՝ գոհ լինեն Աստծուց, չնեղվեն, չդժգոհեն, թե ինչո՞ւ է Նա իրենց այդ վիճակի մեջ դրել: Երկրորդ՝ հեռու մնալ մեղքից: Երրորդ՝ ծոմ և պահք պահել: Չորրորդ՝ աղոթք անել: Հինգերորդ՝ ադետին խրատելով հեռու պահել մեղքից: Վեցերորդ՝ համբերել բոլոր նեղություններին և այլն: Ահա սրանք են առանց դրամի երկինք առաքվելիք բարեգործական ապրանքները, և Պողոս առաքյալը այս ամենն ունենալով էր, որ ցանկություն ուներ դուրս գալու իր հողեղեն մարմնից: Այժմ էլ դու, եթե ունեցվածքդ ըստ քո կարողության բաշխես կարոտյալներին, հեռու մնաս մեղքից, ստեպ-ստեպ ծոմ ու պահք պահես, աղոթք անես, մեղսասեր մարդկանց խրատելով նրանց հեռու պահես մեղքից, բարեգործություն անելով անթերի կատարես Աստծու բոլոր պատվիրանները, Պողոսի պես կձգտես հասնելու երկնքի արքայության ուրախությանը:

**Հարց.** Աստված ինչպիսի՞ վարձ պիտի տա. չլինի թե այստեղ մեր ոսկին վերցնի, իսկ այնտեղ փոխարենը փտած ու անպետք դրամ տա: Խնդրում եմ, սա՛ էլ բացատրիր:

**Պատասխան.** Մի՛ վախեցիր, ոչ թե փտած դրամ կտա, այլ այստեղի քո փտած դրամի փոխարեն այնտեղ քեզ ճշմարտապես կվարձատրի, պղնձի փոխարեն ոսկի կտա, քո հին զգեստի փոխարեն լուսեղեն զգեստներ կհագցնի, քեզնից հացի փշրանք վերցնելով՝ կյանքի հացը կտա, քեզնից մի բաժակ սառը ջուր կվերցնի, բայց փոխարենը անմահական ջրից կխմեցնի: Երբ այստեղ մի կույր մարդու ձեռքից բռնած՝ ճանապարհ անցկացնես, Աստված էլ ձեռքդ բռնած քեզ արքայություն կտանի: Ծոմապահության փոխարեն Կենաց ծառի պտուղից կկերակրի քեզ: Ահա քեզ տրվելիք ունեցվածքը:

# Հ ա վ ի դ   Ի Ը

**Հարց.** Շատ գարշելի բան է հպարտությունը, որ մարդուն սատանայի է նմանեցնում: Շնորհակալ եմ քեզնից, որ ինձ բացատրեցիր այդ ամենը, սրանից հետո չպիտի հպարտանամ, որ չնմանվեմ սատանային:

**Պատասխան.** Շատ լավ է, որ չես հպարտանալու և սատանային չես նմանվելու, բայց սրա նման երկու այլ գարշելի մեղքեր կան էս, որոնք մարդ արարածին նմանեցնում են սատանային: Եթե դրանցից չհրաժարվես, այլ միայն հպարտությունից հեռու մնաս, դարձյալ սատանայի որոգայթում կհայտնվես, որովհետև ճնճղուկը, եթե ոչ թե երկու ոտքով, այլ մեկ ոտքով ծուղակ ընկնի, միևնույն է չի կարող փախչել: Գլխավորը սատանայի ծուղակը չընկնելն է:

**Հարց.** Որո՞նք են այդ մեղքերը:

**Պատասխան.** Առաջին՝ նախանձը, սա նույնպես սատանայի հնարքն է, ինչպես հպարտությունը, այս է պատճառը, որ նախանձ մարդը սատանայից ոչնչով չի տարբերվում: Քանի որ սատանան հպարտանալով զրկվեց իր լուսեղեն փառքից և անմիջապես նախանձեց Ադամի փառքին: Նա ամեն բան արեց, որ Ադամին նույնպես զրկի փառքից և բոցեղեն սրով այս փչալից երկիրը աքսորեց, ու մարդը մահվան վճիռ ստացավ, ինչպես Սողոմոնն է ասում. «Մահը աշխարհ է եկել բանսարկուի նախանձով» (Իմաստ. Բ 24):

**Հարց.** Իսկ ո՞րն է նախանձը:

**Պատասխան.** Երբ տրտմում ես ընկերոջդ հաջողության վրա, իսկ ձախորդության վրա ուրախանում: Այսինքն՝ ընկերոջդ ունեցվածքի, զավակների, առևտրի հաջողության կամ ունեցած պատվի ու գիտության և մնացած օգտակար բաների վրա տրտմելն ու հոգ անելը նախանձություն է: Հակառակ պարագայում նմանապես նախանձություն է ընկերոջդ զավակ չունենալու կամ զավակի կորստյան, ունեցվածքի գողության, առևտրի ձախորդության ու անպատիվ լինելու կամ փորձանքի հանդիպելու, հիվանդանալու ու նրա գլխին եկած բոլոր պատուհասների վրա խնդալն ու ուրախանալը: Այս ամենը նախանձություն է, և այս հատկանիշներով մարդը ոչ մի տարբերություն չունի սատանայից:

*Երկրորդ մեղքն էլ բամբասանքն է, որը նույնպես սատանայի հնարքն է: Քանի որ սատանան, նախանձելով Ադամի փառքին, օձի միջնորդությամբ մեր նախամայր Եվային ասաց. «Ինչո՞ւ Աստված ասաց, թե դրախտում գտնվող բոլոր ծառերի պտուղներից չեք կարող ուտել»: Կինն ասաց օձին. «Դրախտի ծառերի պտուղներից կարող ենք ուտել: Սակայն դրախտի մեջտեղի ծառի պտղի համար Աստված ասաց. «Դրանից չուտեք և չմոտենաք, որպեսզի չմեռնեք» (Ծննդ. Գ 2-3): Սատանան երբ այս պատասխանը լսեց, հասկացավ, որ Ադամն ու Եվան հնազանդ են Աստծուն և Նրա պատվիրանը պահելով՝ չեն ճաշակելու արգելված պտուղը, ուստի սկսեց բամբասել Աստծուց՝ ասելով. «Ձեզ մահ չկա, որովհետև Աստված գիտեր, որ այն օրը, երբ դրանից ուտեք, կբացվեն ձեր աչքերը, և դուք կլինեք աստվածների նման. կիմանաք բարին ու չարը» (Ծննդ. Գ 4-5): Դրա համար Աստված ձեզ պատվիրեց, որ չուտեք, որպեսզի ձեր աչքերը չբացվեն:*

Հարց. *Տե՛ս, թե որքան չար բան է սատանայի արարքը:*

Պատասխան. *Սատանայի հանցանքը տեսնում ես, բայց մի՞թե դու չես բամբասում:*

Հարց. *Չբամբասող մարդ շատ քիչ կա, ճիշտ է, ես էլ եմ բամբասում, բայց այն շատ տարբեր է սատանայի բամբասանքից:*

Պատասխան. *Այդ ինչպիսի՞ն է քո բամբասանքը, որով տարբերվում ես սատանայից:*

Հարց. *Սատանան բամբասեց Աստծուց, քավ լիցի, որ ես նման բան անեմ, ես ինչպե՞ս կարող եմ բամբասել Աստծուց: Ես միայն բամբասում եմ ինձ նման մարդկանցից:*

Պատասխան. *Կարծում եմ, որ այն որպես մեղք չի էլ անցել մտքովդ, ինչպես հպարտության պարագայում: Երևում է՝ վախ չունես բամբասանքից:*

Հարց. *Վախ ամենևին չունեմ, բայց մի՞թե մարդ բամբասելը Աստված բամբասելուն հավասար պիտի դասես:*

Պատասխան. *Ոչ մի տարբերություն չկա՝ մարդու մասին ես բամբասել, թե՞ Աստծու, նույն բանն է: Որովհետև Աստված Իր պատկերով ստեղծեց մարդուն, դրա համար էլ մարդկանց ուղղված անարգանքը Աստծուն է ուղղված: Հաճախ է պատահում, որ պետական կամ թագավորական դրամ անարգողը մահվան է դատապարտվում կամ էլ կրում է համապատասխան պատիժ, որովհետև այդ դրամի վրա տպված է թագավորի պատկերը և կամ էլ անունը, իսկ մարդկանց վրա Աստծու պատկերից բացի Քրիստոսի անունը նույնպես կա, այս է պատճառը, որ Պողոս առաքյալն ասում է. «Ով անարգում է այս բանը, մարդո՛ւն չի անարգում, այլ Աստծուն» (Ա Թեսաղ. Դ 8):*

Հարց. *Ես հենց այնպես չեմ բամբասում որևէ մեկին, չեմ զրպարտում որևէ մարդու. բայց երբ մեկը վատ բան անի, դառնում է իմ բամբասանքի առարկան, մի՞թե սա վնասակար է:*

Պատասխան. *Լսի՛ր Պողոսին. «Ո՛վ մարդ, դո՛ւ, որ դատում ես, չես արդարանալու այն բանի համար, որ ընկերոջդ ես դատում, դրանով իսկ ինքդ քեզ ես դատապարտում, քանի որ դու նույնն ես անում, ինչի համար որ դատում ես նրան: Քանզի գիտենք, որ Աստծու դատաստանը ճշմարտությամբ է գործադրվում նրանց նկատմամբ, ովքեր այդպիսի բաներ են գործում: Իսկ արդ, ո՛վ մարդ, որ դատում ես նրանց, ովքեր այդպիսի բաներ են գործում, և դու էլ նույնն ես գործում, կարծո՞ւմ ես, թե ազատվելու ես Աստծու դատաստանից» (Հռոմ. Բ 1-3): Տեսնո՞ւմ ես, որ եթե նույնիսկ ասածդ ճիշտ էլ լինի, չես կարող բամբասել, որովհետև ուրիշին բամբասելով՝ դու քեզ արդար պիտի ձևացնես այլոց աչքում, որը Քրիստոս կոչում է կեղծավորություն. «Ինչո՞ւ քո եղբոր աչքի մեջ շյուղը տեսնում ես, իսկ քո աչքի մեջ գերանը չես տեսնում. կամ ինչպե՞ս քո եղբորն ասում ես՝ թո՛ղ, որ հանեմ այդ շյուղը քո աչքից, և ահա քո աչքում գերան կա: Կեղծավո՛ր, նախ հանի՛ր քո աչքից այդ գերանը և ապա հստակ կտեսնես՝ քո եղբոր աչքից շյուղը հանելու համար» (Մատթեոս Է 3-5):*

Հարց. Ով ինձ չդիպչի, ես ոչինչ չեմ անի նրան, բայց ով իմ անունը վարկաբեկի ու բամբասի, ես էլ իմ ողջ կարողությամբ կփնովեմ ու կբամբասեմ նրան: Մի՞թե սա վնաս է:

Պատասխան. Վերհիշենք ԺԱ Շավիղում ասված Քրիստոսի խոսքը. «Չարին մի՛ հակառակվիր» (Մատթեոս Ե 39), եթե այս խոսքին չես հավատում, ամենամեծ վնասն է: Եվ եթե քեզ սիրողներին սիրես, բայց ատողներին ատես, քեզ գովաբանողներին գովես, բայց բամբասողներին բամբասես, այլևս որտեղի՞ց պիտի հայտնի լինի քո քրիստոնյա լինելը: Չէ՞ որ քո արածն անհավատներն էլ են անում, ինչպես որ Քրիստոս վկայեց, և Պետրոս առաքյալն էլ է հաստատում. «Չարի փոխարեն չար մի՛ հատուցեք կամ նախատինքի փոխարեն՝ նախատինք, այլ ընդհակառակը, օրհնեցե՛ք, որովհետև այդ բանին իսկ կոչվեցիք, որպեսզի ժառանգեք օրհնությունը» (Ա Պետրոս Գ 9): Եվ Պողոս առաքյալը նույնպես մի քանի տեղ Պետրոսի նման գրում է. «Չենք կարող բամբասել մեզ բամբասողներին, ո՞ւր մնաց մեզ չբամբասողներին»:

Հարց. Շատ լավ, ինձ չբամբասողին չեմ բամբասի, անունս չվարկաբեկողին չեմ վարկաբեկի, բայց ինձ բամբասողին ու անունս վարկաբեկողին ինչպե՞ս համբերեմ:

Պատասխան. Դու հիմա Քրիստոսի հավատացյալ աշակերտն ես, Քրիստոս հրամայել է. «Ինձ հավատացողն իմ ետևից պիտի գա», և դու՝ որպես Քրիստոսի աշակերտ, պետք է նրա շավիղով ընթանաս, որպեսզի նրա մոտ հասնես: Հիսուս հրեաների բոլոր նախատինքներին ու բամբասանքներին համբերեց, ուրեմն դու էլ պարտավոր ես համբերել ուրիշի բամբասանքին:

Հարց. Իսկ Քրիստոսին ինչպե՞ս բամբասեցին:

Պատասխան. Ո՛չ միայն դիվահար, կախարդ, սամարացի[8] անվանեցին, այլ նաև ասացին, որ դիվական իշխանությամբ է հանում դևերին: Մենք գիտենք, որ այս ամենը հերյուրանք էր և սուտ, բայց Ինքը համբերեց և փոխարենը ոչ մի կերպ չվատաբանեց ու չբամբասեց: Ինչպես որ Պետրոսն է ասում. «Նա, որ նախատվելով փոխարենը չնախատեց, չարչարվելով՝ չսպառնաց» (Ա Պետրոս Բ 23): Վերոհիշյալ այս երեք մեղքերը՝ հպարտությունը, նախանձը և բամբասանքը, սատանայի հնարքն ու արվեստն են, որովհետև ինքն է ստեղծել, և չնայած այն բանին, որ բոլոր մեղքերի պատճառն ինքն է, բայց այս երեք մեղքերից բացի այլ մեղքեր ինքը չի գործում, այլ ուրիշին է գործել տալիս: Իսկ այս երեք մեղքերն ինքը հնարեց, գործեց և սովորեցրեց ուրիշներին, դրա համար էլ այս երեք մեղքերից որին էլ ձեռք մեկնես, անշուշտ սատանային կնմանվես, հետևաբար սատանայի բնակարանի՝ մութ ու խավար դժոխքի բնակիչը կլինես:

# Շավիղ ԻԹ

Հարց. Կարծում եմ, այս բոլորը սովորեցի և այսուհետև ես՝ ինքս, կարող եմ ուրիշին խրատ տալ:

Պատասխան. Շատ լավ, տո՛ւր քո խրատը, բայց ամենից առաջ դու՝ ինքդ, պիտի պահես այդ խրատը և ապա նոր քարոզես: Եվ եթե դու չպահես և ուրիշին խրատես, Պողոս առաքյալը կհանդիմանի քեզ. «Իսկ արդ դու, որ ուսուցանում ես ընկերոջդ, ինքդ քեզ չես ուսուցանում. քարոզում ես չգողանալ, գողանում ես. ասում ես չշնանալ, շնանում ես» (Հռոմ. Բ 21-22): Ուստի ամենից առաջ դու ես պարտավոր պահել և ապա ուրիշին սովորեցնել:

Հարց. Դա չգիտեի, եթե այդպես է, ես ուրիշին չեմ քարոզի, եթե ես միայն իմ փրկության համար հոգամ, բավական է, քանի որ դեռ ինքս կարոտ եմ խրատի: Ուրիշ ի՞նչ զգուշացումներ կան:

Պատասխան. Քրիստոնյան ամեն ինչով պիտի տարբերվի անհավատներից, ինչպես Պետրոսն է ասում. «Ցույց տաք ձեր պարկեշտ վարքը հեթանոսների մեջ» (Ա Պետրոս Բ 12): Ասել է թե,

քրիստոնյայի ոչ մի գործը չպիտի նմանվի անհավատի արած գործին, թե՛ զգեստ, թե՛ զրույց և մանավանդ լեզուն մաքուր պահել ամեն տեսակի աղտեղի խոսքերից:

**Հարց.** Իսկ ինչո՞ւ պետք է քրիստոնյայի բերանն այդքան զգուշավոր լինի:

**Պատասխան.** Քրիստոնյայի բերանը ամենասուրբ Աստծու ճանապարհն է, Տերն այնտեղից պիտի մտնի և բնակվի մեր սրտի մեջ[9]:

**Հարց.** Այդ ամենը հասկացա, բայց զարմացած խորհում եմ, թե ինչպե՞ս կարող ենք ամենազոր Աստծու բնակարան դառնալ:

**Պատասխան.** Եթե խորին մտքով զննենք, իրոք, երկյուղալի և անհնարին բան է, բայց Աստված, ողորմած և մարդասեր լինելով, չի խորշում մեր սրտում բնակվել, եթե այն մաքուր է:

**Հարց.** Այդ ես հասկացա: Ուրիշ ի՞նչ զգուշացում ունես:

**Պատասխան.** Բայց ի՞նչ հասկացար, երբ լեզվի վերաբերյալ զրույցը նոր ենք սկսել:

**Հարց.** Կարծեցի, թե լեզվի մասին զրույցն ավարտվեց, դրա համար ուզում էի այլ հարց տալ:

**Պատասխան.** Որքան էլ երկար խոսենք, դժվար թե կարողանամ սպառել լեզվի անկարգ վարմունքի նկարագրությունը: Բայց որպեսզի չձանձրացնեմ, հիշենք միայն, որ Հակոբոս առաքյալը մեր լեզուն նմանեցնում է կրակի, որը պահում ես բերանիդ մեջ և չես վախենում, որ կայրես բերանդ: Կարծում եմ, որ այս մասին չգիտեիր, այլապես լեզուդ կկտրեիր և մի կողմ կնետեիր:

**Հարց.** Այդ ինչպե՞ս լեզուն պիտի այրի բերանը, որ վախենամ:

**Պատասխան.** Հակոբոսն ուսուցանում է քեզ. «Լեզուն էլ կրակ է, մի աշխարհ անիրավության, մեր անդամների մեջ է հաստատված լեզուն, որ ապականում է ամբողջ մարմինը և կրակով վառում մեր ամբողջ կյանքը՝ բորբոքված գեհենի կրակով» (Հակոբոս Գ 6):

**Հարց.** Բայց ինչո՞ւ է լեզուն կրակի նմանեցնում, չէ՞ որ այն միշտ խոնավ ու թաց է, իսկ նման միջավայրում կրակ չի պահվում: Չեմ հասկանում:

**Պատասխան.** Մի օրինակ բերեմ, որ հասկանալի լինի: Ժամանակին կրակ էին ստանում կայծքարից: Եթե կայծքարը ջրի մեջ գցես, նրա կրակ տալու հատկությունը չի կորչի, երբ ջրից հանես և հրահանով խփես, կրակ կարձակի իրենից: Այն կարող ես կրել նաև ծոցդ դրած, թեպետ ունի կրակ տալու հատկություն, այսպես էլ լեզուն է, որի համար Հակոբոս առաքյալն ասում է. «Ահա թե մի փոքր կրակ ինչպիսի՜ անտառներ է հրդեհում» (Հակոբոս Գ 5): Լեզուն կայծքարի նմանությամբ կրակով լեցուն մեր բերանի մեջ է, իր կրակը չի երևում և որևէ վնաս չի գործում, բայց երբ մեկն իր մոտ գա և անվայել խոսքով հրահանի պես նրան խփվի, իսկույն լեզվի միջից կրակ դուրս կցայտի, այն է՝ հայհոյանք, անեծք, անարգանք, բամբասանք, պիղծ ու զազիր խոսքեր, որով ապականվում է մարդու անձը:

**Հարց.** Իրոք որ. մարդ արարածն իր լեզվի ձեռքից բազում նեղություններ է քաշում և չատ փորձանքների է հանդիպում:

**Պատասխան.** Երանի թե այս աշխարհում մարդիկ լեզվի պատճառով նեղություններ տեսնելուց հետո մահից հետո ազատվեին, բայց այդպես չէ, որովհետև լեզվի պատճառով այս աշխարհում նեղություններ կրելուց հետո մարդն այդ նույն պատճառով նաև դժոխքի կրակի կերակուր է դառնում:

**Հարց.** Եղբա՛յր, հիրավի, չատ վատ բան է այդ լեզու կոչվածը:

**Պատասխան.** Ո՞ր վատ բանը նկատի ունես: Հակոբոսը վայրի գազաններից ավելի անզուսպ է համարում նրան. «Գազանների, թռչունների և սողունների ամեն տեսակ և ինչ որ կա ծովի մեջ, հնազանդված է և հնազանդվում է մարդկային բնությանը, բայց մարդկանց լեզուն՝ այդ չարը, անզսպելին և մահաբեր թույնով լցվածը, ոչ ոք չի կարող հնազանդեցնել» (Հակոբոս Գ 7-8): Իսկ Սիրաք իմաստունն էլ գրում է. «Լեզուն մի ընտանի գազան է բերանի մեջ, եթե արձակես, ինքն իրեն կուտի»:

**Հարց.** Ինչո՞ւ են լեզուն նմանեցնում գազանի:

Պատասխան. *Խնդրեմ, եթե ցանկանում ես, բացատրեմ պատճառը: Եթե մի մարդ թեկուզ շանը մի կտոր հաց կամ միս տա, այլևս նրան չի կծի և վրան չի հաչի, նույնիսկ ավելին. կսկսի շողոքորթել և պոչը շարժելով կգա, կքսվի մարդու ոտքերին: Այս անում է ոչ թե այն մարդու գեղեցիկ կամ բարի լինելու, այլ իրեն ցույց տված օգուտի համար: Բայց դարձյալ այդ նույն շանը կերակուր չտվող մեկ այլ անձ վատ է թվում, և շունը սկսում է հաչել նրա վրա, ուզում է բռնել ու կծել, մանավանդ եթե մարդը քար նետի շան վրա, այն ժամանակ նա առավել կկատաղի ու կհաչի մարդու հետևից: Նմանապես էլ մարդը, եթե մի անձնավորությունից միշտ բարություն տեսնի, իր համար հաճելի կլինի, հետը սիրով կվարվի, անուշ խոսքեր կասի և նույնիսկ կշողոքորթի, ոչ թե դիմացինի արդար և աստվածապաշտ լինելու համար, այլ իր ակնկալած օգուտի համար: Հակառակ սրան, եթե մեկից օգուտ չի տեսել, տվյալ մարդն իր աչքին լավը չի երևա և չի սիրի նրան, կարող է պատահել, որ նույնիսկ ատի, ոչ թե տվյալ մարդու մեղավոր և չար լինելու պատճառով, այլ որ իրեն ոչ մի օգուտ չի տվել: Եթե մարդկային հարաբերության մեջ իրար սիրելն ու ատելը լիներ արդարության կամ մեղավորության պատճառով, այդ դեպքում լավ վարքի տեր քրիստոնյաները վատ վարքի տեր քրիստոնյայի հետ չպիտի խոսեին կամ նրան այցելեին: Բայց այդպես չէ: Հաճախ տեսնում ենք, որ ոչ միայն վատ վարք ունեցող քրիստոնյայի, այլև անհավատների հետ, որոնցից ինչ-որ օգուտ ունեն, առավել սիրով են վարվում, քան թե հասարակ քրիստոնյայի հետ, որից օգուտ չեն տեսել: Այդպիսի մարդու չսիրած անձը, եթե մի փոքր նեղություն պատճառի իրեն, նա անմիջապես գազանի նման կկատաղի և բազում վնասներ կուզի հասցնել դիմացինին: Եվ եթե չհասնի իր մտադրությանը, կսկսի բերանով, կատաղի շան հաչելու պես վատ խոսքեր ասել, հայհոյանք, անեծք, բամբասանք և այլն:*

Հարց. *Իրոք որ մարդկային լեզուն գազանային բնություն ունի:*

Պատասխան. *Ուր էր, թե այդպես լիներ: Եթե շանը մի պատառ հաց տաս, անասունն այդ երբեք չի մոռանա: Բայց մարդն այդպես չէ, միշտ ուզում է բարություն տեսնել և եթե մի նեղություն պատահի, բոլորին ոտքի տակ կտա, նույնիսկ վրեժխնդրությամբ կլցվի:*

*Մինչդեռ, եթե շանը երբևէ մի պատառ հաց ես տվել, հետո քարով էլ որ խփես, ոխ չի պահի, այսինքն՝ մի պատառ հացը չի մոռանա: Այդ գազանը նույնիսկ չի կարող կծել կամ վնասել մարդկանց, որոնք իր մոտ չեն: Այնինչ, մարդկային լեզուն իրենից հեռու և նույնիսկ իր չտեսած մարդկանց կարող է կծել: Իր տանը նստած կարող է բամբասել իր աչքից հեռու մարդկանց՝ վարկաբեկելով նրանց անունը, անբուժելի վերքեր բացելով նրանց սրտերում: Շունը շան միս չի ուտում, բայց մարդիկ իրար ուտում են:*

Հարց. *Երբևէ չեմ լսել, որ մարդը մարդ ուտի:*

Պատասխան. *Եթե չես լսել, ապա Պողոս առաքյալից կլսես. «Իսկ եթե միմյանց խածոտեք և հոշոտեք, զգո՛ւյշ եղեք, գուցե միմյանց ոչնչացնեք» (Գաղատ. Ե 15): Սիրաքի խոսքն էլ լսիր. «Եթե լեզուն թող տա, ինքն իրեն կուտի»: Ահա Պողոսի և Սիրաքի վկայությունները լեզվի խածանող լինելու մասին:*

Հարց. *Խելքիս չի հասնում, թե ինչպես կարող է լեզուն մարդուն վերք պատճառել, չէ՞ որ վերքը թրով, դանակով, նիզակով կամ էլ, ծայրահեղ դեպքում, ատամներով է հնարավոր հասցնել, մինչդեռ լեզուն փափուկ միս է, ինչպե՞ս կարող է վիրավորել:*

Պատասխան. *Տե՛ս, թե մարդկային լեզուն ինչի է նմանեցնում Դավիթ մարգարեն. «Մարդկանց որդիների ատամները զենք և նետ են, իսկ նրանց լեզուները՝ ինչպես սուր սուսեր» (Սաղմոս ԾԶ 5): Իսկ Սողոմոնը գրում է. «Մարդիկ կան, որ իրենց խոսքով խոցում են թրի պես» (Առակ. ԺԲ 18): Թուրն ու դանակը չեն կարող լեզվի չափ վերքեր բացել, որովհետև այս առարկաները, երբ դիպչում են մարմնին, նոր են վիրավորում, իսկ լեզուն չդիպչելով և նույնիսկ չտեսած մարդկանց սիրտը կարող է այնպես վիրավորել, որ երբեք չբժշկվի:*

*Այնինչ երկաթյա գործիքների առաջացրած վերքերը վիրաբույժը կարող է բժշկել: Իսկ լեզվի առաջացրած վերքը նույն այդ վիրավորող լեզուն հազիվ թե կարողանա բժշկել, ինչպես Պողոսն է գրում. «Եթե ե՛ս տրտմեցնեմ ձեզ, էլ ո՞վ է, որ կուրախացնի ինձ, եթե ոչ նրանք, որոնց տրտմություն պատճառեցի ես» (Բ Կորնթ. Բ 2):*

**Հարց.** *Ես մինչ այժմ չգիտեի լեզվի այդչափ չարագործությունների մասին, շնորհակալություն, որ հայտնեցիր ու բացատրեցիր: Ուրիշ ի՞նչ չարիքներ ունի:*

**Պատասխան.** *Ո՞ր մեկ անկարգությունը պատմեմ: Ինքը փոքրիկ մի բան է, բայց իր կարողությունից վեր մեծամեծ բաներ է խոսում, ինչպես Հակոբոս առաքյալն է վկայում մի շատ երկյուղալի խոսքով. «Նրանով օրհնում ենք Տիրոջը և Հորը և նրանով անիծում ենք մարդկանց, որ ստեղծվեցին Աստծու նմանությամբ» (Հակոբոս Գ 9): Եվ զարմանքով հարցնում. «Մի՞թե մի աղբյուր նույն ակից քաղցր և դառը ջուր կբխեցնի» (Հակոբոս Գ 11): Նաև Սիրաքն ասում է. «Մեկն աղոթում է, և մյուսն՝ անիծում. ո՞ւմ ձայնը կլսի Տերը» (Սիրաք ԼԱ 29): Դրա համար էլ Քրիստոս հրամայում է. «Մարդիկ իրենց խոսած ամեն դատարկ բանի համար դատաստանի օրը հաշիվ պիտի տան, որովհետև քո խոսքերով պիտի արդարանաս և քո խոսքերով պիտի դատապարտվես» (Մատթեոս ԺԲ 36-37): Իսկ Սողոմոնն ասում է. «Մահն ու կյանքը լեզվի ձեռքին են», և կրկին անգամ հիշեցնում. «Մարդուս շրթունքները խիստ որոգայթ են իր համար, և մարդ բռնվում է իր բերանի խոսքով» (Առակ. Զ 2): Տեսա՞ր, եղբա՛յր իմ, ո՛չ միայն Հակոբոս առաքյալը, այլև Քրիստոս, Սողոմոնն ու Սիրաքը վկայում են լեզվի վնասակարության մասին: Այս առիթով Հակոբոսն ասում է. «Եթե մեկը խոսքով չի մեղանչում, նա կատարյալ մարդ է» (Հակոբոս Գ 2): Պողոս առաքյալն էլ զգուշացնելով գրում է. «Ոչ մի տգեղ խոսք ձեր բերանից թող չելնի» (Եփես. Դ 29):*

**Հարց.** *Շա՛տ լավ: Մեր լեզվի վնասակարության մասին իմացանք, բայց Քրիստոս ինչո՞ւ է ասում. «Մարդիկ իրենց խոսած ամեն դատարկ բանի համար դատաստանի օրը հաշիվ պիտի տան, որովհետև քո խոսքերով պիտի արդարանաս և քո խոսքերով պիտի դատապարտվես» (Մատթեոս ԺԲ 36-37): Այդ ի՞նչ դատարկ խոսքեր են, որոնց համար հաշիվ պիտի տանք:*

**Պատասխան.** *Ընդունենք, թե ես ու դու կռվում ենք, մեկս մյուսին շատ վատ խոսքեր ասում, կողքից նայողներից ոմանք ինձ են պաշտպանում՝ ասելով. «Շա՛տ լավ, խոսքով տեղը դրեց, ապրե՛ս», իսկ մյուսները քեզ են պաշտպանում ու քաջալերում: Իմացի՛ր, որ ինձ պաշտպանողներն ու գովասանքի խոսք ասողները ինձ հետ, իսկ քեզ գովողները քեզ հետ դժոխք են գնալու: Կամ էլ ես շատ վատ բառեր եմ ասում քեզ, բայց դու, սրտիդ մեջ Աստծու երկյուղ կրելով, ինձ ոչ մի պատասխան չես տալիս: Այս դեպքում կլինեն մարդիկ, որ կթքեն երեսիդ ու կասեն. «Բա՛, դու մարդ ե՞ս, ո՞նց կուլ տվեցիր այդ խոսքերն ու պատասխան չկարողացար տալ»: Այսպիսով աշխատում են կռիվ բորբոքել: Ահա սրանց այս բոլոր խոսքերն էլ դատարկաբանություն են: Թեպետ այդ կռվի մեջ իրենք ամենևին գործ չունեն, բայց այսպիսի դատարկ խոսքերով մասնակից են լինում կռվողների մեղքին:*

**Հարց.** *Կռվողներն իրար հայհոյում են, բայց կողքից նայողները բնավ չեն հայհոյում, այդ ինչպե՞ս են նրանք մեղքին մասնակից:*

**Պատասխան.** *Թեպետ չեն հայհոյել, բայց գործակից լինելով մասնակից են լինում նրանց մեղքին, ինչպես Պողոս առաքյալն է գրում. «Լցված լինելով ամենայն անիրավությամբ, պոռնկությամբ, անզգամությամբ, ագահությամբ, չարությամբ, կատարյալ նախանձով, սպանությամբ, կռվազանցությամբ, նենգությամբ, չարասրտությամբ. բանսարկու, չարախոս, աստվածատյաց, նախատող, հպարտ, ամբարտավան, պոռոտախոս, չարահնար, ծնողատյաց, անմիտ, ուխտադրուժ, անագորույն, անգութ, անողորմ. նրանք գիտեին Աստծու արդար դատաստանը, թե այսպիսի բաներ գործողները մահվան են արժանի, և ոչ միայն նրանք, որ անում են այդ բաները, այլ նաև նրանք, որ գործողներին հավանություն են տալիս» (Հռոմ.*

*Ա 29-32): Տեսնո՞ւմ ես, որ նրանց կռվին նայող և միայն լեզվով քաջալերող ու հավանություն տվող մարդիկ միայն մեկ պարապ խոսքով նույնպես մասնակից են մեղքերին, որովհետև եթե գողին հարցնես, թե ինչո՞ւ ես գողություն արել, նա կարող է իր չքավորությունը պատճառաբանել. իսկ եթե շնացողին հարցնես՝ նույնպես իր մարմնի ցանկության բորբոքումը կարող է պատճառ բռնել, նմանապես և բոլոր մեղասերները: Իսկ եթե ուրիշի մեղքին միայն լեզվով մասնակից եղողին հարցնես. «Այս երկու մարդը կռվում են, բայց դու ինչո՞ւ ես բորբոքում նրանց վեճը», կտեսնես, որ ոչինչ չի կարող պատասխանել, որովհետև ոչինչ չունի ասելու, քանզի գիտե, որ դատարկ ու պարապ տեղն է խոսել: Ահա սրանք են Քրիստոսի ակնարկած դատարկ խոսքերը, որոնց համար հաշիվ պիտի տանք դատաստանի օրը:*

Հարց. *Իսկ երբ Քրիստոս ասաց. «Քո խոսքով պիտի արդարանաս ու քո խոսքով պիտի դատապարտվես» (Մատթեոս ԺԲ 37), այդ ի՞նչ է նշանակում:*

Պատասխան. *Ահա՛ Քրիստոս մի առակով այդ ցույց տվեց. «Երկու մարդ տաճար ելան աղոթքի կանգնելու. մեկը՝ փարիսեցի, մյուսը՝ մաքսավոր: Փարիսեցին կանգնած էր մեկուսի և ինքնիրեն այս աղոթքն էր անում. «Աստված իմ, շնորհակալ եմ քեզնից, որ ես նման չեմ ուրիշ մարդկանց, ինչպես հափշտակողները, անիրավներն ու շնացողները և կամ ինչպես այս մաքսավորը, այլ շաբաթը երկու անգամ ծոմ եմ պահում և տասանորդ եմ տալիս իմ ամբողջ եկամտից»: Իսկ մաքսավորը կանգնած էր մեկուսի և չէր իսկ կամենում իր աչքերը երկինք բարձրացնել, այլ ծեծում էր կուրծքը և ասում. «Աստված, ների՛ր ինձ՝ մեղավորիս»: Ասում եմ ձեզ, սա՛ իջավ իր տունը արդարացած, ոչ թե մյուսը. ով որ բարձրացնում է իր անձը, կխոնարհվի, և ով որ խոնարհեցնում է իր անձը, կբարձրացվի» (Ղուկաս ԺԸ 10-14): Այսպիսով փարիսեցին իր գործած բարեգործությունները իր իսկ լեզվով խորտակեց, իր նավը մինչև նավահանգիստ կհասներ, ընկղմեց, իսկ մաքսավորը, ինքն իրեն մեղավոր հռչակելով և իր մեղքերին թողություն խնդրելով, ծովի մեջ ալեկոծության ենթարկվող իր նավը ցամաք հանեց անվնաս: Նավն ընկղմողն ու ազատողը լեզուն եղավ: Մեկ այլ օրինակ էլ բերեմ. երկու մարդ կռվում են, ոմանք գրգռում են, որ կռիվը սաստկանա, իսկ ոմանք ջանք են թափում խաղաղեցնելու: Գրգռողները սատանայի որդիներ են կոչվում, իսկ խաղաղարարները՝ Աստծու որդիներ, որոնց էլ Քրիստոս երանի տվեց. «Երանի՜ խաղաղարարներին, որովհետև նրանք Աստծու որդիներ պիտի կոչվեն» (Մատթեոս Ե 9): Տեսնո՞ւմ ես, սրանք էլ լեզվով արդարացան կամ դատապարտվեցին. դրա համար էլ Սիրաք իմաստունը գրում է. «Եթե կայծի վրա փչես, կբորբոքվի, իսկ եթե նրա վրա թքես, կմարի. այդ երկուսն էլ քո բերանից են դուրս գալիս» (Սիրաք ԻԸ 14): Նաև Քրիստոսի հետ խաչված ավազակը, Քրիստոսին տեսնելով այդ չարչարանքների մեջ, չհուսահատվեց ու հաստատ հավատով ասաց. «Հիշի՛ր ինձ, Տե՛ր, երբ գաս Քո թագավորությամբ» (Ղուկաս ԻԳ 42), և փրկվեց: Ահա սա է Քրիստոսի ասածը. «Քո խոսքով կարդարանաս ու քո խոսքով կդատապարտվես» (Մատթեոս ԺԲ 37):*

# Ճավիղ Լ

Հարց. *Կարծում եմ՝ վերջացան լեզվի մասին եղած խրատները:*

Պատասխան. *Այո՛, ավարտվեցին, բայց մի մեծ վտանգ էլ կա, եթե դրանից չզգուշանաս, այլ գործածես, շատ վատ վիճակում կհայտնվես: Դրա համար ես պարտավոր եմ քեզ տեղյակ պահել. գիտեմ նաև, որ քեզ համար պիտի շատ դժվար լինի, ինչպես այն հիվանդի, որի աչքը միշտ սառը ջրի և թթու կերակուրների վրա է, բայց որոնք վնասակար են իր հիվանդությանը: Բնական է, որ բժիշկն արգելում է՝ ասելով. «Սառը ջուր մի՛ խմիր, թթու*

*մի՛ կեր»: Այդ պահին բժիշկը հիվանդի աչքին մի չար մարդ է երևում, գուցե և բռնակալ, բայց բժշկվելուց հետո նա ուրախ է լինում, որ չօգտագործեց սառը ջուրն ու թթու կերակուրը, իսկ բժշկից էլ մեծապես շնորհակալ է լինում: Նմանապես էլ մեղքի աղտի մեջ գտնվող մարդուն եթե խրատես, դժվարությամբ կընդունի, ինչպես Պողոս առաքյալն է գրում. «Ամեն խրատ տվյալ պահին ուրախություն չի թվում, այլ տրտմություն, բայց հետո արդարության խաղաղարար պտուղն է հատուցում նրանով դաստիարակվածներին» (Եբր. ԺԲ 11): Անշուշտ շատ դժվար է սեփական կամքը զսպել, բայց երբ մեղքից հեռանա ու զղջա, այն ժամանակ կզգա օգուտը, ինչպես որ Եսային է գրում. «Երբ դարձի գաս և հոգոց հանես, այն ժամանակ կապրես և կիմանաս, թե որտեղ ես գտնվում» (Եսայի Լ 15): Վերջապես քեզ կցանկանայի մի բանի մասին էլ ասել: Ամեն մեկի մեղքը դիմացինի աչքին ավելի ցայտուն է երևում, քան իր աչքին: Հետևաբար ես տեսնում եմ, որ սատանան որոգայթ է լարել ոտքիդ տակ, բայց դու այդ մասին չգիտես, անզգույշ քայլում ես և անշուշտ պիտի ընկնես փորձանքը, դրա համար տեղյակ եմ պահում քեզ, որ զգույշ քայլես:*

**Հարց.** *Ո՞րն է այդ զգուշանալիք որոգայթը, որի մասին այսքան երկար ասացիր:*

**Պատասխան.** *Բարկությունն է այդ մեղքը, որից եթե հեռու չմնաս, երբեք չես կարող բարեգործություն անել, ինչպես որ Հակոբոսն է ասում. «Բարկությունը Աստծու արդարությունը չի կատարում» (Հակոբոս Ա 20): Չկատարելուց բացի արածդ էլ ոչնչացնում է, ինչպես որ Քրիստոս ցույց է տալիս օրինակով. «Ով որ լսում է Իմ այս խոսքերը և դրանք չի կատարում, կնմանվի մի հիմար մարդու, որ իր տունը շինեց ավազի վրա. անձրևները թափվեցին, գետերը բարձրացան, հողմերը փչեցին և զարկեցին տանը, և նա ընկավ. և նրա կործանումը շատ մեծ եղավ» (Մատթեոս Է 26-27):*

**Հարց.** *Այդ տունը տակնուվրա անող հողմը ի՞նչ է:*

**Պատասխան.** *Տուն ասվածը բարեգործության և մնացած առաքինությունների տունն է, որը բոլոր քրիստոնյաները պարտավոր են կառուցել հավատի հիմքի վրա, ինչպես որ այս մասին խոսեցինք Թ Ճավիղի մեջ: Իսկ տանը խփող ու հարվածող հողմն էլ բարկությունն է և մարդկանց մնացյալ մոլորությունները: Թեպետ հիմա տուն ես կառուցում, բայց հավատի հիմք չունես, թերի է. չէ՞ որ Քրիստոս էլ ասաց. «Ամեն մարդ, որ զուր տեղը բարկանում է իր եղբոր վրա, ենթակա կլինի դատաստանի» (Մատթեոս Ե 22): Դու այս լսել ու չես հավատացել, բայց միայն մկրտությունդ բավարար ես համարել քո փրկության համար, բարեգործություն չես արել: Նույնիսկ եթե մի փոքր բարեգործություն էլ անես, բայց միտքդ ու հոգիդ Սուրբ Գրքի խրատներով հաստատված չլինի, ապա սատանան քեզ մի սուտ պատճառով կդրդի կամ չարիք կբերի աչքիդ առջև կամ ականջիդ վատ խոսք լսել կտա և քո սիրտն իր ձեռքի մեջ վերցնելով՝ կսեղմի: Այդ պահին բարկությունդ հնոցի պես կբորբոքվի, միտքդ կպղտորվի ինչպես գարնան վարար գետ, սիրտդ ալեկոծ ու հողմածուփ ծովի պես տակնուվրա կլինի, աչքերդ կկարմրեն կատաղությունից, դեմքդ կայլայլվի, շուրթերդ կկապտեն, բերանդ կփրփրի, ձեռքդ ու ոտքդ կդողան դիվահարի պես, ու ատամներդ կկրճտացնես: Այդ պահին ոչ մահը աչքիդ կգա և ոչ էլ արքայությունն ու դժոխքը, այլ կսկսես ձեռքիդ եկած ամեն չար բան անել, հայհոյանք, անեծք, սաստիկ կռվի պահին ծեծ, գուցե և սպանություն էլ գործես: Այսպիսով փուլ կգա քո բարեգործության տունը, տակնուվրա կլինի, և կկատարվի սատանայի կամքը: Ժամանակ կանցնի, բարկությունը սրտիցդ դուրս կգա և կզղջաս, բայց ինչ օգուտ՝ տունդ ավերեցիր: Ինչպես ծովը, որ ալեկոծվում է, մրրիկից ուռչում է, կարծես կատաղում է ու փրփրում, բազում նավեր խորտակելով ընկղմում է իր հատակը, բազում ունեցվածքներ ոչնչանում են, ու մարդիկ՝ խեղդվում: Ճիշտ է, քիչ հետո հողմը հանդարտվում է, և ծովը կարծես իջնում է՝ գալով իր նախկին խաղաղ վիճակին, բայց կորուստն այլևս անդառնալի է: Ուստի պետք է հեռու մնալ և զգուշանալ բարկությունից:*

**Հարց**. *Որ բարկությունը չար է, հասկացա, սակայն Քրիստոսի ասածից. «Ով որ զուր տեղը բարկանա, ենթակա կլինի դատաստանի», չի՞ կարելի եզրակացնել, որ եթե զուր տեղը չէ, ապա բարկությունը մեղք չէ:*

**Պատասխան**. *Եթե բարկությունը տեղին լինի, այսինքն՝ ուղղված է սատանայի թելադրանքին և մեր հոգուն գալիք վնասի դեմն առնելուն, մեղք չէ: Բայց մենք հաճախ ընդհակառակն ենք անում, ոչ թե սատանայի դեմ ենք բարկանում, այլ մեր անձի պես սիրելի ընկերոջ դեմ, ոչ թե մեր հոգուն գալիք վնասի դեմ ենք բարկանում, այլ մեր մարմնին կամ ունեցվածքին պատահած մի փոքր վնասի դեմ, այդ ժամանակ մենք կատաղի գազան ենք դառնում: Այս ամենը Քրիստոս դրել է մեղքերի շարքում, որովհետև այս աշխարհի ամեն ինչը սուտ է, դատարկ ու ոչինչ, ուստի այս աշխարհի հետ կապված ինչի վրա էլ բարկանաս, իմացի՛ր, որ դատարկ բանի համար ես բարկացել, ու այդ պատճառով էլ դատաստանի կենթարկվես: Բայց պիտի նկատել, որ բարկությունը եթե տեղին ես գործածում, վնաս չի տալիս, այսպես, օրինակ՝ որևէ թույն, եթե առողջ մարդ ուտի, կմահանա: Բայց երբ նույն թույնը հիվանդ մարդը բժշկի հրահանգով է օգտագործում, կբժշկվի հիվանդությունից:*

**Հարց**. *Դե՛, եղբայր, բավական է այսքանը, միայն ե՞ս եմ գնալու արքայություն, որ այդքան ջանում ես համոզել ինձ: Ինչպես բոլոր մարդիկ են, այնպես էլ ես կլինեմ: Բոլորի նման լինելն ու չառանձնանալը ավելի հեշտ է:*

**Պատասխան**. *Ո՛չ, եղբա՛յր իմ, այդպես մի՛ ասա, ուրիշները քեզ չեն կարող օգնել: Դիցուք, եթե դու ծուլության պատճառով դրամ չվաստակես, ապա հորդ կամ եղբորդ շահած դրամով կապրես միառժամանակ: Բայց հանդերձյալ կյանքում այդպես չէ, ամեն մեկն ինքն իր համար պիտի ջանա, որովհետև ոչ հայրը որդու համար, ոչ եղբայրը՝ եղբոր, ոչ բարեկամը՝ բարեկամի, ոչ կինը՝ ամուսնու, ոչ ամուսինը՝ կնոջը ողորմություն կանի կամ էլ կօգնի, այլ ամեն մեկն ինքը պիտի ջանա հափշտակել բարիքը, ինչպես որ Քրիստոս հրամայեց. «Այժմ երկնքի արքայությունը բռնադատվում է, և հզորներն են հափշտակում այն» (Մատթեոս ԺԱ 12):*

*Դրա համար Պողոսը մեկ օրինակ է բերում. «Չգիտե՞ք, թե նրանցից, որ ասպարեզում վազում են, թեև բոլորն են վազում, միայն մեկն է առնում հաղթության մրցանակը» (Ա Կորնթ. Թ 24):*

**Հարց**. *Այդ ի՞նչ օրինակ է ասպարեզում վազելը:*

**Պատասխան**. *Հին ժամանակներում սովորություն կար, որ մեծ հրապարակի մի ծայրում բարձր պատվանդանին դնում էին թանկագին մի ադամանդ, որպեսզի մարդիկ վազելով գնան և այդ թանկագին քարը վերցնեն: Բայց քարը ստանում էր նա, ով արագընթաց էր: Պողոսի բերած օրինակը այս է նշանակում. «Բոլորն են վազում, բայց միայն մեկն է ստանում հաղթության մրցանակը» (Ա Կորնթ. Թ 24): Այնուհետև ավելացնում է. «Այնպես վազեք, որ հասնեք դրան» (Ա Կորնթ. Թ 24): Պողոս առաքյալին ժամանակակից քրիստոնյաները իրենց հավատը ստանում էին աշխատանքով, և այս սկզբունքը շատ հարգի էր, ուստի մեծ բաղձանքով բոլորը վազում էին արքայությունը հափշտակելու: Իսկ Պողոսն էլ շարունակ հորդորներ է գրում, որպեսզի շարժի մարդկանց ջերմեռանդությունը, որ հանկարծ արքայության նկատմամբ ունեցած սիրո կրակը չմարի նրանց սրտերում: Բայց մենք կարծում ենք, թե հավատը ժառանգություն է մնացել մեր հայրերից, դրա համար էլ չենք հարգում, որովհետև. «Առաջինը ես հափշտակեմ արքայությունը» ասող, ջանադիր մարդիկ շատ քիչ են: Այսօր ամենքս էլ իրար տակից աթոռ հափշտակողներ ենք: Երբ նայես, կտեսնես, որ ոմանք խումփոց հանելով անհոգ քնած են: Ոմանք էլ, թեև արթնացած, բայց թմրած նստած են մահճում, դեռ նրանց թմրությունը պիտի անցնի, որ նոր դուրս գան վազքի: Կան մարդիկ, որ շուտ են արթնացել, բայց մտել են առևտրի մեջ և ժամանակ չունեն վազելու: Ոմանք գինետանն ու սրճարաններում ուտում, խմում և ուրախանում են, մտքերով էլ չեն*

*անցկացնում վազել: Ոմանք էլ, թեև ճամփա են ընկել, բայց ետ-ետ նայելով, դանդաղկոտ քայլերով են ընթանում: Ապա հոգնած նստում են տեղում ու ասում. «Շտապելու բան չկա, երբ էլ գնանք, կհասնենք, հո այսօր իսկ չմեռա՞նք, կամ էլ բոլորը գնացին, միայն մե՞նք մնացինք»: Իսկ ոմանք էլ գոտեպնդված վազում են սուրհանդակի պես, ոչ ետ և ոչ էլ աջ ու ձախ նայելով, միշտ անթարթ աչքով հետևում են անցնելիք ճանապարհին, վազում են՝ արքայությունը հափշտակելու նպատակով: Տեսա՞ր, եղբա՛յր իմ, ինչպես են գնում երկնքի արքայություն: Կարծեմ դու խումփացնողներին կամ աշխարհական զբաղմունքի մեջ մոլորվածներին նայելով ինձ ասացիր. «Այս աշխարհի մարդիկ ինչ որ են, ես էլ նրանց պես կլինեմ»: Բայց դու փոխանակ նրանց տեսնելու, նայիր առաջ վազող մարդկանց: Եվ եթե ուրիշին նայելով մեղանչես ու մեղավոր էլ մեռնես, այնտեղ ոչ մեկը քեզ չի օգնի: Ենթադրենք, մեկ տան մեջ ապրում են երկու եղբայր, մեկը՝ գործունյա՝ դրամ վաստակող, իսկ մյուսը՝ ծույլ՝ գրոշ իսկ չվաստակող: Բայց այն գործունյա եղբոր վաստակով ընտանիքի անդամները բավարար կերպով ապրում են: Եվ եթե գործունյա եղբայրը սրտնեղելով բարկանա ծույլ եղբոր վրա՝ ասելով. «Ինչ ուզում է թող լինի», և ամեն բան թողնի բախտի քմահաճույքին, ապա վաստակը կկտրվի, կաղքատանա, և տան անդամները խեղճ վիճակի մեջ կընկնեն: Այս աշխարհում մեկ մարդու անհոգության պատճառով ողջ ընտանիքն է տուժում: Բայց արի ու տես, որ հանդերձյալում այնպես չէ: Մեկի մեղք գործած լինելու համար մյուսը պատիժ չի կրում. «Ով որ մեղանչի, նա էլ պիտի մեռնի» (Եզեկիել ԺԸ 4): Լա՛վ մտապահիր, քանի դեռ մարդիկ կենդանի են, իրար կարող են օգնել կամ վնասել, բայց հանդերձյալում, դատաստանի օրը ո՛չ մեղավորները կարող են վնաս հասցնել արդարներին և ո՛չ էլ արդարները կարող են օգնել մեղավորներին, որովհետև այնտեղ ողորմության դուռն արդեն փակ կլինի:*

# *Ը ա վ ի դ   Լ Ա*

**Հարց**. *Եթե այդպես է , ապա զգաստ լինենք, խրատին հետևենք, և առանց մյուսներին նայելու՝ ես իմ գլուխն ազատեմ: Ուրիշ ի՞նչ խրատ ունես տալու:*

**Պատասխան**. *Ժամանակին պարծեցար, թե շնություն չես անում, ես էլ լռեցի՝ ասածդ որպես ճշմարտություն ընդունելով: Բայց ինչ որ ասում ու պարծենում էիր, բոլորն էլ սուտ էր, վախենում եմ՝ այս պարծանքդ էլ սուտ լինի:*

**Հարց**. *Ես դատարկ տեղը չեմ պարծենում, իրոք որ ուրիշի մոտ շնության չեմ գնացել ոչ մի անգամ:*

**Պատասխան**. *Շնությունը միայն ուրիշի մոտ գնալը չէ: Մի՞թե չլսեցիր, որ Հակոբոս առաքյալը աշխարհասեր մարդկանց շնացող կոչեց, նաև մի՞թե Քրիստոս չասաց. «Ամեն մարդ, որ կնոջ նայում է նրան ցանկանալու համար, արդեն շնացավ նրա հետ իր սրտում» (Մատթեոս Ե 28):*

**Հարց**. *Նման բաներ ինձ հետ շատ է պատահում և շատ է նեղում, որովհետև կամքիս հակառակ ցանկությունս շատ է բորբոքվում, երբեմն էլ այնքան սաստիկ է նեղում, որ քիչ է մնում մեղքի որոգայթի մեջ ընկնեմ: Եթե մի հնար կա սրանից ձերբազատվելու, ցո՛ւյց տուր, խնդրում եմ:*

**Պատասխան**. *Դրա միակ հնարը պահքն է:*

**Հարց**. *Ես շատ եմ պահք պահում, բայց անօգուտ:*

**Պատասխան**. *Դրա պահքն այլ է, որը չգիտես: Այդ ախտի կրակը բորբոքող քամին երեք դռներից է ներս մտնում. հենց այդ դռներն են, որ պետք է փակել, որպեսզի քամին չփչի և կրակն էլ չբորբոքվի:*

**Հարց**. *Որո՞նք են այդ դռները:*

Պատասխան. Այդ երեք դռներն են՝ աչքը, ականջն ու բերանը: Աչքով վատ բաներին ես նայում, ականջով լսում ես չար խոսքեր ու զազիր, անհամեստ երգեր, իսկ բերանով խոսում նույն աղտեղի խոսքերը: Այս քամիներն են, որ գալով բորբոքում են ցանկության կրակը, թեպետ միտքդ այնտեղ չէ, չես ուզում նայել կանանց, բայց կանանց մեջ ես պտտվում: Չես ուզում չար խոսքեր լսել, բայց անառակների ու գուսանների հետ ես լինում: Եթե իրոք չես ուզում չնանալ, ապա այդ երեք դռները պիտի փակես, որ հանգիստ լինես:

Հարց. Դա նույնպես ըմբռնեցի, ինչպես և Քրիստոսի կամքը: Եթե այլ խրատներ կան, որ չգիտեմ, չարունակի՛ր ուսուցանել:

Պատասխան. Ահա մի խրատ ևս մտաբերեցի. քանի որ Քրիստոսի կամքն ամբողջապես ըմբռնեցիր, հանկարծ եա չդառնաս նորից և արժանանաս Քրիստոսի հանդիմանական խոսքին:

Հարց. Ո՞րն է Քրիստոսի հանդիմանությունը:

Պատասխան. «Այն ծառան, որ գիտե իր տիրոջ կամքը, բայց նրա կամքի համաձայն չի պատրաստի, շատ ծեծ կուտի» (Ղուկաս ԺԲ 47):

Հարց. Գնալով պատվերներդ սաստկացնում ես, վերջը չգիտեմ՝ ուր ես հասնելու:

Պատասխան. Քեզ սաստի՞կ թվաց ասածներս, հապա եթե Մատթեոսի գրածը կարդաս, ի՞նչ ես ասելու. «Չար և ծույլ ծառա, գիտեիր, որ հնձում եմ, ուր չեմ սերմանել, և հավաքում այնտեղից, ուր չեմ ցանել. դու պետք է իմ այդ դրամը լումայափոխների մոտ դնեիր, և ես գալով տոկոսով միասին պահանջեի այն, ինչ որ իմն է» (Մատթեոս ԻԵ 26-27):

Հարց. Կարծես այդ խոսքերը չհասկացա, խնդրում եմ, բացատրի՛ր:

Պատասխան. Խոսքերն այդ բացատրված են վաղուց, որովհետև Քրիստոս, երբ աշխարհ եկավ, սկզբում մարդկանցից գործ չպահանջեց, այլ միայն հավատ. «Ով որ հավատա ու մկրտվի, կփրկվի» ասաց, բայց հավատը հաստատելուց հետո գործ էլ պահանջեց՝ ասելով. «Թող տեսնեն ձեր բարի գործերը և փառավորեն երկնավոր Հորը»: Այս խոսքից երևում է, թե հավատի շնորհ տալուց հետո մեզանից բարեգործության պտուղ է ցանկանում, որով էլ պարտական ենք մնում: Երկնավոր անհասանելի պարգևների փոխարեն ինչո՞վ պիտի վճարենք մեր պարտքերը, եթե ոչ բարեգործության պտուղներով միայն և Աստծու պատվիրաններն անթերի կատարելով: Եվ եթե մենք մեր կենդանության օրոք չվճարենք այդ պարտքերը, ապա Քրիստոս դատաստանի օրը հավատի շնորհների պարգևների հաշիվը պիտի պահանջի մեզանից ու հանդիմանի:

Հարց. Այդ առավել երկյուղալից էր:

Պատասխան. Եթե անհոգության ես մատնված, ապա երկյուղալից խոսքը դեռ հետո պիտի լսես, ինչպես որ Մատթեոս ավետարանիչն է գրում. «Արդ, դրանից առեք այդ քանքարը և տվեք նրան, ով տասը քանքար ունի. քանի որ ով ունի, նրան պիտի տրվի և ունեցածը պիտի ավելացվի, իսկ ով չունի, նրանից ունեցածն էլ պիտի վերցվի: Իսկ այդ անպիտան ծառային հանե՛ք դուրս, արտաքին խավարը. այնտեղ կլինի լաց ու ատամների կրճտում» (Մատթեոս ԻԵ 28-30): Ուրեմն, եթե որևէ մեկը մկրտությամբ ու հաղորդությամբ ստացած շնորհները չբազմապատկի, այսինքն՝ համապատասխան կյանքով չապրի, այլ միայն այդքանով համարի, թե փրկված է և բարեգործ չլինի. պիտի զրկվի իր նախկին շնորհներից, իսկ նրա վախճանը հավիտենական դատապարտություն է: Ա՛յ, սա իրոք սարսափելի է:

## Ղավիղ ԼԲ

Հարց. Ինչպե՞ս բարեգործություն անեմ:

Պատասխան. Նախ՝ պետք է լինես ողորմած և գթասիրտ, որ երբ մի խեղճ աղքատ տեսնես, գութդ շարժելով հոգաս նրա կարիքները, որպեսզի Քրիստոսի երանությանն արժանանաս. «Երանի

*ողորմածներին, որովհետև նրանք ողորմություն պիտի գտնեն» (Մատթեոս Ե 7)։ Եվ երկրորդ՝ պահք պիտի պահես։*

**Հարց.** *Ինչպե՞ս պահք պահեմ, ծո՞մ մնամ, թե զգուշանամ մսից ու կաթնամթերքից։*

**Պատասխան.** *Թե՛ ծոմ և թե՛ պահք պիտի պահես։ Ոչ միայն կերակուրի պահքը պիտի պահես, այլև բոլոր զգայարաններդ ծոմ պիտի պահեն։ Միշտ զգաստ ու զգույշ պետք է լինել, իսկ ծոմապահության օրն առավել ևս, ամենևին մարմնի կամքը չկատարել, ինչպես որ Եսայի մարգարեն է պատվիրում. «Արդ, ձեր ծոմապահության օրերին ձեր ցանկությունններն եք կատարում և կսկիծ պատճառում բոլոր նրանց, ովքեր ենթակա են ձեզ։ Հակառակության և կռիվների մեջ եք պահում և բռնադատում տկարին։ Իսկ Իմ ինչի՞ն է պետք այդպիսի ծոմապահության օրը. դուք պիտի գաք, բողոքեք Ինձ, և Ես չպիտի լսեմ ձեզ։ Այդպիսի ծոմապահությունը չէ, որ Ես ընտրեցի,- ...ասում է Տերը։ Քանդի՛ր անիրավության հանգույցը, խորտակի՛ր քո վաճառականական խարդախությունն ու բռնությունը, ների՛ր և արձակի՛ր նեղյալներին և պատռի՛ր բոլոր անիրավ մուրհակները։ Քաղցածներին բաժանիր քո հացը և անօթևան աղքատներին տար քո տունը. եթե մերկ մարդ տեսնես, հագցրո՛ւ նրան...։ Այն ժամանակ պիտի կանչես, և Աստված պիտի լսի քեզ» (Եսայի ԾԸ 3-9)։ Եվ երեք աղոթք պիտի անես։*

**Հարց.** *Ինչպե՞ս պիտի աղոթեմ։*

**Պատասխան.** *Դ Շավիղի մեջ ասացինք, որ սուրբ սիրտ և մաքուր բերան պիտի ունենաս, իսկ խնդրանքներդ պիտի շահեկան լինեն հոգուդ և հաճելի Աստծու կամքին։ Իսկ եթե օգտակար բան խնդրես մարմնիդ համար, ապա սատանայի կամքին հաճելի կլինի։*

**Հարց.** *Ապրուստիս համար որևէ բան չպիտի՞ ուզեմ։*

**Պատասխան.** *Ո՛չ, մարմնի պետքի համար երբեք ոչինչ չուզես, որովհետև մեր երկնավոր Հայրը առանց մեր խնդրելու էլ գիտե, ինչպես որ Քրիստոս ասաց. «Որովհետև ձեր Հայրը գիտե, թե ինչ է ձեզ պետք, նախքան որ դուք Նրանից մի բան ուզեք» (Մատթեոս Զ 8)։ Տեսա՞ր, նախքան մեր մի բան ուզելը Նա գիտե և տալիս է, բայց երբ միտումնավոր ուզենք, չի տա, ինչպես և Հակոբոսն է ասում. «Խնդրում եք և չեք ստանում, որովհետև չարամտորեն եք խնդրում, որպեսզի այն ծառայացնեք ձեր ցանկություններին» (Հակոբոս Դ 3)։*

**Հարց.** *Արդյոք ի՞նչ է չար խնդրանքը։*

**Պատասխան.** *Չար խնդրանքը Քրիստոսի կամքին հակառակ մի բան ուզելն է։ Քրիստոս հրամայել է. «Ձեր կյանքի համար հոգ մի՛ արեք, թե ի՛նչ պիտի ուտեք կամ ի՛նչ պիտի խմեք, և ոչ էլ ձեր մարմնի համար, թե ի՛նչ պիտի հագնեք» (Մատթեոս Զ 25)։ Այս ասելուց հետո մարդկանց սրտերը հաստատ պահելու համար երկնքի թռչունների և լեռան ծաղիկների օրինակն է բերում. «Նայեցե՛ք երկնքի թռչուններին, ո՛չ վարում են, ո՛չ հնձում և ո՛չ էլ շտեմարանների մեջ հավաքում. և ձեր երկնավոր Հայրը կերակրում է նրանց...։ Նայեցե՛ք վայրի շուշանին, ինչպես է աճում. ո՛չ ջանք է թափում և ո՛չ հյուսում» (Մատթեոս Զ 26-28)։ Քանի որ Քրիստոս այսպես է ասել, դու Նրա հրամանին հակառակ, երբ մարմնավոր բաներ ուզես, իմացի՛ր, որ խնդրանքդ չար է։ Քրիստոս կրկին հրամայել է. «Սիրեցե՛ք ձեր թշնամիներին, օրհնեցե՛ք ձեզ անիծողներին, բարությո՛ւն արեք ձեզ ատողներին և աղոթեցե՛ք նրանց համար, որ չարչարում են ձեզ և հալածում» (Մատթեոս Ե 44), նաև «Եթե մի երեսիդ խփում են, մյուս երեսդ էլ դարձրու»։ Նրան հակառակ, եթե հարստություն, փառք կամ իշխանություն ուզես, որ թշնամուդ հաղթես ու չար կամքդ կատարես, մի՞թե չար չէ։ Եվ տեսնելով, որ Աստված չի տալիս քո ուզած հարստությունն ու իշխանությունը, որպեսզի հաղթես թշնամուդ, կմատնվես անճարակության և կսկսես հրամայել Աստծուն. «Աստված թող վրեժխնդիր լինի թշնամուցս՝ կուրացնի, խլացնի, ձեռք ու ոտքը կոտրի, լեզուն պապանձեցնի կամ խելքը ցնորի, ունեցվածքը կորցնի կամ նրա զավակին մահ պատճառի»։ Այսպիսի շատ բաներ ես ասում Աստծուն, մի՞թե չար չեն սրանք։ Մինչդեռ Քրիստոս ասում է. «Օրհնի՛ր քեզ*

*անիծողներին», իսկ դու ոչ միայն չես օրհնում, այլև անիծում ես քեզ անիծողներին: Եվ երբ տեսնում ես, որ քո այս խնդրանքներն Աստծուն լսելի չեն, հուսահատվում ես ու քո իսկ չար ցանկությամբ հալվում ու մաշվում:*

**Հարց.** *Ուրեմն ոչ մի բան չուզե՞նք:*

**Պատասխան.** *Թե ի՞նչ պիտի խնդրենք, Քրիստոս սովորեցրել է մեզ. «Նախ խնդրեցե՛ք Աստծու արքայությունը և Նրա արդարությունը, և այդ բոլորը Աստված ձեզ ավելիով կտա» (Մատթեոս Զ 33): Իսկ մեր մարմնավոր պետքերը Քրիստոս «Հայր մեր» աղոթքի մեջ է սովորեցրել. «Մեր հանապազորյա հացը տուր մեզ այսօր» (Մատթեոս Զ 11): Տե՛ս, որ մեզ պետք եղած անհրաժեշտ բանը մեր օրվա հացն է, այդ է, որ պիտի խնդրենք և ոչ թե վաղվանը, ինչպես որ Քրիստոս է ասում. «Այսուհետև հոգ մի՛ արեք վաղվա մասին, որովհետև վաղվա օրը իր մասին կհոգա» (Մատթեոս Զ 34):*

**Հարց.** *Սրանից հետո վաղվա հոգսը չքաշելով ի՞նչ պիտի լինի, մի՞թե դրանից առաջ մարմնավոր խնդրանքը մեղք չէր:*

**Պատասխան.** *Քրիստոսի աշխարհ գալուց առաջ արգելք չկար մարմնավոր խնդրանքներին, որովհետև նրանց թե՛ փառքը և թե՛ պատիժը մարմնավոր էին, ինչպես որ պատմեցինք Զ Շավիղում: Բայց Քրիստոս, երբ եկավ, մեզ քարոզեց երկնքի արքայությունը և բազում օրինակներով ու առակներով վստահեցնելուց հետո Իրեն հավատացող և Իր պատվիրանները պահողներին երկնքի թագավորությունն ու անվախճան փառքը խոստացավ դատաստանի օրը, երբ պիտի հարություն առնեն: Բացի նրանից, որ մեզ երբեք մարմնավոր բաներ չխոստացավ, դեռ ավելին՝ շատ ու շատ առակներով մատնացույց արեց այս աշխարհի անցավոր լինելը: Քանի որ մահը խափանելու և ոչնչացնելու է ամեն բան, բայց հոգին անմահ լինելով կշահի հավիտենական հոգևոր փառք, պատիվ և ուրախություն, ինչպես նաև հավիտենական պատիժ ու տրտմություն, ինչը և խոստացավ մեզ Քրիստոս: Եվ քանի որ այս ամենն ըմբռնեցինք, սրանից հետո թե՛ վաղվա և թե՛ մարմնավոր պետքերի համար պետք չէ հոգս անել, այլ միայն այսօրվա համար պետք է խնդրենք:*

**Հարց.** *Քանի դեռ ապրում ենք, հնարավո՞ր է որևէ բան չուզել:*

**Պատասխան.** *Բայց ինչ թերահավատ մարդ ես, այնպես ես խոսում, կարծես սովահար պիտի լինես: Եթե մի մարմնավոր թագավոր քեզ խոստանա, որ «Քո մարմնի անհրաժեշտ կարիքները՝ թե՛ կերակուր և թե՛ հագուստ, ես կհոգամ, դու անհոգ եղի՛ր ու միայն քո հոգու փրկության համար հոգա»: Դու մի՞թե անհոգ չէիր լինի՝ վստահելով թագավորի խոստմանը:*

**Հարց.** *Հայտնի բան է, որ անհոգ կլինեի, քանի որ թագավորի խոստումը միշտ հաստատ է լինում:*

**Պատասխան.** *Ուրեմն հավատում ես այդ մահկանացու արքայի խոստման հաստատ լինելուն: Բայց ինչպե՞ս է, որ չես հավատում մեր Երկնավոր Հոր, թագավորների Թագավորին և ամենի Տիրոջը: Նա, որ խոստացել է հոգալ քո մարմնի կարիքները և պատվիրել է, որ դու ցանկանաս միայն հոգուդ փրկության արքայությունը:*

*Այն մահկանացու թագավորը, որ քեզ խոսք էր տվել, երբ մահանա, իր խոստումն էլ իր հետ կմահանա: Բայց մեր Տեր Աստված միշտ կենդանի ու հավիտենական թագավոր է, ուրեմն պետք է, որ Նրա խոստումին ավելի հավատաս:*

**Հարց.** *Ուրիշ ի՞նչ խրատ կտաս բարեգործության համար:*

**Պատասխան.** *Մինչ այժմ բոլոր ասածներս բարեգործության մասին էին, հարկ չկա, որ նորից կրկնեմ, բայց դարձյալ հիշենք Պողոս առաքյալի խոսքը. «Սերն է օրենքի լրումը» (Հռոմ. ԺԳ 10): Այստեղից պետք է եզրակացնել, որ բոլոր բարեգործությունները պետք է սիրով կատարել և առանց սիրո բարեգործությունը ոչինչ է, ինչպես և վկայում է. «Եթե խոսեմ մարդկանց լեզուները և հրեշտակներինը, բայց սեր չունենամ, կնմանվեմ մի պղնձի, որ հնչում է, կամ ծնծղաների, որ ղողանջում են: Եվ եթե մարգարեություն անելու շնորհ*

*ունենամ և հասկանամ բոլոր խորհուրդներն ու ամբողջ գիտությունը, և եթե ունենամ ամբողջ հավատը՝ մինչև իսկ լեռները տեղափոխելու չափ, բայց սեր չունենամ, ոչինչ եմ: Եվ եթե իմ ամբողջ ունեցվածքը տամ աղքատներին և իմ այս մարմինը մատնեմ այրվելու, բայց սեր չունենամ, ոչ մի օգուտ չեմ ունենա» (Ա Կորնթ. ԺԳ 1-3): Տեսնո՞ւմ ես, եղբա՛յր, թեպետ մենք քեզ բարեգործության մանրամասները բացատրեցինք, բայց առանց սիրո բարեգործությունը ոչինչ է: Ուստի ամեն ինչից առաջ սերն է պետք, այնուհետև՝ աղոթք, ողորմություն, ծոմ, պահք և այլն:*

# Ճ ա ռ ի ղ Լ Գ

**Հարց**. *Ի՞նչ շատ հիշեցիր պահքի մասին, եղբա՛յր, բայց չէ՞ որ կերակուրը Աստված տվեց մարդկանց, և բոլորն էլ Աստծու ստեղծածներն են՝ թե՛ կենդանական և թե՛ բուսական, ի՞նչ վնաս պիտի լինի ուտելուց:*

**Պատասխան**. *Մինչ բացատրությանն անցնելը մի բան պիտի հարցնեմ քեզ: Երբ բժիշկը քննում է հիվանդին, ամենից առաջ ի՞նչ է պատվիրում: Նախ և առաջ պահք է սահմանում, արգելում է օգտագործել պարարտ և վնասակար կերակուրներ, թույլատրում է առավել անուժ սնունդ, որ մարմնի ուժը տկարանա, և բորբոքման ցավերը խաղաղվեն: Եթե մարդ ուզում է կրակը մարել, ապա կրակի մեջ փայտ չի դնի: Նմանապես էլ հիվանդության դրդապատճառ կարող են լինել ցուրտը, շոգը, արյունը, մաղձը և այլն, բայց բոլոր ցավերի սաստկացնող պատճառը կերակուրն է: Դրա համար էլ բժիշկը սահմանում է անհրաժեշտ պահքը և հետո նոր նշանակում է դեղամիջոց:*

**Հարց**. *Ես ոչինչ չհասկացա: Ի՞նչ կապ ունի մարմնի ցավը հոգևոր նեղության հետ: Իմ հարցը հոգևորին է վերաբերում:*

**Պատասխան**. *Մեկ ուրիշ օրինակով կփորձեմ բացատրել: Օրինակ, վերցնենք ավտոմեքենան, որպեսզի առավել հասկանալի լինի հոգևոր վնասի հանգամանքը:*

*Ավտոմեքենան ունի տասնյակից ավելի անիվներ ու առաձգականներ, որոնք շարժվում ու պտտվում են մեքենան գործարկելու ժամանակ: Բայց ինչի՞ շնորհիվ, ինչպե՞ս են նրանք շարժվում:*

**Հարց**. *Ավտոմեքենա շատ եմ տեսել, բայց ներքին ատամնանիվները կամ առաձգականները ինչպես են պտտվում, չգիտեմ:*

**Պատասխան**. *Ավտոմեքենան ունի բենզինի բակ, որից մեքենան գործարկելու ժամանակ նեղ խողովակի միջով փոխված հեղուկը սրսկվում է այրման խցիկ, այստեղ տեղի է ունենում բռնկում, և խցանները սկսում են շարժվել՝ պտտեցնելով համապատասխան անիվներն ու առաձգականները: Անիվների՝ մեկը մյուսին փոխանցած շարժումով էլ ավտոմեքենան սկսում է առաջ շարժվել: Բայց շարժման պատճառը սկսեց խցանի շարժումից, որին ուժ տվեց բենզինի բռնկումը:*

**Հարց**. *Լա՛վ, հետո՞:*

**Պատասխան**. *Վերևում ասացինք, որ մարմնին ուժ տվողը պարարտ կերակուրն է: Հիմա մի հարց տամ, երբ մարմինն ուժեղանա, ի՞նչ կլինի: Չէ՞ որ կսկսեն ցանկությունները բորբոքվել, և ցանկության բռնկումն էլ մեղքի խցանի օգնությամբ կսկսի անիվներ պտտել, ինչպես Հակոբոս առաքյալն է վկայում. «Ցանկությունը հղանալով մեղք է ծնում, և մեղքը հասունանալով մահ է ծնում» (Հակոբոս Ա 15): Երբ գրգռվում է չար կիրքը, շատ դրամ է պետք այն բավարարելու համար: Արդար վաստակը չի կարող բավականացնել հոգալու չար ցանկության ծախսերը, դրա համար էլ անհրաժեշտ է դառնում, որ կրքի անիվը հանդիպի ու շարժի ստախոսության անիվը, ստախոսության անիվն էլ գողության անիվին է սկսում*

*պատել, և վերջապես գողության անիվն էլ իր հերթին կհանդիպի մարդասպանության անիվին և այն ևս կպտտվի...:*

*Այս ամենը կարող ենք հաստատել Դավիթ մարգարեի օրինակով: Երբ նա հալածվում էր Սավուղ արքայի ձեռքից, մեծ նեղություններ կրելով փախչում էր սարերով, և գրեթե ուժերը սպառվել էին, «Եվ պահքից նրա ծնկերը տկարացան» (Սաղմոս ՃԸ 24),- գրում է Աստվածաշունչը: Եվ երբ գիշերով կանգնած էր իր թշնամի Սավուղի գլխավերևում և կարող էր սպանել նրան, բայց խնայեց: Բայց երբ Դավիթն արդեն արքա էր ու հանգստության մեջ, բորբոքվել էին նրա մարմնական ցանկությունները, իր հավատարիմ ծառա Ուրիա Քետացուն չխնայեց ու սպանեց (Բ Թագ. ԺԲ 9):*

*Հիմա հասկացա՞ր: Թե՛ ստախոսության, թե՛ գողության և թե՛ մարդասպանության անիվները շարժողը ցանկության անիվն է, իսկ ցանկության անիվը պտտողը՝ պարարտ կերակուրը: Սա է պարարտ կերակուրների վտանգը մարդկային ցեղի համար:*

**Հարց.** *Բայց ես չեմ լսել, որ որևէ մեկը պատժվի կերակուրի համար:*

**Պատասխան.** *Ուրեմն դու Աստվածաշունչ չես կարդացել: Անշուշտ, ցանկության գերիները կպատժվեն հանդերձյալ աշխարհում, բայց արդարադատ Աստված այս աշխարհում մի քանի անգամ սաստիկ բարկությամբ պատժեց մարդկությանը, և հիմնական դրդապատճառը կերակուրն էր: Օրինակ, ջրհեղեղի ժամանակ. «Երբ Տեր Աստված տեսավ, որ մարդկանց չարագործությունները բազմանում են երկրի վրա, և ամեն ոք իր մտքում ամեն օր խնամքով չարագործություններ է նյութում, զղջաց Աստված, որ մարդ է ստեղծել երկրի վրա, և տրտմեց Իր հոգու խորքում: Տեր Աստված ասաց. «Երկրի երեսից վերացնելու եմ Իմ ստեղծած ամեն մի էակ՝ մարդուց մինչև անասուն և սողուններից մինչև երկնքի թռչունները, որովհետև զղջացել եմ, որ ստեղծել եմ նրանց» (Ծննդ. Զ 5-7): Այս ասելով Աստված ջրհեղեղով պատժեց աշխարհը: Քառասուն օր ու գիշեր շարունակ անձրև տեղաց, բարձրացրեց ծովի ջրերը, հորդառատ բխեցրեց գետերի ու աղբյուրների ջրերը, ցամաքն ամբողջապես ծածկվեց ջրով և ամենաբարձր լեռներից վեր ելավ տասնհինգ կանգուն: Կործանման մատնեց բոլոր մարդկանց ու անասուններին, սողուններին ու երկնքի թռչուններին: Փրկեց միայն Նոյ նահապետին և իր գերդաստանին: Նրանց թիվն ութն էր, որ մտնելով նավի՝ տապանի մեջ, ապրեցին: Նրանց հետ նաև գազաններ, անասուններ, թռչուններ և ամեն տեսակ կենդանիներից մեկ-մեկ զույգ արու և էգ փրկվեցին: Տեսա՞ր, թե ինչպես էր բարկացել Աստված:*

**Հարց.** *Հիմա պիտի ասենք, որ մարդկանց մեղքի պատճառը կերակուրն է:*

**Պատասխան.** *Եթե դու այսօր ես ասում, ապա քեզանից մոտ երկու հազար տարի առաջ Քրիստոս արդեն ասել է. «Եվ ինչպես եղավ Նոյի օրով, այնպես կլինի և մարդու Որդու օրով: Ուտում էին, խմում, կին էին առնում և մարդու էին գնում, մինչև այն օրը, երբ Նոյը տապան մտավ, և ջրհեղեղը եկավ ու բոլորին կործանման մատնեց» (Ղուկաս ԺԷ 26-28): Նմանատիպ մի փորձանք էլ սոդոմացիների ու գոմորացիների վրա բերեց պարարտ կերակուրը: Թե ուզում ես, կպատմեմ, որ հասկանաս:*

**Հարց.** *Պատմի՛ր:*

**Պատասխան.** *«Սոդոմացիների ու գոմորացիների աղաղակը ահագնացել, հասել է Ինձ. նրանց մեղքերը խիստ շատացել են: Արդ, իջնեմ, տեսնեմ, թե Ինձ հասած նրանց աղաղակը համապատասխանում է նրանց կատարածին, թե՞ ոչ... Տերը երկնքից ծծումբ ու կրակ թափեց Սոդոմի ու Գոմորի վրա, կործանեց այդ քաղաքներն ու դրանց ամբողջ շրջակայքը, ոչնչացրեց քաղաքի բնակիչներին և երկրի ամբողջ բուսականությունը» (Ծննդ. ԺԸ 20-22, ԺԹ 24-25):*

**Հարց.** *Սրանց մեղքի պատճառը նույնպե՞ս կերակուրն էր:*

Պատասխան. *Այո՛, այդ մասին վկայում է Եզեկիել մարգարեն. «Քո քրոջ՝ Սոդոմի անօրենությունն այս էր՝ ամբարտավանություն, հացով լիացածություն, գինու մեջ հղփացածություն: Մեղկ կյանք էին վարում ինքն էլ, դուստրերն էլ» (Եզեկիել ԺԶ 49): Իսկ Քրիստոս ասում է. «Նույնպես, ինչպես Ղովտի օրով էլ եղավ. ուտում էին, խմում, առնում էին ու վաճառում, տնկում էին, շինում: Եվ այն օրը, երբ Ղովտը Սոդոմից դուրս ելավ, երկնքից կրակ ու ծծումբ տեղաց ու բոլորին կորստյան մատնեց» (Ղուկաս ԺԷ 28-29): Ընկալեցի՞ր վերջապես, որ դրանց կորստյան պատճառը ևս ուտելիքն էր: Ջրհեղեղի ժամանակ մարդիկ, ուտելու և խմելու ետևից ընկած, զորացրին մարմինը, բորբոքվեց ցանկությունը և ինքասիրության մեղքի պատճառով ջրհեղեղով կործանվեցին. այսպես էլ սոդոմացիները, ուտելով ու խմելով տարված, բորբոքվեցին արվամոլական մեղքի ցանկությամբ և կործանվեցին կրակով ու ծծումբով:*

Հարց. *Եթե կերակուրն այդքան վնասակար է, ապա պետք է որ առաքյալները մեզ զգուշացնեին, որ մեր գլխին ևս փորձանք չգար:*

Պատասխան. *Մի՞թե մեզ չի զգուշացնում Պողոս առաքյալը հռոմեացիներին ու փիլիպեցիներին ուղղված իր թղթերում՝ ասելով. «Որովայնամոլ մարդիկ կռապաշտ են, և նրանց որովայնն իրենց աստվածն է»: Կամ՝ «Շատ լավ է միս չուտելն ու գինի չխմելը», «Մի՞թե իշխանություն չունենք ուտելու և խմելու», այս ասելուց հետո հավելում է. «Բայց այս իշխանությունն ի գործ չդրեցինք, այլ ամեն ինչի համբերում ենք, որպեսզի Ավետարանին որևէ արգելք չլինի» (Ա Կորնթ. Թ 4,12): Տեսա՞ր, եղբա՛յր, առաքյալը որպեսզի իր քարոզչությանն արգելք չլինի, զգուշանում է ուտելուց ու խմելուց, ինչպես որ քիչ հետո՝ 27 համարի մեջ բացահայտ ասում է, որ զգուշանում է կերակրից. «Այլ ճնշելով ամրացնում եմ իմ մարմինը և հնազանդեցնում այն, որպեսզի գուցե ինքս խոտելի չլինեմ այն բանում, որ քարոզեցի ուրիշներին» (Ա Կորնթ. Թ 27): Հիմա հասկացա՞ր կերակուրի վնասը: Պողոս առաքյալը, որ հրաժարվել էր աշխարհից և Քրիստոսին էր հետևում, Աստծու համար մեռնելու պատրաստ և Քրիստոսի հետ մշտապես զրուցող, ինչպե՞ս է վախենում կերակուրից, այս պատճառով մաշեցնում է իր անձը, որ հանկարծ չուժեղանա մարմինը և անհնազանդ գտնվի Աստծուն, ինչպես որ ինքն էլ վկայեց:*

Հարց. *Այդ ի՞նչ վկայություն է:*

Պատասխան. *«Քանզի մարմնավոր խորհուրդը թշնամություն է առ Աստված, որովհետև չի հնազանդվում Աստծու օրենքին. և նա ոչ իսկ կարող է: Նրանք, որ մարմնի իշխանության տակ են, չեն կարող հաճելի լինել Աստծուն» (Հռոմ. Ը 7-8): Ճշմարիտ է: Աստծուն հաճելի լինել ցանկացողը Նրա բոլոր պատվիրանները պիտի կատարի, իսկ Աստծու պատվիրանները հակառակ են մարմնի ցանկություններին: Մարմնասեր մարդը չի կարող հաճելի լինել Աստծուն, որովհետև չի կարող պահել Նրա պատվիրանները:*

Հարց. *Այդ դեպքում ինչպե՞ս վարվեմ, եղբա՛յր, եթե կերակուր չուտեմ, սովամահ կլինեմ, իսկ եթե ուտեմ, մարմինս զորանալով շատ մեղքերի պատճառ կլինի, այս առումով ի՞նչ խրատ ունես տալու:*

Պատասխան. *Ես քեզ չեմ կարող ասել, թե բան չուտես, որովհետև եթե ոչինչ չուտես, անշուշտ կմեռնես, իսկ դա հաճելի չէ Աստծուն: Պողոս առաքյալը, որ ասում է, թե «ճնշում եմ մարմինս», մի՛ կարծիր, որ ամենևին ոչինչ չէր ուտում: Բայց ուտելուն զուգահեռ հաճախ ծոմ էր պահում և զգուշանում էր պարարտացնող կերակրից, որպեսզի մարմինը չզորանա: Ուստի հետևյալ խրատն եմ քեզ տալիս, եթե արհամարհես ծոմն ու պահքը և միշտ մարմինդ զորացնես պարարտ կերակուրներով, անշուշտ կբորբոքվի ցանկության բոցը, և վերը նկարագրված մեղքի բոլոր անիվները պտտվելով մարմինդ մեքենան մեղքի ծովով դեպի դժոխք կառաջնորդեն: Բայց եթե երբեմն ծոմ ու պահք պահես, զսպես մարմինդ և մաշեցնես, շատ մեղքերից ազատ կմնաս՝ ըստ Պետրոս առաքյալի խոսքի. «Ով մարմնով*

*չարչարվում է, դադարում է մեղանչելուց» (Ա Պետրոս Դ 1): Եվ երբ հեռանաս մեղքից, կսկսես բարեգործություն անել: Որովհետև այն օրը, երբ ծոմ ես պահել, կտեսնես, որ հատուկ օր է եղել քեզ համար, միտքդ Աստծուն ուղղված կլինի, իսկ անձդ՝ նվիրված Աստծուն, որպես պատարագ: Թեպետ երեսդ տրտում կլինի, բայց հոգիդ կուրախանա, որովհետև ծոմը հոգուն ցանկալի է, իսկ մարմնի ուզածը միշտ ուտել-խմելն է ու մարմնավոր զվարճալիքները: Դրա համար ծոմի կամ պահքի օրերին մարմնասեր մարդիկ տրտմեցնում են իրենց դեմքերը, այս է պատճառը, որ Քրիստոս ասաց. «Երբ ծոմ պահեք, տրտմերես մի՛ եղեք կեղծավորների նման» (Մատթեոս Զ 16): Ծոմապահության օրերում, երբ տկարանում է մարմինը, մեղքի անիվները դադարում են գործելուց, որովհետև չի բռնկվում վառելանյութը: Կրքերիդ ատամնանիվներն անշարժ են մնում, և մարմնիդ մեքենան մնում է տեղում կանգնած: Եվ այդ ժամանակ սկսում է վառվել հոգու սիրո կրակը, ինչպես Քրիստոս ասաց. «Երկրի վրա կրակ գցելու եկա և ինչքան եմ կամենում, որ արդեն իսկ բորբոքված լինի» (Ղուկաս ԺԲ 49): Բայց մարմնասեր մարդկանց սրտում այս կրակը չի բորբոքվի, քանի որ մարմնի կրակն ավելի շատ է: Իսկ եթե մարմնիդ կրակը քիչ-քիչ սկսես մարել, մարմինդ օրըստօրե կսկսի տկարանալ, այդ պահին է, որ զորանում է հոգին, և սիրո կրակը բորբոքվելով շարժելու է հոգուդ տիեզերանավի շարժիչը, որն էլ երկինք թռչելով տանելու է քեզ դեպի արքայություն: Տեսա՞ր, եղբա՛յր, քանի դեռ մարմինդ զորեղ է, մեքենայի անիվները պտտվելով ընթանում են մեղքի շավիղներով, որը տանում է դեպի դժոխք, իսկ երբ չես կատարում մարմնիդ կամքը, այն տկարանում է, և հոգիդ զորանալով տանում է քեզ արքայություն: Այս մասին Պողոս առաքյալն ասում է. «Եթե ըստ մարմնի ապրեք, կմեռնեք. իսկ եթե Հոգով մարմնի գործերը սպանեք, կապրեք» (Հռոմ. Ը 13): Հիմա, կարծում եմ, ըմբռնեցիր պարարտ կերակուրի վնասն ու ծոմի և պահքի օգուտը: Լա՛վ խորհիր, այստեղ ինչ գրված է, անձամբ եմ փորձել և այդ փորձառությամբ եմ խոսում քեզ հետ: Հնում մինչև երկրի թագավորը չմեռներ, մեկ ուրիշին չէին նստեցնում թագավոր, քանի որ եթե մեկ երկրին երկու թագավոր իշխի, ապա հպատակ ժողովուրդը շատ խեղճ վիճակի կհասնի, որովհետև մեկը մյուսին հակառակ հրամաններ պիտի արձակեն, ինչպես որ ԺԸ Շավիղում ենք նշել: Նմանապես էլ և դու խեղճ վիճակում կհայտնվես, եթե ծառայես երկու թագավորի: Պիտի մի թագավորին մեռցնես և մյուսին հնազանդվես, այսինքն՝ կամ պիտի հոգիդ մեռցնես՝ հնազանդվելով մարմնիդ, և կամ էլ հոգուդ հնազանդվելով՝ մարմինդ մեռցնես:*

## Ռավիդ ԼԴ

**Հարց.** *Կերակուրի վնասակարությունը և ծոմի ու պահքի օգտակարությունը լավ ըմբռնեցի, հիմա կուզեի հասկանալ, թե ի՞նչ բան է աղոթքը և ինչո՞ւ պիտի աղոթենք:*

**Պատասխան.** *Եթե միտքդ բացված լիներ, ապա առանց այդ հարցի ինքնին կըմբռնեիր:*

**Հարց.** *Բայց ես ինչպե՞ս կարող եմ հասկանալ, եթե սովորեցնող չլինի:*

**Պատասխան.** *Եթե զորագլուխն առաջնորդում է զորքին, այլևս հարկ կա՞, որ զորքը հարցնի, թե ինչպե՞ս է ընթանալու, և կամ մեկ ուրիշ առաջնորդողի կարիք զգա:*

**Հարց.** *Հիմա ես իմ առջևից քայլող զորագլուխ ունե՞մ:*

**Պատասխան.** *Այո՛, ունես: Պողոս առաքյալը մեզ ասում է, որ ունենք զորագլուխ. «Նայենք Հիսուսին՝ հավատի զորագլխին, այն կատարելագործողին, որն Իր առաջ դրված ուրախության համար հանձն առավ խաչը, արհամարհեց ամոթը և նստեց Աստծու Աթոռի աջ կողմում» (Եբր. ԺԲ 2): Ահա՛ քո զորագլուխը, գնա՛ Նրա մոտ և սովորի՛ր, ինչ ճանապարհով որ ընթացավ, հետևիր, որ հասնես Նրան, ինչպես որ Պետրոս առաքյալն է գրում. «Քրիստոս էլ ձեզ համար մեռավ և ձեզ օրինակ թողեց, որ Իր հետքերով գնաք» (Ա Պետրոս Բ 21):*

Հարց. Շատ դժվար իրադրության առջև ես ինձ կանգնեցնում: Քրիստոսից միայն մեռնե՞լ պիտի սովորենք, մի՞թե ուրիշ բան չարեց:

Պատասխան. Խնդրեմ, ներկայացնեմ նաև կատարածները. նախ՝ քառասուն ցերեկ ու գիշեր ծոմ պահեց, ինչպես նաև գիշերները մինչև լույս աղոթում էր, ինչպես Ավետարանն է վկայում. «Եվ այդ օրերին Հիսուս լեռը բարձրացավ աղոթելու և ամբողջ գիշերն անցկացրեց Աստծուն աղոթելով» (Ղուկաս Զ 12): Այնուհետև Մատթեոս ավետարանիչը գրում է. «Եվ երբ ժողովրդի բազմությունն արձակեց, առանձին լեռը բարձրացավ աղոթելու համար» (Մատթեոս ԺԴ 23): Եվ բազում անգամ սուրբ ավետարանիչները հիշում են Քրիստոսի աղոթք անելու մասին, բայց դու պարզապես պիտի ըմբռնես, որ Քրիստոս, Ինքը լինելով Աստծու Որդի, կարոտ չէր աղոթքի, այլ մեզ օրինակ լինելու համար էր աղոթում, ու նաև մեզ պատվիրեց աղոթել: Ինչպես մի վարպետ, երբ իր արհեստը աշակերտին է սովորեցնում, նախ աշակերտի աչքի առջև պատրաստում է, ինչ որ պիտի սովորեցներ, և հետո դիմում է աշակերտին. «Ինչպես որ տեսար, այդպե՛ս էլ պատրաստիր»: Բայց եթե վարպետը միտք չունենա սովորեցնելու, ոչինչ ցույց չի տա, իսկ աշակերտն էլ, եթե այդ արհեստը չգործածի, հանցավոր չի լինի, քանի որ վարպետը չսովորեցրեց: Բայց Քրիստոս Ինքը անելուց բացի, աշակերտներին սովորեցրեց ու պատվիրեց. «Ինչ որ ձեզ սովորեցրի, սովորեցրեք Ինձ հավատացողներին, որ պահեն», ինչպես որ ասացինք Ը Շավիղում, այն, ինչ Ինքը չարեց, մեզ նույնպես չպատվիրեց: Որևէ տեղ գրված չէ, թե Քրիստոս մինչև երեսուն տարեկան դառնալը քարոզում էր, բայց երբ երեսունը լրացրեց և մկրտվեց, քառասուն օր ծոմապահությունից ու սատանային հաղթելուց հետո սկսեց ժողովրդին քարոզել. «Ապաշխարե՛ք, մոտ է երկնքի արքայությունը» (հմմտ. Մարկոս Ա 15): Եվ ինչպես, երբ բժիշկը հիվանդին դեղ պիտի տա, նախ ինքն է մի քիչ ճաշակում և ապա նոր տալիս հիվանդին, որպեսզի նա դժվարություն չունենա դեղ ընդունելուց: Այսպես էլ Քրիստոս, ինչ որ սովորեցրեց մեզ, նախ Ինքն արեց:

Հարց. Այդ ամենը հասկացա, բայց աղոթքի համար Քրիստոս ի՞նչ ասաց:

Պատասխան. Նախ ասաց. «Միշտ, առանց ձանձրանալու պետք է աղոթել»: Ապա որպես օրինակ սովորեցրեց Տերունական աղոթքը:

Հարց. Հիմա հիշեցի: Երբ քեզ դիմեցի՝ ասելով, թե ինձ «Հայր մեր»-ը սովորեցրու, ասացիր. «Դեռ ժամանակը չէ», կարծում եմ, արդեն հասել է ժամանակը, և եթե կամենաս, կսովորեցնես, որպեսզի ես էլ Քրիստոսին աշակերտ լինեմ:

Պատասխան. Խնդրե՛մ: Բայց շատ դժվար է այս աղոթքը:

Հարց. Ի՞նչ դժվար բան կա, եղբա՛յր, տեսնում եմ, թե ինչ հեշտությամբ ես դու արտասանում, մի՞թե ես չեմ կարող:

Պատասխան. Իրավ, ասելը հեշտ է, բայց մեջը երկյուղալի շատ խոսքեր կան:

Հարց. Որո՞նք են այդ երկյուղալի խոսքերը:

Պատասխան. Նախ, շատ դժվար բան է, երբ ասում ենք. «Հա՛յր մեր, որ երկնքում ես»: Քանի որ, երբ Աստծուն Հայր ենք կոչում, մենք դառնում ենք Նրա որդիները, ուրեմն պարտավոր ենք Նրան նմանվել, ինչպես Պողոս առաքյալն է ասում. «Նմանվենք Աստծուն» (Եփես. Ե 1), իսկ Քրիստոս հավելում է. «Կատարյալ եղեք, ինչպես որ ձեր երկնավոր Հայրն է կատարյալ» (Մատթեոս Ե 48), և ասելուց առաջ բացատրեց մեզ Հայր Աստծու բնությունը, որ «Արևը հավասարապես ծագեցնում է թե՛ բարիների և թե՛ չարերի վրա, նույնպես և անձրևը» (Մատթեոս Ե 45): Նաև ավելացնում է. «Գթասիրտ եղեք, ինչպես որ գթասիրտ է ձեր երկնավոր Հայրը»: Ուստի եթե մեր բարեգործություններով կատարյալ չլինենք, Նրա բնությունը մեր վրա չվերցնենք ու Նրան չնմանվենք, ապա ինչպե՞ս պիտի համարձակվենք Աստծուն Հայր կոչել: Ենթադրենք, մի բարեպաշտ և արդար մարդ, եթե անառակ զավակ

ունենա, որը երբեք հոր պատվերը չպահի ու միշտ ոտնատակ տա հոր պատիվը։ Կարող է պատահել, որ հայրն իր սրտի կսկիծը չարտահայտի, բայց մտքով կմխա և կայրվի։ Եվ երբ անառակ զավակը գա իր հոր մոտ և նրան «հայր» կոչի, ի՞նչ պատասխան կստանա, մի՞թե հայրը չի ասի. «Ես քո հայրը չեմ, իսկ դու իմ զավակը չես», հաճախ պատահում է, որ հայրերը վռնդում են իրենց զավակներին և զրկում հայրական ժառանգությունից։ Արդ, եթե այս մարմնավոր հայրերը, որոնք սխալական են և ենթակա մեղքի ազդեցությանը, չեն ներում իրենց անառակ զավակներին, ապա եթե ամենասուրբ Աստծու պատվերը չպահենք, և միշտ գործենք Նրա կամքին հակառակ, ի՞նչ համարձակությամբ պիտի նրան «Հայր» կոչենք։ Որովհետև հետևելով Սուրբ Գրքի ընթացքին՝ կարծում եմ, երբ «Հայր մեր, որ երկնքում ես» ասենք, Աստված մեզ կպատասխանի. «Ես ձեր հայրը չեմ։ Դուք ստախոս եք, իսկ ստախոսների հայրը սատանան է, իսկ նրա բնակարանը՝ դժոխքը։ Դուք չեք կարող գալ երկնքի արքայություն, ինչքան էլ, որ «Հայր մեր, որ երկնքում ես» արտասանեք։ Որովհետև Ինձ հայր եք կանչում, բայց ծառայում եք սատանային և միշտ նրա կամքի համեմատ եք գործում։ Ինձ մոտ կգան Իմ կամքը կատարողները, և Ես եմ նրանց Հայրը»։

Տեսնո՞ւմ ես, որ անգամ «Հայր մեր, որ երկնքում ես» չենք կարող ասել, եթե Նրա պատվիրանները չենք պահում։

Երկրորդ՝ դժվար է նաև «Սուրբ թող լինի Քո անունը» բառերն արտասանել, որովհետև Աստված ի բնե սուրբ է, և սա է պատճառը, որ սերովբեները և քերովբեներն անընդհատ երգում են. «Սո՛ւրբ, սո՛ւրբ, սո՛ւրբ զորությունների տեր»։ Ուրեմն երբ մենք ասում ենք «Սուրբ թող լինի Քո անունը», նշանակում է ընդունում ենք, որ Աստծու անունը ըստ էության սուրբ է, միշտ սուրբ պիտի լինի և երբեք պիտի չարատավորվի։ Իսկ Աստծու անունը ո՞վ պիտի արատավորի, եթե ոչ մենք։ Այսպես, օրինակ, մի զավակ, որ անառակությամբ է զբաղվում, անարգանքն ու ամոթը իր հոր վրա է։ Իր վարմունքով նա արատավորում է իր հոր անունը, դրա համար էլ տեսնողներն ու լսողներն ասում են. «Հոր անունը արատավորեց և պատիվը կոտրեց»։ Իսկ հայրը չար զավակի անառակ վարքի պատճառով մեծ ցավ է ապրում և անգամ ամաչում է դուրս գալ և մարդկանց երեսին նայել։ Դե պատկերացրո՛ւ, որ այս իրադրության մեջ չար զավակը գա և իր հորն ասի «Ո՛վ հայր, քո անունը թող փառավոր լինի»։ Ի՞նչ ես կարծում, ի՞նչ պատասխան կլսի, մի՞թե հայրը չի ասի. «Հեռացի՛ր աչքիցս, անօրենի մեկը, անունս հող դարձրիր, այլևս ամաչում եմ մարդկանց երեսին նայել»։

Սրան հակառակ, հոր հնազանդ ու բարի զավակի վարքը տեսնողներն ու լսողները երանի են տալիս նրան, որ այդպիսի բարի զավակ ունի։ Դե՛, իսկ հայրն էլ, իր զավակի բարի համբավը լսելով, կուրախանա և կփառավորվի, որովհետև զավակի ցուցաբերած բարի վարքով իր փառքն ու պատիվն է ավելանում։ Ուստի երբ այս բարի զավակը գա և հորը դիմի՝ ասելով. «Ո՛վ հայր, թող փառավորվի քո անունը», ի՞նչ ես կարծում, այս դեպքում հայրը չպիտի ասի. «Շա՛տ ապրես, իմ բարի՛ զավակ», և փաթաթվելով համբուրի նրան և իր ունեցվածքի տերն ու ժառանգորդը նշանակի։

Այսպես էլ մենք, երբ դիմենք Հայր Աստծուն՝ ասելով. «Սուրբ թող լինի Քո անունը», պետք է, որ Նրա պատվիրաններն անթերի կատարենք, որպեսզի մեր բարի գործերը տեսնելով՝ ուրիշներն էլ փառավորեն Աստծու անունը, ինչպես որ Քրիստոս ասաց. «Որպեսզի տեսնեն ձեր բարի գործերն ու փառավորեն ձեր Հորը, որ երկնքում է» (Մատթեոս Ե 16)։ Իսկ Պողոս առաքյալն էլ գրում է. «Փառավորեցեք Աստծուն ձեր մարմինների մեջ» (Ա Կորնթ. Զ 20)։ Տեսնո՞ւմ ես, ինչպես մեր բարի գործերով փառավորվում է Աստծու անունը, այնպես էլ չար արարքով վատաբանվում է Նրա սուրբ անունը, որի համար էլ Եսայի մարգարեն գրում է. «Ձեր պատճառով Իմ անունը մշտապես հայհոյվում է հեթանոսների մեջ» (Եսայի ԾԲ 5)։

*Այստեղից էլ կարելի է եզրակացնել, որ եթե չես պահում Աստծու պատվիրանները, չես կարող ասել «Սուրբ թող լինի Քո անունը»:*

*Երրորդ՝ նմանապես դժվար է նաև ասել, «Քո թագավորությունը թող գա»: Սա նշանակում է խոստովանել, որ հպատակ ու հնազանդ ծառա եմ Աստծուն և Նրա թագավորությանը, հնազանդ Նրա կամքին և պատրաստ այն կատարելու: Նաև զինվորագրված ես և Թագավորի զորքի անդամ ես, պետք է Նրա օրենքներով կրթված լինես, հասարակ մարդկանցից ավելի լավ պիտի իմանաս Նրա կամքն ու կանոնները և ջանաս այն մինչև վերջ կատարել: Բայց եթե Նրա կամքին հակառակ ընթացք ես բռնել, ապա պիտի վախենաս արտաբերել «Քո թագավորությունը թող գա» արտահայտությունը: Քանի որ, երբ գա, ոչ թե պիտի սիրի, այլ պատժի մեղավորներին: Այդ ժամանակ ո՞ւր պիտի թաքնվես, որ քեզ չգտնի: Ըստ Դավիթ մարգարեի, եթե «Երկինք բարձրանաս, այնտեղ է, եթե դժոխք իջնես, այնտեղ էլ մոտ է»:*

*Չորրորդ՝ «Քո կա՛մքը թող լինի երկրի վրա, ինչպես որ երկնքում է» խոսքերն ասելը դժվար է առավել: Որովհետև ինչպես արարեց հրեշտակները երկնքում, իսկ երկնքի երեսին արեգակն ու աստղերը ստեղծեց ու կարգավորեց, և որոնք նույն կարգ ու կանոնով մնում են և չեն շեղվում իրենց տեղից: Նաև նույն կարգին են հետևում երկրի վրա ստեղծվածները՝ թե՛ հող, թե՛ ծով և թե՛ անասուն և մնացածները: Այսպիսով բոլոր արարածները հնազանդ են Աստծու կամքին և սահմանած օրենքին, և մենք նույնպես նրանց պես պատրաստ ենք կատարելու Նրա կամքը: Բայց եթե Աստծու կամքին հակառակվենք, ապա ի՞նչ համարձակությամբ պիտի ասենք. «Քո կամքը թող լինի երկրի վրա, ինչպես որ երկնքում է»:*

*Հինգերորդ՝ դժվար է նաև. «Մեր հանապազօրյա հացը տո՛ւր մեզ այսօր» խոսքերն ասելը, որովհետև եթե միայն առօրյա հացի մասին է խոսքդ, վնաս չունի. բայց եթե մեկ կամ երկու տարվա ապրուստդ ամբարես ու կուտակես, բայց Աստծուց օրվա հաց ուզես, դա՛ արդեն հակառակ է Նրա կամքին: Մանավանդ հակառակ է, երբ դրամ կուտակած, սնդուկները ոսկով լցված, ցորենն ամբարած և ամենօրյա բարիքներով լիացած հարուստներն անգամ, օրվա հացի կարոտ աղքատների նման օրվա հացն են ուզում: Բայց եթե աղքատի խնդրանքը քաղցից չմեռնելու համար է, ապա հարուստի բաղձանքը իր ագահությանը հագուրդ տալու համար է: Ցորեն ամբարած հարուստները, որ ամենօրյա հաց են պահանջում, մի՛ կարծիր, թե իրենց ուտելու համար է, այլ ցանկանում են, որ Աստված աղքատների ուտելիքն էլ վերցնի ու իրենց տա:*

**Հարց.** *Ուրեմն հարուստները երբ «Հայր մեր» աղոթքը ասեն, պետք է այդ բառերը չարտասանեն:*

**Պատասխան.** *Ամեն մի քրիստոնյա պարտավոր է աղոթել այդ խոսքերով, բայց ինքը պիտի հարմարվի այդ խոսքերին և նոր արտասանի: Որովհետև Քրիստոս երբ այս աղոթքը սովորեցրեց աշակերտներին, պատվիրեց. «Երբ ճամփա գնաք, հաց մի՛ վերցրեք ձեզ հետ, երկու հագուստ մի՛ ունեցեք, նաև դրամ մի՛ ունեցեք ձեր գոտու մեջ», որպեսզի հաջորդ օրվա հացի դրամ չունենան և այսօր, արդեն վաղվա հոգսը չքաշեն: Սրանից բացի, երբ Հովհաննես Մկրտիչը Հորդանան գետի ափին մկրտում էր, և հարուստ մարդիկ գալով մկրտվում էին և խոստովանելուց հետո հարցնում. «Այսուհետև ի՞նչ պիտի անենք», Հովհաննես Մկրտիչը պատասխանում էր. «Ով որ երկու զգեստ ունի, մեկը թող տա նրան, ով չունի, և ով որ ուտելիք ունի, նույն ձևով թող անի» (Ղուկաս Գ 11): Լա՛վ խորհիր, երբ ազատվեցին հին մեղքերից ու հին օրենքից և նոր օրենքի մեջ մտան, իրենց աղքատությունն էր քարոզվում, որը համահունչ է Քրիստոսի խոսքին: Որովհետև եթե մեկը երկու հաց ունենա, ապա մեկն այսօր կուտի, իսկ մյուսը կպահի հաջորդ օրվան: Դրա համար էլ մի հացը երբ տա ամենևին չունեցողին, ապա վաղվա հաց չի ունենա ուտելու և վաղվա հոգսն*

*այլևս այսօր չի հոգա: Հիմա եթե ուշադիր լինենք թե՛ այս խոսքերին, թե՛ Քրիստոսի՝ աղքատներին տված երանիներին և հարուստներին տված վայերին, ինչպես նաև «Ով որ իր ամբողջ ունեցվածքից չհրաժարվի, չի կարող իմ աշակերտը լինել» (Ղուկաս ԺԴ 33), և մանավանդ «Հայր մերի» խոսքերի էությանը, ապա պետք է հետևություն անենք. քրիստոնյան չպետք է հարուստ լինի, տան մեջ վաղվա համար հաց չպիտի ունենա, որ «Հայր մերն» ասելու իրավունք ունենա: Անշուշտ մեր կյանքը պիտի «Հայր մերի» խոսքերին համաձայնեցնենք, ինչպես առաքյալների ժամանակ, երբ հարուստ մարդիկ օրինակ ծառայեցին և իրենց ունեցվածքը դարձրին ընդհանուրի սեփականությունը: Ոչ ոք չէր ասում, թե այսինչ բանն իմն է, ամեն ինչ տալիս էին աշակերտներին, որոնք էլ բաժանում էին կարոտյալներին, ինչպես որ կարդում ենք Գործք Առաքելոցի Դ գլխի 24 համարի մեջ: Որովհետև առաքյալների քարոզից հասկացան, որ հարուստը դժվարությամբ կմտնի երկնքի արքայություն, դրա համար էլ իրենց ողջ ունեցվածքը բաժանեցին:*

**Հարց**. *Ուրեմն ստացվում է, որ բոլոր հարուստները դժոխք են գնալու, իսկ բոլոր աղքատներն՝ արքայություն:*

**Պատասխան**. *Ոչ բոլոր հարուստներն են դժոխք գնալու, և ոչ էլ բոլոր աղքատներն՝ արքայություն, որովհետև երկու խավից էլ պիտի գնան թե՛ արքայություն և թե՛ դժոխք: Թեպետ Քրիստոս ասաց. «Հարուստ մարդը դժվարությամբ կմտնի արքայություն», բայց չասաց, թե ամենևին չպիտի մտնի, այլ միայն՝ «դժվարությամբ»:*

**Հարց**. *Հարուստը ինչպե՞ս պիտի արքայություն գնա:*

**Պատասխան**. *Ամեն կերպ զգուշանալ մեղքից և միշտ կերակրել ու հագցնել աղքատներին: Հետևաբար այս մարդը, եթե Աստծուց ամենօրյա հացն ուզի, վնաս չունի, քանի որ իր համար չի ուզում, այլ աղքատների: Նմանատիպ մարդը «Հայր մերը» միշտ համարձակությամբ կարող է ասել և վերջում էլ արքայություն գնալ. տեսա՞ր, թե որն է հնարը: Իսկ աղքատների համար էլ Քրիստոս ասաց. «Երանի՛ հոգով աղքատներին, որովհետև նրանցն է երկնքի արքայությունը» (Մատթեոս Ե 3): Բայց եթե աղքատը դժգոհի իր վիճակից և Աստծուց չգոհանա, այլ սկսի գանգատվել, թե. «Ի՞նչ եմ ես արել, որ Աստված ինձ այսպես աղքատ է ստեղծել, իսկ հարևանիս՝ հարուստ», և այսպես տրտնջալով նախանձի հարուստներին և ինքն էլ լցվի հարստանալու ցանկությամբ, ապա վստահաբար կարելի է ասել, որ այսպիսին հոգով աղքատ չէ, այլ աղքատ է միայն մարմնով և դժոխք է գնալու: Հարուստն ուտել-խմելով, հագնվելով ու վայելքներով դժոխք կգնա, և նմանապես այսպիսի աղքատը թեկուզ սոված, ծարավ ու մերկ, բայց կգնա դժոխք: Տեսա՞ր, որ իր վիճակից դժգոհ աղքատը կգնա դժոխք, իսկ Աստծու պատվիրանը պահող հարուստը՝ արքայություն:*

**Հարց**. *Ուրիշ ի՞նչ երկյուղալի խոսքեր կան «Հայր մերի» մեջ:*

**Պատասխան**. *Վեցերորդ խոսքն այս է. «Ների՛ր մեզ մեր հանցանքները, ինչպես որ մենք ենք ներում նրանց, որ հանցանք են գործում մեր դեմ»: Կուզեի, որ խորհեիր այս խոսքերի դժվարության մասին: Օրինակ, եթե սիրտդ լցված է ոխակալությամբ, ինչպե՞ս պիտի համարձակվես այս խոսքերն ասել, այլապես Աստծուն պիտի խաբես:*

**Հարց**. *Բայց ի՞նչ պիտի անեմ, եղբա՛յր, եթե այդ աղոթքը չսովորեմ, քրիստոնյա չեմ լինի, իսկ եթե սովորեմ էլ, ասելու դժվարություն առաջ պիտի գա: Ուստի պիտի խնդրեմ, որ այս աղոթքը սովորելու և արտասանելու մի դյուրին միջոց առաջարկես:*

**Պատասխան**. *Այս աղոթքը շատ հեշտ է սովորել, իսկ արտասանելու դյուրին միջոցը Քրիստոս Ինքն է ցույց տվել: Եթե ուզում ես, կասեմ:*

**Հարց**. *Շա՛տ հետաքրքիր է, ասա՛, խնդրեմ:*

**Պատասխան**. *«Եթե սեղանի վրա քո ընծան մատուցելու լինես և այնտեղ հիշես, թե քո եղբայրը քո դեմ մի ոխ ունի, քո ընծան թո՛ղ սեղանի առաջ և գնա՛, նախ հաշտվի՛ր քո եղբոր հետ և ապա ե՛կ քո ընծան մատուցիր» (Մատթեոս Ե 23-24):*

**Հարց**. *Եթե եղբորս հետ խռով լինեմ, չե՞մ կարող այս աղոթքն արտաբերել:*

**Պատասխան**. *Ես չեմ կարող ասել քեզ, թե մի՛ աղոթիր. քանի որ Քրիստոս պատվիրեց. «Այսպես աղոթեցեք»: Բայց այս աղոթքը սովորեցնելուց հետո մի քանի խրատներ տվեց, որոնք ըմբռնելուց հետո, եթե տեսնես, որ խղճմտանքդ քեզ չի տանջում, ապա աներկյուղ կարող ես Տերունական աղոթքն անել:*

**Հարց**. *Իսկ ի՞նչ խրատներ տվեց Քրիստոս:*

**Պատասխան**. *Նախ Քրիստոս հրամայեց. «Եթե դուք մարդկանց ներեք իրենց հանցանքները, ձեր երկնավոր Հայրն էլ ձեզ կների: Իսկ եթե դուք մարդկանց չներեք իրենց հանցանքները, ձեր Հայրն էլ ձեզ չի ների ձեր հանցանքները» (Մատթեոս Զ 14-15): Երկրորդ՝ Մարկոս ավետարանիչը գրում է. «Երբ աղոթքի կանգնեք, թե մեկի դեմ մի բան ունեք, ներեցե՛ք, որպեսզի ձեր Հայրն էլ, որ երկնքում է, ների ձեզ ձեր հանցանքները» (Մարկոս ԺԱ 25): Եվ երրորդ՝ Սիրաք իմաստունն է գրում. «Ների՛ր քո եղբոր անիրավությունը, և միայն այն ժամանակ աղոթելիս քո մեղքերը կներվեն» (Սիրաք ԻԸ 2): Հասկացա՞ր հեշտ ուղին, եթե ոխակալ չես և պահում ես մնացած պատվիրանները, ապա միշտ ասա այս աղոթքը:*

**Հարց**. *Աղոթքի մասին ուրիշ ի՞նչ է ասված:*

**Պատասխան**. *Պողոս առաքյալն ասում է. «Անդադար աղոթեցե՛ք, ամեն ինչում գոհություն մատուցեք, որովհետև այդ է Աստծու կամքը ձեզ համար ի Քրիստոս Հիսուս» (Ա Թեսաղ. Ե 17-18): Երկրորդ՝ դարձյալ Պողոսը գրում է. «Ուզում եմ, որ տղամարդիկ աղոթեն ամեն տեղ, սուրբ ձեռքեր բարձրացնեն դեպի վեր, առանց բարկության և երկմտության» (Ա Տիմոթեոս Բ 8):*

*Ահա թե ինչքան օգտակար և հարկավոր բան է աղոթելը, որ Քրիստոսի պատվիրելուց բացի աշակերտներն էլ գրեցին: Իսկ աղոթքի զորությունը հայտնի է Քրիստոսի այս խոսքից. «(Դևերի) այս տեսակը ուրիշ բանով չի ելնի, եթե ոչ ծոմապահությամբ և աղոթքով» (Մարկոս Թ 28): Տեսնո՞ւմ ես, ծոմ ու աղոթքը հաղթում է դևերին, մանավանդ մարդկային լեզվին, որն ի բնե սովոր է խոսելու թե՛ չար և թե՛ բարի: Եթե չաղոթես, ապա լեզուդ չի լռի, և երանի թե հոգևոր խոսքեր ասեր, այնինչ հակառակը՝ գզիր խոսքեր է խոսում. դրա համար էլ Քրիստոս պատվիրեց մեզ. «Միշտ աղոթե՛ք», որովհետև եթե բերանը վարժվի աղոթքի, լեզուն այլևս մեղք գործելու ժամանակ չի ունենա: Միշտ Աստծու հետ խոսելով ժամանակ չի ունենա սատանային պատասխանելու:*

**Հարց**. *Ե՞րբ պետք է աղոթել:*

**Պատասխան**. *Հատուկ ժամի աղոթքը եկեղեցու ժամերգություններն են կամ «Հասարակաց» աղոթքը, որ առավոտից երեկո քահանաներն ու ժողովուրդը միասին աղոթում են, որովհետև այս աղոթքը պետք է միաբանությամբ լինի, դրա համար էլ հավաքվում են եկեղեցում: Իսկ Քրիստոսի այն խոսքը, թե «Միշտ պետք է աղոթել», առանձին կամ անհատական աղոթքի համար է ասված, որի համար ժամանակ կամ տեղ գոյություն չունի: Եթե ԺԲ Շավիղի մեջ ասած խրատներս պահել ես, երբ և որտեղ էլ որ ուզես, կարող ես կատարել քո առանձնական աղոթքը, և Աստված կլսի այն: Իսկ եթե չես պահել այդ խրատները, թեկուզ եկեղեցում բարձրանաս, կանգնես ժամարար քահանայի մոտ՝ Սուրբ Սեղանի առջև, քո աղոթքը Աստված չի լսի: Հիմա հասկացա՞ր, որ մեր առաջնորդն ու զորագլուխը Քրիստոս է: Նա բոլոր նեղություններին համբերելուց բացի մեզ օրինակ տալու համար ծոմ պահեց և միշտ աղոթեց՝ ասելով. «Սովորե՛ք Ինձանից»: Եվ դու, որ մտադրվել ես Քրիստոսի մոտ գնալ, ուրեմն Նրա անցած ճամփան բռնիր ու գնա և կհասնես, ինչպես Հովհաննես ավետարանիչն ասաց. «Ով ասում է, թե ինքը Նրա մեջ է բնակվում, պարտավոր է այնպես ընթանալ, ինչպես որ Նա էր ընթանում» (Հովհաննես Բ 6):*

# Ճ ա վ ի ղ   Լ Ե

**Հարց.** *Հիմա հասկացա Աստծու կամքը և բարեգործության ճիշտ ընթացքը, այսուհետև բարեգործություն պիտի անեմ, ուրիշ ի՞նչ պիտի սովորեցնես:*

**Պատասխան.** *Սովորելու պակաս բան չմնաց, բայց ձգտիր, որ չծուլանաս, որովհետև դու այժմ հոգևոր կրթություն և սեր ունես բարեգործություն անելու, շատ բարի: Բայց եթե չզսպես կամքդ ու դարձյալ սկսես մեղք գործել, ապա մեղքի մեջ էլ կմեռնես, և բոլոր բարեգործություններդ, որ արել ես, կորստյան կմատնվեն:*

**Հարց.** *Դարձյա՛լ նոր խնդիր: Բայց ինչպե՞ս պիտի կորստի մատնվի իմ գործած բարեգործությունը, եթե մեղքի մեջ մեռնեմ:*

**Պատասխան.** *Եզեկիել մարգարեն գրում է. «Եթե արդարն իր արդարությունից շեղվի, անարդարություն գործի՝ ըստ անօրեն մարդու կատարած բոլոր անօրենությունների, նրա կատարած բոլոր արդար գործերն էլ չեն հիշվելու: Այն մեղքերի համար, որոնց մեջ նա ընկել է, և այն հանցանքների համար, որ գործել է, դրանց մեջ էլ մեռնելու է» (Եզեկիել ԺԸ 24): Երկրորդ՝ Սիրաք իմաստունը գրում է. «Ինչպես այն մարդը, որ մեղքի պատճառով ծոմ է պահում և դարձյալ գնում ու նույն բանն է անում, ո՞վ կլսի նրա աղոթքը» (Սիրաք ԼԱ 31): Վերջապես Պողոս առաքյալն է գրում. «Քանզի եթե կամավոր կերպով ենք մեղանչում ճշմարտությունն իմանալուց և ընդունելուց հետո, ուրեմն մեղքերի քավության համար այլևս ուրիշ զոհ չի մնում, այլ մնում է դատաստանի ահեղ սպասումը և կրակի կատաղությունը, որ լափելու է Աստծու հակառակորդներին: Մովսեսի օրենքն արհամարհող մեկին անողորմաբար սպանում էին երկու կամ երեք մարդու վկայությամբ: Իսկ որչա՛փ ավելի խիստ պատժի արժանի պիտի համարեք նրան, ով ոտնահարել է Աստծու Որդուն և անմաքուր համարել Նոր Ուխտի արյունը, որով մաքրվել է ինքը և անարգել շնորհի Հոգին» (Եբր. Ժ 26-29): Սկզբում կարծես չէիր հավատում ասածիս, սակայն հիմա հասկացար, որ Նոր օրենքի դեմ մեղանչողը ի՞նչ սաստիկ պատժի է արժանի:*

**Հարց.** *Այդ դեպքում Քրիստոս ինչո՞ւ է ասում. «Մեկ բաժակ սառը ջուր խմեցնողի վարձքը չի կորչի»:*

**Պատասխան.** *Այո՛, ճշմարիտ է, Քրիստոսի աշակերտներից մեկին արած փոքրիկ ծառայությունն անգամ անվարձ չի մնա. «Ով որ ձեզ մի բաժակ ջուր խմեցնի հանուն այն բանի, որ դուք Քրիստոսինն եք, ճշմարիտ եմ ասում ձեզ, իր վարձը չպիտի կորցնի» (Մարկոս Թ 40): Քրիստոսի այս պատգամը չի հակասում ոչ մարգարեի և ոչ էլ Պողոսի խոսքին:*

# Ճ ա վ ի ղ   Լ Զ

**Հարց.** *Եթե մեղքից հեռու պահող այլ խրատ ունես, տո՛ւր, խնդրում եմ:*

**Պատասխան.** *Բոլոր մեղքերից հեռու պահող մի խրատ էլ ունեմ, այն էլ ասեմ և վերջացնենք:*

**Հարց.** *Ես էլ դա եմ փնտրում, որպեսզի մտքիս մեջ պահեմ ու երբեք չմեղանչեմ:*

**Պատասխան.** *Այս կյանքում մարդուն պատահող չորս դիպված կա, եթե դրանք մտքումդ պահես, երբեք չես մեղանչի:*

**Հարց.** *Որո՞նք են այդ չորս դիպվածները:*

**Պատասխան.** *Այդ չորսից մեկը մահն է, որ պատկերի պես միշտ պիտի պահես սրտիդ մեջ և խորհես նրա շուրջը, որպեսզի մեղք գործելու ժամանակ չունենաս, ինչպես որ Սիրաքն է ասում. «Հիշի՛ր քո վախճանի օրը, որ երբեք չմեղանչես» (Սիրաք ԺԸ 24): Քանի որ մահից ազատում չկա, ինչպես Դավիթ մարգարեն է գրում. «Ո՞վ է այն մարդը, որ պիտի ապրի ու մահ չտեսնի» (Սաղմոս ՁԸ 49): Ուրեմն մահից զորավոր բան չկա, քանի որ աշխարհի սկզբից մինչ այսօր անթիվ հզոր թագավորների է հաղթել: Եվ երբ մահը գա, ողջ ունեցվածքդ կմնա*

*այստեղ և հետո ոչինչ չես կարող տանել ըստ Դավիթ մարգարեի. «Մի՛ վախեցիր, երբ մարդ հարստանում է, և մեծանում է փառքը նրա տան, քանզի մեռնելիս հետը ոչինչ չի տանի» (Սաղմոս ԽԸ 17-18):*

**Հարց.** *Ո՞րն է մարդու մարմնի փառքը:*

**Պատասխան.** *Մարմնի փառքը հարստությունն է, պատիվը, գեղեցկությունը, գիտությունը, արվեստը, զորությունը, իշխանությունը, ճարտարախոս լինելը և այլն: Սակայն երբ մահվան սաստիկ հողմը փչի, կցամաքեցնի և կչորացնի այս ծաղիկը:*

**Հարց.** *Ինչո՞ւ ես մարմնի փառքը նմանեցնում ծաղկի:*

**Պատասխան.** *Նմանեցնողը ես չեմ, այլ Եսայի մարգարեն. «Իմացի՛ր, ամեն մարմին նման է խոտի, իսկ մարդու ամբողջ փառքը նման է խոտածաղկի: Խոտը չորանում է, նրա ծաղիկը՝ թափվում» (Եսայի Խ 6-7): Երկրորդ՝ Հակոբոս առաքյալը գրում է. «Իսկ հարուստը թող պարծենա, երբ Աստված խոնարհեցնում է իրեն, քանի որ հարստությունը պիտի անցնի, ինչպես խոտածաղիկը. որովհետև արևը ծագեց՝ խորշակով հանդերձ և չորացրեց խոտը, նրա ծաղիկն ընկավ, ու նրա վայելուչ տեսքը կորավ. նույնպես և հարուստը պիտի թառամի՝ իր շահերով հանդերձ» (Հակոբոս Ա 10-11): Նաև Պետրոս առաքյալն է կրկնում Եսայի մարգարեի խոսքը. «Ամեն մարմին նման է խոտի, և մարդու ամբողջ փառքը նման է խոտածաղկի. խոտը չորանում է, ծաղիկն էլ՝ թափվում» (Ա Պետրոս Ա 24): Վերջապես Սիրաքն է գրում. «Ամեն մարմին չորի նման մաշվում է, քանզի հավիտենականությունից ի վեր օրենք է. «Մահով պիտի մեռնես»: Ինչպես սաղարթախիտ ծառի դալար տերևը մերթ թափվում է և մերթ բուսնում, այնպես էլ մարմնի և արյան տեսակն է. մեկը վախճանվում, մյուսը՝ ծնվում» (Սիրաք ԺԴ 18-19): Եվ երբ մահանում է, զրկվում է վերը նշված փառքերից, ինչպես Պողոս առաքյալն է գրում. «Թե մարգարեություններ են, պիտի չքանան, թե լեզուներ, պիտի լռեն. թե գիտություն, պիտի անցնի. քանզի չափից քիչը գիտենք և չափից քիչն ենք մարգարեանում: Իսկ երբ գա կատարյալը, չափից քիչը կանհետանա» (Ա Կորնթ. ԺԳ 8-10): Մանավանդ զրկում և կարոտով է թողնում զավակներից, ծնողներից, եղբորից կամ կնոջից և կամ բարեկամներից: Եթե այս մասին լավ մտորես, այլևս չես ապավինի ունեցվածքիդ, գիտությանդ, գեղեցկությանդ, ճարտար խոսքիդ, արվեստիդ, զավակներիդ և բարեկամներիդ, քանի որ մահը կբաժանի բոլորից և կարոտով կթողնի քեզ:*

**Հարց.** *Իրոք որ մարդ արարածը նման է խոտի կամ ծաղկի:*

**Պատասխան.** *Կարելի է ասել, որ խոտից ավելի շուտ է չորանում և ծաղկից առավել շուտ թոշնում, քանի որ ծաղկի թափվելուց մի քանի օր հետո է խոտը չորանում, բայց մարդ արարածը առաջինը ինքն է մեռնում, և ապա խափանվում են նրա փառքերը: Խոտը հաճախ մարդուց առավել հարգի է, քանի որ երբ այն չորանում է, շատ զգուշությամբ պահում են որպես անասնակեր, բայց երբ մահանում է մարդը, անմիջապես իջեցնում են գերեզման և հողով ծածկում:*

**Հարց.** *Հասկացա, որ աշխարհում ամեն բան վերջանում է մահով, բայց մի՞թե չկա մի բան, որ մահը չկարողանա խափանել:*

**Պատասխան.** *Ըստ Հովհաննես ավետարանչի մի բան է հավիտենական. «Ով կատարում է Աստծու կամքը, մնում է հավիտյան» (Ա Հովհաննես Բ 17): Դրա համար պետք է արթուն մնալ, ինչպես Քրիստոս ասաց. «Արդ, արթո՛ւն կացեք, որովհետև չգիտեք, թե տանուտերը ե՛րբ կգա» (Մարկոս ԺԳ 35): Եվ երկրորդ՝ «Թող ձեր գոտիները մեջքներիդ պնդված լինեն, և ճրագներդ՝ վառված» (Ղուկաս ԺԲ 35):*

**Հարց.** *Քանի որ մեռնելով պիտի հող դառնանք, ապա ինչի՞ են պետք այսքան զգուշացումները:*

**Պատասխան.** *Երանի թե մեղավոր մարդիկ հող դառնալով միայն ոչնչանային և հարություն չառնեին:*

*Հարց.* Ի՞նչ է հարություն առնելը:

*Պատասխան.* Երբ կմեռնես, հողի տակ կդնես, մարմինդ փտելով կխառնվի հողին, և անունդ միաժամանակ կմոռացվի, ինչպես որ Սողոմոնն է ասում. «Մեր անունը պիտի մոռացվի ժամանակի ընթացքում, և ոչ ոք չի հիշելու մեր գործերը...: Արդարև, մեր կյանքը սահող ստվեր է, և ոչինչ չի կարող արգելել մարդուս վախճանը, քանզի երբ վախճանը կնքվի, այլևս ոչ ոք չի կարող վերադարձնել» (Իմաստ. Բ 4-5):

*Հարց.* Այդ սահմանված ժամանակից հետո ի՞նչ պիտի լինենք:

*Պատասխան.* Երբ լրանա Աստծու սահմանած ժամանակը, բոլոր մեռյալները հարություն կառնեն: Մեր նախահայր Ադամից մինչև Քրիստոսի երկրորդ գալուստը որքան մարդ որ աշխարհ է եկել ու մահացել, հրեշտակապետի փողի ձայնը լսելով՝ պիտի բոլորն էլ հարություն առնեն:

*Հարց.* Ի՞նչ վկայություն կարող ես բերել հարության վերաբերյալ:

*Պատասխան.* Այս մասին բազում վկայություններ կան, նախ Դանիել մարգարեն է վկայում. «Երկրում, հողի մեջ ննջածներից շատերը հարություն պիտի առնեն, ոմանք՝ հավիտենական կյանքի համար, և ոմանք՝ հավիտենական նախատինքի ու ամոթի համար» (Դանիել ԺԲ 2): Երկրորդ՝ Քրիստոս ինքն է վկայում. «Կգա ժամանակ, երբ բոլոր նրանք, որ գերեզմաններում են, կլսեն նրա ձայնը և դուրս կգան. ովքեր բարի գործեր են արել, կյանքի հարության համար, իսկ ովքեր չար գործեր են արել, դատաստանի հարության համար» (Հովհաննես Ե 28-29): Երրորդ՝ Եսային է վկայում. «Պիտի հառնեն ու կանգնեն մեռածները, որոնք գերեզմաններում են» (Եսայի ԻԶ 19): Չորրորդ՝ Պողոս առաքյալն է վկայում. «Պիտի նորոգվենք հանկարծակի, մի ակնթարթում, վերջին փողի ժամանակ, քանզի փողը պիտի հնչի, և մեռյալները հարություն պիտի առնեն առանց ապականության» (Ա Կորնթ. ԺԵ 52):

*Հարց.* Այդ դեպքում, ինչո՞ւ է Դանիել մարգարեն ասում. «Մահացածներից շատերը պիտի հարություն առնեն», արդյոք չի՞ կարելի եզրակացնել, որ բոլորը չէ, որ պիտի հարություն առնեն:

*Պատասխան.* Դանիելի խոսքը դատաստանի կանչվածների համար է, որովհետև դատաստանը միայն քրիստոնյաներինն է, ոչ թե անհավատներինը, ինչպես Դավիթ մարգարեն է ասում. «Ամբարիշտները չեն հառնի դատաստանին» (հմմտ. Սաղմոս Ա 5): Մի՞թե չգիտես, որ եթե մեկը մյուսին դրամ կամ ապրանք ավանդ տա, հաշիվը նրանից էլ կպահանջի: Ամենաբարի Աստված մեզ անհավատներին հավասար մարմնավոր բարիքներ տալուց բացի, տվեց նաև հոգևոր զանազան պարգևներ, սակայն որոնց հաշիվը մեզանից է պահանջելու, քանզի մարմնավոր բարիքներն անհավատներն էլ վայելում են:

# Հավիդ ԼԷ

*Հարց.* Շատ լավ: Հասկացա, որ ամեն բանից առաջ պիտի մահվան մասին մտածեմ: Ուրիշ ի՞նչ մտորման առարկա ունեմ:

*Պատասխան.* Երկրորդ մտորումը դատաստանի օրն է: Երբ Քրիստոս՝ արդար Դատավորը, նորից պիտի իջնի երկնքից և նստելով դատողի աթոռին՝ պիտի դատի յուրաքանչյուրին ըստ իր գործածի. արդարներին պիտի վարձատրի, իսկ մեղավորներին պիտի պատժի:

*Հարց.* Այդ մասին նախապե՞ս վկայություններ կան Սուրբ Գրքում:

*Պատասխան.* Որքան ուզես: Նախ Եսայի մարգարեն է վկայում. «Ահա գալու է Տերը ինչպես կրակ, և Նրա կառքը՝ ինչպես մրրիկ, որպեսզի բարկությամբ տա Իր հատուցումը և կրակի բոցով՝ Իր արհամարհանքը, քանզի համայն երկիրը պիտի դատվի Տիրոջ կրակով» (Եսայի ԿԶ 15-16): Երկրորդ՝ Եսային կրկին վկայում է. «Հասել է Տերն Իր սպառազեններով բնաջնջելու ողջ

*աշխարհը: Ողբացեք, քանզի մոտ է Տիրոջ օրը, և հասել է Աստծու պատուհասը: Ահա թե ինչու բոլորի ձեռքերը պիտի թուլանան, ամեն մարդու սիրտը պիտի դողա: Պատգամախոսները տագնապի մեջ պիտի ընկնեն, երկունքի ցավը պիտի բռնի նրանց, ինչպես ծննդաբերող կանանց: Տրտնջալով մեկը մյուսին պիտի նայի, պիտի զայրանան, և զայրույթից պիտի կարմրեն նրանց դեմքերը, քանզի Տիրոջ օրն ահավասիկ հասել է՝ լի անսահման բարկությամբ, ոխակալությամբ ու զայրույթով, որպեսզի աշխարհն անապատ դարձնի և մեղավորներին վերացնի այնտեղից: Արդարև, երկնքի աստղերը Հայկի համաստեղության և երկնային բոլոր լուսատուների հետ միասին լույս չեն տալու, արեգակն իր ծագման պահին պիտի խավարի, լուսինը նույնպես իր լույսը չպիտի տա» (Եսայի ԺԳ 5-10): Երրորդ՝ Հովել մարգարեն է վկայում. «Ես այն օրերին և այն ժամանակ կվերադարձնեմ Հրեաստանին և Երուսաղեմին գերությունից, կհավաքեմ բոլոր ազգերին, կիջեցնեմ նրանց Հոսափաթի ձորը և կդատեմ նրանց այնտեղ» (Հովել Գ 1-2): Չորրորդ՝ Դանիել մարգարեն է վկայում. «Նայում էի, մինչև որ աթոռներ դրվեցին, և մի Ծերունի նստում էր այնտեղ. Նրա հագուստը ձյան պես սպիտակ էր, Նրա գլխի մազերը մաքուր էին գեղմի նման, Նրա աթոռը՝ կրակի բոցի նման, և Նրա անիվները՝ ինչպես բորբոքված կրակ: Նրա առջևից հոսում էր կրակե հորդ մի գետ, հազար-հազարավորներ պաշտում էին Նրան, և բյուր-բյուրավորներ կային Նրա առջև: Նա ատյան նստեց, և գրքերը բացվեցին» (Դանիել Է 9-10): Հինգերորդ՝ Մաղաքիան է վկայում. «Ահա պիտի գա Տիրոջ օրը՝ հնոցի նման բորբոքված, և պիտի այրի նրանց» (Մաղաքիա Դ 1): Նույն մարգարեն կրկին վկայում է. «Ահա ես ձեզ մոտ եմ ուղարկում Թեզբացի Եղիային, նախքան որ կգա Տիրոջ մեծ ու երևելի օրը» (Մաղաքիա Դ 4): Վեցերորդ՝ Պողոս առաքյալն է վկայում. «Ժամերի և ժամանակների մասին կարիք չկա ձեզ գրելու, որովհետև դուք ինքներդ իսկ ստույգ գիտեք, թե Տիրոջ օրը այնպես է հասնում, ինչպես գողը՝ գիշերով: Երբ ասեն, թե խաղաղություն և ապահովություն է, այն ժամանակ հանկարծակի կհասնի նրանց կործանումը» (Ա Թեսաղ. Ե 1-3): Եվ վերջապես Պետրոսն է վկայում. «Տիրոջ օրը պիտի գա ինչպես մի գող, երբ երկինքը պիտի անցնի, չքանա շառաչյունով, և տարերքը՝ հրով կիզված պիտի լուծվի, և երկիրն ու ինչ գործեր, որ կան նրա վրա, հայտնի պիտի լինեն» (Բ Պետրոս Գ 10): Տեսա՞ր, եղբա՛յր, մարգարեներից բացի առաքելական վկայությունները նույնպես մեջբերեցի:*

**Հարց.** *Իսկ Քրիստոս որևէ բան չասա՞ց Իր գալստյան մասին:*

**Պատասխան.** *Եթե Քրիստոս չասեր, ապա առաքյալներն ինչպե՞ս պիտի իմանային: Քրիստոս Ինքն էլ վկայեց. «Պիտի տեսնեն մարդու Որդուն, որ գալիս է երկնքի ամպերի վրայով՝ զորությամբ և բազում փառքով: Եվ Նա պիտի ուղարկի Իր հրեշտակներին մեծ շեփորով, ու պիտի հավաքեն Նրա ընտրյալներին չորս կողմերից՝ երկնքի ծագերից մինչև մյուս ծագերը» (Մատթեոս ԻԴ 30-31): Ահա՛ այս խոսքի համար է Պողոսը գրում. «Տերն Ինքը ազդարարության նշանով, հրեշտակապետի ձայնով և Աստծու շեփորով պիտի իջնի երկնքից, և Քրիստոսով մեռածները առաջինը հարություն պիտի առնեն» (Ա Թեսաղ. Դ 15):*

**Հարց.** *Այսքան բացատրություններից հետո հասկացա Քրիստոսի երկրորդ գալուստը: Բայց մարգարեներն ու առաքյալները հաճախակի հիշատակում են «այն օրը» կամ «այն մեծ օրը», ինչպես նաև «Տիրոջ օրը»: Արդ, ինչի՞ համար են այդքան մեծ տեղ տալիս այդ օրվան:*

**Պատասխան.** *Բայց ինչպե՞ս կարող են մեծ տեղ չտալ, երբ այսքան դարեր առաջ ստեղծված տիեզերքն այն օրը պիտի ոչնչանա: Երկնային մարմիններն անգամ պիտի խավարեն ու վայր թափվեն: Օվկիանոսները, ծովերը, գետերն ու աղբյուրները այն օրը պիտի ցամաքեն: Բոլոր ծառերը, խոտերն ու ծաղիկները այն օրը պիտի չորանան. կրակե գետ պիտի հոսի այն օրը, ինչպես Դավիթ մարգարեն է ասում. «Նրա առջև հուր պիտի բորբոքվի» (Սաղմոս. ԽԹ 3): Այս աշխարհում գտնվող բոլոր մետաղները՝ ոսկի, արծաթ, պղինձ, կապար և երկաթ, այն*

*օրը պիտի հալվեն ու ոչնչանան, բոլոր փայտերը, տները, քարերը և մինչև անգամ օդը, այն օրը պիտի վառվեն կրակով. և այդքան դարեր առաջ ստեղծված աշխարհը այն օրը պիտի կրկին նորոգվի, ինչպես Պետրոս առաքյալն է գրում. «Բայց մենք, Աստծու խոստման համաձայն, աչքներս հառած սպասում ենք նոր երկնքի և նոր երկրի, որոնցում արդարությունն է բնակվում» (Բ Պետրոս Գ 13): Երկրորդ՝ Հովհաննեսն է գրում. «Ապա տեսա նոր երկինք ու նոր երկիր, քանզի առաջին երկինքն ու երկիրն անցել էին, և այլևս ծով չկար» (Հայտն. ԻԱ 1): Երրորդ՝ Եսային է վկայում. «Ինչպես որ նոր երկինքն ու նոր երկիրը, որ Ես եմ ստեղծում, մնալու են Իմ առաջ,- ասում է Տերը» (Եսայի ԿԶ 22): Տեսա՞ր, երկինքն ու երկիրը «այն օրը» պիտի նորոգվեն, հրեշտակաց բոլոր դասերն «այն օրը» պիտի վայր իջնեն, մեծ փողն «այն օրը» պիտի հնչի, և մեռելներն «այն օրը» պիտի հարություն առնեն, Քրիստոս՝ արդար Դատավորը, «այն օրը» երկնքից վայր պիտի իջնի մեծ փառքերով, պիտի նստի դատավորի աթոռին, բոլոր մարդկանց գործերը պիտի քննվեն և հայտնի դառնան «այն օրը», բոլոր արդարների վարձքը, ինչպես նաև մեղավորների պատիժը «այն օրը» պիտի տրվի. արդարները՝ հրեշտակներին, իսկ մեղավորները՝ սատանային պիտի «այն օրը» խառնվեն:*

**Հարց**. *Սուրբ Գրքում ի՞նչ վկայություններ կան, որ Քրիստոս պիտի նստի դատավորի աթոռին և դատի բոլորին:*

**Պատասխան**. *Բազում վկայություններ կան: Նախ Սողոմոնն է վկայում. «Ահա լսի՛ր իմ բոլոր խոսքերի վերջաբանը. վախեցի՛ր Աստծուց և պահի՛ր նրա պատվիրանները. ահա այս է մարդն ամբողջովին, որովհետև Աստված պիտի բոլոր արարածների դատաստանն անի նրանց կատարած բոլոր թաքուն գործերի համար, լինեն դրանք չար, թե բարի» (Ժողով. ԺԲ 13-14): Երկրորդ՝ Քրիստոս է վկայում. «Եվ Նրան իշխանություն տվեց դատաստան անելու, քանի որ Մարդու Որդի է. դրա վրա ինչո՞ւ եք զարմանում» (Հովհաննես Ե 27-28): Երրորդ՝ Պողոս առաքյալն է վկայում. «Այս բանն եմ վկայել տալիս Աստծու և Հիսուս Քրիստոսի առաջ, որ դատելու է կենդանիներին ու մեռածներին Իր հայտնության օրը, երբ գա Իր արքայությամբ» (Բ Տիմոթեոս Դ 1): Պողոս առաքյալը կրկին վկայում է. «Մենք բոլորս Քրիստոսի ատյանի առաջ պիտի ներկայանանք, որպեսզի յուրաքանչյուրը ստանա, ինչ որ արել է ավելի առաջ իր մարմնով՝ թե՛ բարի և թե՛ չար» (Բ Կորնթ. Ե 10):*

**Հարց**. *Ուրիշ ի՞նչ վկայություններ կան:*

**Պատասխան**. *Թեպետ շատ վկայություններ կան, բայց հարկ չկա, որ բոլորն էլ մեկ առ մեկ քեզ ասեմ: Միայն թե քեզ մի բան պետք է պարզ լինի. հանկարծ չկարծես, որ Քրիստոս Դատավորն այս աշխարհի դատավորների պես է. եթե այս երկրի դատավորներն այլոց վկայությամբ են հասկանում չարն ու բարին, արդարն ու սուտը և ըստ դրա էլ դատում, ապա Քրիստոս բնավ կարոտ չէ որևէ վկայի, որովհետև ոչ միայն գործած, այլև մտքում դրած և տակավին չգործած մեր մեղքերն էլ գիտե, ինչպես Դավիթ մարգարեն է վկայում. «Իմ անկատարությունները տեսան Քո աչքերը, և այդ բոլորը գրվեցին Քո գրքում» (Սաղմոս. ՃԼԸ 16): Երկրորդ՝ աշխարհի դատավորները կաշառք առնելով շեղում են իրավունքը և այդպես դատում, իսկ Քրիստոս ոչ միայն կաշառք չի վերցնում, այլև կաշառք տվողին ու առնողին միասին է դատում ու պատժում: Տեսնո՞ւմ ես տարբերությունը. ո՞վ կարող է Նրա ձեռքից ազատվել. եթե մեղավոր ես, ո՞վ կարող է քեզ օգնել կամ մխիթարել:*

**Հարց**. *Բայց ինչո՞ւ է մեղավորներին Քրիստոս դատում:*

**Պատասխան**. *Որովհետև քեզ համար խաչվեց, ազատեց սատանայի գերությունից, իսկ դու քո չար գործերով ուրացել ես այդ երախտիքը: Ուստի հիշելով Իր բարերարությունն ու քո՝ Իր գործած բարիքի դեմ հատուցած չարությունը՝ պիտի պատժի սաստիկ բարկությամբ: Քո դեմ մարգարեներն ու առաքյալներն են դատախազ լինելու, որովհետև ոտնահարել ես իրենց գրած օրենքներն ու խրատները: Երկնքի հրեշտակներն էլ քեզ դատախազ պիտի*

*լինեն, որովհետև թագավորների Թագավորը բարկացել է քեզ վրա, ուստի Նրա սպասավոր զորքերն էլ պիտի դատախազներ դառնան: Պատկերացնո՞ւմ ես, թե քո խեղճ հոգին ի՞նչ ողորմելի վիճակում պիտի լինի: Ավելի լավ էր լինեիր անհավատ, քան թե ուրացող, ինչպես Պետրոս առաքյալն է ասում. «Ավելի լավ էր նրանց համար, եթե բնա՛վ ճանաչած չլինեին արդարության ճանապարհը, քան այն, որ ճանաչեցին և հետ կանգնեցին այն սուրբ պատվիրանից, որ ավանդվեց նրանց» (Բ Պետրոս Բ 21):*

**Հարց**. *Բայց ինչո՞ւ Պետրոս առաքյալն այդքան վատ է բնութագրում քրիստոնյա մեղավորին, քան թե անհավատին:*

**Պատասխան**. *Որովհետև քրիստոնյա մեղավորի մեղքը կրկնակի է. առաջին՝ ուրացության, և երկրորդ՝ կռապաշտության մեղքը, ինչպես Պողոսն է ասում. «Խոստովանում են, որ գիտեն Աստծուն, բայց իրենց գործերով ուրանում են Նրան» (Տիտոս Ա 16):*

**Հարց**. *Ինչպես տեսնում եմ, Քրիստոս ավելի շատ պիտի բարկանա քրիստոնյա մեղավորի վրա, քան թե անհավատի:*

**Պատասխան**. *Եվ բարկանալու իրավունքն ունի: Եթե երկու հոգի քեզ անպատվեն, որոնցից մեկը թշնամիդ է, սակայն մյուսը քո բարեկամն է կամ որդիդ, այդ դեպքում, ի՞նչ ես կարծում, ո՞ւմ վրա առավել կբարկանաս քեզ պատճառած անպատվության համար, թշնամո՞ւդ, թե՞ բարեկամիդ և կամ զավակիդ:*

**Հարց**. *Դե՛, իհարկե բարեկամիս կամ զավակիս վրա առավել կբարկանամ:*

**Պատասխան**. *Ուրեմն, եթե գիտես, որ մարդ արարածն առավել բարկանում է իր հարազատի կատարած հայհոյության վրա, ապա մեր Տեր Հիսուս Քրիստոս որքան առավել պիտի բարկանա մեզ վրա, քանի որ այնքան երախտիք ունի և այնքան չարչարանքներ կրեց մեզ համար:*

**Հարց**. *Իսկ ի՞նչ գիտես, որ հատկապես մեզ համար է չարչարվել:*

**Պատասխան**. *Հիսուս, երբ Վերնատան մեջ հացն ու գինին տվեց աշակերտներին, ասաց. «Վերցրե՛ք, կերե՛ք և ըմպե՛ք, այս Իմ Մարմինն ու Արյունն է, որ պիտի բաշխվի շատերին» (հմմտ. Մարկոս ԺԴ 22-24): Չասաց բոլորին, այլ շատերին, որից էլ պետք է հասկանանք, որ միայն Իրեն հավատացող քրիստոնյաների համար է արյուն թափել:*

**Հարց**. *Բայց այն ժամանակ քրիստոնյա չկար, որոնց համար արյուն թափեր:*

**Պատասխան**. *Իրավացի ես, հրեաների համար աշխարհ եկավ, ինչպես Ինքը վկայեց. «Իսրայելի մոլորված ոչխարների համար եկա» (Մատթեոս ԺԵ 24), բայց նրանք չընդունեցին Հիսուսին, որի մասին է վկայում Հովհաննես ավետարանիչը. «Յուրայինների մոտ եկավ, բայց յուրայինները Նրան չընդունեցին: Իսկ ովքեր Նրան ընդունեցին, նրանց իշխանություն տվեց լինելու Աստծու որդիներ» (Հովհաննես Ա 11-12): Տեսնո՞ւմ ես, թե ինչ բարձր իշխանություն է տվել Իրեն հավատացողներին, որով Աստծու որդի պիտի լինեն: Եվ մենք, որ այդ մեծ երախտիքն ուրացել ենք մեր չար գործերով, իրավունք չունի՞ արդյոք մեզ վրա բարկանալու, ինչպես որ Պողոս առաքյալն է մեզ օրինակով ցույց տալիս. «Որովհետև մեկ անգամ մկրտվածների համար, որ ճաշակեցին երկնավոր պարգևներից, հաղորդակից եղան Սուրբ Հոգուն, Աստծու գեղեցիկ խոսքի վայելքն ունեցան և գալիք աշխարհի զորությունները ճանաչեցին, եթե սայթաքեն, անհնար է երկրորդ անգամ ապաշխարությամբ նորոգվել, որովհետև նրանք վերստին խաչն են հանում Աստծու Որդուն և դարձյալ խաղք ու խայտառակ դարձնում, քանզի այն հողը, որ խմում է շատ անգամ իր վրա թափված անձրևը և օգտակար արդյունքներ է տալիս նրանց, որոնց համար մշակվում է, Աստծուց օրհնություն է ստանում: Իսկ եթե փուշ ու տատասկ է տալիս, նա անպետք է և արժանի է անեծքի, և նրա վախճանն այրվելն է» (Եբր. Զ 4-8): Նմանապես էլ մենք ընդունեցինք Աստծու բոլոր բարիքները և եթե փոխարենը բարեգործության պտուղ չտանք, այլ մեղքերի փուշ ու որոմ աճեցնենք, մենք ևս պիտի այրվենք այն արտի պես, որի մասին Քրիստոս ասաց.*

*«Ինչպես որոմը հավաքվում է և կրակի մեջ այրվում, այնպես կլինի այս աշխարհի վախճանին…: Հրեշտակները կելնեն և չարերին արդարների միջից կբաժանեն ու կգցեն նրանց բոցավառ հնոցի մեջ, և այնտեղ կլինի լաց և ատամների կրճտում» (Մատթեոս ԺԳ 40-49):*

*Երկրորդ՝ Եսային է վկայում. «Հեթանոսներն ազարակի մեջ խանձված փշի նման պիտի դառնան» (Եսայի ԼԳ 12):*

**Հարց**. *Ի՞նչ սարսափելի խոսքեր ես ասում, եղբա՛յր, ես ո՞ւր պիտի գնամ կամ ինչպե՞ս պիտի ազատվեմ այն արդար Դատավորից:*

**Պատասխան**. *Ոչ միայն դու, Պողոս առաքյալն է անգամ սարսափելով ասում. «Ահավոր է ընկնել կենդանի Աստծու ձեռքը» (Եբր. Ժ 31): Նույնն է վկայում Ամոս մարգարեն. «Թեկուզ նրանք դժոխքում էլ թաքնվեն, Իմ ձեռքն այնեղից էլ դուրս կբերի նրանց. եթե երկինք բարձրանան, Ես այնտեղից էլ կիջեցնեմ նրանց, իսկ եթե թաքնվեն Կարմելի բարձունքներում, այնտեղ էլ կփնտրեմ և կբռնեմ նրանց: Եթե Իմ աչքից խույս տան և պահվեն ծովի խորքերում, այնտեղ էլ վիշապին կհրամայեմ, որ խայթի նրանց: Եթե գերի տարվեն իրենց թշնամիների կողմից, ես այնտեղ հրաման կտամ սրին, որ ոչնչացնի նրանց» (Ամոս Թ 2-4):*

**Հարց**. *Այդ առավել սարսափազդու է:*

**Պատասխան**. *Սարսափազդու խոսքերը դեռ առջևում են, երբ դատվես և ամեն ինչում հանցավոր գտնվես, այդ պահին մի ահավոր ձայն պիտի լսես:*

**Հարց**. *Ի՞նչ ձայն:*

**Պատասխան**. *Քրիստոս՝ արդար Դատավորը, մեղավորներին կասի. «Անիծյալնե՛ր, գնացեք Ինձանից հավիտենական կրակը, որ պատրաստված է սատանայի և իր հրեշտակների համար» (Մատթեոս ԻԵ 41):*

**Հարց**. *Եվ եթե Քրիստոս այդ խոսքն ինձ ուղղի, ինձ ի՞նչ են անելու:*

**Պատասխան**. *Ոտքերդ ու ձեռքերդ կապված դժոխքի մեջ կգցեն, և այնտեղ կրակը երբեք չի հանգչում. այնտեղ են նաև օձի ու կարիճի նման անքուն ու անմահ թունավոր որդերը, չկտրվող շղթաները, թանձրամած խավարը, խիստ սառնամանիքը, անմխիթար լացն ու ողբը: Այնտեղից չես ազատվի հավիտյան: Ոչ մեկից օգնություն կամ մխիթարություն չես գտնի և հուսահատ հավիտյան պիտի տանջվես այրվելով ու խանձվելով:*

**Հարց**. *Այդ ի՞նչ տեղ ես ինձ առաջարկում, եղբա՛յր:*

**Պատասխան**. *Միայն քեզ չեմ ուղղում խոսքն իմ, այլ համայն մարդկությանը: Որովհետև ով գործում է Աստծու կամքին հակառակ, անկասկած նրա վախճանն այս է լինելու, դրա համար էլ Քրիստոս մեզ զգուշացնում է, որ այդ փորձանքից ազատվենք:*

**Հարց**. *Քրիստոս ինչպե՞ս է զգուշացրել:*

**Պատասխան**. *«Եթե քեզ գայթակղեցնում է քո ձեռքը, կտրի՛ր, դե՛ն գցիր քեզանից, որովհետև քեզ համար ավելի լավ է խեղված մտնել հավիտենական կյանք, քան թե երկու ձեռք ունենալ ու գնալ գեհեն անշեջ կրակի մեջ: Եվ եթե քո ոտքն է գայթակղեցնում քեզ, կտրի՛ր, քեզնից դե՛ն գցիր այն, լավ է, որ դու կաղ մտնես հավիտենական կյանք, քան թե երկու ոտք ունենաս ու գեհեն ընկնես: Եվ եթե քո աչքն է գայթակղեցնում քեզ, քաշի՛ր, հանի՛ր այն. լավ է, որ դու մեկ աչքով մտնես Աստծու արքայությունը, քան թե երկու աչք ունենաս ու ընկնես գեհեն, ուր նրանց որդը չի մեռնում, և կրակը չի հանգչում» (Մարկոս Թ 42):*

**Հարց**. *Ինչո՞ւ է Քրիստոս հրամայում աչք հանել և ձեռք ու ոտք կտրել:*

**Պատասխան**. *Քրիստոսի ասածը մեր աչքի, ձեռքի կամ ոտքի մասին չէ, որովհետև այս երեքը մարմնի կարևոր անդամներն են: Այս պատճառով է, որ օրինակ բերեց: Կյանքում նրանց պես կարևոր ու պիտանի շատ բաներ ունենք, այն է՝ ծնող, եղբայր, կին, զավակ, բարեկամ և կամ էլ ունեցվածք, կամ որևէ մի բան, որ մեղքի պատճառ են դառնում քեզ համար, կտրիր*

*նրանց կամ ինքդ բաժանվիր նրանցից, որովհետև ավելի լավ է առանց նրանց գնաս արքայություն, քան այդ ամենն ունենալով՝ դժոխք: Ահա երրորդ մտածելիքդ այդ ահավոր դժոխքն է: Թող որ Աստված բոլոր քրիստոնյաներին հեռու պահի դժոխքից:*

Հարց. *Աստված, որ ամենաբարին է, մի՞թե չի ափսոսի իր ստեղծած ծառային:*

Պատասխան. *Աստված մեզ ափսոսելով է, որ ստեղծելուց հետո հոգում է մեր մարմնի կարիքները՝ երկնքից անձրև ու արեգակ պարգևելով: Որովհետև մեր մարմնավոր կարիքները՝ թե՛ ուտելիք և թե՛ զգեստ, բոլորն էլ թեև երկիրն է տալիս, բայց անձրևի ու արեգակի շնորհիվ է պարգևում: Իսկ մեր հոգու փրկության համար բազում մարգարեներ առաքեց, որոնք մեզ զգուշացրեցին հեռու մնալ մեղքից: Եվ վերջապես Իր Միածին Որդուն ուղարկեց աշխարհ, որ մեզ համար բազում չարչարանքներ կրելով՝ մարմնով մեռավ խաչի վրա՝ ազատելով մեզ սատանայի գերությունից, ինչպես որ վերևում պատմեցինք: Իսկ հետագայի համար բազում պատվիրաններ ավանդեց, որ մարդիկ զգուշանան մեղքից և նորից սատանային գերի չդառնան: Նրա առաքյալները նույնպես բազում խրատներ գրեցին մեզ համար իրենց գրքերում, որ հեռու մնանք մեղքի աշխարհից: Վերջապես ուզում եմ քեզ ասել, որ Քրիստոս մեզ սովորեցրել է և՛ Երկնքի արքայության երանությունների, և՛ դժոխքի անտանելի չարիքի ու սաստկության մասին: Ցույց է տվել մեզ երկու ճանապարհ, այն է. «Նեղ դռնից մտնողը կգնա արքայություն, իսկ լայն դռնից մտնողը կգնա դժոխք»: Եվ եթե դու, այսքան խրատներն արհամարհելով, Քրիստոսի խաչելությունն անպտուղ դարձնես, իմանալով կրակի այրող բնությունը՝ ձեռքդ կրակի մեջ մտցնես, մի՞թե Աստված կափսոսա քեզ, ինչպես և Սողոմոնն է վկայում:*

Հարց. *Իսկ ի՞նչ վկայեց Սողոմոնը:*

Պատասխան. *«Որովհետև Ես կանչում էի, բայց դուք չէիք լսում, երկար թախանձում էի, բայց դուք չէիք ունկնդրում Ինձ, այլև զանց էիք առնում Իմ խորհուրդները և չէիք ուզում անսալ Իմ հանդիմանություններին: Ես այսուհետև պիտի ծիծաղեմ ձեր կորստյան վրա» (Առակ. Ա 24-26):*

# Հավիդ ԼԸ

Հարց. *Կարծես հասկացա, որ չորս խորհելիք նյութերից երեքը մահն է, դատաստանը և դժոխքը: Ո՞րն է չորրորդ խորհելիք նյութը:*

Պատասխան. *Չորրորդ խորհելիքը ողջ աշխարհի հույսն ու փափագն է՝ արքայությունը:*

Հարց. *Կխնդրեի, որ ուսուցանեիր նաև արքայության մասին:*

Պատասխան. *Արքայության մասին ճառելն ու քեզ հասու դարձնելն իմ կարողությունից վեր բան է, քանի որ Պողոս առաքյալն էլ չկարողացավ նկարագրել այն. «Ինչ որ աչքը չտեսավ, և ականջը չլսեց, և մարդու սիրտը չընկավ, Աստված այն պատրաստեց Իր սիրելիների համար» (Ա Կորնթ. Բ 9):*

Հարց. *Մի՞թե ոչինչ չկա գրված արքայության մասին: Բայց չէ՞ որ ասացիր՝ չորս առարկայի շուրջ պիտի խորհեմ, երեքի մասին իմացա և պիտի խորհեմ, բայց ինչպե՞ս խորհեմ, թե ի՞նչ է արքայությունը, երբ ոչինչ չգիտեմ նրա մասին:*

Պատասխան. *Մի՛ շտապիր, Հովհաննես ավետարանիչն իր Հայտնության մեջ նկարագրում է արքայության ձևը. «Եվ ինձ մոտ եկավ մեկն այն յոթը հրեշտակներից, որոնք ունեին յոթը սկավառակներ՝ լցված յոթը վերջին պատուհասներով, և նա խոսեց ինձ հետ ու ասաց. «Ե՛կ, քեզ պիտի ցույց տամ հարսին՝ Գառան կնոջը»: Եվ առավ, տարավ ինձ Հոգով դեպի մի բարձր ու մեծ լեռ և ցույց տվեց ինձ մեծ և սուրբ քաղաքը՝ Երուսաղեմը, որ իջել էր երկնքից՝ Աստծու մոտից: Այն ուներ Աստծու փառքը, և նրա մեջ կար մի լուսավորություն՝*

*նման թանկագին գոհարեղենի, ինչպես բյուրեղյա և կենդանի հասպիս քարը: Եվ նրա պարիսպները մեծ ու բարձր էին, ուներ տասներկու դուռ. տասներկու դռներին՝ տասներկու հրեշտակներ, նրանցից յուրաքանչյուրի անունը գրված էր դռների վրա, ըստ Իսրայելի տասներկու ցեղերի անունների: Արևելյան կողմից՝ երեք դուռ, հյուսիսային կողմից՝ երեք դուռ, հարավային կողմից՝ երեք դուռ և արևմտյան կողմից՝ երեք դուռ: Եվ քաղաքի պարիսպն ուներ տասներկու հիմքեր. նրանց վրա՝ Գառան տասներկու առաքյալների տասներկու անունները: Եվ նա, ով խոսում էր ինձ հետ, իր ձեռքում ուներ ոսկե եղեգ, որպեսզի չափի քաղաքը և նրա դռներն ու նրա պարիսպները: Եվ քաղաքը քառակուսի էր. որչափ որ նրա երկարությունն էր, նույնչափ էլ՝ նրա լայնությունը. բարձրությունն էլ՝ նույնը: Նրա երկարության չափը շուրջ երկու հազար հինգ հարյուր կիլոմետր էր, նրա լայնությունն ու բարձրությունը՝ միաչափ խորանարդ: Հրեշտակը չափեց նաև նրա պարիսպը, որի բարձրությունը յոթանասուն մետր էր. հրեշտակի գործածած չափը մարդկանց գործածած չափն էր: Եվ քաղաքի պարիսպների շինվածքը հասպիս քարից էր, իսկ քաղաքը՝ մաքուր ոսկի՝ նման մաքուր ու պայծառ ապակու: Եվ քաղաքի հիմքերը ամեն տեսակ թանկագին քարերից էին: Պարսպի առաջին հիմքը՝ հասպիս, երկրորդը՝ շափյուղա, երրորդը՝ կարկեհան, չորրորդը՝ զմրուխտ, հինգերորդը՝ եղնգաքար, վեցերորդը՝ սարդիոն, յոթներորդը՝ ոսկեքար, ութերորդը՝ բյուրեղ, իններորդը՝ տպազիոն, տասներորդը՝ քրյուսո-պրասոս, տասնմեկերորդը՝ հակինթ, տասներկուերորդը՝ մեղեսիկ: Եվ կային տասներկու դռներ՝ տասներկու միաձև մարգարիտներից. ամեն մի դուռ մեկ մարգարտից էր: Եվ քաղաքի տարածքը մաքուր ոսկի էր՝ նման պայծառ ապակու:*

*Եվ քաղաքի մեջ տաճար չտեսա, քանզի Ամենակալ Տեր Աստվածն էր տաճար նրա մեջ, նաև Գառը: Եվ քաղաքին պետք չէր արեգակ ու լուսին, որպեսզի լուսավորեն այն. քանզի Աստծու փառքն էր լուսավորում քաղաքն ամեն ժամ» (Հայտն. ԻԱ 9-23):*

*Եսայի մարգարեն ասում է. «Այլևս արեգակը չէ, որ քեզ համար ցերեկվա լույս է լինելու, և ոչ էլ լուսնի ծագումն է, որ քեզ գիշերը լույս է տալու, այլ քեզ համար Տերն է հավիտենական լույս լինելու, և Աստված՝ քո փառքը» (Եսայի Կ 19):*

*Այնտեղ ոչ ցավ կա, ոչ տրտմություն և ոչ էլ լաց, այլ միշտ տիրում է ուրախություն և ցնծություն: Բնակիչներն են՝ հրեշտակներ, մարգարեներ, առաքյալներ, մարտիրոսներ, ճգնավորներ, կույսեր և բոլոր արդարները, իսկ նրանց թագավորն Աստված Ինքն է: Այնտեղ չկա ո՛չ ձմեռ և ո՛չ գարուն: Ինչպես տեսնում ես, սքանչելի վայր է:*

**Հարց.** *Երանի նրանց, ովքեր կմտնեն արքայություն: Հոգիս շատ է փափագում գնալ այնտեղ:*

**Պատասխան.** *Ողջ մարդկության հույսն ու փափագն է դա: Արքայությանը հասնելու համար առաքյալներն ու մարտիրոսները բազում չարչարանքներով իրենց արյունը թափեցին: Այդպես էլ ճգնավորները, որոնք հրաժարվեցին տնից, հայրենիքից, ծնողներից, ընտանիքից, զավակներից, բարեկամներից, ազգականներից և իրենց ողջ ունեցվածքից, գնացին լեռներն ու անապատները՝ քաղցած, ծարավ, մերկ, դիմանալով արևի տապին ու ձմռան սաստիկ ցրտերին, արքայություն գնալու համար համբերատարությամբ մաշեցին իրենց անձերը: Բայց ինչպես երևում է, քիչ մարդ պիտի մտնի այնտեղ, ինչպես Քրիստոս ասաց. «Բազում են կանչվածները, բայց սակավ են ընտրյալները» (Մատթեոս Ի 16): Իրականում առաքյալները շատ մարդկանց հրավիրեցին արքայության սեղանից ճաշակելու, և շատ ու շատ մարդիկ մկրտվում են՝ ստանալով քրիստոնյա անունը, որ մտնեն երկնքի արքայություն: Բայց իր կամքը զսպող ու սատանային հաղթող, Աստծու բոլոր պատվիրաններն անթերի կատարող քիչ մարդ կա, դրա համար էլ Քրիստոս ասաց. «Ոչ ամեն մարդ, որ Ինձ «Տե՛ր, Տե՛ր» է ասում, երկնքի արքայություն կմտնի, այլ նա՛, ով կատարում է կամքը Իմ Հոր, որ երկնքում է» (Մատթեոս Է 21):*

*Հարց. Մի բան հիշեցի, Քրիստոս մեղավորներին «Հեռացե՛ք Ինձանից» պիտի ասի, իսկ արդարներին ի՞նչ է ասելու:*

*Պատասխան. Արդարներին պիտի ասի. «Եկե՛ք, Իմ Հոր օրհնյալնե՛ր, ժառանգեցե՛ք աշխարհի սկզբից ձեզ համար պատրաստված արքայությունը» (Մատթեոս ԻԵ 34): Եվ իրենց գործած բարեգործության փոխարեն կվարձատրի, այսինքն՝ անթառամ պսակով ու լուսեղեն զգեստներով կզարդարի և իր հետ վերցրած կտանի երկնքի արքայություն, ինչպես որ խոստացել էր. «Որտեղ Ես լինեմ, այնտեղ էլ Իմ պաշտոնյաները կլինեն» (Հովհաննես ԺԲ 26): Եվ մշտապես Աստծու դեմքը տեսնելով պիտի ուրախանան ու ցնծան հավիտյանս հավիտենից, ինչպես Պողոս առաքյալն է վկայում. «Մենք... պիտի հափշտակվենք, տարվենք ամպերի վրայից Տիրոջ առաջ օդում և այդպես մշտապես Տիրոջ հետ պիտի լինենք» (Ա Թեսաղ. Դ 16):*

*Հարց. Ինչպիսի՞ն է արդարների փառքը:*

*Պատասխան. Լեզվով հնարավոր չէ բացատրել, մեր խելքից ու մտքից վեր բան է, բայց Պողոս առաքյալը մեր միտքը հաստատելու համար օրինակ է բերում արեգակը, լուսինն ու աստղերը, որովհետև մեր աչքը նրանցից առավել պայծառ բան չի տեսել, թեպետ յոթնապատիկ առավել է նրանցից, բայց միշտ մեր տեսածի հետ պիտի համեմատի, որ հասկանանք. «Այլ է փառքը արեգակի, այլ է փառքը լուսնի և այլ է փառքը աստղերի, և մի աստղ փառքով առավել է, քան մի ուրիշ աստղ: Այսպես է նաև մեռելների հարությունը» (Ա Կորնթ. ԺԵ 41-42): Երկրորդ՝ Դանիել մարգարեն վկայում է. «Իմաստուն մարդիկ պիտի ճառագեն իբրև երկնակամարի լուսատուներ, իսկ արդարներից շատերը՝ առավել ևս՝ իբրև հավիտենական աստղեր» (Դանիել ԺԲ 3): Երրորդ՝ Քրիստոս ասաց. «Այն ժամանակ արդարները երկնքի արքայության մեջ կծագեն ինչպես արեգակը» (Մատթեոս ԺԳ 43): Այս վկայություններից պարզվում է, որ արդարների փառքն աստիճան ունի:*

*Հարց. Երբ արդարների այդ աստիճան փառավորությունը տեսնեն, արդյոք ի՞նչ պիտի ասեն նրանց հակառակորդները:*

*Պատասխան. Սողոմոնն ահա գրում է, թե ի՞նչ են ասելու. «Այն ժամանակ արդարը շատ համարձակ պիտի կանգնի իրեն նեղողների հանդեպ, և նրանք, ովքեր արհամարհում էին նրա վաստակը, տեսնելով նրան, պիտի խռովվեն սաստիկ երկյուղից և պիտի զարհուրեն նրա սքանչելի փրկության համար: Նրանք պիտի զղջան իրենց մտքում և հոգու նեղությունից ճնշված պիտի հառաչեն ու ասեն. «Սա այն մարդն է, որին մենք ծաղրում էինք մի ժամանակ և նախատինք էինք տալիս: Մենք՝ անմիտներս, նրա վարքը մոլորություն էինք համարում, իսկ նրա վախճանը՝ անարգանք: Բայց նա ինչպե՞ս դասվեց Աստծու որդիների շարքը» (Իմաստ. Ե 1-5): Հիմա կարծում եմ, ամեն բան հասկացար և այլևս ոչինչ չես հարցնելու, բայց մի վերջին խրատ էլ եմ ուզում տալ, չնայած մինչ այժմ էլ տրված խրատները, եթե պահես, կփրկվես: Վերջին ասելիքս այս է. «Եթե սրանից առաջ մեր գործած մեղքերի համար զղջանք և լվանանք արցունքով, նորից լվացվենք ու մաքրվենք և զգուշանալով կրկին չմեղանչենք ու Աստծու բոլոր պատվիրաններն անթերի կատարենք, Քրիստոսի շնորհիվ մենք էլ կարժանանանք այն երանավետ քաղցր ձայնին, անթառամ պսակին, լուսեղեն առագաստին և որ ամենագլխավորն է, Աստծու լուսափայլ դեմքը տեսնելու շնորհին: Ե՛վ միշտ, և՛ անդադար սուրբ հրեշտակների, մարգարեների, առաքյալների և բոլոր արդարների հետ արքայության մեջ միասին ուրախությամբ ու ցնծությամբ կօրհնենք ամենասուրբ Երրորդությանը՝ Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն, հավիտյանս. Ամեն:*